

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

# ԻՐԱՆ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1942-1960 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



Ліффорд бу  
55 роки президент  
Іноземних

Софіївські

ІІІ

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է «ԱՐՄԵՆ ԵՎ ԲԵՐՍԱԲԵ  
ՃԵՐԵՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» (ԱՄՆ) ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՆ

THE PUBLICATION WAS SPONSORED BY "ARMEN AND  
BERSABE JEREJIAN FOUNDATION", INC., USA

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

**GOHAR ISKANDARYAN**

**IRANIAN-AMERICAN RELATIONS  
(1942-1960)**

THE BOOK IS RECOMMENDED FOR PUBLICATION BY THE SCIENTIFIC COUNCIL OF  
THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES, NATIONAL ACADEMY OF SCIENCES,  
REPUBLIC OF ARMENIA

YEREVAN - 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԳՈՐԱՐ ՄԱՆՎԵԼԻ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

A 11  
96792  
ԻՐԱՆԱ-ԱՍԵՐԻԿՅԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1942-1960 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ



Խմբագիր՝ Վ. Ա. Բայրուրդյան  
պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր

Խոկանդարյան Գոհար Մանվելի  
հրանա-ամերիկան հարաբերությունները 1942–1960 թ./Գոհար Խոկանդարյան, ՀՀ ԳԱԱ  
արևելագիտ. ինստ.-Եր., 2011. 240 էջ:

Աշխարհուրժառության քննարկվում է իրանա-ամերիկան հարաբերությունները 1942–1960-ական  
թվականներին, որտեղ իրևական շեշտարության կատարվում է թե ինչպես ԱՄՆ-ը, որ մինչեւ Երկրորդ  
համաշխարհային պատրիկազմն Իրանում շտմեր իրական ազդեցություն, աստիճանաբար կա-  
ռուցական լրացնել այս բացը: Սկզբանական շրջանում այն արտահայտվում էր ֆինանսական, գնարկ-  
ասական, այնուհետև ուսամական օգնությունների միջոցով: Իրանն ԱՄՆ-ին դիրքուրկություն էր, որպես  
երրորդ ուժ՝ այսինքն մի պետություն որն ի տարրերություն Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի փոքրություն  
էր Իրանի հետ վարել զորքելներային հարաբերություններ: Սակայն Իրանում ԱՄՆ-ի մկանամաք  
դրամադրությունները վնասվեցին 1950-ականների սկզբներին՝ նավիր ազգանացներ խնդրեցին  
կազմակերպությունները Մեծ Բրիտանիայի շահերը ու մասնակցեց վարչապետի Մ. Սու-  
սափեյի կառավարության պատասխանում ու անհաջող շահ և նրա կողմանից ենթականացիր: Դրանից հետո Իրանի քաղաքական վերհախայն այնհայտորեն դարձավ արևմտանիւր: Իրանն ան-  
դանակցեց Բարդաշի պակտին, իսկ 1959թ. կնքվեց Իրանա-ամերիկան ուսամական պայմանագիր,  
որով էլ ավելի խորացվեց հարաբերությունները Միացյալ Նահանգների հետ:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	7
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ</b>	
ԻՐԱՍԱ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՐՄԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1942-1950 թթ. ....	9
1. ԻՐԱՍԱ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՐՄԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՂԴ ԴԱՄԱԾՆԱՐԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱՎԱՆԻ ԸՆԹԱՑՑՈՒՄ ԵԿ ՀԵՏՊԱՏԵՐԱՎԱՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ..... 9	
2. ԻՐԱՍԱԿԱՆ ԱՊՐԵԼԵՑԱՆԻ (ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ) ԽՆԴԻՐԸ ԵԿ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՐԱՎԱՆԵՐԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ ..... 26	
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ</b>	
ԻՐԱՍԱ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՐՄԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1950-1953 թթ. ....	44
1. ԱՄՆ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՍԻՆ ՈՐՊԵՏ ԻՐԱՍԱ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՐՄԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՒՆ ..... 44	
2. ՄԻԱՅՅԱԼ ՆԱՐԱՎԱՆԵՐԻ ԴԻՐՅՈՐՈՇՈՒՄ ԱՆԳԼ-ԻՐԱՍԱԿԱՆ ՆՎԱՅԱՅԻՆ ՎԵճԻ մԱՍԱԿԱ ..... 57	
• Պատմական ակնարկ նավթի հայտնաբերման և դրա կարևորության շուրջ ..... 57	
• Պայքար նավթի հանար (1946-1954 թթ.) ..... 62	
<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ</b>	
ԻՐԱՍԱ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԱՐՄԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1953-60 թթ. ....	97
1. 1953թ. ՕԳՈՍՏՈՒՆԻ ԻՐԱՍՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ «ԱՅԱՐ» ԳՈՐԾՈՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 97	
2. ԻՐԱՍԻ ԱՆԴԱՍԱԿՑՈՒՄ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՐԱՎԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ..... 137	
3. 1959թ. ԻՐԱՍԱ-ԱՄԵՐԻԿԱՅԻ ՈՍԽԱԿԱՆ ԴԱՄԱԾՆԱՐԴԱՅԻՆ ԿԵՐՈՒՄ ..... 158	
ՎԵՐՋԱՐՄԱՆ .....	174
SUMMARY .....	188
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	203
INDEX .....	210
Appendix .....	213

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԾՆՈՂՆԵՐԻՄ՝  
Ա. ԻՍԿԱՌԱՐՅԱՆԻՆ ԵՎ Լ. ԲԱԲԱԼԱՐՅԱՆԻՆ՝  
Ի ՆԵԱՆ ՀԱՎԵՐԺ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները հասկանալու համար առաջին հերթին պետք է ուսումնասիրել այդ տարածաշրջանի խոշոր պետությունների պատմությունը, դավանանքը, ժողովրդի աշխարհայացքը, ավանդույթները: Մերձավոր և Միջին Արևելքի գարգացումների վրա, տարածաշրջանային բոլոր պետություններն ել ունեն ազդեցության իրենց չափաբաժինը, սակայն կան այնպիսի պետություններ, որոնք գլխավոր դեր ունեն դրանում: Դրանց թվին են պատկանում Իրանը, Թուրքիան, ժամանակին՝ նաև Իրաքը:

1973թ. Իրանի, նաևթարդյունաքերության ազգայնացումից հետո, տնտեսական և ուգմալական ներուժն այն աստիճան մնացավ, որ այդ երկիրը սկսեց հավակնել տարածաշրջանային գործերը կարգավորողի դերին: Բնակչանարար դա չէր կարող դոր գամ հզոր տերություններին, քանի որ Արանք կարող էին դրսում մաս էներգակիրներով հարուստ տարածաշրջանային գործընթացներից:

Սակայն, Իրանը իր հզորացման նման աստիճանին հասնելու համար ինչոր տեղ պարտական էր նաև իր երեսնի դաշնակից Միացյալ Նահանգների հետ համագործակցությանը: Որպես փաստարկ թերենք այն հանգամանքը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրանի տնտեսությունը՝ արդյունաքերությունը, բանակաշինությունը մեծ ներդրումների կարիք ունեին: Այն հիմնականում իրականացվեց Միացյալ Նահանգների կողմից ֆինանսական, ուղղմական, տնտեսական օգնությունների տեսքով, ինչպես նաև Իրան ուղարկվեցին խորհրդականներ, որոնք փորձեցին կարգավորել Իրանի վերոհիշյալ գորեք բոլոր ոլորտները: Բնակչանարար, Միացյալ Նահանգներին այդ ամենն անում էր առաջին հերթին կենելով տարածաշրջանային իր շահերից:

Իրանն այսօր էլ գտնվում է համաշխարհային հանրության ուշադրության կիզակետում: Եվ եթե ցանկանում ենք հասկանալ, թե ինչու են այդքան բարդ ու հակասական իրանա-ամերիկյան հարաբերություններն, ապա պետք է հայացք զգել նրանց հարաբերությունների պատմության վրա: Այդ առումով, ույն ուսումնասիրությունը հասուու նշանակություն է ձեռք թերու: Իրանա-ամերիկյան հարաբերությունների հետազոտությունը հնարավորություն է տալիս Ժիշտ զնահատել ստեղծված իրավիճակը և տարածաշրջանում խաղաղության հաստատման հեռանկարները:

Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ-ի բաղաքանության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ հետազոտություններ, սակայն հատկապես իրանա-ամերիկյան հարաբերությունների շորջ, այն է նոր լուսի ներքո, հասուլ ուսումնասիրություն դեռևս կատարված չէ: Սա հայ արևելագիտության մեջ իրանա-ամերիկյան հարաբերությունների ուսումնասիրման առաջին փորձն է: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1942թ-ից՝ սկսած այն պահից, երբ ամերիկյան զորքերը մտան Իրան, մինչև 1960թ՝ Սպիտակ հեղափոխությունը:

Աշխատությունում նորովի է մեկնաբանվում ԱՄՆ-ի քաղաքականության ազդեցությունն Իրանում, ներկայացվում նրա ձեռքբերումներն և բացբողությունը. Վերլուծության ննթարկվում Թեհրանի և Վաշինգտոնի վարած արտաքին քաղաքականությունը, որը սերտ կապի մեջ էր գտնվում տարածաշրջանային գործընթացների հետ:

Աշխատությունն արժեքավոր է նրանով, որ օգտագործվել են երկու երկրների պետական այրերի և նշանավոր դեմքերի անձնական հուշերը, աշխատությունները, որը թոյլ է տալիս նորովի մոտենալ իրանա-ամերիկյան հարաբերությունների պատմությանը՝ զերծ մնալով խորհրդային գրականության կարծրատիպերից: Առաջին հերթին անհրաժեշտ է հիշատակել աշխատության համար չափազանց կարևոր գրականություն հանդիսացող աշխատությունները և հուշագրությունները: Դրանք են. Մոհամամադ Ռեզա շահ Փահլավիի, նրա քրոջ՝ Ա.Փահլավիի, Ա.Միսապոյի, Ա.Դալլեսի, Ք.Ռուզվելտի, Է.Իդենի ելույթները և աշխատությունները, ինչպես նաև վերջերս գաղտնազերծված ՏՊԱՅԱՀ գործողութան ծրագիրը ու մի շարք այլ փաստաթղթեր:

Նոր փաստերի առկայությամբ՝ ներկայացվում է ԿՀՎ-ի կողմից իրականացված «Այաքս» գործողությունը: Աշխատությունում նորովի է լուսարանվում Իրանի անդամակցումը Բաղդատի պակտին և ուազմական պայմանագրի կնքումը Միացյալ Նահանգների հետ, ինչը բխում էր նաև Իրանի շահերից:

Օգտվելով առիթից՝ կցանկանայի խորին երախտագիտությունս հայտնել Արևելագիտության ինստիտուտի գործնկերներին՝ աջակցության և զերս վերաբերմունքի համար, մասնավորապես՝ գիտական դեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, իրանագետ Վ.Ա. Բայրությանին՝ ուսումնասիրության տարիներին գիտական արժեքավոր խորհուրդներ տալու համար:

ԳՈՐԾԱՐ ԽՍԿԱՆԴՐԱՑԱԾ

ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1942-1950 ԹԹ.

ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ  
ՀԱՍՏԻԱԲՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱՋՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ  
ՀԵՏՊԱՏԵՐԱՋՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմն աշխարհը բաժանեց երեք խմբավորման: Առաջին խմբի անդամները Ֆաշիստական Գերմանիային համախոհ երկրներն էին, որոնք այսպես թե այնպես մասնակցում էին պատերազմին: Երկրորդ խմբի անդամները հակահիտլերյան դաշինքի երկրներն էին, որոնք պայքարում էին 20-րդ դարի մեծագոյն չարիքի՝ ֆաշիզմի դեմ: Ի դեպ, երկրորդ խմբի անդամ երկրների թիվը զգալիորեն գերազանցում էր առաջինին: Երրորդ խմբի երկրները որդեգրել էին չեղոքության քաղաքականություն: Դրանց թվին էր պատկանում նաև Իրանը, սակայն, միևնույն ժամանակ, Գերմանիան ամեն կերպ ջանում էր Իրանը քաց ջրողնել իր տեսադաշտից, քանի որ Անգլիայի ծովային ուժերը և դաշնակցիների օդուժն ու հետևակն անհրաժեշտ վառելիքը հայթայրում էին հենց այդ երկրից<sup>1</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ 1941թ. հունիսի 26-ին ԽՍՀՄ-ում Իրանի դեսպան Մոհամմադ Սահիդը հանդես եկավ հայտարարությամբ, որ. «Իրանի կառավարությունը պահպանելու է լիակատար չեղոքություն»<sup>2</sup>, այնուամենայնիվ, Ռեզա շահի որդեգրած քաղաքականությունը դաշնակից երկրներին վստահություն չէր ներշնչում: Այդ կապակցությամբ Խորհրդային Միությունը և Մեծ Բրիտանիան բազմաթիվ նոտաներ հղեցին Իրանի շահ Ռեզա Փահլավիին, որոնցում կոչ էր արվում երկրում հանգրվանած գերմանացիներին վտարել:

ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումից հետո, Խորհրդային կառավարությունը 3 անգամ՝ 1941թ. հունիսի 26-ին, հուլիսի 19-ին և օգոստոսի 16-ին, Իրանի կառավարության ուշադրությունը իրավիրեց երկրում գերմանական գործականների գործունեության վրա: Հունիսի 26-ին Խորհրդային կառավարությունը Իրանի շահին տեղեկացրեց, որ ԽՍՀՄ-ը ունի հավաստի տեղեկություններ Իրանում գերմանացիների կողմից նախապատրաստվող պետական հեղաշրջման վերաբերյալ<sup>3</sup>: Ինչպես ԽՍՀՄ-ը, այնպես էլ Մեծ Բրիտանիան, պահանջում էին Իրանց արտաքսել գերմանացիներին: Պաշտոնական թերա-

<sup>1</sup> Սուհամանական պարտավորություն հայրենիքին համար, Թեհրան, 1973, էջ 136:

<sup>2</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны (Документы и материалы 22 июня 1941г.-31 декабря 1943г.), том I, 1946, с.130.

<sup>3</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, том I, с. 156.

Նը հրաժարվեց այնպիսի միջոցներ ձեռնարկել, որոնք վերջ կտային գերմանացի լրտեսների գործունեությանը երկրում:

1941թ. օգոստոսի 25-ին խորհրդային կառավարությունը կրկին նոտա հղեց Իրանի կառավարությանը, որում մասնավորապես նշում էր. «Իրանի՝ ավելի քան 50 կարևորագույն հաստատություններում հանգրվանած գերմանացի լրտեսներն ամեն կերպ ջանում են Իրանում սերմանել անկարգություններ և խոռվություն, խաթարում են Իրանի ժողովրդի խաղաղ կյանքը, Իրանին հրահրում են ԽՍՀՄ-ի դեմ՝ ներքաշելով նրան ԽՍՀՄ-ի հետ պատերազմի մեջ»<sup>4</sup>:

Իրանի շահ Ռեզա Փահլավին անհրաժեշտ հետևողաբար չարեց դաշնակից երկրների բողոք-նոտաներից: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Գերմանիան Իրանի համար հանդիսանում էր «երրորդ ուժ», ավանդական դարձած անգլո-ռուսականի կողմին: Շահը գտնում էր, որ Գերմանիայի հետ նպատակահարմար է ունենալ տնտեսական և քաղաքական կայուն հարաբերություններ: Ռեզա շահն Անգլիայի և ԽՍՀՄ-ի բազմաթիվ նոտաներից ու անմիջական սպառնալիքներից հետո էլ տեղի չտվեց:

Խորհրդային Միությունը և Մեծ Բրիտանիան որոշեցին դիմել այլ միջոցների: Օգոստինվ 1921թ. կերպած խորհրդա-իրանական պայմանագրի 6-րդ կետից, 1941թ. օգոստոսի 26-ին Խորհրդային Միությունը հյուսիսից զորքերը մտցրեց Իրաս: Միաժամանակ Անգլիական ուժերը երկրի տարածք ներխուժեցին հարավից և առաջին հերթին ոչնչացրին Խորամշահրում գտնվող իրանական նավատորմիոյ: Մինչ այդ, Ռեզա շահը նոտա էր հյու ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկին Ռուզվելտին, որով Միացյալ Նահանգներից խնդրում էր կանխել խորհրդա-բրիտանական ներխուժումը: Իրանի շահի խնդրանքին ընգծված մերժումով արձագանքեց ԱՄՆ-ի պետքարտուղար Քորդել Հենքը<sup>5</sup>: Այլընտրանը չտևնելով և Թեհրանը խորհրդա-բրիտանական ուժերի հսկողության տակ ընկնելով վունգից զերծ պահելու նպատակով՝ Ռեզա Փահլավին 1941թ. սեպտեմբերի 16-ի առավոտյան հրաժարվեց գափից հօգուտ իր 22-ամյա որդու՝ Շահպոր Մոհամմադի, ով, բազմով գահին, ընդունեց Մոհամմադ Ռեզա Փահլավի գահակալական անունը: Նա մինչ այդ Մեջլիսի կողմից հաստատված էր որպես օրինական գահաժառանգ<sup>6</sup>: Նախկին շահը պարտավոր էր հեռանալ երկրից<sup>7</sup>:

1941թ. հոկտեմբերի 8-ին՝ բազադրություն հետո, շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին դիմեց Թեհրանում ամսրիկյան ներկայացուցչին՝ դաշնագրի կնքման

<sup>4</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, том I, с.154.

<sup>5</sup> Richard W.Cottam, Iran and the United States. A Cold War Case Study, Pittsburgh, 1988, p. 62.

<sup>6</sup> Richard F.Nyrop, Iran: A Country Study, Washington, 1978, p. 55.

<sup>7</sup> Պարսից ծովի Բենդեր-Աքրաս նավահանգստից դեպի Ջոնկաստան տանող բրիտանական նավով Ռեզա Փահլավին հեռացավ երկրից: Բոլերեսում անզիւական իշխանությունները նրան բոյլ չտվեցին այդ իշներ, իսկ նավահանգստ հրաժարվեց բավարարել նրա պահանջը՝ շարժվելու դեպի նապահան, ստիպված նաևը ուղղություն վեցրեց դեպի Սր. Մալյիկիս կղզի: 1942թ. զարնանը ծանր հիվանդ վիճակում Ռեզա Փահլավին տեղափոխվեցին Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն Յոհանասուրություն:

առաջարկով: Սակայն այդ ընթացքում ամերիկացիները չէին կարող միակողմանի համաձայնագիր կըքել Իրանի հետ՝ անտեսելով հակահիտերյան կողայիշայի մուս մասնակիցներին: Չնայած այդ հանգամանքին՝ նրանք ամեն ինչ անում էին, որպեսզի ամրապնդեն իրենց դիրքերը և «քարի համրավ» ապահովեն երկրում:

Խորհրդային Միուրյան վրա Գերմանիայի հարձակումից հետո, ինչպես Իրանում, այնպես է Մերձավոր Արևելքում, իրադրությունը միանգամից փոխվեց հօգուտ հակահիտերյան դաշինքի երկրների: Գերմանական գործակալները վտարվեցին մի շաբթ երկրներից՝ հակահիտերյան դաշինքի գորքերի մուտքից հետո: Այդ երկրների թվին էին պատկանում նաև Իրանը ու Սաուսան Արաբիան: Արյունքում, զերմանացիների առջև վերջնականապես փակվեց Հնդկաստան տանող ճանապարհը: Իսկ Աֆրիկայի հյուսիսում ֆեղմարշայ Ռումելիի կորպուսի ջախչայիմամբ վերջակետ դրվեց Բնոլինի երազանքներին՝ մոտենալ Նեղոսի ափերին<sup>8</sup>:

Այսպիսով, պատերազմի հենց սկզբից հզոր տերությունները կարողացան ապահովել Իրանի իրական չեզորությունը: Այսուհետև առաջ նկավ ԽՍՀՄ-ին օգնություն տրամադրելու հարցը: Ուժիները բազմաթիվ էին, սակայն ամենաընդունելի տարրերակը համարվեց իրանականը<sup>9</sup>:

Նոր շահի՝ Մոհամմեդ Ռեզա Փահլավիի զահակալությունը սկզբեց Իրանի համար բարդ ու դժվարին պայմաններում: Երկիրը ուազմակալված էր խորհրդա-անգիյական գորքերի կողմից, բացակայում էր քաղաքական կայունությունը, զանձարանը դատարկ էր: Այդ պարագայում, բնականաբար, արտաքին ֆինանսատնտեսական օգնության կարիք կար, որը տվյալ իրադրության պայմաններում կարող էր տրամադրել միայն Միացյալ Նահանգները: 1942թ. վերջին Իրանի վարչապետ Ղավամ օս-Սալթանի գիտությամբ, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի համաձայնությամբ, Միացյալ Նահանգներն Իրան մտցրեց 30-հազարանոց մի բանակ, որի խնդիրն էր ապահովել «լենդ-լիզի»<sup>10</sup> գծով ուազմական բեռնարկի տեղափոխման անվտանգությունը դեպի Խորհրդային Միուրյուն: ԱՄՆ-ի պետքարտուղարությունը հայտարարեց, որ 1942 հոկտեմբերի 6-ին

<sup>8</sup> Ենլեյս Ի., «США и Ближний Восток», США: Региональные проблемы внешней политики, Москва, 1971, с.149.

<sup>9</sup> Առաջին ճանապարհը Վաղիվոստոկվ թակած ուղին էր, սակայն այն գտնվում էր ճանապետայի ճանմիշական հսկողության ներք: Երկրորդ ուղին Յուսիսային Սառուցյալ օվկիանոսն էր: Սակայն դեպք Մորմանն ուազմածերրորդ թեսնած նավերը հեշտությամբ դատում էին Խորվագիայի ափերին դարանակալած գերմանական սուզանավերի թիվամբ: Երրորդ ուղին Միջերկրական-Ալ ծոց առանձին պատճեն էր Վանձագալը: Իսկ որ Թուրքական ֆակել էր նեղուցները Բնութագրը և Դարդանելը: Դաշնակիցները հարկադրաբար կանգ առան իրանական ուղին վրա, մանավան ու առկա էր Կարսից ծոց Կասպիա ուղին մասն տրանժիրանական Երկարությն:

<sup>10</sup> Լենդ-լիզը Երկրորդ համաշխառային պատերազմի տարիներին ԱՄՆ-ին դաշնակից հակահիտերյան կողայիշայի երկրներն սպասարկմարդություն, ուազմակարական հումք, մերք և այլ ապրանքներ տալու ծրագիր էր: Լենդ-լիզի մասին օրենքը ԱՄՆ-ի Կոնգրեսն ընդունել է 1941թ. մարտի 11-ին:

ստորագրվել է մի արձանագրություն Միացյալ Նահանգների, Անգլիայի և Խորհրդային Միության ներկայացուցիչների միջն, համաձայն որի՝ Խորհրդային Միությանը հատկացնելու էին ռազմական սարքավորումներ, ռազմամթերք և հումք<sup>11</sup>: 1942-ից մինչև պատերազմի ավարտ Պարսից ծոցի հրամանատարությունը Իրանի տարածքով տեղափոխուց ավելի քան 3,5 միլիոն տոննա բեռ՝ «Ենթ-լիզ» ծրագրի շրջանակներում: Հարկ է նշե, որ այլ տվյալներով պատերազմի ժամանակ դաշնակիցները Իրանի տարածքով խորհրդային Միությանը մատակարարել են շուրջ 5 մլն տոննա ռազմամթերք և այլ ապրանքներ, մինույն ժամանակ խոստանապով Իրանի կառավարությանը ևս ցուցաբերել տնտեսական օգնություն, ինչպես պատրազմի, այնպես էլ հետպատերազմյան տարիներին<sup>12</sup>: Ամերիկացի պատմաբան Քեննետ Փոյզելը իր աշխատությունում մանրամասներն ներկայացնում է, թե ինչպիսի օգնություն է մատակարարվել ԽՍՀՄ-ին «Ենթ-լիզ» ծրագրի շրջանակներում<sup>13</sup>: Ի ենա, պատերազմի ժամանակ ԽՍՀՄ-ին օգնություն ցուցաբերելու համար իրանական ուղին համարվում էր ինչոք հնարավոր ճանապարհներից երկրորդ ամենակարևոր ուղին<sup>14</sup>:

Մոհամադ Ռեզա շահ Փահլավին կարևորել է իր երկրի վրայով իրականացված օգնությունները, նշելով, որ եթե դաշնակիցները Իրանի տարածքով այդքան օգնություն չհատկացնեին ԽՍՀՄ-ին, ապա հավանական է, որ Գերմանիայի հարձակումը 1942թ. պակավեր հաջողությամբ, և Իրանը ևս օկուպացվեր նրանց կողմից: Զցանկանալով նսեմացնել այդ օգնության իրական արժեքը՝ այնուամենայնիվ գտնում ենք, որ Խորհրդային Միության հաջրանակը կախված չէր Միացյալ Նահանգների կողմից հատկացված օգնությունից:

1941թ. ապրիլին Մեծ Բրիտանիան հիմնեց «Միջնարևելյան մատակարաման կենտրոնը», որին 1942թ. մայիսից անդամակցեց նաև ԱՍԴ-ը: Այդ կենտրոնի շնորհիվ Մերձավոր և Միջին Արևելյան երկրների ողջ տնտեսությունը կենտրոնացվեց անզոր-ամերիկյան հսկողության ներքո: Այդ կազմակերպությանը հաջողվել էր իր ազդեցությանը ենթարկել Եգիպտոսի, Սուդանի, Տրիպոլիտանիայի (Լիբիա), Սումալիի, Էրիթրեայի, Եթովպիայի, Ալբանի, Սաուդյան Արաբիայի, Անդրհորդանանի, Պաղեստինի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Իրանի, Կիպ-

<sup>11</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, том I, 1946, с.313.

<sup>12</sup> Richard F.Nyrop, Iran: A Country Study, Washington, 1978, p. 55-56.

<sup>13</sup> Միացյալ Նահանգները և Բրիտանիան մատակարարեցին մոլորապես 18 մլրդ դոլարի սարքավորումներ: Միայն ԱՍԴ-ն առաքել է 12,500 տասնկ. 380,000 թեժառադր մերժնա, 35,000 մարդաստր մերժնա, 8,000 տրակոտ, 22,000 ինքնարիչ, 15 մն գոյս լուղի, 62 մն<sup>2</sup> արդ բուր, 107 մն<sup>2</sup> արդ բանակ, 34 միլիոն համազգեստ, 4,2 միլիոն տոննա սմուն, 956,000 դոլր հեռախոսի կարել, 35,000 ուժառ կայս, 380,000 դաշտայի հեռախոս: Պատարագավի ալյարտին, Կարմիր բանակի թիվանուար մերժնաների երկու քրորոյ ամերիկյան լին: Դաշնամբներից պատամբվեց որոշ ճամանակ, որպեսզի ամրապնդեն իրանական ուղին և արդեն 1943թ. ԽՍՀՄ-ին տրվուի «Ենթ-լիզ» օգնության ծրագրի 34%-ն անցնում էր Իրանի տարածքուն: Kenneth M. Pollack, The Persian Puzzle, The conflict between Iran and America, New York, 2004, p. 40.

<sup>14</sup> J.C.Hurewitz, Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914-1956, volume II, New York, 1972, p. 238.

րոսի, Մալթա կղզու և Թուրքիայի տնտեսությունները<sup>15</sup>: Մերձավոր և Միջին Արևմտյան երկրների տնտեսական դեկը իր ձեռքում պահելով՝ կենտրոնը ջանաց հիշատակված երկրներն ենթարկել նաև իր քաղաքական ազդեցությանը:

Իրանին առավել զգոն պահելու, ինչպես նաև բրիտանական գործերի ներկայությունն օրինականացնելու նպատակով 1942թ. հունվարի 29-ի Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Միության և Իրանի միջև կնքվեց «Դաշինքի վերաբերյալ պայմանագիր», որի 4-րդ հոդվածում նշվում էր, որ դաշնակից պետությունները կարող են Իրանում պահել անհրաժեշտ քանակի ցամաքային, ծովային և օդային ուժեր: Շեշտվում էր նաև, որ իրենց զորքերի առկայությունն Իրանում երթեք չի կրելու ռազմակալման ընույթ: Դաշնակիցները խոստանում էին հարգել Իրանի տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը: 5-րդ հոդվածի համաձայն պատերազմի ավարտից վեց ամիս հետո կողմերը պարտավորվում էին հետ քաշել իրենց ուժերն Իրանից, խոստանում էին նպաստել պատերազմի հետևանքով Իրանում առեղծված տնտեսական դժվարությունների հաղթահարմանը: Եր հերթին Իրանը պարտավորվում էր ստեղծել բարենպաստ պայմաններ՝ իր ճանապարհներով Խորհրդային Միությանը հատկացվող ռազմական օգնության փոխադրումը դյուրին դարձնելու համար: Միաժամանակ Իրանը խօսեց հարաբերությունները Գերմանիայի, Խոտանիայի, Ճապոնիայի հետ և 1943թ. սեպտեմբերի 9-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային<sup>16</sup>:

Օգտվելով ստեղծված իրավիճակից Միացյալ Նահանգները ևս զգալիորեն ուժեղացրեց իր դիրքերն Իրանում:

1942թ.-ից սկսած ամերիկան խորհրդականների առաքելությունը գեներալ-մայոր Քլարենս Ս.Ռիդիի գլխավորությամբ զգալի աշխատանք կատարեց իրանական բանակում, որին հետազոտում փոխարինեց գեներալ-մայոր Ռոբերտ Վ.Գրոուն, 1942թ.-ից սկսած իրանական ժանդարմերիան վերակազմավորվեց և արդիականացվեց գեներալ Նորման Շվարցլուպֆի, իսկ այսուհետև՝ զնդապես Զեյմ Ռ.Փիլիպս շնորհիվ<sup>17</sup>:

Ամերիկացիների ներթափանցումը Իրան ավելի հետևողական կերպով ընթացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Ենթելով երկրի սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից և իրավիճակը փորձ-ինչ փոխելու ակնկալիքով՝ Թեհրանն օգնության խնդրանքով դիմեց Վաշինգտոնին: 1942թ. ամիանը վարչապետ Ահմադ Ղազամ օս-Սալթաննեն խնդրեց Իրան ուղարկել ամերիկյան ֆինանսական խորհրդականների մի խոմք, Արթոր Չեսթեր Միլս-առյոի գլխավորությամբ, ով քավական լավ ծանոթ էր երկրին ու նրա առաջ ծա-

<sup>15</sup> Թրյան Յ.Կ., «Պայքար նավթի համար, Երևան, 1957, էջ 171:

<sup>16</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, том I, с. 217-221, The Tri-Partite Treaty of Alliance, January 29, 1942 (Signed Millspaugh Arthur C., Americans in Persia, New York, 1976, p. 276-279.)

<sup>17</sup> Donald N.Wilber, Iran: Past and Present, Princeton, New Jersey, 1950, p. 157, p. 163.

ոացած խնդիրներին: Միլսպոն իր խորհրդականների ուղեկցությամբ 1942թ. ժամանեց Թեհրան:

Բացի Փինանսական և տնտեսական օգնություններից՝ ԱՄՆ-ը հոգ տարավ, որ Իրանի կառավարության քարձրագոյն պաշտոններում հայտնվեն ամերիկյան քաղաքացիներ, որոնք ել թնականարար, պաշտպանելու էին Միացյալ Նահանգների շահերն Իրանու: Այսպէս, գնդապէն (հետազյում գիներայ) Նորման Շվարցկոպֆին 1942թ. հանձնարարվեց կատարելագործել Իրանի ժանդարմերիան (այն հայտնի էր ԶԵՆՍԻՇ անվամբ<sup>18</sup>): 1943թ. Իրանի և ԱՄՆ-ի միջև կնքված պայմանագրի 20-րդ հոդվածի համաձայն ԶԵՆՍԻՇ-ի ղեկավարության խնդիրն էր վերահսկել 25.000 հոգուց բաղկացած ներքին անվտանգության ուժերը: Այն ուղղակիորեն հաշվետու էր Թեհրանի ներքին գործերի նախարարությանը<sup>19</sup>: Գեներալ Քարենս Ս. Ռիդլին աշխատելու էր իրանական քանակում (այդ նպատակով 1947թ. ստեղծվեց ԱՌ-ՍԻՇՀ<sup>20</sup>), Մարս Վեսրոն Թորենքերգը, որ 1944-49թ-ին ԱՄՆ-ի պետքարտուղարության խորհրդականն էր, Իրանու գործեց որպես նավթային կառավարիչ, Լ.Ս.Թիմերմանը վերահսկում էր ոստիկանության աշխատանքները և Իրանի ներքին գործերի նախարարությունուն խորհրդականն էր: Շերիդանը պարենափրման նախարարության խորհրդականն էր, Գ.Գրեշամը նշանակվեց Իրանի մարասային վարչության գլխավոր տնօրին և Իրանի արտաքին առևտորի հարցերով խորհրդական, Ու.Լեկառնուր՝ գլխավոր զանձապահ, Ռ.Պիկսլին՝ ներքին եկամուտների ղեկավարման գլխավոր տնօրին: Ամերիկյան խորհրդականների վերահսկողության տակ էին գտնվելու գների կարգավորում, արդյունաքրթությունը, մատակարարությը<sup>21</sup>: Միլսպոն լիազորությունների մեջ էր մտնում պատերազմի ժամանակ, արտակարգ իրավիճակի ղեպքում վերահսկել Փինանսները, բանկային գործը, կառավարության գործունեությունը, առևտորը<sup>22</sup>: Բնականարար Միացյալ Նահանգների վերոհիշյալ քաղաքացիները, բայց իրեց առջև դրված պարտականություններից, իրենց գործունեության ժամանակ մեծապէն նպաստելու էին Իրան-ԱՄՆ փոխարարելությունների զարգացմանը, փորձելով նվազեցնել Բրիտանիայի և ԽՍՀՄ-ի ազդեցությունը երկրում:

1943թ. ապրիլի 8-ին Ղավամ օս-Սալյաննի ջանքերով Վաշինգտոնում ստորագրվեց իրանա-ամերիկյան առևտրական պայմանագիրը: Այն նախատեսում էր քարենապատ պայմաններ ստեղծել և թերևացնել մաքսատուրքերի

<sup>18</sup> US Military Mission with the Imperial Iranian Gendarmerie.

<sup>19</sup> James F. Goode, The United States and Iran, 1946-51, The Diplomacy of Neglect, p. 24

<sup>20</sup> US Military Mission with the Imperial Iranian Army. James F. Goode, The United States and Iran, 1946-51, The Diplomacy of Neglect, p. 24.

<sup>21</sup> Samihi K.Farsoun and Mehrdad Mashayekhi, Iran: Political Culture in The Islamic Republic, London & New York, 1992, p. 238. Мельников Л.И., Политическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), Москва, 1960, с. 168.

<sup>22</sup> Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, New Haven & London, 2003, p.107

գանձման չափերն ամերիկյան ապրանքների ներկրման և իրանական ապրանքների՝ Միացյալ Նահանգներ արտահանման ժամանակ: Իրանից հիմնականում առաքվում էին գորգեր և զյուղատնտեսական ապրանքներ: Ի դեպ, 1932–1943թթ. ԱՄՆ-ը յուրաքանչյուր տարի Իրանից գնել էր 3 մլն դոլարի գորգ<sup>23</sup>: Բացի գորգերից, Իրանն արտահանում էր նաև ոչխարի, գառան, այծի և վայրի կենդանիների կաշի, բուսախեծ, բնական բաղամ, բուրդ, բամբակ, մորթի, բրինձ, ցորեն, ձեռագործ կարպետներ, չորացրած մրգեր և չամիչ, խավար, հաշիշ, նավթ և նավթամբերը:

Ներմուծում ևս մեծ տոկոս էր կազմում: Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին տարիներից սկսած՝ ամերիկյան ապրանքները ողողեցին իրանական շուկան: 1940թ. ամերիկյան ապրանքների ներմուծման ծավալը Իրան, նախորդ տարվա համեմատ, աճեց 150%-ով: 1944–1945թթ. Իրանի արտաքին առևտորի շրջանառության մեջ Միացյալ Նահանգների քամինը կազմեց 23,3%, որով ԱՄՆ-ը երկրորդ տեղը գրավեց՝ գիշելով միայն Հնդկաստանին (30%)<sup>24</sup>:

Իրանի մամուլը նշում էր, որ 1943թ. ապրիլի 8-ի պայմանագրով պաշտոնական Թեհրանի նպատակն էր արտաքին առևտորում ԱՄՆ-ին հատկացնել այն արտոնյալ դիրքը, որ մինչև պատերազմը ուներ Գերմանիան: Ամերիկյան խորհրդականների թիվը 1943թ. հասնում էր 75-ի, և նրանք իրենց զգուս էին ինչպես օկուպացրած Երկրում: Ամերիկյան թղթակից Օսվալդ Վիլարդը, անդրադառնալով Միացյալ Նահանգների քաղաքականությանը Իրանում, 1943թ. «Ամերիկյան Մերկուրի» ամսագրում գրում է: «Մենք Իրանի նկատմամբ հովանավորություն ենք հաստատել և դրան հասկել ենք այն աստիճան լուր ու աննկատ, որ նույնիսկ վերջերս միայն շատ քիչ ամերիկացիներ գիտեին, որ այնտեղ տեղափոխվել են հազարավոր քաղաքացիներ և բավականին նյութական միջոցներ, որոնց էլ հաջորդել է մի ամբողջ բանակ «Պարսից ծոցի հրամանատարություն» անվամբ»<sup>25</sup>: Պարսից ծոցի Հրամանատարության վերահսկողության տակ էին գտնվում Խորրեմշահը, Բենդեր Արքաս և Բենդեր Շահփոր նավահանգիստները<sup>26</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի դեկավար շրջանները խիստ հետաքրքրված էին Իրանով: Այդ կապակցությամբ ԱՄՆ-ի պետքարտուղար Քորդել Հելլը նշում էր, որ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից և ոչ մեկն այդքան չեր գրավում ԱՄՆ-ի դեկավար շրջանների ուշադրությունը, որքան Իրանը:

Այդ բոլորով հանդերձ՝ 1942թ. աշնանն ԱՄՆ-ը կազմակերպեց երկու առաքելություն Իրան. 1. ուսմական՝ իրանական բանակը վերակազմակերպելու համար, 2. ուստիկանական՝ իրանական ժանդարմերիային օգնություն ցույց

<sup>23</sup> Donald N.Wilber, Iran: Past and Present, p. 139.

<sup>24</sup> Орлов Е.А., Россия и Иран в XX веке, Иран: Ислам и власть, с. 199.

<sup>25</sup> Орлов Е.А., Россия и Иран в XX веке, с. 199–200.

<sup>26</sup> The Encyclopaedia of Islam, Volume IV, Leiden, 1978, p. 41.

տալու համար: Իսկ 1943թ. մարտին Մեջլիսը որոշում ընդունեց 4,5 մլն դոլարի օգնության խնդրանքով դիմել Սիացյալ Նահանգներին՝ զորքի և ժանդարմա-րիայի համար անհրաժեշտ գներ և զինամթերք գնելու նպատակով:

Ամերիկացիների գործունեության հիմնական ուղղություններից մեկը երկրում ռազմական ուժերի նկատմամբ ունեցած վերահսկողությունն էր, որը կարող էին օգտագործել և կառավարության վրա ուղղակի ձևում գործադրելու, և իրանական բանակի՝ որպես պատենտիալ դաշնակցի մարտունակությունը բարձրացնելու համար:

1943թ. Դաշնակցից պետությունների դեկավարները վճռեցին հանդիպում կազմակերպել Թեհրանում, ընտարկելու համար մի շարք հարցեր. Եվրոպայում երկրորդ ճակատ բացելու, աշխարհի պետությունների հետապահազմյան կառուցվածքի և ժողովորդների անվտանգության հարցերը: 1943թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ին գումարվեց Թեհրանի կոնֆերանսը, որտեղ ԱՄՆ-ի նախագահ Ֆ. Ռ. Ռուզվելտը, Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը և ԽՍՀՄ-ի վարչապետ Ի. Ստալինը հայտարարեցին. «...Մեր երկրները համատեղ կաշխատեն ինչպես պատերազմի, այնպես էլ հաջորդող՝ խաղաղության ժամանակաշրջանում»<sup>27</sup>: Թեհրանի կոնֆերանսի շրջանակներում երեք տերություններն ընդունեցին հոչակագիր նաև Իրանի վերաբերյալ: «Միացյալ Նահանգները, ԽՍՀՄ-ը և Միացյալ Թագավորությունն ընդունում են Իրանի իրականացրած օգնությունը պատերազմի ժամանակ ընդդեմ ընդհանուր թշնամու, հատկապես հեշտացնելով քեռների փոխադրումը դեպի Խորհրդային Սիուրյուն: Այս երեք կառավարությունները գիտակցում են, որ պատերազմն Իրանի համար առաջացրել է առանձնահատուկ տնտեսական դժվարություններ և նրանք համաձայնվում են, որ այսուհետև ևս կհատկացնեն Իրանի կառավարությանն այնպիսի տնտեսական օգնություն, ինչպիսին հնարավոր կլինի»<sup>28</sup>: Ի դեպ, Զ. Լենկ-զնվակու հավաստիացմամբ, Իրանի վերաբերյալ համատեղ հայտարարությունը Ռուզվելտի մտահաղացումն էր<sup>29</sup>, որով ըստ Եւրյան Միացյալ Նահանգները փորձում էր բնագավառ իր վերաբերությունը Իրանի նկատմամբ: Միևնույն ժամանակ, հյուրընկալվելով դաշնակցի իրանական հոդում թե՛ Ռուզվելտը, և թե՛ Չերչիլը հարկ չհամարեցին այցելել Երիտասարդ շահին, այլ նրան կանչեցին իրենց մոտ դեսպանատուն: Երեք գերիզոր տերությունների դեկավարներից միայն Ի. Ստալինը, ի զարմանս նոյնիսկ Իրանի շահի, հետևեց դիվանագիտական արարողակարգին և ինքն այցելեց Մոհամմեդ Ռեզա Փահլավիին: Ի. Ստալինը և Մոհամմեդ Ռեզա շահը, ի թիվս մի շարք այլ հարցերի, ընտարկեցին Իրանին

<sup>27</sup> The Tehran Conference, November 28–December 1, 1943, Senate, A Decade of American Foreign Policy, Basic Documents, 1941–1949, Washington, 1950, p. 23.

<sup>28</sup> Декларация трех держав об Иране, Внешняя политика Советского Союза в период Отечественной войны том I, 1946, с. 426–427. Declaration Regarding Iran–December 1, 1943, Constitutions, Electoral laws, Treaties of states in the Near and Middle East, by Helen Miller Davis, London, 1953, p. 148.

<sup>29</sup> George Lenczowski, The Middle East in World Affairs, New York, 1956, p. 180.

հնարավիր տնտեսական և ռազմական օգնություն տրամադրելու խնդիրը: Նկատի ունենալով օգնության ծավալը և դրա մշտական ուղղաձությունը՝ Ի.Վ.Ստալինն ասաց. «Դուք կարող եք չափանկատանալ հետագա 50 տարիների համար»<sup>30</sup>: Նա մասնավորապես առաջարկեց Իրանին տրամադրել տանկային զունդ և ռազմական ինքնարիտուների խումբ: Երկու շաբաթ անց Խորհրդային Միության դեսպանը իրանական կողմին ներկայացրեց իրենց պայմանը՝ խորհրդային զորքի սպայակոյուր պետք է ղեկավար պաշտոններ գրադեցներ այդ ստորաբաժանման մեջ: Այս պայմանը չքավարարեց շահին, ով առավել հակված էր նեափի ԱՄՆ-ը և խուսափում էր Խորհրդային Միության հետ նման հարաբերություններից:

1943թ. ամերիկյան հրամանատարությունն անհրաժեշտ համարեց Մերձավոր Արևելքում ստեղծել մի կայուն և հզոր ռազմաօդային բազ: Ճիշտ է, պատերազմի տարիներին ամերիկացիներն Արադանում իրենց համար կառուցել էին օդանավակայան, սակայն գիտեին, որ երկար ժամանակ դա իրենց ձեռքում չեն կարող պահել, ուստի Պարսից ծոցի գոտում՝ Սաուտյան Արարիայում (Դահրանում), որտեղ գտնվում է ԱՐԱՄԿՕ-ի կենտրոնատեղին, կառուցեցին ռազմաօդային բազա<sup>31</sup>:

1943թ. ԱՄՆ-ի նախագահ Ֆ.Դ.Ռուզվելտը մշակեց, այսպես կոչված, «հովանավորման» քաղաքականությունը, որը հետպատերազմյան տարիներին շարունակվեց նրան հաջորդող գրեթե բոլոր նախագահների կողմից: Այդ քաղաքականության էլույթուն այն էր, որ ամերիկյան կենսական շահերի գոտիներում օգնության մեխանիզմի շնորհիվ ստեղծվեն ազդեցության ուժու լծակներ: Աստրակուս, Իրանը գտնվում էր ամերիկյան կենսական շահերի շրջանակում ոչ միայն իր նավթի և բնական ռեսուրսների, այլև գրաված ուազմավարական դիրքի շնորհիվ:

Միացյալ Նահանգները մնե հավակնություններ ուներ նաև Իրանի Նավթային ռեսուրսների նկատմամբ: 1944թ. ամռանն ԱՄՆ-ից Իրան ժամանեց նավթային երկու մասնագետն Հերքերս Հովհանները և Ա. Ա. Քերտիսը<sup>32</sup>, որոնք Վաշինգտոնից պաշտոնական հրահանգ էին ստացել Իրանի հետ նավթային համաձայնություն ձեռք բերելու ուղղությամբ:

Նմանատիպ հավակնություններ ուներ նաև Իրանի հյուսիսային հարևանը՝ 1944թ. հոկտեմբերի 24-ին ԽՍՀՄ-ի արտօղոքնախարարի տեղակալ Սերգեյ Բավլարաձեն Իրանում ԽՍՀՄ-ի դեսպանատանը հանդես եկավ ելույթով, որտեղ ներկայացրեց Իրանից ակնկալվող կոնցեսիայի հարցը: Խորհրդային Միությունը ձգտում էր կոնցեսիա ստանալ Իրանի հյուսիսային շրջաններում՝ Ասրաբատականում, Գիյանում, Մազանդարանում, Սեման շրջանի մի մասում,

<sup>30</sup> Pahlavi Mohammad Reza, The Shah of Iran, Answer to History, New York, 1980, p.72.

<sup>31</sup> Թրյան Յ.Կ., Պայքար նավթի համար, էջ 208:

<sup>32</sup> متوجه، همه ماقول شد از اینکه ناشایستگی را در خانه از پسران مانند مانند اینها داشتند.

Խորասանի և Քոչանի հյուսիսային հատվածներում<sup>33</sup>: Իրանի կառավարությունը իրավասու էր իրականացնել տեխնիկական վերահսկողություն կոնցեսիոնների գործունեության նկատմամբ: Կոնցեսիայի ժամկետն ավարտվելուն պես կոնցեսիոնների բոլոր ձեռնարկությունները կմնային Իրանին: Խորհրդային կողմը նաև խոստանում էր իրանահպատակներից պատրաստել որակավորված ինժեներներ, տեխնիկներ և նավթարդյունաքերության ոլորտում աշխատող քաջարածիկ կադրեր: Կոնցեսիոնները իր վրա էր վերցնում աշխատողների և կոնցեսիայի ծառայողների ու նրանց ընտանիքների առողջապահության և սանիտարական խնդիրների ապահովումը<sup>34</sup>:

Սակայն իրանական կառավարությունը կոչ արեց Մեջլիսին հետաձգել ԽՍՀՄ-ին կոնցեսիա տրամադրելու հարցը՝ մինչև պատերազմի ավարտը, որը հավասարացր էր մերժման:

Ավելին, 1944թ. դեկտեմբերի 2-ին Իրանի Մեջլիսն ընդունեց պատգամավոր Մոհամեման Մոսադեհի առաջ քաշած օրինագիծը, համաձայն որի ոչ մի վարչապետ կամ նախարար իրավասու չեն բանակցություններ վարել կամ ստորագրել որևէ պայմանագիր նավթային կոնցեսիայի հարցերով<sup>35</sup>:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Միջին Արևելքում ամերիկյան քաղաքականության առաջնակարգ օրինակուներ դարձան Թուրքիան և Իրանը: Իտարերկություն Թուրքիայի, որն 1941-46թթ. Միացյալ Նահանգներից ստացել էր 102,9 մլն դոլարի ուազմական օգնություն<sup>36</sup>, Իրանը նման մեծածավալ աջակցություն չստացավ:

Միացյալ Նահանգների ազդեցության ամրապնդման համար քարերար հող դարձավ այն, որ պատերազմից հետո Իրանի տնտեսական վիճակը կտրուկ վատացավ, երկրում արտադրության ծավալը կրճատվեց: 1944թ. ապրիլին գնների գնները 1937թ. համեմատությամբ քարձաքանակ 11 անգամ<sup>37</sup>:

Միևնույն ժամանակ Միասպարհի գործունեությունից դժգոհ էին Իրանում թե՛ պահպանողականները, և թե՛ քարեփոխչները: Հիմնական խնդիրն էր իրենց շահերին միջամտելը, գնների քարձաքանակ չհաջողված արդյունաքերությունը: Երբ 1944թ. վերջին Միլլապն փորձեց հեռացնել աշխատանքից Ազգային քանի ղեկավարին, դա նպաստեց Իրանում դժգոհության մեծացմանը և արդին

<sup>33</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны (Документы и материалы 1 января-31 декабря 1944г.), том II, 1946, с.275

<sup>34</sup> Внешняя политика Советского Союза в период Отечественной войны, том II, с.276.

<sup>35</sup> Iranian Law Prohibiting the Grant of Oil Concessions to Foreigners and its Effect, Law Adopted by the Majlis, 2 December 1944. J.C.Hurewitz, Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record: 1914-1956, volume II, New York, 1972, p. 241.

<sup>36</sup> Марунов Ю.В. Поцкверия Б.М., Политическое подчинение Турции интересам американского империализма, Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), Москва, 1960, с. 81.

<sup>37</sup> Белинович С.Е., Что происходит в Иране, Стенограмма публичной лекции, прочитанной 13 февраля 1947 года в Лекционном зале в Москве. с.3. Мамедова Н. М., Кооперативное движение в современном Иране, Иран (сборник статей), Москва, 1971, с. 143.

պահանջում էին առաքելության հրաժարականը, քանզի գտնում էին, որ առաքելությունը չէին արդյունք է տվել: Միլսպոն ջանում էր իրականացնել կարևոր փոփոխություններ, բայց նա կարող էր համեմ հաջողության միայն իրականացնելով բարեփոխումների քաղաքականություն և իրանական բարեփոխչներին ընդգրկելով այդ ծրագրի վարչակազմի մեջ<sup>38</sup>: Սակայն Միլսպոն չարեց դա:

1945 թվականից ամերիկացիները կիրառման մեջ դրեցին իրենց օգնության ծրագիրը, որը սկզբնական շրջանում իրականացվում էր հիմնականում հացահատիկի, սերմացողի և սննդամբերի լայնածավալ մատակարարումներով: Սակայն ավելի ոչ այդ օգնությունն ընդգրկեց նաև այլ բնագավառներ, ընդհակա մինչև զենքի և սպառազինության մատակարարում: Հետպատերազման շրջանում Իրանն ԱՄՆ-ից ստացավ բավականին թվով ականակիր, ականադիր և ականորսիչ նավեր, իսկ Բրիտանիան հատկացրեց եսկարային ականակիրներ<sup>39</sup>:

Միացյան Նահանգները Երկրորդ աշխարհամարտից հետո իրավի այն հազվագյուտ պետություններից էր, որը պատերազմից դուրս եկավ ամրապնդված տնտեսական և ֆինանսական համակարգով: Ֆորս-Նորսում և ԱՄՆ-ի ուսկու պաշարի մյուս պահեստարաններում մոտավորապես 23 մլրդ դոլարի ուսկու էր կենտրոնացված<sup>40</sup>: Դրա շնորհիվ էլ Միացյալ Նահանգները կարողացավ իրականացնել իր օգնության ծրագրերը:

1945թ. ապրիլին՝ Ֆ.Դ. Ռուզվելտի մահից հետո, իշխանության գլուխ անցած դեմոկրատ Հարի Թրումենը շարունակեց իր նախորդի՝ «հովանավորման» քաղաքականությունը:

Հետպատերազման շրջանում ամերիկյան ռազմական առաքելությունները և խորհրդականների խմբերը հատկապես ակտիվ գործունեություն ծավալեցին Ասիայի և Աֆրիկայի 34 երկրներում: Այդ առաքելության որոշ կենտրոններում ծառայողների թիվը հասնում էր մինչև 1,500-ի:

1946թ. ԱՄՆ-ի արտաքին առևտուրի Ազգային խորհուրդը, որի անդամներն էին ամերիկյան առաջատար ընկերությունները, հուշագիր հրապարակեց, որով կոչ էր առում կառավարությանը «վերացնել խոչընդոտները» և բացել Միջին Արևմերի դուները ԱՄՆ-ի առևտուրի համար:

1946թ. սկզբներին Իրանի վարչապետ Ղավամ օս-Սալթանեն ձեռնամուխ էր եղել իրականացնելու երկրի արքացման և վերակառուցման 7-ամյա ծրագիրը: Սակայն այդ ծրագիրը իրականացնելը բավական բարդ էր, քանի որ նկատվում էր ինչպես որ արկայլ մասնագետների, այնպես էլ անհրաժեշտ ֆինանսական միջոցների պակաս: Խնդիրի լուծման համար Իրանը կրկին դիմեց Միացյալ Նահանգներին: Ամերիկյան «Մորիսոն-Նախոս» և «Օվերսիդ Քենսաթին» ընկերությունները հրավիրվեցին երկիր՝ որպես 7-ամյա ծրագրի իրա-

<sup>38</sup> Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, p. 107-108.

<sup>39</sup> Lenczowski George, Iran Under The Pahlavis, California, 1978, p. 423.

<sup>40</sup> Գործիքն Անասույն, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը: Ղամբը և իրականություն: 60-70-ական թվականներ, Երևան, 1981, էջ 24:

կանացման խորհրդատուներ: Ի դեպ, «Օվերսիս Քենսալթնս»-ը կապված էր «Ստանդարտ օյլ Քամփանի օֆ Նյու-Զերսիի» հետ:

«Մորիտոն-Նադոն» առաքելության ներկայացուցիչները Իրան ժամանեցին 1946թ. վերջին և 1947թ. հուլիսին քննարկման դրեցին իրենց ծրագիրը: Այն նախատեսում էր աստիճանաբար զարգացնել գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը: Առաքելությունը քննարկման էր դրեւ երկու ծրագիր: առաջինի իրականացման համար անհրաժեշտ էր 500 մլն դոլար, իսկ մյուսի համար 250 մլն դոլար: Իրանի կառավարությունը 1947թ. նոյեմբերին նախաձեռնեց ատեղծել Ծրագրավորման գերազույն խորհուրդ<sup>41</sup>:

1947թ. փետրվարին նոյն ընկերությունը խստացավ օժանդակել Իրանի կառավարությանը՝ իրականացնելու երկի տնտեսության 7-ամյա զարգացման ծրագիրը: Այդ նպատակով Համաշխարհային բանկը Իրանի կառավարությանը հատկացրեց 250 մլն դոլարի փարեկ: Ամերիկյան խորհրդականների կողմից մշակված 7-ամյա ծրագիրը (1949-1955թ.) նախատեսում էր աշխատանքով ապահովել քաղաքի և գյուղի անզործ քնակչության զգալի մասին: Ծրագրի ֆինանսավորումը նախատեսվում էր իրականացնել Անգլ-իրանական նավթային ընկերության «Լրացուցիչ համաձայնագրից» ստացվող հատկացումների միջոցով: Նոյն թվականին Իրան ժամանեց ամերիկյան մասնագետների նոր խումբ: 1947թ. հունվարի 8-ին Ղազամ օս-Սալյանն հայտարարեց, որ «ամերիկացի ինմեններները պատրաստում են տրանսպորտի, կապի միջոցների, գյուղատնտեսության, արդյունաբերության և Իրանի հասարակական հաստատությունների արդիականացման 7-ամյա ծրագիրը»: Շախմերը բաժանվեցին հետևյալ կերպ: քնակչության սոցիալական վիճակը բարելավվելու համար՝ 28.6%, գյուղատնտեսությանը՝ 25.0%, տրանսպորտինը՝ 23.7%, արդյունաբերությանը և լեռնաարդյունաբերությանը՝ 14.3%, նավթարդյունաբերությանը՝ 4.8%, հեռահաղորդագրությանը՝ 3.6%: Այդ բյուջեից մի զգալի մաս հատկացվեց առողջապահության պահպանմանը և կրթությանը: Ծրագրի շրջանակներում կառուցվեցին ջրանցքներ, շորջ 10 ամբարտակ և հիդրոէլեկտրակայաններ: Արդյունաբերության քնակավառում քայլեր կատարեցին զարգացնելու մետալուրգիական, տեքստիլ, ցեմենտի, քիմիական ձյուները, այսուհետ արտադրությունը և լեռնաարդյունաբերությունը: Կառուցեցին ավելի քան 3.000 կմ նոր ճանապարհներ, հետազոտություններ, կրթության և սպորտի զարգացմանը: Ծրագրի շրջանակներում կառուցվեցին ջրանցքներ, կայանները և հեռախոսային ցանցերը<sup>42</sup>: Ըստ ծրագրի՝ ամբողջ գումարը կազմում էր 21 մլրդ դիար, որից 5 մլրդ դիարը նախատեսվում էր

<sup>41</sup> Hossein Amirsadeghi, Twentieth-Century Iran, London, 1977, p. 67.

<sup>42</sup> Mohammad Reza Pahlavi, The Shah of Iran, Answer to History, New York, 1980, p. 81-82.

ծախսել օդանավակայանների, նաև հանգիստների, ուղղմավարական նշանակություն ունեցող ճանապարհների կառուցման վրա, մինչդեռ արդյունաբերության համար, որը, ինչպես հայտնի է, Երանում գտնվում էր վատ վիճակում, հատկացնում էին ընդամենը 3 մլրդ ռուբ: 7-ամյա ծրագրի ֆինանսավորումը ենթադրվում էր իրականացնել ամերիկյան 250 մլն դոլար պարուի հաշվին, որը կազմում էր գրեթե 8 մլրդ ռուբ: Մնացած գումարի մասնաբժինը պետք է փակվեր ի հաշիվ իրանական գանձարանի<sup>43</sup>: Ծրագիրը նախատեսում էր 7 տարվա ընթացքում ծախսել 650 մլն դոլար: Բացի այդ, Երանի կառավարությունը տարեկան վճարում էր 6 միլիոն դոլար այդ ծրագիրը իրականացնող ամերիկյան առաքելության անդամներին:

Պետք է նշել, որ նավթային մի շաբթ ընկերություններ, հատկապես «Ստանդարտ Օլ օֆ Նյու Ջերսի» կոնսորցիոնը և «Օվերսիզ Քենսավթնսը» թեկրան ուղարկեցին տնտեսական խորհրդականների, ովքեր պետք է օգնեին իրագործել տնտեսության զարգացման 7-ամյա ծրագիրը<sup>44</sup>:

Սակայն նժամը չէ կորած նրանց ժամանման իրական պատճառները. ինչպես գիտենք, Միացյալ Նահանգները երկար ժամանակ պայքարում էր իրանական նավթի նկատմամբ Մեծ Բրիտանիայի նման իրավունքներ ունենալու համար: Եվ այժմ Միացյալ Նահանգների նավթարդյունաբերողների առաջ իրական հնարավորություն էր ստեղծվել այդ խնդիրը լուծել:

Երանի զարգացման 7-ամյա ծրագիրը նոր հարթության վրա բարձրացրեց երկիրը, այն նախատեսում էր ունենալ շարունակական բնույթ, ինչն էլ պետք է երաշխիք հանդիսանար երկրի զարգացման համար:

1946թ. Միացյալ Նահանգները Երանին հատկացրին 3,3 միլիոն դոլարի փոխառություն, իսկ 1947թ. տվեցին 22,5 միլիոն դոլարի փոխառություն: Դա թիշ գումար չէր, բայց այն ավելի թիշ էր, քան իրանցիներն ակնկալում էին, սակայն Վաշինգտոնը հրաժարվեց բավարարել նրանց ցանկությունները<sup>45</sup>: Իսկ 1947թ. հունիսին Միացյալ Նահանգները որոշեց Երանին հատկացնել 25 մլն դոլար՝ ուղմական տեխնիկա գնելու համար: 1948թ. փետրվարին Երանի Մեջլիսը սահմանափակեց գնումի չափը, համաձայնվեց ԱՄՆ-ից 10 մլն դոլարի պարու վերցնել: Անհրաժեշտ էր նաև 16 մլն դոլար այդ ամենը Միացյալ Նահանգներից Երան հասցնելու համար: Այսպիսով, վարկի ամբողջ արժեքը հասավ 26 մլն դոլարի<sup>46</sup>: Պարտը պետք է մարվեր 12 տարվա ընթացքում՝ սկսած 1950թ.-ից՝

<sup>43</sup> Самыловский И.В., Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке с.70.

<sup>44</sup> Новое Время, N3, M, 1980, с. 28.

<sup>45</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 49.

<sup>46</sup> Hurewitz J. C., Middle East Politics. The Military Dimension, New York, 1969, p. 279. Hossein Amirsadeghi, Twentieth-Century Iran, London, 1977, p. 65. Lenczowski G., The Middle East In World Affairs, New York, 1956, p. 188. Lewis V.Thomas, Richard N.Frye, The United States and Turkey and Iran, Massachusetts, 1952, p. 251.

տարեկան վճարելով 2 3/8 տոլոս<sup>47</sup>: Բնուները 1949թ. մարտին հասան Իրան: Այդ ժամանակից ի վեր իրանական զորքին ու ժանդարմերիային պարբերաբար ամերիկյան զններ ու զինամթերք էր մատակարարվում:

1947թ. հոկտեմբերի 6-ին ստորագրվեց իրանա-ամերիկյան ռազմական համաձյանագիրը, ռազմական նախարար Մահմետ Զամիթ և Իրանում ԱՄՆ-ի դեսպան Զորջ Ալլենի միջն, որով Միացյալ Նահանգներին հնարավորություն ընձեռվեց ազդելու Իրանի զինված ուժերի կազմավորման վրա: Ամերիկացիներն անմիջականորեն համագործակցելու էին Իրանի Ռազմական ուժերի նախարարության, ինչպես նաև իրանական բանակի անձնակազմի հետ՝ նպատակ հետապնդելով բարձրացնել իրանական բանակի մարտունակությունը: Ըստ համաձյանագրի 24-րդ հոդվածի՝ Իրանը պարտավորվում էր չընդունել ռազմական խորհրդականներ որևէ այլ երկրից՝ առանց Միացյալ Նահանգների համաձյանության: Որոշում կայացվեց Իրան ուղարկել ամերիկյան ռազմական նոր առաքելություն, որով Է՛լ ավելի կմեծանար ամերիկյան ռազմական խորհրդականների վերահսկողությունն իրանական բանակի նկատմամբ: Համաձյանագիրը նախատեսում էր մեծացնել ամերիկացի աշխատակիցների թիվը Իրանում և միայն ԱՄՆ-ին էր իրավունք վերապահվում իրանական բանակում ունենալ սպայական խորհրդականները<sup>48</sup>: Ըստ համաձյանագրի՝ ամերիկյան ռազմական առաքելությունը պարտավորվում էր կազմել և մշակել իրանական բանակի զինավոր շտարի ծրագրերը, կատարելագործել բանակի կառույցների կազմակերպչական աշխատանքները և անցկացնել ռազմական ուսուցում: Ամերիկյան ռազմական առաքելության անդամները իրավունք ունեին մտնել Իրանի ռազմական բոլոր հաստատությունները, ուսումնասիրել նրանց տվյալները: Նրանք իրավասու էին «այցելել և տեսչական ստուգում իրականացնել բանակի ցանկացած ստորաբաժանումներում, իսկ իրանական սպաները պեսը է ամեն կերպ նպաստեին և ներկայացնեին իրենց բոլոր ծրագրերը, փաստաթղթերը, զեկույցներն ու գրառումները»<sup>49</sup>: Սա իրավամբ կարելի էր համարել Միացյալ Նահանգների քաղաքականության հայթանակը:

1947թ. հոկտեմբերի 6-ին ԱՄՆ-ի և Իրանի միջն կնքված ռազմական համաձյանագիրը, ինչպես նաև 1943թ. նոյեմբերի 27-ի ԱՄՆ-ի ռազմական առաքելությանը և իրանական ժանդարմերիային վերաբերող համաձյանագրերն ամեն տարի երկարաձգվում էին Իրանի և ԱՄՆ-ի կառավարությունների միջև նոտաների փոխանակման միջոցով:

<sup>47</sup> Башкиров А.В., Экспансия английских и американских империалистов в Иране (1941–19553 гг.), М, 1954, с. 110.

<sup>48</sup> Внешняя политика Советского Союза, Документы и материалы, январь–июнь 1948 года, ч. первая, Госполитиздат, 1950, с. 178–181.

<sup>49</sup> Peter Avery, Modern Iran, London, 1965, p 399–400. Кокошина В. А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60–70-х гг.", Развивающиеся страны. Политика и идеология, Москва, 1985, с. 136. Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, с. 27. Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, М, 1977, с. 221.

Շուտով Իրան-ԱՄՆ հարաբերություններն ակնհայտորեն դրվեցին նոր հարթության վրա: 1947թ. Թեհրան ժամանեց ամերիկացի անվանի գեներալների, դիվանագետների և քարձրաստիճան սպաների մի խումը՝ ռազմաօդային ուժերի նախկին գլխավոր հրամանատար, գեներալ Արևոլի գլխավորությամբ: Իրան ժամանեցին նաև Մերձավոր Արևելյան ԱՄՆ-ի ռազմական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Զապար, ԱՄՆ-ի պետքարտուղարության Միջնարևելյան բաժնի վարիչ Մահապար և այլք:

Իրանի և ԱՄՆ-ի միջև կնքված վերոհիշյալ պայմանագրով, պաշտոնական թեհրանը ռազմամթերք պետք է գներ միայն Միացյալ Նահանգներից: Այսպիսով, Վաշինգտոնն Իրանին ռազմական օգնություն էր տրամադրում իր երկրում արտադրած զինամթերքը վաճառելու նպատակով: Իրանով իսկ ԱՄՆ-ն ակնկալում էր.

1. Հետ թերել իր ֆինանսները, 2. վաճառել կոտակված ռազմական արտադրանքը, 3. ուղարկել ամերիկացի ռազմական «մասնագետներ», որոնք պետք է ուսուցանեին իրանցիներին ամերիկյան ժամանակակից գենրից օգտվելու կանոնները, 4. դրանով իսկ Իրանին դարձնել իր դաշնակիցը, որը բավարար չափի սպառագինված էր և կարող էր պաշտպանել ինչպես իր, այնպես էլ Միացյալ Նահանգների շահերը տարածաշրջանում, 5. կախման մեջ դնել Միջին Արևելյան խոչոր պետություններից մեկին՝ Իրանին, 6. թուլացնել Անգլիայի ազդեցությունը, 7. մեծացնել իրանական «սև ուլուն» տիրելու հավանականությունը, 8. կասեցնել Խորհրդային Միության հավանական առաջխաղացումը հիշյալ տարածաշրջանում, 9. այս ամենով հանդերձ՝ Իրանի հասարակ ժողովրդի աշքում դառնալ մի «քարերար», որը պատրաստ է փրկել երկիրը «կումունիստական սպառնալիքից»:

1948թ. Իրանում ԽՍՀՄ-ի դեսպան Ի.Վ.Սահչիկովը նույտ աղեց իրանական կառավարությանը վերոհիշյալ ռազմական պայմանագրի կնքման կապակցությամբ: Հիմնական շեշտադրում արվում էր, թե ԱՄՆ-ը փորձում է ռազմական բազայի վերածել Իրանի տարածքը, դրանով իսկ սպառնալով Խորհրդային Միության սահմաններին, ինչն էլ հակասում է 1921թ. փետրվարի 26-ի խորհրդա-իրանական պայմանագրի դրույթներին<sup>50</sup>: Ի պատճին՝ իրանական կողմը հերքեց բոլոր այն կասկածները, թե ամերիկյան սպաներն են կառավարում իրանական բանակը: Սա չգոհացրեց Խորհրդային Միությանը և մարտի 24-ին նմանատիպ մի նոտա ևս ուղարկվեց իրանական կառավարությանը:

Թրումնենի դոկտրինով նախատեսվում էր ամերիկյան ազդեցությունը Մերձավոր Արևելյան երկրներում հասցնել առավելագույնի, այդ պատճառով էլ Միացյալ Նահանգները ուժնացնում էր ռազմական հովանավորությունն Իրանի նկատմամբ: Եվ ինչպես նշում է Մոհամմեդ Ռեզա Փահլավին, ի վերջությամբ:

<sup>50</sup> Պրագա-2.02.1948, 4.04.1948.

1948թ. սկզբներին Թեհրանը Միացյալ Նահանգներից սկսեց ներկրել «թերև զինամթերք՝ Իրանի անվտանգությունը սպառնալիքներից զերծ պահելու նպատակով»<sup>51</sup>:

Երկու երկների միջև առևտուրը ևս զարգացում էր ապրում. 1948թ. ԱՄՆ-ը Իրան էր ներմուծել 43,650,000 դոլարի և արտահանել 26,507,000-ի դոլարի ապրանք<sup>52</sup>:

Իրանա-ամերիկյան հարաբերությունների նման աննախադեպ զարգացումը խիստ մոտահոգում էր Խորհրդային Միությանը, որը, Իրանի վարած քաղաքականությունից դժգոհ, շանը չէր խնայում, որպեսզի շոկի ստեղծված իրավիճակը: Սակայն 1949թ. փետրվարի 4-ին Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փահլավի դեմ իրականացվեց մահափորձ<sup>53</sup>, որում իրանական կողմը մեղադրեց Խորհրդային կառվարությանը, և երկու հարևան պետությունների միջև լարվածությունն առավել ակնհայտ դարձավ:

1949թ. հոկտեմբերի 6-ին Միացյալ Նահանգների Կոնգրեսն ընդունեց ուազմական փոխօգնության մի ծրագիր, որում ընդգրկված էր մի հաստուկ ֆոնդ, ըստ որի՝ 27,6 մլն դոլարի ուազմական օգնություն պետք է ցուցաբերվիր Իրանին, Ֆիլիպիններին և Կորեային: «Հաշվարկված էր, որ Իրանը կստանա շուրջ 10 մլն դոլար: Սա այնքան փոքր գումար էր Իրանի համար, որ չէր կարող բավարարել երկրի ոչ տնտեսական, ոչ՝ էլ ուազմական կարիքները: Մինչդեռ Իրանն ակնկալում էր Զարգացման և Վերակառուցման միջազգային բանկից ստանալ 250 մլն դոլարի վարկ, իսկ Միացյալ Նահանգներից՝ որոշ չափի վարկ կամ նպաստ<sup>54</sup>:

1949թ. նոյեմբերին Մոհամմադ Փահլավին մեկնեց Վաշինգտոն: Նոյեմբերի 21-ին՝ շահի պատվին կազմակերպված խնդույթի ժամանակ նա հայտարարեց. «Իրանը Միացյալ Նահանգների հետ համագործակցության կարիք ունի ազգային անվտանգության, տնտեսական և սոցիալական զարգացման շրջանակներում՝ իիմնվելով արդյունաբերության ծավալի մեծացման և ընալշության կենսամակարդակի բարձրացման վրա»: Այսուհետև, ընդգծելով Իրանի պաշտպանության նշանակությունը, «ընդհանուր ուազմավարական ծրագրավորման համար» շահը կոչ արեց Միացյալ Նահանգներին օգնություն հատկացնել Իրանին, քանզի «պաշտպանական միջոցների պակասի հետևանքով Իրանը վստահ չէ իր հետագա գոյության վրա»: «Հազիվ թե անհրաժեշտություն կա ապացուցելու, որ Իրանի պաշտպանությունը կարևոր նշանակություն ունի ողջ Միջին Արևելքի ուազմավարական ծրագրավորման համար»<sup>55</sup>:

<sup>51</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 81.

<sup>52</sup> Donald N. Wilber, Iran: Past and Present, p. 136

<sup>53</sup> Մահափորձ իրականացվեց «Փարզամ-ե Եւլամ» (Խոյամի դրոշ) թերի բրակից կողմից:

<sup>54</sup> Lenczowski G., The Middle East in World Affairs, New York, 1956, p. 188.

<sup>55</sup> The New York Times, 22.XI.1949.

Բանակցությունների ընթացքում Վաշինգտոնում պայմանավորվածություն ձևոր բերվեց Իրանին հատկացնել ուղմական, տեխնիկական և տնտեսական լրացուցիչ օգնություն: 1949թ. դեկտեմբերի 29-ին Սպիտակ տան հրապարակած ամերիկա-իրանական համատեղ պաշտոնական կառավարական հաղորդագրությամբ ԱՄՆ-ի կառավարությունը հայտնեց իր հավատարմությունը «Իրանի տարածքային ամբողջականության և անկախության պաշտպանության» քաղաքականությանը, աջակցել Իրանին Զարգացման և վերակառուցման միջազգային քանից 7-ամյա ծրագրի համար անհրաժեշտ գումարի ձեռքբերմանը, ինչպես նաև Իրանի տնտեսության զարգացման համար հատկացնել «ուսումնական աջակցություն և տեխնիկական օգնություն»: Միացյալ Նահանգները պարտավորվեց Իրանին հատկացնել նաև անհրաժեշտ ուղմական օգնություն<sup>56</sup>:

Եթե Թրումենի դոկտորինը նախատեսվում էր ուղմական և տնտեսական օգնություն ցոյց տալ Հունաստանին և Թուրքիային, որոշվեց անմասն շրջողներ նաև Իրանը, սակայն վերջիններին համեմատ Իրանին հատկացվող օգնությունը չնշին էր:

Իրան-Միացյալ Նահանգներ հարաբերությունների դինամիկ զարգացումը խիստ մտահոգում էր ԽՍՀՄ-ին: 1950թ. մայիսի 14-ին Իրանում Խորհրդային Միության դեսպանատունը ևս մեկ նոտա հղեց իրանական կառավարությանը, որում մասնավորապես բողոքում էր, թե օտարերկրացիների աջակցությամբ՝ առաջին հերթին ամերիկացիների, Իրանի հյուսիսային շրջաններում՝ Խորասանում, Գորգանում, Մազանդարանում և Գիյանում՝ Խորհրդային Միության սահմանների մոտ, իրականացվում են տեղագրական, օդալսանակարահանման աշխատանքներ<sup>57</sup>: Խորհրդային կողմը գտնում էր, որ այդ աշխատանքները պետք է իրականացվեն միմիայն իրանցի մասնագետների կողմից: Սակայն իրանական կառավարությունը չպատասխանեց Խորհրդային Միության բողոքին:

1950թ. մայիսի 23-ին Վաշինգտոնում սոորագրվեց ամերիկա-իրանական ուղմական համաձայնագիր՝ «Պաշտպանական նպատակով փխադարձ օգնության վերաբերյալ»: Երկիր բերվեց մեծ քանակությամբ ամերիկյան զենք, ամերիկյան ուղմական առաքելության գործունեությունն ավելի մեծացավ: Ամերիկյան մասնագետների գլխավորությամբ Իրանի հյուսիսային շրջանում՝ Խորհրդային Միության հարևանությամբ, հաճախակի էին դարձել նավթի հետափության աշխատանքներ:

Այսպիսով, պաշտոնական Վաշինգտոնը, Իրանին հատկացնելով տարարնույթ օգնություններ, հետապնդում էր իր սեփական շահերը: Ռազմական օգնություն էր տրամադրում՝ իր երկրում արտադրած զինամթերքը վաճառելու

<sup>56</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 66.

<sup>57</sup> Внешняя политика Советского Союза, Документы и материалы, январь–декабрь 1950 года. Госполитиздат, 1953, с.168–169.

նպատակով: Դրանով իսկ ԱՄՆ-ն ակնկալում էր հետ քերել ոչ միայն իր ֆինանսները, այլ միևնույն ժամանակ երկիր ուղարկել իր մասնավուններին, որոնք պետք է ոստացանեին այդ տեսակի զենքերի մեխանիզմը: Իրանը դրանով իսկ կախման մեջ էր ընկնում, քանի որ այդ զենքերի վնասաման դեպքում դրանց պահեստային մասերը կարող էին ձեռք քերել միայն ԱՄՆ-ից: Տնտեսական օգնությունները նախատեսում էին երկրի տնտեսությունում նոր ճյուղերի զարգացում, որի շնորհիվ կրացվեին նոր աշխատատեղեր, ինչն էլ կնպաստեր Միացյալ Նահանգների հեղինակության ածին: Սակայն, այդուամենայնիվ, ամերիկյան օգնությունները, գոնե այդ շրջանում մեծապես նպաստում էին Իրանի տնտեսության և ուղամական ուժերի զարգացմանը:

## ԻՐԱՆԱԿԱՆ ԱԴՐԵԶԱՆԻ (ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ) ԽՆԴԻՐԸ ԵՎ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՍՈՏԵՑՈՒՄԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Խորհրդային Միությունը եռանդուն ջանքեր էր գործադրում «կոմունիզմ» Իրան արտահանելու ուղղությամբ: Մոսկվայի ցուցումով 1941թ. Իրանում կազմակերպվեց կոմունիստամետ «Եզր-ե թուղե-և Իրան»<sup>58</sup>, (Իրանի ծողովրդական կուսակցություն) կուսակցությունը: «Իրանի հյուսիսային նահանգներում ուսուներ խոսափում էին համագործակցել տեղական պաշտոնյաների հետ, և այդ շրջանները գործնականում առել էին զինվորական ու քաղաքական իշխանության տակ: Այս առումով ուսուական մասը համարյա վերածվել էր մի առանձին երկրի: Ինչպես հետագա իրադարձությունները ցոյց տվեցին, ուսուների նպատակն այն էր, որ տվյալ շրջանների մեծ մասն առնեն իրենց ձեռքի տակ»<sup>59</sup>: 1944թ. Իրանում հիմնվեց «Թուղե» կուսակցության հատուկ Ռազմական կազմակերպությունը, որը հաճախ կոչվում էր «Սպանների կազմակերպություն»<sup>60</sup>:

Հստ էության՝ Խորհրդային Միության վերջնական նպատակն էր Ասորպատականն ամրողությին ներարկել իրեն, իր ձեռքը վերցնել իրանական տարածքի այդ հատվածի նավթը:

1944թ. մարտին Իրանի վարչապետ դարձավ Մ.Սայեդը, ով նախինում եղել էր Մոսկվայում Իրանի դեսպանը: Համաձայն Մ.Ֆարմանֆարմայանի աշխատության՝ Խորհրդային Միության ղեկավարները Մ.Սայեդին, նրա դեսպանության ժամանակ, առաջարկել էին դառնալ ապագա Իրանի Հանրապետության նախագահ՝ խոստանալով ցուցաբերել ամեն տեսակի աջակցություն: Սա-

<sup>58</sup> 1941թ. հոկտեմբերին 53 մարտիստներ, ովքեր ծերբակավել էին Ռեզա շահի կողմից և այդ պահին զոլոտում էին արդեն ազատության մեջ, ծավալության «Թուղե» կուսակցությունը:

<sup>59</sup> Ա.Կ.Ս. Սովորած Ռեզա Չահ Փահապահ, Առաքելություն հայրենիքին համար, էջ 158:

<sup>60</sup> Mazzar Behrooz, Rebels With a Cause, The Failure of the Left in Iran, London-New York, 2000, p. 12.

կայն նա հրաժարվել էր ոռուների հետ համագործակցելուց՝ աչքի առաջ ունենալով Հովհանքի օրինակը<sup>61</sup>:

Հետաքրքրականն այն էր, որ մինչև 1944թ. Մեծ Բրիտանիան Իրանի կառավարությանը խորհրդուր էր տալիս գնալ ոռուներին ընդառաջ և փորձել ոռուների հետ համաձայնության գալ: Այլ էր Միացյալ Նահանգների դիրքորոշումը: ԱՄՆ-ի դեսպան Լելենդ Բ. Մորիսը հայտարարել էր, որ եթե Իրանը չի ցանկանում ԽՍՀՄ-ին տրամադրել նավթային կոնցեսիա, ապա դա Իրանի ինքնիշխան իրավունքն է<sup>62</sup>: Դրանով իսկ նա ցոյց էր տալիս, որ ԱՄՆ-ը համաձայն չէ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության հետ և միևնույն ժամանակ, Վաշինգտոնը խոսանում էր աջակցություն ցուցաբերել Իրանին:

Միացյալ Նահանգների նախագահն Հ. Թրումենը Իրանի խնդրի ողջ դժվարությունը և լրջությունը հասկացավ, երբ 1945թ. հովհա-օգոստոսին՝ Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ, Ստալինը մերժեց Զերչիլի առաջարկը՝ Իրանից դաշնակից գործերի վաղաժամ տարհանելու կապակցությամբ<sup>63</sup>:

Խորհրդային Ադրբեյջանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Միր Զաֆար Բաղիրովից Բաքվում հրահանգ ստանալուց հետո, Զաֆար Փիշևարին 1945թ. սեպտեմբերին Իրանի հյուսիսարևմտյան շրջանում՝ Աստրափառականում, իիմենց «Աստրեզանի Դեմոկրատական կուսակցություն» (ԱԴԿ)<sup>64</sup>: Կուսակցությունն իր հրահանգներ ստուգում էր Մոսկվայից (Բերիա) և Բարվից (Միր Զաֆար Բաղիրով): Շարժման վերջնական նպատակն էր Աստրափառականը միացնել Խորհրդային Ադրբեյջանին<sup>65</sup>: Այդ կուսակցությունն իր ընույոյն նման էր «Թուղե» կուսակցությանը, որի գործունեությունը ոչ վաղ անցյալում արգելվել էր Աստրափառականում: «Թուղե» կուսակցության Ռազմական կազմակերպությունն աջակցում էր Աստրափառականի սպաներին, երբ նահանգը գործում էր ընդդեմ Թեհրանի կառավարության<sup>66</sup>:

Այդ ժամանակաշրջանում ակնհայտ էր ԽՍՀՄ-ի օր օրի աճող ազդեցությունն Իրանում: Դրա վառ ապացուց կարող է հանդիսանալ այն փաստը, որ 1945թ. Մեջիսում «Թուղե» կուսակցությունից 9 անդամ ընտրվեց, և ինչպես գրում են պատմաբաները, «Մեջիսի ողջ պատմության ընթացքում առաջին անգամ էր, որ պատգամավորների մի խումբ գործում էր այդպես միասնական»<sup>67</sup>: Առհասարակ «Թուղեն» բացահայտ աջակցում էր Աստրափառականի ապստամբներին:

61 ۴۰، ۱۳۷۸، մայիս-հունիս: متوسطه فرانشیزهای و رسانی فرانشیزهای خون و نفت: خاطرات پک شاهزاده ایران، تهران، ۱۹۷۸.

62 Энвилл-Саттон Л., Иранская нефть, М, 1956, с. 147.

63 George Lenczowski, American Presidents and The Middle East, London, 1990, p. 10

64 Maziar Behrooz, Rebels With a Cause, The Failure of the Left in Iran, p. 26.

65 Բայրության Վ., Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 142:

66 Maziar Behrooz, Rebels With a Cause, The Failure of the Left in Iran, London-New York, 2000, p. 13.

67 Joseph M.Upton, The History of Modern Iran, Massachusetts, 1965, p. 96.

1945թ. սեպտեմբերի 22-ին Թավրիզում Ասրապատականի բնակիչները հանդես եկան ելոյթներով, որոնցում շեշտում էին իրենց վիճակի «անտանելիությունը»: «Ասկանայի է, որ այն հրահրվել էր Խորհրդային Միության կողմից: Նրանք, չսպասելով կենտրոնական կառավարության վճիռին, դիմեցին Լոնդոնում նիստի հրավիրված երեք դաշնակից պետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդին: Երկրի ղեկավար շրջանները բնականարար դեմ էին Ասրապատականին ազգային ինքնավարություն շնորհելու գաղափարին, և դա շատ լավ հասկանում էին նաև Ասրապատականի բնակիչները:

Այդ ժամանակ ուժեղացավ Խորհրդային Միության պաշտոնական քարոզակիր Իրանի կառավարությանը կոչ էր արքուն առավել հարգալից վերաբերվել Ասրապատականի թուրքական մշակույթին, բնակիչների՝ թուրքերն զրել-կարդալու և ոսում ստանալու իրավունքին<sup>68</sup>: Այսպիսով, ծնունդ առավ այսպես կոչված «իրանական հարցը»:

1945թ. նոյեմբերի 3-ին Իրանի վարչավետ նշանակվեց Իրահիմ Հարիմը: Նրա կառավարությունը հրամարվեց ձանաչել Ասրապատականի ազգային ինքնավարությունը, որը հաստատվել էր 1945թ. ղեկումբերին<sup>69</sup>: Ասրապատականի ինքնավար կառավարության ղեկավար էր դարձել Զ.Փիշևարին: Ասրապատականի շարժմանը զուգահեռ իրանական Քրդաստանի հյուսիսային շրջաններում սկսվեց նաև քրդական շարժում:

Քրդական խնդիրը Իրանում միշտ էլ արդիական է եղել և հանդիսացել ներքին քաղաքականության օրակարգային հարցերից մենքը: Սակայն այն նոր թափ ստացավ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ խորհրդային զորքերը 1941թ. օգոստոսի 25-ին հյուսիսից ներթափանցեցին Իրան: Նրանց անմիջական միջամտությամբ Իրանի հյուսիսային շրջաններում հրահրվեցին, այսպես կոչված, Ասրապատականի և Քրդաստանի «Ղեմուրատական» շարժումները:

Իրանի քրդերը որոշակի հոյսեր էին կապում Խորհրդային Միության հետ, ենթադրելով, որ Վերջինս հանդես կգա քրդական շարժումը հովանավորողի դերում: Քրդերի ոգևորությունը էլ ավելի մեծացավ, երբ 1941թ. աշնանը Բարու հրավիրվեցին Իրանական Քրդաստանի 30 հայտնի գործիչներ: Նրանց ընդունեց Աղքարեցանի ԽՍՀ-ի կոմկուսի առաջին քարտուղար Միր Զաֆար Բադիրովը:

Դեռևս 1942թ. սկզբներին Իրանի կառավարությունը դիմեց Խորհրդային հրամանատարությանը, որպեսզի բոլյատրն զորք մտցնել քրդական շրջաններ՝ կարգ ու կանոն հաստատելու համար, սակայն մերժում ստացավ: Խորհրդային Միության այդ վարքագիծը մեծապես անհանգուացնում էր դաշնակիցներին: 1942թ. հունվարի 10-ին այդ կապակցությամբ ԱՄՆ-ի պետքարտուղարության Մերձավորարևելյան բաժնի վարիչ Ռ.Մյուրեյը հայտնեց իր անհանգու-

<sup>68</sup> Coltam W., Iran and the United States. A Cold War Case Study, Pittsburgh, 1988, p. 66.

<sup>69</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 37

տուժյունը, որ իրանական մեծաքանակ զենք առգրաված քրդերը իրականացնում են հարձակումներ, ինչը մեծ սպառնալիք է: Նրանց նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել վերահսկողություն, որպեսզի ապահովվի քեռների անվնաս տեղափոխումը Տրանսիրանական երկաթգծով<sup>70</sup>, որի երկարությունը կազմում է 1394 կմ:

1945թ. հուլիսի 6-ին Մոսկվայում կոմկուսի քաղյուրոյի նհատում «Ասրպատականի հարցը» դրվեց հատուկ քննարկման: Վճռվեց հարցը լուծել՝ «Եմուկրատական միջոցներով», ինչը նշանակում էր «զանգվածային ազգային շարժում» հրահրել Ասրպատականում: Այդ ծրագրի պատասխանատվությունը դրվում էր Վ.Մորոտովի, Լ.Բերիայի, Մ.Զ.Բաղրուվի, Մալենկովի վրա<sup>71</sup>: Նմանատիպ ծրագրի պեսքը է իրականացվեր նաև հյուսիս-արևմույն Քրդստանում: 1945թ. Ղազի Մոհամմեդը և այլ բուրդ նշանավոր դեմքեր բազմիցու հրավիրվեցին Թավթիզ, որը ԽՍՀՄ-ի ազդեցության գլխավոր կենտրոնն էր: 1945թ. աշնանը նրանք երկրորդ անգամ այցելեցին Բաքու: Որոշ տեղենկությունների համաձայն՝ ԽՍՀՄ-ի կարգադրությամբ Բաղրուվը նշել էր, որ թեև քրդական խնդիրն օրակարգային խնդիր է, սակայն խորհուրդ էր տվել առայժմ պայքարել աղբբեշանական ինքնավարության շրջանակներում<sup>72</sup>: Ղազի Մոհամմեդը կտրականապես մերժել էր նման տեսակետը:

1945թ. դեկտեմբերին Մեհարադն Իրանում հոչակվեց որպես քրդերի ինքնավար դեմուկրատական շրջան<sup>73</sup>, իսկ առաջնորդը՝ Ղազի Մոհամմեդն<sup>74</sup> էր:

Իրանական կառավարությունը իրավացիորեն գտնում էր, որ ինչպես Ասրպատականում, այնպես էլ Քրդստանում ինքնավարության շարժումները հրահրվել են Խորհրդային Միության կողմից: Դրա վառ ապացույցը հանդիսացավ այն հանգամանքը, որ եթե Իրանի կառավարությունը զորք ուղարկեց իր ներքին խնդիրը կարգավորելու նպատակով, այն հանդիպեց Խորհրդային ռազմական ուժերի դիմադրությանը: Այդ կապակցությամբ 1945թ. նոյեմբերի 17-ին Ի. Հարիմիի կառավարությունը խորհրդային կառավարությանը նույն հենց, որով նրան մեղադրում էր Իրանի ներքին գործերին միջամտելու մեջ: Դրան հաջորդեց ևս 2 նույն՝ նոյեմբերի 22-ին և 23-ին, որոնցով Իրանի կառավարությունը պահանջում էր անհապաղ հնարավորություն ընձեռնել իրանական հետևակային գորամասներին և ժանդարմերիային՝ անարգել մուտք գործելու Ասրպատական:

<sup>70</sup> Лазарев М.С., Курдистан и курдской вопрос (1923–1945), М., 2005, с. 212.

<sup>71</sup> Բայրության Կահան, Իրամի պատմություն, Եր., 2005, էջ 641:

<sup>72</sup> Kinnane Derk. The Kurds and Kurdistan, L., 1964, p. 50.

<sup>73</sup> ۱۷ مهر ۱۳۷۵، ۱۳۰۰-۱۳۰۷، تهران: سیاست خارجی ایران در دوران پهلوی، ص ۲۷.

<sup>74</sup> Ղազի Մոհամմեդը մերում էր քրդական ազդեցիկ ցեղից, որից է ավանդաբար այլ պաշտոնում ծառանակլում էին Սեհարադի դասավորները: Խորհրդո՞ր Ղազի Ակիհ մահից հետո Ղազի Մոհամմեդը նշանակվեց այլ պաշտոնում: Միաժամանակ նա կատարում էր Սեհարադի քաղաքապետի պարտականությունները:

Ի պատասխան բողոքի այդ նոտաների՝ խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ ձգում է «խուսափել ինչպես Երանի, այնպես էլ խորհրդային կառավարության համար անցանկալի քարություններից», որը կարող է առաջանալ Երանի հյուսային շրջաններ ուղարկված իրանական լրացուցիչ զորքերի առկայությամբ: Նշում էր նաև, որ Մուսկվան նպատակահարմար չի գտնում տվյալ պահին հավելյալ նոր զորքերի՝ հետևազորի և ժանդարմերիայի մուտքն այդ շրջան, քանի որ այդ միջոցառումը «հյուսային Երանում առաջ կրերի անկարգություններ և հնարավոր է՝ նաև արյունահեղություն», որի պատճառով խորհրդային կառավարությունը ստիպված կլինի Երան մտցնել իր հավելյալ զորքերը՝ կարգուկանոն վերականգնելու և խորհրդային կայազորի անվտանգությունն ապահովելու նպատակով<sup>75</sup>:

Իր այդ քայլով խորհրդային կառավարությունը միջամտում էր Երանի ներքին գործերին, որը բացասական ազդեցություն ունեցավ խորհրդա-իրանական հետագա հարաբերությունների վրա:

Խորհրդային Միության նման բաղաքականությունն առիթ հանդիսացավ Միացյալ Նահանգների համար՝ դիմելու վճռական միջոցների:

ԱՄՆ-ի կառավարությունը 1945թ. նոյեմբերի 24-ին Մոսկվայում իր դեսպանի միջոցով նոտա հղեց խորհրդային կառավարության՝ առաջարկելով ստեղծված իրավիճակը հարթելու նպատակով Երանից վաղաժամկետ հանել խորհրդային, անզիհական և ամերիկյան գորքերը: Նոտայում առաջարկվում էր դաշնակից զորքերի տարհանման ժամկետն առաջ թիրել՝ 1946թ.-ի մարտի 2-ից հունվարի 1-ը: 1945թ. նոյեմբերի 29-ի պատասխան նոտայում խորհրդային կառավարությունը հայտնում էր, որ «1942թ. հունվարի 29-ին Խորհրդային Միության, Մեծ Բրիտանիայի և Երանի միջև կնքված դաշինքի մասին պայմանագրով դաշնակից գորքերի տարհանման նախատևսկած ժամկետը փոխելու լորջ հիմքեր չի տեսնում»<sup>76</sup>: ԽՍՀՄ-ը շեշտում էր նաև այն հանգամանքը, որ ամերիկյան զորքերը Երանում գտնվում են անօրինական կարգավիճակով և Միացյալ Նահանգները իրավասու չեն ուղղություն տալ ԽՍՀՄ-ին՝ իր արտաքին քաղաքականությունն իրականացնելիս: Մոսկվան հենցում էր այն փաստի վրա, որ ի տարրերություն Խորհրդային Միության և Անգլիայի, ԱՄՆ-ը Երանի հետ չուներ որևէ պայմանագիր, որը նրան թույլ կտար զորք պահել Երանում:

Խորհրդային Միության պատասխանը չքավարարեց Միացյալ Նահանգներին, և նա հանդես եկավ նոր առաջարկներով: 1945թ. դեկտեմբերի 14-26-ին Մոսկվայում տեղի ունեցած երեք տերությունների արտգործնախարարների խորհրդակցության ժամանակ առաջարկվեց «իրանական հարցը» լուծելու համար ստեղծել ԱՄՆ-ի, Անգլիայի և ԽՍՀՄ-ի ներկայացուցիչներից բաղկացած հատուկ հանձնաժողովը: Նման հանձնաժողովի ստեղծման գաղափարը պատ-

<sup>75</sup> Правда, 1.XII.1945.

<sup>76</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 41.

կանում էր Անգլիայի արտգործնախարար Ա. Բեկնին, որին լիակատար աջակցություն ցուցաբերեց ԱՄՆ-ի պետքարտուղար Բիրնարդ: Խորհրդային կառավարությունը կորականապես մերժեց այդ առաջարկը և<sup>77</sup>:

Հ.Թրումենը խիստ դժգոհ էր 1945թ. դեկտեմբերին Մոսկվայում կայացած արտգործնախարարների կոնֆերանսների արդյունքից: «Պատերազմի ժամանակ Իրանը մեր դաշնակիցն էր, - նշում էր նախագահ Թրումենը: - Պատերազմի ժամանակ Իրանը Ռուսաստանի դաշնակիցն էլ էր: Իրանը համաձայնվել էր տրամադրել ազատ միջանցք: Միլիոնավոր տոննա կշռող ռազմամթերքը և պարենամթերքը հատում էր Իրանի ողջ տարածքը՝ Պարսից ծոցից տեղափոխվելով դեպի Կասպից ծով: Առանց Միացյալ Նահանգների ուղարկած այդ պարենամթերքի՝ Ռուսաստանը խայտառակ պարտություն կվրեր: Ինչ այժմ Ռուսաստանն ապստամբություն է հրահրում և իր զորքերը պահում բարեկամ և դաշնակից Իրանի հողում... Նրանք միայն մեկ լեզու են հասկանում քանի՛ դիվիզիա ունեն դու: Ես գտնում եմ, որ մենք չխնտք է զիջնեք: Ես հոգնել եմ Խորհրդային Միության կամակորությունից»<sup>78</sup>:

Իրականությունը բողարկելու նպատակով Խորհրդային Միությունը հայտարարում էր, որ Աստրավատականի հարցն առաջացել է Իրանում անհրաժեշտ բարեփոխումների բացակայության հետևանքով: Սակայն 1945թ. դեկտեմբերի 18-ին վարչական Հարիմն Մեջիսում հայտարարեց, որ Աստրավատականի դեպքերը «քարեփոխումների հետ ընդհանուր ոչինչ չունեն», և ավելացրեց, որ «շարժումն առաջացել է դրսի աջակցությամբ: Իրանի կառավարությունը երբեք չի ճանաչի երկրի ամբողջականությանը սպառնացող Աստրավատականի կառավարությունը»<sup>79</sup>:

1945թ. դեկտեմբերին «Ադրենանի Դեմոկրատական կուսակցությունը» բացահայտ խոռվություն կազմակերպեց և իշխանազրկեց նահանգի օրինական վարչակազմին: Թեհրանի կառավարությունը ի դեմք վարչապետ Հարիմիի, բողոքի նոտայով դիմեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որից հետո հրաժարական տվեց:

Իրանի կառավարությունը հասկանում էր, որ իրադարձությունների զարգացման նման պայմաններում կվրցնի Աստրավատականը: Երկրում լարվածությունը թուլացնելու նպատակով նորանշանակ վարչապետ Ղավամ-օս-Սալրանեն 1945թ. դեկտեմբերին, դիմելով ճարպիկ խուսանավումների, հայտարարեց, որ Աստրավատականի դեպքերը տեղի ունեցան, քանի որ Շեզա շահի տապալումից հետո Իրանում չեն անցկացվել հանրային բարեփոխումներ և չեն ապահովվել ժողովրդի սահմանադրական իրավունքները<sup>80</sup>:

<sup>77</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 41.

<sup>78</sup> Lenczowski G., American Presidents and The Middle East, London, 1990, p. 11.

<sup>79</sup> Абдуразаков Б. Просыки английского и американского империализма в Иране (1941-1947 гг.), Ташкент, 1959, с. 85.

<sup>80</sup> Белинков С.Е., Что происходит в Иране, с. 17.

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը և Անգլիան, հարգելով Թեհրանի կոնֆերանսի դրույթները, տարհանեցին իրենց զորքերը Իրանի տարածքից: 1945թ. նեկտեմբերի 31-ին առաջինը իր զորքերը դուրս քերեց ԱՄՆ-ը: Բրիտանացիները դուրս էին գալիս համեմատարար դանդաղ (Նրանք սպասում էին տեսնեն, թե ի՞նչ են անելու ուստաները): Բայց նրանք հայտարարեցին, որ զորքերի դուրս քերման գործընթացը կավարտվի 1946թ. մարտի 1-ին: Թեև ԽՍՀՄ-ը նոյնպես ստորագրել էր վերոհիշյալ պայմանագիրը, սակայն Մոսկվան չկատարեց իր պայմանագրային պարտավորությունները: Դա բռնորդի տեղիք տվեց ինչպես ժողովրդի, այնպես էլ Իրանի կառավարող լայն ջրաներում: «Ըստ իս.- գրում է շահը,- Իրանի ողջ ժողովուրդը համոզված էր, որ Մտավինը հավատարիմ կմնա Հայտագրի կենտրոն: 1324թ. Խորդադ ամսի 11-ը (1946 հունիսի 1) վեցամյա ժամկետի վերջին օրն էր: Ակնկալում էինք, որ այդ օրը Իրանը վերջնականապես կլըն Դաշնակից տերությունների ուժերը, ամսարիկան և անգլիական ուժերն արդեն բռնել էին Իրանը: Սակայն Մտավինը ոչ միայն հավատարիմ չմնաց իր խոստմանը, այլ նաև բռնել էր դիվանագիտական մի այնպիսի ուժի, որը ցնցեց ողջ աշխարհը»<sup>81</sup>:

Խորհրդային Միությունը չէր շտապում ի կատար ածել Իրանի, Անգլիայի և առավել ևս ԱՄՆ-ի պահանջները՝ առանց փոխարևնը ինչ-որ բան ստանալու ակնկալիքի: Հ.Թրումենն անհանգստացած էր, որ Իրանի ձգնածամբ կարող է լոկալ բնույթից վերածել տարածաշրջանային լուրջ խնդրի: Նա գտնում էր, որ Իրանի իրադարձությունները բաղկացած են երեք տարրերից: Առաջինը Թուրքիայի անվտանգությունն էր, երկրորդը՝ Վերահսկողությունը Իրանի նախարարականին, «Ռուսների դաժան արհամարհանքը էր փոքր ազգերի իրավունքների և իրենց տված պաշտոնական խոստումների նկատմամբ»<sup>82</sup>:

Իրավիճակն ամեն օր առավել լարվում և դառնում էր վտանգավոր: 1946թ. մարտի 3-ին խորհրդային ուժերը, Թավրիզից դուրս գալով, երեք շարասյունով շարժվեցին դեպի Թեհրան, Իրաքի և Թուրքիայի սահմանագիծ: Հաջորդ շաբաթվա ընթացքում ԽՍՀՄ-ից Իրան ուղղվեցին տանկերի նոր շարասյուներ, որոնք ևս հիշված երեք ճանապարհներով հետևեցին նախորդներին: Ըստ Թավրիզում ԱՄՆ-ի հյուպատոսարանի գործերի հավատարմատար Ռոբերտ Ռուստունի<sup>83</sup> մարտի 4-ին լուս 5-ին T-34 տիպի 46 տանկ մտավ Թավրիզ: Զորքի և գինամբերքի շարայունը Թավրիզից շարժվեց երեք ուղղությամբ՝ դեպի Թուրքիայի և Իրաքի սահմանները ու Թեհրան<sup>84</sup>:

<sup>81</sup> Մոհամմադ Ռեզա Չահ Փահլավի, Ալարելություն հայենիքին համար, էջ 241–242:

<sup>82</sup> George Lenczowski, American Presidents and The Middle East, London, 1990, p.12

<sup>83</sup> Ուրիշ Ռուսունը 1945–46թ. Թավրիզում ԱՄՆ-ի հյուպատոսարանի գործերի հավատարմատար էր, իսկ մինչև 1947թ. հունվարը հանդիսացել է Թեհրանում ԱՄՆ-ի դեսպանատան քաղաքական բաժնի վարչը:

<sup>84</sup> Robert Rossow, Jr., "The Battle of Azerbaijan, 1946" The Middle East Journal, 1956, N 1, p. 20.

Խորհրդային ուժերն իսկապես իրանում, մասնավորապես Ասրաբատականում իրենց պահում էին ինչպես գրավյալ տարածքներում: 1946թ. հունվարի 19-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանում, Իրանի պատվիրակության ղեկավար Թաղիզադեն բողոք ներկայացրեց Խորհրդային Միության դեմ՝ վերջինիս կողմից Իրանի ներքին գործերին միջամտելու և այդ հարցի շուրջ քանակցելու հարցում խորհրդային կառավարության բռնած մերժողական դիրքի կապակցությամբ:

1946թ. սկզբներին Անգլիան և ԱՄՆ-ը խորհրդային Միության նկատմամբ մշակեցին «նոր կորս», որն իր արտահայտությունն ստացավ 1946թ. մարտի 5-ին Ֆուլտոնում Ու.Չերչիլի երսից ժամանակ: <Ժրումներ լիովին համամիտ էր այդ երութին: Այսպիսով, «Սառը պատերազմ» արտահայտությունն առաջին անգամ տևել գտավ Չերչիլի երսից թուրքում: Խորհրդային Միության գործունեությունն աշխարհի երեք թատերական մասում՝ Արևելյան Եվրոպայում, Հունաստանում և Իրանում, խորտակեց մարդկության այն հոյսը, թե պատերազմից հետո աշխարհը կթևակողին խաղաղության ժամանակաշրջան<sup>85</sup>:

Հիշարժան են Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փահլավիի մտորումներն այդ ժամանակաշրջանի վերաբերյալ. «Հստ իս՝ աշխարհի ապագա պատմաբանները կվկայեն, որ իրականում առաջին անգամ «Սառը պատերազմ» սկսվեց Իրանում: Թեև դրա նշաններն արդեն երևացել էին աշխարհի տարրեր կետություն, այնուամենայնիվ Իրանը հանդիսացավ սարդ, չըոդարկված և քացարձակ պայքարի առաջին օջախը»<sup>86</sup>: Պատմարան Լենքընվակին և համակարծիք լինելով շահին, գտնում է, որ խորհրդային ուժերի շարքը դեպի Ասրաբատական «Սառը պատերազմի առաջին սառը քամին էր»<sup>87</sup>:

ԱՄՆ-ը գիտակցում էր, որ խորհրդային ուժերը, մնալով Իրանի հյուսիսային շրջաններում, ցանկանում են այդ տարածքը մնալուն միշտ պահել իրենց ազդեցության տակ և ավելի ու ավելի խորանար դեպի արարական երկրներ ու Հնդկաստան: Նախագահ Թրումենն ամերիկյան քանակի պատրաստվածությունն հասցրեց մարտական վիճակի, որպեսզի անհրաժեշտության դեպքում ուղղական գործողություններ ծավալեն Իրանում<sup>88</sup>: Ավելին, Միացյալ Նահանգները դիմեց առավել ուղղակի սպառնալիքների, այն է՝ օգտագործել միջուկային գենք ընդդեմ ԽՍՀՄ-ի: Համաձայն սենատոր Հենրի Ջեքսոնի հուշերի՝ Թրումենը Սպիտակ տուն էր հրավիրել խորհրդային Միության դեսպան Ա.Ա.Գրոմիկոյին և հայտարարել, որ եթե խորհրդային գորքերն անհապաղ չինուանան Իրանից, ապա ԱՄՆ-ը նրա դեմ միջուկային գենք կօգտագործի<sup>89</sup>:

<sup>85</sup> Cottam Richard W., Iran and the United States, A Cold War Case Study, Pittsburgh, 1988, p. 79.

<sup>86</sup> Մոհամմադ Ռեզա Փահլավի, Առաջելություն հայրենիքին համար, էջ 249:

<sup>87</sup> Lenczowski G., Iran Under The Pahlavis, p. 396.

<sup>88</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 46.

<sup>89</sup> Արաբաջյան Յ.Ա., Դավլութ ԱՄՆ և ԽՍՀՄ և Հայաստան պատմությունը Հայոց պատմության մեջ, Երևան, 2001, էջ 208.

Այս կապակցությամբ ուշագրավ է ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումենի տեսակետը սույն հարցի կապակցությամբ. «Խորհրդային Միությունը համառորեն շարունակում էր իր զավթողական քաղաքականությունը մինչև այն պահը, երբ ես անձամբ, ջանացի, որ Ստալինը տեղեկանա, որ հրաման եմ տվել մեր ուղամական ուժերի հրամանատարներին նախապատրաստել մեր ցամաքային, ծովային և օդային ուժերը: Դրանից հետո Ստալինն արեց այն, ինչ ես գիտեի, որ կանի: Նա տարհանեց գորբերը»<sup>90</sup>:

ԱՄՆ-ի ակտիվությունն այս հարցում այնքան մեծացավ, որ երբ Իրանի կառավարությունը տատանվում էր՝ բողոք ներկայացնել՝ Անվտանգության խորհրդին, թե ոչ՝ «Միացյալ Նահանգները Իրանի կառավարությանը հղած նույնով պահանջեց 24 ժամվա ընթացքում որոշում կայացնել իրանական հարցը ՄԱԿ-ի ԱԽ-ում բարձրացնելու կապակցությամբ՝ սպառնալով, որ այլապես ամերիկյան կառավարությունն ինքը կապահանջի այդ հարցն ընդունի ԱԽ-ի օրակարգում»<sup>91</sup>: «Հաջորդ տարվա ընթացքում ԱՄՆ-ի դեսպան Զորյ Վ. Ալինն անընդհատ շփումների մեջ էր Իրանի ազգայնական խմբավորումների հետ:

1946թ. հունվարի 13-ին Խորհրդային Միության գործուն աջակցությամբ համաձայնագիր ստորագրվեց Իրանի վարչական Ղավամ օս-Սալյանին և Անդրաստավականի ֆաստաջի ղեկավար Զ. Փիշլարիի միջն՝ Անդրաստավականին տեղական ինքնակառավարում շնորհելու վերաբերյալ: Կոմունիստների կրթեր հանդարտեցնելու նախատեսով՝ վարչապետն անցկացրեց մի շարք նոր աշխատանքային օրենքներ: Միևնույն ժամանակ, 1946թ. հունվարի 17-ին Անվտանգության խորհրդի առաջին նիստում ըննարկվեց Իրանի բողոքը:

1946թ. հունվարի 28-ին Ա. Յ. Վիշնավիխին ՄԱԿ-ի ԱԽ-ում հանդես եկավ երլույթով, եերենով Խորհրդային Միության հասցեին հնեցված բոլոր բողոքները, նա փորձեց բացատրել և արդարացնել պաշտոնական Մուսկվայի քաղաքականությունը, միևնույն ժամանակ մեղադրելով իրանական կառավարությանը՝ երկակի խաղ իրականացնելու մեջ: Նա ըննադատեց Իրանին նոյնիսկ այն բանում, որ իր վարած հականությամբ քաղաքականությամբ նա վտանգում է Խորհրդային Ադրբեյջանի անվտանգությունը: Այդ ամենով հանդերձ՝ Վիշնավիխին գտնում էր, որ երկու հարևանների միջև ծագած խնդիրները կարող են և պետք է լուծվն երկպղմանի բանակցությունների միջոցով ու կոչ էր անում Անվտանգության խորհրդին դադարեցնել իրանական հարց ըննարկումը, քանզի Խորհրդային Միությունը պատրաստ է շարունակել բանակցությունները Իրանի հետ»<sup>92</sup>:

1946թ. հունվարի 30-ին Անվտանգության խորհուրդն ընդունեց հետևյալ որոշումը. «Խորհուրդը, հունվարի 28-ի և 30-ի նիստերի ժամանակ լսելով

<sup>90</sup> George Lenczowski, American Presidents and The Middle East, London, 1990, p.13.

<sup>91</sup> Е. А. Орлов, Внешняя политика Ирана..., с. 48.

<sup>92</sup> Внешняя политика Советского Союза, Документы и материалы, январь–декабрь 1946 года, Госполитиздат, 1952, с. 553–557.

Խորհրդային Միության և Իրանի ներկայացուցիչների դիմումներն ու ծանոթանալվ խորհրդային և իրանական պատվիրակությունների ներկայացրած փաստաթղթերին ու պատվիրակությունների ժամանակ կատարվում էին հղումներ, նշում է, որ երկու կողմերն էլ հավաստել են իրենց պատրաստակամությունը՝ հարցը բանակցությունների ուղղով լուծելու խնդրում, և որ բանակցությունները կվերսկավեն մոտ ապագայում։ Անվտանգության խորհրդը խնդրեց կողմերին տեղյակ պահել բանակցությունների ընթացքում ձեռք բերված ցանկացած արդյունքի մասին։ Խորհրդը իրավունք է վերապահում ցանկացած պահի հետաքրքրվել բանակցությունների ընթացքով<sup>93</sup>։

Իրանի վարչապետ Ղավամ օս-Սալյաննեն, որն անկասկած տիրապետում էր դիվանագիտության բարձրագույն արվեստին, 1946թ. փետրվարի 18-ին այցելեց Մոսկվա՝ «Փարանական հարցի» շուրջ խորհրդային բարձրաստիճան այրերի հետ բանակցելու համար։ Ղավամը նրանց հավաստիացրեց, որ խորհրդային ուժերն Իրանից տարհանելու պարագայում Մոսկվան կարծանանա մի շարք առօնանաշնորհումների։ Դրանց թվում նա խոստացավ Իրանի Մեջլիսից պահանջել վավերացնել Իրանի և Խորհրդային Միության համատեղ նախային ընկերության ստեղծումը, որը պիտի ստանար Իրանի հյուսիսային շրջանի նավթի հետազոտման և արդյունահանման իրավունքը։ Ի դեպ, դրանով Ղավամը խախտում էր 1944թ. դեկտեմբերին Մեջլիսի կողմից ընդունած այն օրենքը, ըստ որի՝ միայն Մեջլիսը կարող էր երկրում որևէ կոնցենտրացիա շնորհել։ Դա նշանակում էր, որ անհրաժեշտության դեպքում այդ պայմանագիրը չեղյալ կհայտարարվեր, քանի խախտվել էին երկրի օրենսդիր մարմնի՝ Մեջլիսի դրույթները։ Մեր կարծիքով Ղավամ օս-Սալյաննեն այդ քայլին դիմել էր գիտակցարար, ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում։

Ղավամը խոստացավ պաշտոնապես ճանաչել Ասրաքատականի Հանրապետությունը, ՄԱԿ-ից հետ վերցնել Իրանի կողմից տրված բողոքը, ինչպես նաև իր կարինետում երեք տեղ հատկացնել «Թունե» կուսակցության անդամներին (այդ գործիքներն էին Իրազ Էսքանդերին, Քեշավարզին և Յաղին)։ Վերջին քայլով նա մի կողմից պառակտում էր կոմունիստներին, իսկ մյուս կողմից Քարկարեկում նրանց որպես «հակաբեմուկրատական պայքարի» մասնակիցների։ Ի դեպ, 1946թ. Թունեն մոտավորապես ուներ 150,000 անդամ և համարվում էր Իրանի ամենամեծ և արդյունավետ գործող քաղաքական կազմակերպություն, որը լուրջ վտանգ էր իրենից ներկայացնում<sup>94</sup>։

1946թ. մարտի 18-ին ԱՄՆ-ում Իրանի դեսպանն ԱԽ-ին տեղեկացրեց, որ Իրանի և ԽՍՀՄ-ի միջև վեճը կարող է սպառնալ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը։ Արձագանքելով դեսպանի այդ հայտարարությանը, մարտի 26-ին Անվտանգության խորհրդը ակտեց քննարկել իրա-

<sup>93</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 43–44.

<sup>94</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 46.

նական կառավարության դիմումը՝ չնայած որ մարտի 24-ին սկսվել էր Իրանից խորհրդային գործերի տարհանման գործընթացը:

Իրանի վարչապետ Ղավամ օս-Սալթանեի՝ Մուսկվա կատարած այցից որոշ ժամանակ անց Մուսկվա այցելեց նաև շահի երկվորյակ բոյը՝ Աշրաֆ Փահլավին: Իրանի արքունիքն անհանգստացած էր վարչապետ Ղավամի՝ Մուսկվա կատարած այցելությունից, և շահը ցանկանում էր, որ բոյը ձևի, թե իրականում վարչապետը խորհրդային ղեկավարության հետ ո՞ր հարցերի շուրջ է եկել համաձայնության: 1946թ. ապրիլին, հենց այն ժամանակ, երբ ընթանում էր խորհրդային գործի տարհանման հարցի կարգավորումը, արքայադրությունը Աշրաֆը Կարմիր խաչից իրավեր ստացավ այցելել ԽՍՀՄ: Անշուշտ, այցի պաշտոնական նպատակը՝ այցելել հիվանդանոցներ և ծանոթանալ խորհրդային առողջապահության համակարգին, զիսավոր խնդիրը չէր: Իրականում նա պետք է հանդիպեր Ի.Վ.Ստալինին և ըննարկեր երկրորդ հարաբերությունները:

Արքայադրությունը Աշրաֆը հանդիպեց Ի.Վ.Ստալինին և փորձեց նրան համոզել, որ անհրաժեշտ է դադարեցնել աջակցությունն Ասրաբատականի Հանրապետությանը: «Փորձեցի համոզել Ստալինին, որ այդ խամաճիկային հանրապետությունը հետաքայում կարի հարաբերությունները մեր երկրների միջն,՝ գրում է Աշրաֆ Փահլավին: –Ես ավելացրի, որ իրանական բարեկամությունը և վստահությունն առավել արժեքավոր կլինեն Խորհրդային Միության համար, քանզի մենք ցանկանում ենք զարգացնել տնտեսական կապերը մեր հյուսիսային հարևանի հետ»<sup>95</sup>:

Ի պատասխան՝ Ի.Վ.Ստալինը նշում է. «Նկատի ունենալով Իրանի բողոքի ըննումը ՄԱԿ-ում՝ կարծում եմ, որ հարևան երկրները իրենց միջև առկա խնդիրները կարող են լուծել բանակցությունների միջոցով, փոխըմբռնման հիմքի վրա՝ չներքաշենով միջազգային կազմակերպություններին՝ երրորդ ուժերին»<sup>96</sup>: Նա կոչ արեց Իրանին չընդդիմանալ Խորհրդային Միությանը՝ հոյսը դնելով ամերիկյան աջակցության վրա և պարզ հասկացրեց, որ չի վախենում ո՛չ ԱՄՆ-ից, ո՛չ էլ Մեծ Բրիտանիայից:

1946թ. մարտի 26-ին ՄԱԿ-ի ԱԽ-ում Խորհրդային Միության ներկայացուցիչն առաջարկեց օրակարգից հանել «իրանական հարցը», քանի որ համաձայն իրանական կառավարության հետ ունեցած պայմանավորվածության՝ մարտի 24-ից սկսվել էր Իրանից խորհրդային գործերի լրիվ տարհանման գործընթացը: Այն նախատեսվում էր ավարտել 5–6 շաբաթվա ընթացքում, և այդ հանգամանքը հաշվի առնելով՝ ԽՍՀՄ-ի ներկայացուցիչը գտնում էր, որ ԱԽ-ն հիմք չունի վերանայելու «իրանական հարցը»:

<sup>95</sup> Ashraf Pahlavi, *Faces in a Mirror, Memoirs from Exile*, New York, 1980, p. 86.

<sup>96</sup> Ashraf Pahlavi, *Faces in a Mirror, Memoirs from Exile*, p. 87.

Վարչապետ Ղավամի՝ Մոսկվայում սկսած իրանա-խորհրդային բանակցությունները շարունակվեցին Թեհրանում և 1946թ. ապրիլի 4-ին ավարտվեցին խորհրդա-իրանական համատեղ կոմյունիկեթ ստորագրմամբ։ Կողմերը նշում էին երկողմ հարաբերություններում հիմնական հարցերի շորջ հասած հաջողությունների մասին։ Եվ ի վերջո, ապրիլի 14-ին խորհրդային կողմը հայտնեց այն մասին, որ գորքերի տարհանումը կավարտվի մայիսի 6-ին։ Կոմյունիկեթ ստորագրմամբ կողմերը համաձայնություն ձեռք բերեցին երեք հիմնական հարցերի վերաբերյալ։

1. Իրանից տարհանվում են խորհրդային գորքերը.
2. Ստեղծում էր խորհրդա-իրանական համատեղ նախային ընկերություն<sup>97</sup>.
3. Լուծվում էր Ասորապատականի հարցը<sup>98</sup>.

Նշումը էր, որ ձեռք բերված պայմանագիրը «կներկայացվի հաստատման Մեջլիսի 15-րդ գումարման ժամանակ», մասած նոյն թվականի մարտի 24-ից, 7 ամսվա ընթացքում։ Ինչ վերաբերում է Ասորապատականի հարցին, ապա «քանի որ այն հանդիսանում է Իրանի ներքին գործը, կառավարության և Ասորապատականի ժողովրդի միջև ձեռք կրերվի համաձայնություն՝ քարեփիչումներ իրականացնելու միջոցով և կցուցաբերվի բարյացակամ վերաբերմունք Ասորապատականի բնակչության հանդեպ»<sup>99</sup>։

Վարչապետ Ղավամի և Իրանում ԽՍՀՄ-ի դեսպան Սահչիկովի միջև կնքված պայմանագրից հետո, խորհրդային Միությունը պարտավորվեց ամբողջություն դուրս բերել իր գորքերը Ասորապատականից և ճանաչել աղբեկանական հարցը որպես Իրանի ներքին գործ։ Միացյալ Նախանդներն ընդունում էր ԽՍՀՄ-ի իրավունքը՝ Իրանում համատեղ նախային ընկերություն ստեղծելու վերաբերյալ, իսկ Ղավամը պարտավորվում էր խաղաղությամբ կարգավորել Ասորապատականի հետ հարաբերությունները և ստորագրել խորհրդա-իրանական նախային ընկերություն ստեղծելու համաձայնագիրը։

Չնայած ձեռք բերված համաձայնագրին՝ 1946թ. ապրիլի 4-ին Անվտանգության խորհրդն ընդունեց բանաձև, որով «Իրանի բողոքի հետազա վերա-

<sup>97</sup> Կոնցեսիոն համաձայնագրի մեջ կային որոշ նորություններ։ Ընկերության գործունեության ժամկետը 50 տարի էր։ Առաջին 25 տարվա ընթացքում բաժնեբերությունը 51%-ը պատկանելու էր ԽՍՀՄ-ին, իսկ 49%-ը Իրանին, հաջորդ 25 տարվա ընթացքում բաժնեբերությունը բաժանվելու էր հակասարությամբ սկզբնական 50%-50%։ Դամաձայնագրում կոնցեսիոն վճարների մասին ոչինչ չեղած առաջին սկզբնական տարրությունը կազմում էր հակասարությամբ առաջին վճարների մասին ոչինչ։ Տարբերակը պահպանվելու դրամական առաջին վճարը կարող է գնել խորհրդային Միությամբ պատկան բաժնեբերություն կամ երկարացնել համագործակցության ժամանակացույցը։ Վնեայն պոլիտիկա Հայաստանի առաջին վարչության մասին առաջին օրենքը կազմակերպվել է 1946 թվականի դեկտեմբերի 11-ին։

<sup>98</sup> عبدالرضا մոշտگ մեծու, سچاست خارجی ایران در دوران پهلوی, ۱۳۷۰-۱۳۷۵، تهران, ۱۳۷۵.

<sup>99</sup> Внешняя политика Советского Союза, Документы и материалы, Январь-декабрь 1946 года, Госполитиздат, 1952, с. 113.

նայման» ժամկետը հետաձգվեց մինչև մայիսի 6-ը: «Իրանի և Խորհրդային Միության կառավարություններին առաջարկվում էր Խորհրդին զեկուցել Իրանից խորհրդային գործերի դուրսերման գործընթացի մասին...»: Այս անգամ արդեն բողոքելու հերթը Խորհրդային Միության էր, որը հղում տալով 1946թ. ապրիլի 4-ի խորհրդա-իրանական պայմանագրին, պահանջում էր դադարեցնել «իրանական հարցի» ըննարկումը ԱԽ-ում: Պարզ էր, որ այդ հարցի ըննարկումը բխում էր Խորհրդային Միության մրցակից Միացյալ Նահանգների շահերից և նա ամեն կերպ նպաստում էր իրանական գործը Անվտանգության խորհրդում հնարավորինս երկար պահել, դրանով իսկ ճնշում գործադրելով պաշտոնական Մոսկվայի վրա:

1946թ. ապրիլի 5-ին, «Յունայթեն Փրես» գործակալության հայտարարության համաձայն, Դավամը Խորհրդային Միության հետ կնքած պայմանագրի առիթով ասել է, որ խորհրդա-իրանական պայմանագրիը, ինչպես նաև Իրանից ուսանակ գործերի տարհանումը, ավելորդ են դարձնում 1946թ. մայիսի 6-ին ՄԱԿ-ում «իրանական հարցի» ըննարկումը: Սակայն ապրիլի 9-ին Հունիս Ալան, որն այն ժամանակ Իրանի դեսպանն էր ԱՄՆ-ում և միաժամանակ Իրանի ներկայացուցիչը ՄԱԿ-ում, Անվտանգության խորհրդի անդամներին նամակներ հղեց, ըստ որի՝ նա հրահանգ էր ստացել «հայտարարելու, որ իրանական կառավարության դիքորոշումը մնում է անփոփոխ, ինչպես հայտարարվել է ապրիլի 4-ին Անվտանգության խորհրդի նատաշրջանում»: Այսինքն՝ Իրանի կառավարությունը պահանջում է հարցը թողնել Խորհրդի օրակարգում:

1946թ. ապրիլի 15-ին Ղավամի կառավարությունը նամակ ուղարկեց ԱԽ-ի նախագահին, որով տեղեկացնում էր, որ իրենք հետ են վերցնում Անվտանգության խորհրդից իրենց բողոքը: Սակայն Խորհուրդը մերժեց ինչպես խորհրդային, այնպես էլ իրանական կառավարությունների խորրանքն, այն է՝ դադարեցնել «իրանական հարցի» ըննարկումը: Նրանք հենվում էին Հունիս Ալայի ապրիլի 14-ի՝ հայտարարության վրա, առ այն, որ Իրանի կառավարությունը իրեն լիազորել է հայտնել Խորհրդային Միության հետ ձեռք թրած պայմանագրվածությունների մասին, սակայն միաժամանակ Իրանի կառավարությունը իրեն իրավասու չի համարում կարգադրելու, թե ինչպես պետք է գործի Անվտանգության խորհուրդը:

1946թ. ապրիլի 22-ին Ղավամը իրավարակեց հայտարարություն, որի համաձայն իրանական կառավարության կողմից ճանաչվում էր Ասրպատականում իրականացված «ղենմուկրատական վերափոխությունները»: Խոստացան նաև Իրանի սահմանադրությունում որոշ փոփոխություններ իրականացնել, հատկապես Ասրպատականի ինքնավարության և իրավունքների մեծացման հարցերի շորջ, պարսից լեզվին գործընթաց ուսուցումն իրականացնել նաև աղբեկացներին լեզվով, Մեջլիսում մեծացնել Ասրպատականի ներկայացուցիչների թիվը և այլն: Այս ամենով հանդերձ՝ 1946թ. ապրիլի 28-ին Ղավամը թեկ-

րան հրավիրեց Ասրպատականի պատվիրակությանը՝ Փիշևարիի գլխավորությամբ՝ բանակցելու այդ հարցերի շուրջ: Նրանց միջև միջնորդ հանդիսացավ Սաղչիկովը:

Իսկ 1946թ. մայիսի 6-ին, Հ.Աբան ԱԽ-ում հայտարարեց, որ Իրանի կառավարությունը ի վիճակի չէ ստուգել խորհրդային գործերի տարիանման գործնքացը և ժամանակացուցը: Նա մայիսի 20-ին Ասվաննգության խորհրդի նախագահին հղած նամակում նշում էր, որ Խորհրդային Միության միջամտությունը Իրանի ներքին գործերին չի դադարում: Այդ պատճառով էլ հնարավոր չէ իրականացնել պահանջված ուսումնասիրությունը, այն է՝ թե որքանով արդյունավետ է իրականացվում ԽՍՀՄ-ի գորքերի տարիանման գործնքացը:

Հունիս Աբան հասավ այն բանին, որ ԱԽ-ն ի գիտություն չընդունեց մայիսի 21-ի՝ Իրանի վարչապետ Ղավամի հեռագիրը: Վարչապետը Խորհրդին տեղեկացնում էր, որ Իրանի կառավարության հատուկ հանձնաժողովը «մեկ շաբաթվա ընթացքում մանրակրկիտ ուսումնասիրել է Ասրպատականի տարեր շրջանները, և չի հայտնաբերել խորհրդային գորամիավորումների որևէ հետք, ուզգամական հանդերձանքի ու տրանսպորտի որևէ միջոց: Տեղի վատահեկի բնակիչների հավաստիացմամբ, իրոք, խորհրդային գորքերն Ասրպատականից տարիանվել են 1946թ. մայիսի 6-ին»: ԱԽ-ի և Անգլիայի ներկայացուցիչները Ղավամի այս հեռագիրը համարեցին ոչ լիակատար և առաջարկեցին հետաձգել «իրանական հարցի» բննարկումը<sup>100</sup>:

Ի վերջո, 1946թ. մայիսի 9-ին խորհրդային գորքերի տարիանումը Իրանից ամբողջովին ավարտված էր: Խորհրդային անձնակազմը մնաց միայն Տրանսիրանական երկաթուղու շրջանում և Խորասան նահանգի օդանավակայանում:

Այդ նույն ժամանակ Ղավամ օս-Սալյանի կառավարությունը համաձայնագիր կնքեց «Ասրբեջանի դեմոկրատական կառավարության» ներկայացուցիչների հետ՝ ճանաչելով Ասրպատականի «ազգային Մեջլիսը» և այդ «կառավարությանը շնորհեց մի շարք իրավունքներ: Նոյնպիսի իրավունքներ շնորհեցին նաև Հյուսիսային Քրդաստանին»<sup>101</sup>:

Միացյալ Նահանգները, հասնելով Իրանից Խորհրդային գորքերի դուրսերմանը, հաջորդ քայլը համարում էր իրանա-խորհրդային համատեղ նավթային ընկերության ստեղծման խոչընդոտումը: ԱԽ-ի պետքարտուղար Մարշալ հայտարարեց, որ երաշխավորում է Միացյալ Նահանգների լիակատար աջակցությունը «Իրանին՝ Ռուսաստանին նավթային կոնցեսիա շնորհելու պատճառով»<sup>102</sup>: Այդ մասին բազում առաջացած անքարենպաստ հետևանքների դեպքում»<sup>103</sup>: Այդ մասին բազում միցու ակնարկել էր նաև Իրանում Միացյալ Նահանգների դեսպան Զորջ Ալլենը:

<sup>100</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 51.

<sup>101</sup> Բայրության Վ. Իրանն այսօր, Երևան, 1999, էջ 143:

<sup>102</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 60.

Մամլո ասովիսում Զ.Ալենը հայտարարեց, որ «Իրանն ազատ է ընդունել կամ մերժել ուստական առաջարկը, բայց մերժելու դեպքում երկիրը կարող է լիովին հովանք դնել Միացյալ Նահանգների աջակցության վրա»<sup>103</sup>:

1946թ. օգոստոսի 12-ին ԽՍՀՄ-ի դեսպան Սադհիկովը Ղավամի ստորագրությանը ներկայացրեց նախային համաձայնագրի տեքստը: Ղավամը հրաժարվեց ստորագրել փաստաթուղթը մինչև Մեջլիսի ըննարկումը: Սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեսպանը հանդես եկավ հայտարարությամբ՝ ի պաշտպանություն իրանական ժողովրդի իրավունքի՝ կոչ անելով տնօրինել իրենց նավթային հարատությունն ըստ սեփական հայեցղության:

1946թ. օգոստոսի 17-ին, Խորհրդային Միությունը, զեռ հովանք չկորցրած, միջազգային ասպարեզում փորձում էր աջակցություն ցուցաբերել Իրանին, որը մնեց ցանկություն ուներ մասնակցելու ՄԱԿ-ի աշխատանքներին: Իրանը պնդում էր, որ, հաչվի առնելով իր ներդրումն ընդհանուր թշնամու դեմ պայքարի ժամանակ, իրեն իրավունք պետք է տրվի մասնակցելու Գերմանիայի նախկին դաշնակիցների նկատմամբ խաղության պայմանագրերի, ծրագրերի ըննարկմանը: Խորհրդային պատգամավորության ղեկավար Ա. Յ. Վիշինսկին Իրանի կառավարության պահանջը հայտարարեց օրինական և կոչ արեց ընդառաջի պաշտնական Թեհրանի պահանջին և ի թիվս մյուս դաշնակից պետությունների՝ Իրանին ևս մասնակից դարձնել կոնֆերանսի աշխատանքներին<sup>104</sup>:

Իրանից խորհրդային գորքերի դուրս բերումից անմիջապես հետո, Ղավամը հրապարակեց հայտարարագիր, որի համաձայն՝ Մեջլիսի ընտրությունների ժամանակ կարգուկանոնի ապահովման նպատակով կառավարական գորքեր պետք է ուղարկվեին Իրանի բոլոր նահանգները, այդ թվում նաև Ասրապատական: Այդ գաղափարը 1946թ. նոյեմբերի 27-ին արտահայտել էր նաև Իրանում Միացյալ Նահանգների դեսպան Զորջ Վ. Ալենը՝ նշելով, որ Իրանի կառավարությունը լիակատար իրավունք ունի գորքեր ուղարկել երկրի ցանկացած նահանգ: «Մենք նորմալ և ընական ենք համարում Իրանի կառավարության մտադրությունն՝ ընտրությունների ժամանակ անվտանգության ուժեր ուղարկել Իրանի բոլոր շրջանները»<sup>105</sup>:

Ղավամը մինչ այդ ստեղծել էր իր սեփական նոր կուսակցությունը՝ կանխամտածված այն կոչելով՝ «Ներկարատական կուսակցություն», հենց այնպես, ինչպես կոչվում էր Ասրապատականում գործող կուսակցությունը: Այդ ամենից հետո Իրանի հարավային շրջաններում տեղի ունեցան մի շարք ընդվզումներ՝ իրեն բողոք՝ ուղղված կենտրոնական կառավարության դեմ խորհրդային ուժերի և «Թուղթ» կուսակցության օրավոր աձող ազդեցության: Ղավամը, այդ ժամանակ արդեն իրեն բավական ուժեղ համարելով, օգտագործեց այդ առիթը,

<sup>103</sup> The Middle East Journal, 1956, N 1, p.32.

<sup>104</sup> Внешняя политика Советского Союза, 1946, с. 294–295.

<sup>105</sup> Avery P., Modern Iran, London, 1965, p. 397, The Middle East Journal, 1956, N 1, p. 29.

որպեսզի ամբողջովին փոխի իր քաղաքականությունը: Նոյնմբերի վերջին Ղավամը կարգադրեց Ասրավատական ուղարկելու ռազմական ուժեր, իբր թե նախատեսվող ընտրությունները վերահսկելու համար: Կառավարական գորքերը զրայեցրին Զենջանը, առանց պայքարի ետ վերցրին Ասրավատականը և Թեհրանում ձերքակալեցին շուրջ հարյուր թուղթական առաջնորդների:<sup>106</sup> Դեկտեմբերի 4-ին կառավարական գորքերը և ժանդարմերիան՝ ամերիկացի գեներալ Ն. Շվարցլուպֆի գլխավորությամբ 40 տանկով, 150 ինքնարիով և ԱՄՆ-ից իրանական բանակին տրամադրած հզոր հրետանիով և ականանետերով, մոտոք գործեցին Ասրավատական ու Քրդաստան<sup>107</sup>: Պատրոնական Թեհրանը 20 գումարտակ մտցրեց Ասրավատական: Մշամամանակ կառավարությունից հեռացվեցին ձախ կողմնորոշում ունեցող նախարարները, ձերքակալեցին «Թուղթ» կուսակցության շուրջ հարյուր անդամներ: Ասրավատական նահանգն այսպիսով կրկին անցավ Թեհրանի հսկողության տակ:

Մեջիսի ընտրություններն երկար ժամանակ ձգձգվեցին և անցկացվեցին միայն 1947թ. հունվարին: «Թուղթ» կուսակցությունը հրաժարվեց մասնակցել ընտրություններին:

«Խորհրդային կառավարությունը դեռևս հույս ուներ, -գրում է շահը, - թե Իրանի Մեջիսը կիվալերացնի Ղավամի նախագիծը: Սակայն նորարար Մեջիսը, 1326թ. Մեհր 3-ին (1947թ. սեպտեմբերի 25) միաձայն մերժեց տվյալ պայմանագիրը»<sup>108</sup>:

ԱՄՆ-ի պաշտոնական ներկայացուցիչները վարչապետ Ղավամին բացեիրաց դրում էին, որպեսզի նա չնեյալ հայտարարի 1946թ. ապրիլի 4-ի խորհրդա-իրանական համաձայնագիրը՝ խոստանալով լիակատար աջակցություն Խորհրդային Միության կողմից հավանական սպառնալիքի պարագայում:

1947թ. հունտեմբերի 22-ին Ղավամ օս-Սալբանին Մեջիսում հանդես եկավ ելույթով, որտեղ առաջարկեց չվավերացնել խորհրդա-իրանական համաձայնագիրը: «Այն ժամանակ, եթե ես ստորագրեցի այդ համաձայնագիրը, - ասում էր վարչապետը, - կարծում եմք, որ այն քիում է երկրի շահերից... Այժմ ես գտնում եմ, որ այն չի քիում երկրի շահերից»<sup>109</sup>: Նա նշում էր նաև, որ պայմանագիրը ստորագրվել էր ճշշման տակ: <Ուկտեմբերի 22-ին Մեջիսը չվավերացրեց պայմանագիրը՝ ձայների 102-2 հարաբերակցությամբ»<sup>110</sup>:

1946թ. դեկտեմբերի 11-ին իրանական գորքերը շարժվեցին Թավրիզի ուղղությամբ: Շուտով պարզ դարձավ, որ թե՛ Թավրիզը և թե՛ Մեհարադը որևէ

<sup>106</sup> The Middle East Journal, 1956, N 1, p. 28.

<sup>107</sup> Международные отношения на Ближнем и Среднем Востоке после Второй мировой войны, Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, М, 1974, с. 95.

<sup>108</sup> Նոյն տեղում,էջ 248:

<sup>109</sup> Новое Время, 1947, N 48, c.13.

<sup>110</sup> The Middle East Journal, 1956, N 1, p. 32., The Middle East and North Africa 1964-65, p. 184.

դիմադրություն չեն ցուցաբերելու իրանական կառավարությանը<sup>111</sup>: Դեկտեմբերի 12-ին գրավվեց Թավրիզը, 17-ին՝ Մեհրաբաղը:

Թավրիզը գրավելոց անմիջապես հետո, իրանական գործերի իրամանատար գեներալ Հաջիմին չեղայի հայտարարեց 1946թ. հունիսի 13-ին Իրանի կառավարության և Աստրափառականի միջև ձևոր բերված համաձայնագիրը:

ԱՄՆ-ի դեսպան Զ.Ալլենը մեծ վարպետություն դրսեորեց իր առաքելությունն իրականացնելու ժամանակ: Նա Իրանի նախարարներին տեղեկացնում էր Միացյալ Նահանգների աջակցության պատրաստակամության վերաբերյալ՝ կոչ անելով վերականգնել կենտրոնական կառավարության իշխանությունը ծայրամասային նահանգներում: Անշուշտ պատմության այս դրվագում չպետք է թերագնահատել ամերիկյան օգնության ազդեցությունը: Գնդապետ Նորման Շվարցկոպֆը գտնում էր, որ այս փուլում կարեոր է աջակցել իրանական կառավարությանը: «Շվարցկոպֆն անդադար ուսումնասիրում էր բոլոր այն շրջաններ, որտեղ հնարավոր էր հոգումներ խմորել: Նա ոչ պակաս աստիճանով օգնեց Իրանի կառավարությանն ամեր պահպանել վերահսկողությունն Աղրբեջանում և հյուսիսային այլ շրջաններում»<sup>112</sup>:

Ավանդաբար ամերիկյան պատմաբանները և քաղաքական գործիչները, այդ թվում նաև նախազահ Թրումենն գտնում են, որ միայն 1946թ. Թրումենի «ուլտիմատումի» շնորհիվ հնարավոր եղավ ստիճան ուսուներին տարհանել իրենց գործերը Իրանից: Մյուս կողմից, իրանական գիտնականները առաջ են քաշում այլ տեսակետ, որտեղ նվազագույնի են հասցնում ամերիկյան մասնակցության կարևորությունը. Փոխարենը մեծ տեղ տալով Ղավամի փայլուն դիվանագիտությանը: Մեր կարծիքով երկու գործոններն ել ունեցան իրենց ազդեցությունը: Զի կարելի ուշադրությունից դուրս թռղել նաև այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ը, այնուամենայնիվ, նոր էր դուրս եկել պատերազմից և չէր ցանկանում նոր խնդիրներ ունենալ հզոր տեղություններից որևէ մեկի հետ:

Ինչ վերաբերում է Փիշկարիին և «Աղրբեջանի Դեմոկրատական կուսակցության» մի շարք առաջնորդներին, ապա նրանք հանգրվան գտան Խորհրդային Աղրբեջանում, իսկ նրանք, ովքեր մնացին երկրում, դատապարտվեցին մահվան: Կուսակցության ղեկավարությունը տեղափոխվեց Բաքու և հայտնվեց Բաղդադի և Խորհրդային Աղրբեջանի Կոմկուսի ազդեցության տակ<sup>113</sup>: Փիշկարին Բաքի ուղղիով անընդհատ դիմում էր Աստրափառականի ժողովրդին՝ խոստանալով վերադառնալ: Ի դեպ, իրանական կառավարությունը բազմից նոտաներ էր հղում ԽՍՀՄ-ի կառավարությանը, կոչ անելով պապաստան չուպ և չիովանավորել քաղաքական վտարանախներին: Իրանը մեղադրում էր ԽՍՀՄ-ին, որ իր տարածքում քաղվարական վտարանախները ձևավորում են ջոկատներ, որպեսզի ներխու-

<sup>111</sup> Барзани Масуд, Мустафа Барзани и курдское освободительное движение (1931–1961), Санкт-Петербург, 2005, с. 138.

<sup>112</sup> Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, New Haven & London, 2003, p. 164.

<sup>113</sup> Maziar Behrooz, Rebels With a Cause, The Failure of the Left in Iran, London-New York, 2000, p. 29.

ժեն Իրանի տարածք, ինչպես նաև օգտվում են այդ շրջանում առկա գաղտնի ուղղուկայանից: Եթի խնդիրն առավել սրվեց, հարցը լուծվեց այլ կերպ. Փիշլարին սպանվեց ավտովրարի ժամանակ<sup>114</sup> և այդ կերպ վերջ տրվեց իրանական քաղվարանդիների գործունեությանը Խորհրդային Միության տարածքում: Իսկ Ղազի Մուհամմեդը և իր կողմանակիցներից շատերը մահվան դատապարտվեցին, որով գլխաւովեց բրոդական շարժումը, իսկ Ի-Բ-Դ-Կ-ի անդամներից շատերը փախան երկրից:

1947թ. դեկտեմբերի 10-ին Ղազվամը Մեջլիսում չհավաքեց անհրաժեշտ քանակի վատահության բիե և բողեց վարչապետի պաշտոնը: Դեկտեմբերի 28-ին Հարիմին շահին ներկայացրեց կատավարության իր կազմը: Հետագա երեք տարիներին Իրանում փոխվեց 5 կատավարություն: Կատավարության հաճախակի փոփոխությունները, ի թիվս մի շարք այլ հարցերի, կապված էին նաև անզոր-աներկցան, ինչու չեն, նաև ԽՍՀՄ-ի մրցակցության և շահերի բախման հետ:

Վերոհիշյալ իրադարձությունների հետևանքով բարձրացավ ԱՄՆ-ի վարկանիշը Իրանի ժողովրդի շրջանում, քանզի Խորհրդային Միությունը Իրանի համար վտանգ էր ներկայացնում, Անգլիան վարկարեկված էր իր վարած քաղաքանության պատճառով, իսկ Միացյալ Նահանգների՝ Իրանում իրականացրած քաղաքականությունը թվում էր ավելի ընդունելի: Ավելին, աղբբեշանական խնդիր ժամանակ ԱՄՆ-ը Իրանին ցուցաբերեց զգայա աջակցություն: Բացի այդ, վերոհիշյալ ժամանակահատվածում երկրում գործում էին ամերիկյան մի շարք մասնագետներ, որոնք ամեն կերպ փորձում էին բարձրացնել ԱՄՆ-ի վարկանիշը: Այդ հանգամանքը հետազայում մեծապես օգտագործվեց Միացյալ Նահանգների կողմից իր քաղաքական ծրագրերի իրականացման ժամանակ:

<sup>114</sup> The Middle East Journal, 1956, N 1, p.31.

**ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐՎԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1950-1953 ԹԹ.**

**ԱՄ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՆ-  
ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐՎԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՒ**

1950-ական թվականներին, Միացյալ Նահանգներն իր արտաքին քաղաքանությունն իրականացնելիս հաճախ դիմում էր օգնություն հատկացնելու մեխանիզմին, որը կարծ ժամանակատվածում տալիս էր դրական արդյունք: 1950թ. հունիսին ամերիկյան Կոնգրեսն ընդունեց թույլ զարգացած երկրներին «օգնելու» օրինագիծ: Օգնության ծրագիրը մշակվու համար 1950թ. վերջին ստեղծվեց խորհրդակցական միություն, որի ղեկավար նշանակվեց Ներսոն Ռոբերտ Էնթոնը: Կոնգրեսի որոշմամբ՝ թույլ զարգացած երկրներին 1950/51-1952/53 թթ. հատկացվեց 337 մլն դոլար: ԱՄ-ը որոշել էր «Թրումենի դրկուրինի 4-րդ կետի» սահմաններում օգնություն ցուցաբերել Իրանին, Աֆղանստանին, Եգիպտոսին, Իրաքին, Իրայելին, Հորդանանին, Լիբանանին և Սաուդյան Արաբիային: Թուրքիան ամերիկյան օգնություն ստացավ համաձայն «Մարշալի պլանի»<sup>115</sup>:

Հատկանշական է, որ հետպատերազման շրջանում Միացյալ Նահանգները իր օգնությունը հատկացնում էր իիմանականում ոչ թե այն երկրներին, որոնք պատերազմի ժամանակ իր դաշնակիցներն էին եղել, այլ այն պետություններին, որոնց հարկավոր էր հզորացնել՝ անհրաժեշտության դեպքում Խորհրդային Միության հնարավոր առաջխաղացումը կանխելու համար: Իրանին հատկացվող վերոհիշյալ օգնությունները, համեմատած Թուրքիայի և Հունաստանի հետ, չնչին էին: Այդ կապակցությամբ հետաքրքրական էր պաշտոնական Մուսկվայի հայտարարությունը, որտեղ ասվում էր. «Միացյալ Նահանգների նոր բացահայտված սերը Թուրքիայի նկատմամբ արտահայտվեց կրանց կնքած գաղտնի պայմանագրով, որով թույլ էին տալիս թուրքերին իրենց միացնել թուրքախոս Աղրքեցանը»<sup>116</sup>:

Իսկ ամերիկյան հեղինակները դա բացարում են այսպես. «Թուրքիան առավել կայուն է քաղաքական ասպարեզում, ինչպես նաև վարում է արևմտամետ քաղաքականություն»<sup>117</sup>:

<sup>115</sup> Самыловский И.В., Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке, М., 1955, с. 66.

<sup>116</sup> Goode James F., The United States and Iran, p. 33.

<sup>117</sup> Thomas Lewis V., Frye Richard N., The United States and Turkey and Iran, p. 143-146.

1950թ. Իրանի վարչապետ Նշանակվեց մինչ այդ երկար ժամանակ բանակի շտարի պետ գեներալ Ալի Ռազմարան: Նա հույս ուներ, թե կարող է արժանանալ Միացյալ Նահանգների վատահությանը և դրա շնորհիվ ձեռք բերել 7-ամյա ծրագրի համար անհրաժեշտ տնտեսական օգնություն: Այդ ժամանակ էր, որ «Նյու-Յորք Թայմս» արձանագրեց. «Ռազմարան միակ մարդն է, ով ընդունակ է փրկելու Իրանը բաղաքական անվայունությունից և ֆինանսական սնանկացումից»<sup>118</sup>:

1950թ. Միացյալ Նահանգները սկսեց իր ռազմական օգնության ծրագիրը, և այդ կապակցությամբ հիմնվեց Ռազմական խորհրդատուների օգնության խումբը, որն առավել հայտնի է ՄԱԿԴ հապավմամբ<sup>119</sup>: Հարկ է նշել, որ Իրանի վարած նման քաղաքականության և ԱՄՆ-ի ցուցաբերած օգնության շնորհիվ Իրանի քանակում գինվորականների թիվը կրկնապատկվեց: Եթե 1946թ. այն կազմում էր 65.000, ապա հինգ տարի անց այն հասավ 123.000-ի, որից 8.000-ը սպա էին: Օդային ուժերի թիվը ևս աճեց՝ 1.400-ից հասնելով 3.300-ի, իսկ ծովայինը՝ 440-ից՝ 1200-ի<sup>120</sup>:

Ռազմական օգնության ծրագրին զուգընթաց՝ Միացյալ Նահանգների ֆոնդերն առաջին հերթին հատկացնում էր ՆԱՏՕ-ի անդամ երկրներին (գործ I), համեմատարար թիվ քանակությամբ՝ Հունաստանին և Թուրքիային (գործ II), իսկ երրորդ գլխի համաձայն՝ օգնությունն տրամադրվեց Իրանին, Կորեային, Ֆիլիպիններին (հաշվի էր առնվում այդ երկրների քաղաքական կողմնորոշումը դեպի Միացյալ Նահանգներ)՝<sup>121</sup>: Իրանին, Ֆիլիպիններին և Կորեային տրամադրվեց 27,640 մլն դոլար: Այդ նպատակով 1950թ. մայիսի 23-ին կնքվեց համապատասխան պայմանագիր, որտեղ Իրանը վերջինն էր՝ 13-րդը:

Սակայն Իրանն առաջին երկրներից էր, որի վրա ԱՄՆ-ը տարածեց «Թրումենի դոկտորինի 4-րդ կետին գրունենությունը: Համաձայնագիրը, որը ստորագրվեց Թմբերանում՝ Իրանում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Գրեյդի և վարչապետ Ռազմարայի միջն 1950թ. հունիսի 19-ին, անդրադարձում էր «4-րդ կետի» իրականացման ընդհանրական հարցերին և կազմվեց հուշագրի ձևով՝ «տեխնիկական համագործակցություն՝ զյուղատնտեսական աշխատանքները բարեկավելու նպատակով»:

Վերոհիշյալ համաձայնագրով զյուղատնտեսության զարգացման նպատակով Իրանին հատկացրած օգնությունը նպատակ ուներ բարձրացնել բնակ-

<sup>118</sup> New York Times, 28 June 1950.

<sup>119</sup> Military Assistance Advisory Group. Richard F. Nyrop, Iran: A Country Study, Washington, 1978, p. 414–415.

<sup>120</sup> Hurwitz J.C., Middle East Politics: The Military Dimension, New York, 1969, p. 281.

<sup>121</sup> Goode James F., The United States and Iran, 1946–51, The Diplomacy of Neglect, New York, 1989, p. 36.

. 511 علامه شاه نجاتی، تاریخ سیاسی پیوست و پنجم ساله ایران، تهران، ۱۹۷۸، ص.

չության կենսամակարդակը և զյուղացիների աշխատանքային արտադրողականությունը: Այդ նպատակների իրականացման համար 1950թ. ԱՄՆ-ը հատկացրեց 500.000 դոլար, իսկ Իրանը՝ հողատարածք, աշխատուժ, սարքավորումներ և տարեկան ոչ պակաս քան 3,2 մլն դոլար՝ ընթացիկ ծախսերի համար: Համաձայնագրի չորրորդ հոդվածով ԱՄՆ-ի կառավարությունը կրթության, առողջապահության և հողագործության բնագավառներում օգնությունը կազմակերպելու համար նշանակում էր իրահանգիշներ՝ նպատակ ունենալով ապահովել տեխնիկական և վարչական աշխատանքների դեկավարումն առանձին օրինակելի կենտրոններում: Այդ կենտրոններին նաև մատակարարվում էին սարքավորումներ ու տեխնիկական միջոցներ, որոնք Իրանում չկային:

Այսպես կոչված «քարեկարգված օրինակելի 10 կենտրոններից» 7-ը նախատեսվում էր ստեղծել Աստրատականում՝ Խորհրդային Միության սահմանների մոտ: Այդտեղ պետք է կառուցվեին խճուղիներ և ուղմական տարրեր կառուցներ<sup>122</sup>:

Հասկանայի է, որ օգնության այդ չափը բավարար չէր հոգալու երկրի ոչ տնտեսական, ոչ էլ սոցիալական խնդիրները: Բացի այդ, ինչպես Իրանի կառավարությունը, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր այն երկրները, որոնք Միացյալ Նահանգներից օգնություն էին ստանում, իրավասու չեն այդ գումարները ծախսել իրենց երկրի այլ կարիքները հոգալու համար: Նման առաքելությունը իրականացնում էին միայն ամերիկացիները: Այդ նպատակով ստեղծվում էին ամերիկյան առաքելություններ, որոնք ել որոշում էին «օգնության» ֆոնդի միջոցների ծախսման եղանակը: Որպես կանոն, այդ ֆոնդը բաղկացած էր ոչ միայն «Թրումենի դոկտրինի 4-րդ կետի» հատկացումներից, այլ նաև օգնություն ստացող երկրի միջոցներից: «Հոկտեմբերի 19-ին՝ 4-րդ կետի շրջանակներում ստացած փոքր հատկացումից մեկ ամիս անց, Ներմուծման և արտահանման բանկը Իրանին հատկացրեց 25 մլն դոլար՝ 7-ամյա ծրագիրը իրականացնելու համար (սակայն այն չվավերացվեց), իսկ Համաշխարհային բանկից ակնկալվող 250 մլն դոլար վարկի շուրջ տարվող աշխատանքներն անհաջող ավարտ ունեցան»<sup>123</sup>:

1950թ. հոկտեմբերի 19-ի օգնության պայմանագրի համաձայն՝ Իրանի կառավարությունը տարեկան վճարում էր 3.200 դոլար, այսպես կոչված «տեխնիկական առաքելության» գործարարական ծախսերի համար: Ամերիկյան տնտեսական առաքելությունները հնարավորություն ունեին օգտագործելու ոչ միայն ԱՄՆ-ից ստացված միջոցները, այլև օգտվելու տվյալ երկրի բյուջեի միջոցներից: Այդ բաղաքականությունը իրականացվում էր Մերձավոր և Միջին Արևելքի

<sup>122</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 67.

<sup>123</sup> Thomas Lewis V., Frye Richard N., The United States and Turkey and Iran, Massachusetts, 1952, p. 250-251.

օգնություն ստացող բոլոր երկրներում<sup>124</sup>: Ամերիկյան առաքելության աշխատակիցներն ազատված էին մաքսատորքերից և հարկերից, ինչը բավականին մեծ վնաս էր հասցնում Իրանի գանձարանին: Անտարակոյս, առաքելության աշխատակիցները միաժամանակ զբաղվում էին նաև հետախուզական աշխատանքներով: 1952թ. տարածաշրջանում գործող առաքելություններում աշխատում էին շուրջ 980 ամերիկացի մասնագետներ, որոնք, ի դեպ, օգտվում էին դիվանագիտական անձնումխելիությունից:

Օգնություն ստացող երկրները պարտավորվում էին Վաշինգտոնին մանրակրկիտ հաշվետվություն տալ իրենց տնտեսության, զինված ուժերի վերաբերյալ խոշոշնդուել ամերիկյան մասնավոր ընկերությունների ազգայնացման գործին, բարենպաստ պայմաններ ստեղծել ԱՄՆ-ի մասնավոր ներդրումների համար: «Հատկանշական է, որ այդ ամենով հանդերձ՝ օգնության ֆոնդերը պետք է ծախսվեին միայն ԱՄՆ-ից ապրանքներ գնելու համար»<sup>125</sup>:

Հարկ է նշել, որ Միացյալ Նահանգների օգնությունը միայն դրամական տեսքով չէր մտնում Իրան: 1950թ. Վերջին ամերիկյան «Այբեկ Հառիսինդ Քորփորեյշն» շինարարական ֆիրման, իրականացրեց Թեհրանի մերձակայքում 200 հանգստյան վիլաների կառուցման ծրագիրը և պայմանագիր կնքեց Իրանի Ազգային նավթային ընկերության հետ, Արադանում ևս 114 հանգստյան տուն կառուցելու համար<sup>126</sup>: Ամերիկյան առաքելության աշխատակիցները իրենց գործունեության երեք տարում կառուցեցին 34 ջրհոր՝ ոռոգման համար:

Այդուհանդերձ Մոհամեթ Ռեզա շահ Փահլավին ղդգոհում էր ամերիկյան օգնությունների նվազ չափերից, նշելով, որ այն անբավարար է: 1950թ. նոյեմբերի 29-ին (այլ տվյալներով՝ նոյեմբերի 27-ին), հարցազրոյց տալով «Ռեզեր» գործակալության լրագրողին, նա ասել է, որ ամերիկացիներն անբավարար չափով «գնահատեցին իրանական ժողովրդի բարեկամությունն Ամերիկայի հանդեպ», որ ամերիկյան «օգնությունները գործական արդյունքներ չեն տվել և դեռ կրում են բարոզական բնույթ: Այդ «օգնությունն» արտահայտվում էր հետևյալ կերպ: Երկուուկես տարվա ընթացքում Իրանն ամերիկյան խորհրդականներին պահելու նպատակով ծախսել էր 3,5 մլն դոլար, փոխարենը ստացել էր միայն զենք, այն էլ հին ու անպիտք»<sup>127</sup>:

Շահը ղդգոհում էր նաև վարչապետ Ռազմարայի աշխատանքից: «Ռազմարան Միացյալ Նահանգների հետ կնքեց առաջին փորձածավալ օգնության պայմանագիրը: Այն շատ չէր.- գրում է շահը,- մի քիչ «4-րդ կետի» ծրագրի

<sup>124</sup> 1951—1952թթ. ամերիկյան հատկացումները Իրաքին կազմեցին 2,1 մլն դոլար, մինչդեռ Իրաքը ներդրել էր 16,6 մլն դոլար: ԱՄՆ-ը եղավուսին տրամադրել էր 3,4 մլն դոլար, իսկ Եգիպտոսը ներդրել էր 4,3 մլն դոլար: Իրանին օգնելու համար նախատեսվել էր 43,7 մլն դոլար, իսկ Իրանը ներդրել էր 16,2 մլն դոլար: Սամյուլովսկի Ի.Բ., Էկспոնացիան ամերիկական խորհրդականներին պահելու նպատակով ծախսել էր 3,5 մլն դոլար, փոխարենը ստացել էր միայն զենք, այն էլ հին ու անպիտք»<sup>127</sup>:

<sup>125</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, Москва, 1977, с. 131.

<sup>126</sup> Расади А., Иностранный капитал в Иране после Второй мировой войны, Москва, 1972, с. 85.

<sup>127</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана, с.68, James F. Goode The United States and Iran, p. 76.

գումարն էր, մի փոքր Արտահանման և ներմուծման բանկի փոխառությունն էր, որով չինք կարող ի՞նզ ծրագրի հրականացման կարիքները»<sup>128</sup> (խոսքը վերաբերում է 7-ամյա ծրագրին, -Ե.Գ.): Խսկապես, անրավարար գումարի հետևանքով մի շարք ծրագրերի հրագործումը դադարեցվեց:

Վարչապես Ռազմարայի կառավարման ժամանակ ԱՄՆ-ի ազդեցությունն Իրանում փոքր-ինչ թուլացավ: Վերջին վարում էր քաղաքականություն, այսինքն՝ աշխատում էր բոյլ չտալ, որ որևէ մեծ պետություն տիրապետող դիրքեր ձեռք բերի երկրում: Նա հրաժարվեց գորք ուղարկել Կորեա՝ պատերազմում ԱՄՆ-ին աշակեցվու: Ժամանակից ընթացքում Ռազմարան սկսեց անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբեկ ԱՄՆ-ի հանդեպ: Նա արգելեց Թեհրանում «Ամերիկայի Ճայ» ուղղութանորդման հետարձակումը<sup>129</sup>: Գալով իշխանության՝ Ռազմարան ամերիկացի մասնագետներից պահանջեց հետանալ երկրից: Ավելին, նա հետ կանչեց իրանցի այն բոյր սպաներին, որոնք գործողվել էին ԱՄՆ՝ կատարելագործվելու և, վերջապես, Թեհրանում Միացյալ Նահանգների դեսպան Գրեյլիին հայտնեց, որ Իրանն այլև ամերիկյան օգնության կարիքը չի գգում<sup>130</sup>: 1950թ. նոյեմբերի 4-ին Թեհրանում Ռազմարայի կառավարությունը ԽՍՀՄ-ի ներկայացուցի հետ ստորագրեց առևտուրական համաձայնագիր: Միաժամանակ նոյեմբերի 10-ին բանակցություններ սկսվեցին սահմանային հարցերի շորջ, իսկ 1950թ. դեկտեմբերի 10-ին մի շարք այլ չլուծված խնդիրների շորջ խորհրդային և իրանական կառավարությունները համաձայնության հասան: Ռազմարան որոշ չափով կրծատեց սահմանափակումները «Թուղթ» կուսակցության նկատմամբ: Ուսումնասիրողները գտնում են, որ Իրանի վարչապետի այդ խաղը քավական վտանգավոր էր<sup>131</sup>: Բացի այդ, նա դեմ էր Իրանի նավթարդյունաբերության ազգայնացմանը, քանի որ գտնում էր, որ չունեն համապատասխան որակավորված մասնագետներ, որոնք ի վիճակի կլինեին կազմակերպել նավթի շահագործման, մշակման աշխատանքները:

1951թ. փետրվարի կեսերին Մեջլիսի նավթային հանձնաժողովը հաստատեց Մուսահեղի նախնական ծրագիրը և առաջարկեց ամրոցովին ազգայնացնել նավթարդյունաբերությունը: Հանձնաժողովի առաջարկը վարչապետ Ռազմարան մերժեց: Ռազմարայի քաղաքական գործունությունը դուր չէր գալիս ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերին, որի արդյունքում էլ 1951թ. մարտի 7-ին Թեհրանի կենտրոնական մզկիրում Ազգային ճակատի մեջ ընդգրկված ծայրահեղ մուտքմանական թևի «Ֆեդայան-և իսլամ» կու-

<sup>128</sup> Mohammad Reza Pahlavi, *The Shah of Iran, Answer to History*, New York, 1980, p. 83.

<sup>129</sup> Goode James F., *The United States and Iran*, p. 81.

<sup>130</sup> Саркисов Е., Англо-американские противоречия в Иране и их обострение после II мировой войны. Известия Академии Наук Армянской ССР, N1, 1952, с. 32. Յ.Կ.Թերյան, Պայքար նավթի համար, էջ 186:

<sup>131</sup> Abrahamian E., *Iran Between Two Revolutions*, Princeton, New Jersey, 1983, p. 266:

սակցության հանձնարարությամբ 26-ամյա ատաղձագործը «սրբազն առաքելություն» կատարեց՝ ահարձեկական ակտ իրագործեց Ռազմարայի նկատմամբ: Երկու շարաթ անց սպանվեց նաև լուսավորության նախարարը: Խորհրդային մամուլը Ռազմարայի սպանության մեջ բացահայտ մեղադրում էր Միացյալ Նահանգներին<sup>132</sup>:

Ռազմարայի սպանությունից հետո ԱՄՆ-ի ղեկ ծավալվող անրարինապատ քաղաքականությունն իսկոյն ևեր դադարեց: 1951թ. մայիսի 18-ին «Նյու-Յորք Դեյլ Ուորկեր» թերթը գրեց. «Պետքարտուղարի օգնական Մարզի այցն Իրան տարօրինակ կերպով զուգադիմեց Ռազմարայի սպանության և Մեջլիսում Իրանի նավթի ազգայնացման որոշման հետո»<sup>133</sup>: Այդ հոդվածով՝ լրագրողը կարծես վարչապես Ռազմարայի սպանության հետևող անողողակի կերպով տեսնում էր ամերիկյան հովանավորությունը: Ռազմարայի սպանությունից հետո, Մեջլիս 1951 թ. ապրիլի 30-ին թվարկեց Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման օգտին, շահն այն վավերացրեց երկու օր անց:

Ռազմարային վարչապետի պաշտոնում կարծ ժամանակով փոխարինեց Հոսեն Ազան, որը 1951թ. ապրիլի 27-ին հրաժարական տվեց: 1951թ. մայիսի 1-ին վարչապետ նշանակվեց Մոհամմադ Մոսահեղը<sup>134</sup>, որը վայելում էր ժողովրդի սերն ու հարգանքը և դրան արժանացել էր իհմանականում Մեծ Բրիտանիայի ղեկ նավթի ազգայնացման հարցի շորջ պայքարելու շնորհիվ: Ասացին անզամ Իրանի պատմության մեջ վարչապետ նշանակվեց առանց շահի միջամտության<sup>135</sup>: «1951թ. ապրիլի 28-ին, – գրում է շահը, – ես հնազանդվեցի անխոսափելիին: Ժողովրդական ճնշման ազդեցության տակ վարչապետ նշանակեցի Մոսահեղին»<sup>136</sup>:

1951թ. ամոնք իրանական կողմը բանակցություններ էր վարում Միացյալ Նահանգների Արտահանման և ներմուծման բանկի հետ՝ 25 մլն դոլարի օգնություն ստանալու նպատակով: Ընդ որում, օգտվելով Վաշինգտոնի կողմից Իրանին հատկացված ֆինանսական և տեխնիկական օգնության լծակներից, ԱՄՆ-ի ներկայացուցիչները իրանական կառավարության, բանակի և ոստիկանության մեջ գրավեցին բազմաթիվ կարևորագույն պաշտոններ:

Հատկանշական է, որ ամերիկյան օգնությունների հատկացումներն ամրագրվում էին ԱՄՆ-ի Կոնգրեսի հիմնական օրենսդրական ակտերում: Դրանք են.

<sup>132</sup> Lenczowski George, *The Middle East In World Affairs*, New York, 1956, p. 194

<sup>133</sup>Թրյան Շ.Կ., «Պայքար նավթի համար, էջ 187»:

<sup>134</sup>Մոհամմետ Սուասեն օս-Մարանն ծննդել է 1879թ. հարուստ Ֆեռդարի ընտանիքում: Նրա հայրը շղոր 30 տարի Պարսկաստանի Փինանսների նախարարն էր: Սուասենը մորական գծով սերում էր Ղաջարների հարստությունից: Կրությունը ստացել էր Ֆարանշայում, Բելջամյուն և Ընյացարիայում: Իրավագիտության դրվագն աստիճան ստացել էր Ընյացարիայում: 1903թ. ամսանացել էր արքայադատության Զիա Մարանին հետ: Մինչև վարչապետ դառնալը գրադեցել էր ֆինանսների, արդարադատության և արտարին գրգռելի նախարարի պաշտոնը:

<sup>135</sup> منوچهر فرماتخانچیان و حسن فرماتخانچیان، خون و نفث، خاطرات یک شاهزاده ایران، تهران، ۱۹۷۸، ص. ۲۶۰

<sup>136</sup> Mohammad Reza Pahlavi, *Answer to History*, p. 84.

1. 1950թ. օրենքը՝ «Արտասահմանյան երկրներին օգնության ցուցաբերում», Ներառյալ «Թրումենի դղկութիսի 4-րդ կետը»,
2. 1951թ. օրենքը՝ «Անվտանգության համատև պահպանում»,
3. 1961թ. օրենքը՝ «Արտասահմանյան երկրներին օգնություն ցուցաբերելու մասին»:

Համաձայն 1951թ. ընդունված «Անվտանգության համատև պահպանան» օրենքի՝ 201-րդ բաժինն ԱՄՆ-ի նախագահին լիազորություններ տվեց օգնություն հատկացնել Թուրքիային, Հունաստանին և Իրանին, իսկ 202-րդ բաժնում ասվում էր, որ նախագահը, եթե հարմար գտնի, օգնություն կիատկացնի Մերձավոր և Միջին Արևելքի ցանկացած երկրի, բացի 201-րդ բաժնում հիշատակված երկրներից: Նոյն օրենքում նշվում է. «Համաձայն ակտի՝ ուղարկան, տնտեսական կամ տեխնիկական ոչ մի օգնություն չի հատկացվի որևէ երկրի՝ նրա ուղմական ուժերի զարգացման նպատակով, եթե նախագահը չգտնի, որ օգնության նման հատկացումները կամրապնդի Միացյալ Նահանգների անվտանգությունը»<sup>137</sup>:

ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումենը կարգադրեց Ազգային անվտանգության խորհրդին ուսումնասիրել Կորեայի իրադարձությունների ազդեցությունը Խորհրդային Միության սահմանակից մյուս երկրների վրա: Արևելյան Ասիայի զորքերի հրամանատար գեներալ Մարքլրուրը, գտնում էր, որ Իրանը դառնալու է Խորհրդային Միության հաջորդ զոհը<sup>138</sup>: Մինչդեռ պաշտոնական Վաշինգտոնը հոյս ուներ, թե Իրանը պատկանում է Արևելյան Ճամբարին: Սակայն Միացյալ Նահանգների դեսպանն Իրանում Լոյ Հենդերսոնը նույնպես ահազանգում էր, որ հնարավոր է նաև Իրանն ընկնի Խորհրդային վերահսկողության տակ<sup>139</sup>: Այդ զաղափարն էլ բազմից շահարկեցից Իրանի շահի կողմից: Նա անընդհատ շեշտում էր Իրանի դիրքի կարևորության մասին, նշում, որ Միացյալ Նահանգների անրավարար օգնության հետևանքով հնարավոր է Իրանն ընկնի հյուսիսային հարևանի ազդեցության տակ: Այս ճանապարհով Իրանը փորձում էր ստանալ նորանոր վարկեր կամ օգնություններ:

1951թ. հոկտեմբերին, եթե Մ. Մոսադեղն այցելեց Նյու Յորք՝ պաշտպանելու ՄԱԿ-ում իր երկրի տեսակետն ԱԻՆԸ-ի հետ ունեցած վեճի կապակցությամբ, նա ակնկալում էր ստանալ որոշակի օգնություն: Սակայն Միջազգային նախային կարտելի ճնշմամբ ամերիկյան բանկերը հրաժարվեցին Իրանին վարկ տրամադրել: Մոսադեղը որոշեց 120 միլ դոլարի օգնության խնդրանքով՝ դիմել ԱՄՆ-ի կառավարությանը, սակայն վերջինս ևս մերժեց նրա խնդրանքը՝

<sup>137</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, Москва, 1960, с. 44.  
Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, с. 131.

<sup>138</sup> Goode James F., The United States and Iran, p. 71.

<sup>139</sup> Ibid, p. 39.

պատասխանելով, որ Իրանը կարող է մեծ եկամուտներ ստանալ նավթի արտահանումից<sup>140</sup>:

Չնայած այս դժվարություններին՝ օրեցօր մեծանում էր վարչապետի հետինակությունը, ինչը բնավ դուր չէր գալիս շահին, ինչպես նաև ԱՄՆ-ին: Շահին դուր չէր գալիս, քանի որ Մոսադեղի աձող հետինակությունը ստվեր էր զցում իր վրա: Մոսադեղը հաճախ կրկնում էր այս խոսքերը. «Շահը պետք է թագավորի, ոչ թե կառավարի»: Նա բազմից օրինակ էր թերում Մեծ Բրիտանիայի կառավարման համակարգը, նշելով, որ ողջ Անգլիան սիրում է իր թագավորին և թագուհուն այն պատճառով, որ նրանք հեռու են կանգնած քաղաքականությունից: Այդ հանգամանքը նոյնակա հուզում էր Միացյալ Նահանգներին. չէ՝ որ Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին աշակցում էր Միացյալ Նահանգների ազգեցության մեծացմանը Իրանում: Շահը նաև գտնում էր, որ պետք է ԱՄՆ-ից գնել մեծ քանակությամբ արդիական գենք ու զինամթերք, որին դեմ էր Մոսադեղը: Իրանով նա նորից հարվածում էր Միացյալ Նահանգների ծրագրերին: Նա զրկեց շահական պալատը ուազմական, ֆինանսական և քաղաքական ազգեցությունից, միապետության իրավունքները կրաստեց՝ դարձնելով դրանք ձևական: Ավելին, նա շախչախնեց ազնվականներից կազմված ընդդիմությունը, ցրեց Պաղլամենութ, իրականացրեց հոդային քարեփոխումների և կոչ արեց ժողովրդին մասնակցելու նոր ընտրություններին: Բացի դրանից, նա ազգայնացրեց ԱԻՆԸ, իր վերահսկողության տակ առավ Կասպից ծովի ձկնորսությունը, և այսպիսով՝ իր քաղաքականությունն ուղղեց դեպի «քացասական հավասարակշռություն»: Թվում էր, թե Իրանն ասիական մի շարք պետությունների նման նոյնպես բռնել էր հանրապետականության, չեզոքության և միջին խավի դիրքերի կայունացման ուղին: 1925 թվականից ի վեր Իրանում այդքան մեծ իշխանություն չէր կենտրոնացվել կառավարության ձեռքում, և շահը երբեք այդքան փոքր իշխանություն չէր ունեցել<sup>141</sup>: Եվ դա միակ պատճառը չէր, որ անհանգստացնում էր Վաշինգտոնին: Կար ևս մի խնդիր. վարչապետ Մոսադեղի և կոմունիստական «Թուղթ» կուսակցության տեսակետներն առանձին հարցերում, մասնավորապես նավթի ազգայնացման հարցում, կատարեապես համընկում էին: Միացյալ Նահանգները չէր կարող թույլ տալ ևս մեկ անգամ խորհրդային Միության ազդեցության ուժեղացումն Իրանում:

Սուազին 7-ամյա ծրագիրը, որը իրականացվում էր Իրանի համար խառնակ ժամանակաշրջանում՝ 1949/50-1955/56թթ., չհասավ ակնկալվող հաջողությունների: Դրա հիմնական պատճառն այն էր, որ ֆինանսավորման զգալի մասը գալիս էր ԱԻՆԸ-ից ստացած եկամուտներից, սակայն 1951-1953թթ., երբ գրեթե

<sup>140</sup> Алиев С.М., Иран. Очерки новейшей истории, Москва, 1976, с. 207-208. Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, pp. 125-126.

<sup>141</sup> Abrahamian E., Iran Between Two Revolutions, p. 274.

ամբողջովին դադարեցվեց նավթի շահագործումը, առաջին 7-ամյա ծրագրի իրականացումն անհաջողության մատնվեց:

1951թ. նոյեմբերին ամերիկյան տեխնիկական համագործակցության առաքելության դեկավար նշանակվեց ԱՄՆ-ի ներքին գործերի նախարարության քարձրաստիճան պաշտոնյա Վիլյամ Էլմո Ռուրնը, որը զբաղեցրեց այդ պաշտոնը մինչև 1955թ.<sup>142</sup>: Նման քարձրաստիճան պաշտոնյայի ներկայությունը խոսում է Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների մեծ հետաքրքրության մասին:

1952թ. հունվարին Թեհրանում ստորագրվեց տեխնիկական համագործակցության մասին ամերիկա-իրանական համաձայնագիր, ըստ որի ԱՄՆ-ը Իրանին 1952թ. հատկացրեց 23 մին դոլար: Իրանի կառավարությունը պարտավորվում էր ընդունել ամերիկյան տեխնիկական առաքելությունը և այն ճանաչել որպես ԱՄՆ-ի դիվանագիտական առաքելության մի մասը<sup>143</sup>: Առաքելության բաժանմունքները բացվեցին Թավրիզում, Ռշտում, Մաշհադում, Քերմանշահում, Սպահանում, Շիրազում, Անվազում և Քերմանում: 1952թ. հունիսի տվյալների համաձայն՝ առաքելության անդամների թիվն անցնում էր 120 մարդուց:

1952թ. առաքելության օգնության ֆոնդը պետք է ծախսվեր տնտեսական կարիքների համար, սակայն դրա՝ պետք բան 1 մին դոլարը հատկացվեց ԱՄՆ-ից նաև կահանգիստների և օդանավակայանների համար սարքավորումներ զնելուն, 3 մին դոլար՝ ուազմավարական նշանակություն ունեցող ճանապարհների կառուցելուն, ավիալուսանկարման և ժանդարմերիայի պահակակետների կառուցման համար: Այդ ամենն, անխոս, անհրաժեշտ էր Իրանին, սակայն կարծում ենք առաջնային բնույթ չեր կրում: Փոխարենը օգնության լուրջ կարիք ուներ սոցիալ-տնտեսական ոլորտը:

Այդ համաձայնագիրը, սակայն, դեռ միայն սկիզբն էր. Իրանի դրսերը բացվեցին, և ամերիկյան կապիտալը ներխուժեց երկիր: 1952թ. հունվարին ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Դ. Աշետոնը հայտարարեց, որ «4-րդ կետի ծրագիրը կրացի անդրծովյան շուկաների և հումքի աղբյուրների դռները»<sup>144</sup>: Որպես կանոն, պարտը ստացած երկիրը պարտավիրվում էր պայմանագործած ժամկետում ոչ միայն վերադարձնել գումարը՝ տարեկան համաձայնցված տոկոսներով, այլ նաև այն ծախսել պարտը տվող երկրի թելադրանքով, հատուկ առաքելությունների հսկողությամբ և ստուգմամբ:

Այսպիսով, հետապատերազմյան ժամանակաշրջանից մինչև 1954թ. ներառյալ, ԱՄՆ-ի օգնությունը Իրանին ուներ հետևյալ տեսքը (մին դոլար):

1. Պարտընք և նպաստներ .....	46,6
2. «Չորրորդ կետի» շրջանակներում հատկացումներ .....	72,2
3. Ռազմական օգնություն (սկսած 1947թ.) .....	175

<sup>142</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке (США и страны СЕНТО), с. 231.

<sup>143</sup> Дорошенко Е., Иран, Специальный бюллетень, N12/103/, М. 1969, с.42-43.

<sup>144</sup> Правда 4.08.1952.

4. Անհապաղ օգնություն	45
Հնդամենը	338, 8

Հատկանշական է, որ «Բրիթիշ Յունայթեն Փրես»-ի՝ Մերձավոր Արևելքի թղթակիցը, հենվելով հետպատերազմյան իրադարձությունների վրա, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում ամերիկյան ներթափանցումը բնութագրելիս ընդգծում է հիմնականում հինգ ձև:

1. Մերձավոր և Միջին Արևելքում մինչ այդ գործող ամերիկյան նավային ընկերությունները, պատերազմից հետո ավելացնելով իրենց կապիտալ ներդրումները, տարածում և ընդլայնում են իրենց գործունեությունը ու փորձում են ավելի մեծ դեր խաղալ այդ երկրների տնտեսության մեջ:
2. Ամերիկյան Արտահանման և ներմուծման բանկը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին հատկացնելով խոշոր վարկեր, նպաստում է ամերիկյան կապիտալի ներթափանցմանը տարածաշրջան:
3. Պետդեպարտամենտը յուրաքանչյուր առիթով միջամտում է այդ երկրներում գործող ամերիկյան առևտրականների օգտին:
4. Ամերիկյան օդային տրանսպորտի ընկերություններն այս երկրների վրայով նորանոր ուղիներ են հաստատում:
5. Եվ վերջապես, ամերիկյան ծովային տրանսպորտի ընկերությունները Միջերկրական ու Կարմիր ծովերում, ինչպես նաև Հնդկական օվկիանոսում ու Պարսից ծոցում նոր բազաներ են ստեղծում<sup>145</sup>:

Իսկ Անգլիացի հետազոտող Շ. Ուայջը ԱՄՆ-ի օգնությունը որակում է հետևյալ կերպ. «50-ական թվականներին սկզբներին ԱՄՆ-ի քաղաքականությունն Ասիական երկրներին օգնություն հատկացնելու գործում փաստորեն անբաժանելի էր քաղաքական ռազմավարությունից: ԱՄՆ-ը դաշնակիցներ էր փնտրում կոմոնինտական բլոկի հարավյան սահմանների մոտ և աջակցում էր նրանց գգալի օգնություններով»<sup>146</sup>. Մենք իրվին կիսում ենք վերջին տեսակետը:

1952–53թթ. չառանալով ակնկալվող ամերիկյան օգնությունները՝ վարչապետ Մոսադեկը ջանում էր փոխարքենը մեծացնել իր իրավունքների շրջանակը, կարձելով, որ այդպես կարողանա երանը պահել իր վերահսկողության տակ: Նա շահից պահանջեց, որ իրեն շնորհի ռազմական ուժերի նախարարի լիազորությունները, սակայն Մոհամեդ Ռեզա Փահլավին մերժեց նրա հայցը, գիտակցելով, որ հակառակ դեպքում կնպաստի Մոսադեկի ազդեցության մեծացմանը: «Վերջին իրադարձությունների ընթացքում ես նկա այն եզրակացության, – նշում է Մոհամեդ Մոսադեկը, – որ իմ ազգային առաքելությունը շարունակելու համար պետք է ինձ վստահեն ռազմական ուժերի նախարարի պաշտոնը: Քանի որ Նորին Մեծությունը մերժեց իմ խնդրանքը, ես պետք է իրադարձեմ և թույլ տամ արքայական վստահությանն արժանացած մեկ ուրիշին ձևա-

<sup>145</sup> Թրյան Յ. Կ., «Պայքար նավի համար, էջ 179–180:

<sup>146</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, Москва, 1977, с. 130–131.

վորել նոր կառավարություն և իրականացնել Նորին Մեծության քաղաքականությունը: Ներկա իրավիճակում Իրանի ժողովրդի կողմից սկսվել է մի պայքար, որը չի կարող ավարտվել հաղթանակով»<sup>147</sup>:

Մոհամմադ Ռեզա շահը, բնականաբար, չէր պատրաստվում մեծացնել վարչապետի լիազորությունները, և այդ պայմաններում Մոսադեղը հրամարական տվից: 1952ր, հուլիսի 17-ին Իրանի վարչապետ Նշանակվեց փորձառու քաղաքագետ, մի քանի անգամ վարչապետի պաշտոնը գրադեցրած Ահմադ Ղավամ օս-Սալյաններ՝ Անգլիացի դիվանագետները հոյսով լցվեցին նոր վարչապետի նշանակման կապակցությամբ, սակայն նա այդ պաշտոնում մնաց ընդամենը մի քանի օր: Իրանի փողոցները հեռացվեցին Մոսադեղի կողմնակիցներով, որոնք շահից պահանջում էին Մոսադեղին տալ իր հայցած լիազորությունները: Շահը, ժողովրդական զանգվածների Ճշմար, Մոսադեղին վերականգնեց վարչապետի պաշտոնում և նրան շնորհեց հայցած լիազորությունները: Մոսադեղի հետինակությունը օր օրի ավելի էր մեծանում, և մենք մյուսի ետևից նա շահից վերցնում էր նոր իրավունքներ: Մինչև 1953թ. մայիսը շահը փաստորեն գրկվեց այն բոլոր իրավունքներից, որոնք նա ձեռք էր բերել 1941 թվականին: Մոսադեղը հաճախ ծանր պայքարի մեջ էր մտնում սպայական կազմի հետ: Նա Ռազմական նախարարությունը վերանվանեց Անվտանգության նախարարություն, ուզմական բյուջեն կրծատեց 15%-ով և հայտարարեց, որ երկիրն ապագայում կգնի միայն անվտանգության համար անհրաժեշտ սարքավորումներ՝<sup>148</sup>:

Մոսադեղի և շահի միջև առկա գիխավոր խնդիրը կայանում էր նրանում, որ Մոսադեղը ջանում էր բանակի նկատմամբ վերահսկողությունը վերցնել իր ձեռքը: Բանակը մեծապես համակիր էր շահին և գտնվում էր ամերիկյան խորհրդատունների ազդեցության տակ: Ինարկե բանակի մի շարք հրամանատարներ համակիր էին Մոսադեղին, սակայն այն մոտ էր Մոսադեղի կողմից իրավիճակի վերահսկողության ամենաքույլ օլակը: Իր վարչապետության շրջանում Մոսադեղն աշխատում էր շահի իշխանությունը համարժեք դարձնել 1906–1907 թվականներին ընդունած սահմանադրությանը, չնայած նա հաջողության հասակ մի շարք ոլորտներում, սակայն ամրողապես չկարողացավ այն իրականացնել բանակում<sup>150</sup>:

Շուտով Իրանի տնտեսական դրույթունն այնքան վատացավ, որ կառավարությունն ի վիճակի չէր նոյնիսկ պետական ծառայողներին աշխատավարձ վճարել:

ԱԻՆՀ-ի բանվորները և ծառայողները մատնված էին անգործության, Իրանի բյուջեն չէր համալրվում նավթից ստացվող շահույթներով: Զեյթին նաև անհրաժեշտ ամերիկյան օգնությունները: Գնալ գիշման Անգլիայի հետ՝ Մոսադեղը

<sup>147</sup> Mossadegh Out as Premier; Ghavam to Take Iran Helm, July 18, 1952,  
<http://www.nytimes.com/library/world/mideast/071852iran-ghavam.html>

<sup>148</sup> Ղավամը 11 անգամ զրադեցրել է վարչապետի պաշտոնը:

<sup>149</sup> Abrahamian E., Iran Between Two Revolutions, p. 273.

<sup>150</sup> Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, p. 133.

չեր կարող, քանզի նա շատ հեռու էր գնացել իր քաղաքականությամբ: Համագործակցել սոցիալիստական երկրների հետ նա նոյնպես չեր կարող, քանզի Միացյալ Նահանգները բազմից սպառնացել էր, թե այդ դեպքում այլև ոչ մի օգնություն չի հատկացնել Իրանին, և դրանից հետո Մոսադեկան անգամ մոտածել չեր ուզում խնդիրների լուծման այդպիսի տարրերակի մասին: Զնորուանակ նաև, որ 20-րդ դարի կեսերին ողջ աշխարհը սարսափում էր Խորհրդային Միության հետ համագործակցելուց, կարծելով, որ այդ դեպքում իրենց երկրներում, խորհրդային կառավարության շանքերով, գլուխ կրաքրացնեն կոմունիստական ուժերը: Հենց այս պայմաններում էլ ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Դ. Էյզենհաուերը Իրանի կառավարությանը հասկացրեց, որ եթե չլուծեն նավիշի հետ կապված իրենց տարածայնություններն Անգլիայի հետ, ԱՄՆ-ն Իրանին հասանելիք օգնությունը կիրածատի: Իսկ այն, որ դա լոկ սպառնալիք չեր, այլ լիակատար շանտաժ, վկայում է շահը՝ գրելով. «Ինչեւ, 1331-32թթ. (1952-53) Ամերիկայի օգնությունների մակարդակը հզավ 22,1 դոլարի»<sup>151</sup>:

1953թ. մայիսի 28-ին Մոսադեղը կրկին օգնության խնդրանքով դիմեց ԱՄՆ-ի նախագահին. «Իմ ուղերձից մի քանի ամիս հետո էլ, Իրանի ժողովուրդը ֆինանսական դժվարություններ է գգում և պայքարում է նախկին նավային ընկերության քաղաքական խարդավանքների և անգլիական կառավարության դեմ... Իրանը օգտագործում են քարոզչության և դիվանագիտության բոլոր միջոցները, որպեսզի անօրինական խոչընդոտներ ստեղծեն Իրանի նավթի վաճառքի ճանապարհին... Չնայած մենք հույս ունենք, որ Ձերդ գերազանցության կառավարման ժամանակ Իրանին կհատկացվեր առավել ուշադրություն, ցավիք սրտի, ամերիկյան դիրքորոշման մեջ որևէ փոփոխություն դեռ չի նկատվում: Այժմ Իրանի պետությունը տնտեսական և քաղաքական դժվարություններ ունի: Եթե հանդուրժեք իրադարձությունների նմանօրինակ շարունակումը, ելնելով միջազգային տեսակետից՝ կարող են առաջանալ նաև լուրջ հետևանքներ: Իրանը հույս ունի, որ ամերիկյան կառավարության աջակցությամբ իրանական նավթի վաճառքի առաջ ստեղծված խոչընդոտները կարելի է չեղործացնել: Իսկ եթե ամերիկյան կառավարությունը ի գորու չէ չեղործացնել նման խոչընդոտները, ապա նա կարող է Իրանին արդյունավետ տնտեսական օգնություն ցուցաբերել, որպեսզի հնարավորություն տա վերջինիս օգտագործելու իր մյուս օգտակար հանածոները: Բացի նավթից Իրանի տրամադրության տակ կան մի շարք այլ բնական հանածոներ: Այդ ուսուրաների շահագործումը կլուծի առկա խնդիրը: Սակայն այն հենարավոր չէ առանց տնտեսական օգնության:

Վերջում ևս կոչ եմ անում Ձերդ գերազանցությանը կարեկից և գրասիրս վերաբերմունք ցուցաբերել Իրանի ներկա վտանգավոր իրավիճակին»<sup>152</sup>: Նախագահ Էյզենհաուերը պատասխանեց միայն 43 օր հետո, այն էլ մերժումով:

<sup>151</sup> Սովորական Ուժա Հան Փահլավի, Առաքելություն հայրենիքին համար, Թեհրան, 1973, էջ 201:

<sup>152</sup> Տես Չերնուսօվ Մ., Տօրդ և Տեղեան, Խոօօ Վրեմյա, N4, 1980, c. 28.

Հարկ ենք համարում ամբողջովին ներկայացնել Դ.Դ Ելգենհառությի պատասխանը. «Իրանի և Միացյալ Թագավորության անընդունակությունը՝ հասնելու փոխհատուցման վերաբերյալ համաձայնության, իշխանութուում է Իրանին Միացյալ Նահանգների օգնություն տրամադրելու ջանքերին: Միացյալ Նահանգներու տարածված կարծիքի համաձայն՝ նոյնիսկ Ամերիկայի բաղարացիների շրջանում, որոնք խորապես կարեւցում են Իրանին և բարեկամ իրանական ժողովրդին, այն կարծիքն է իշխում, որ անարդարացի կիխի ամերիկացի հարկատուների հանդեպ, եթե Միացյալ Նահանգների կառավարությունը Իրանին հատկացնի զգայի տնտեսական օգնություն: Ե՞տ որ Իրանը կարող է օգտվել վաճառված նավթի և նավթամթերքի գումարներից, եթե փոխհատուցման հարցում հասնեին խելամիտ համաձայնության, որի արդյունքում կվերականգնվեր Իրանի նավթի վաճառքը մեծ չափերով: Նմանապես, ամերիկյան բազմաթիվ բաղարացիներ լրջորեն կընդդիմանան Միացյալ Նահանգների կառավարությանը իրանական նավթի գնման հարցում՝ նավթային այսպիսի անհավասարակշիր խնդրի ժամանակ... Ես շատ լավ հասկանում եմ, որ Իրանի կառավարությունը պետք է ինքը որոշի՝ ինչպիսի ներքին և արտաքին բաղարականություն է ձեռնտու ողջ Իրանին և իրանցիներին: Գրածից չպետք է եղակացնեք, թե ես փորձում եմ խորհուրդ տալ Իրանի կառավարությանը, թե որ բաղարականությունն է իր շահերին համընկնում»: Հետագայում իր հիշողություններում Դ.Ելգենհառությունը նշանակելով այդ ժամանակաշրջանը, գրում է: «Մոսահեղին փորձանքից փրկելու համար ես իրամարվեցի ներդնել հավեյլ ամերիկյան փող մի երկրում, որտեղ տիրում էր անկարգություն»<sup>153</sup>: Ելգենհառությունը խսկապես չէր փորձում խորհուրդ տալ, նա որոշել էր գործել:

1953թ. անգոր-ամերիկյան դիվանագետների հանդիպումների գլխավոր թեման այն էր, որ եթե Մոհամեդ Մոսադեղի հակաշահական վարչակազմը մնա կառավարության գլուխ, «Խորհրդային Միությունը և Իրանի կոմունիստները իրենց ձեռքը կվերցնեն երկիրը: Միացյալ Նահանգների նախագահ Ելգենհառությունը, որը «համակված էր կոմունիստական Իրանի ստեղծման սարսափով», համաձայնեց Մոսահեղին հեռացնել իշխանությունից»<sup>154</sup>:

1953թ. Մոսահեղի հավատարիմ դաշնակիցները հեռացան նրանից: Հակամոսահեղյան այիքը մեծացավ, երբ նա հակաշահական բաղարականություն վարեց, այն դոր չեկավ ոչ միայն Մեջլիսի պատգամավորների մեծ մասին, այլ նաև Ազգային ճակատի դեկավար անձանց, որոնց հետ ժամանակի ընթացքում Մոսահեղը դադարեց խորհրդակցել: Սակայն սա ամենը չէր: Գլխավոր խոնդիրն այն էր, որ 1952թ. աշնանը, երբ և՛ Անգլիան և՛ ԱՄՆ-ը իրամարվեցին Մոսահեղի կառավարության հետ հետագա բանկցություններից, ակնհայտ դարձավ, որ նա չի

<sup>153</sup> Черноусов М., Тогда в Тегеране, Новое Время, N4, 1980, с.28-30.

<sup>154</sup> Сергеев Ф.М., Роль ЦРУ в свержении правительства Мосаддыха в 1953г., Документальные очерки, Новая и новейшая история, N4, М, 1979, с.119.

կարող դուրս բերել նավթային խնդիրն անելանելի դրույթունից: ԱՄՆ-ը հարկ չհամարեց օգնություն հատկացնել Իրանին այդ ծանր պայմաններում, իսկ Մեծ Բրիտանիան թույլ չտվեց Իրանին վաճառել իր երկրի սեփականությունը, և նրանք համատեղ իրականացրին հեղաշրջում ու մենցնդիշտ ձերքազատվեցին Մոսադենից: Դրանից հետո Միացյալ Նահանգները մեծածավալ օգնություն հատկացրեց Իրանին: Հարկ է նշել, որ 1954թ. Խուզիստանի նավթի շահագործման համար ամերիկյան գործարարների ստացած իրավունքը, իրավամբ, ԱՄՆ-ի լավագույն նվաճումն էր՝ Իրանին հատկացրած օգնության դիմաց:

Այդ ամենով հանդերձ, հարկ է նշել, որ Միացյալ Նահանգների օգնությունները, որքան էլ որ շահադիտական յինեին և իրենց ազգային նպատակները իրականացնելու համար տրվեին Իրանին, այնուամենայնիվ, այդ օգնությունները մեծ ներդրում ունեցան Իրանի տնտեսության, ուազմական ուժերի զարգացման գործում:

## ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՆԳԼՈ-ԻՐԱՆԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ՎԵՃԻ ԺԱՄԱՆԱԿ

Իրանա-ամերիկյան հարաբերությունների երկրորդ դրսևորումը տեղի ունեցավ 1950-1953թթ. Անգլ-իրանական նավթային ընկերության և Իրանի կառավարության միջև առաջացած լարվածության ժամանակ, երբ ԱՄՆ-ը հանդես եկավ միջնորդի դերով: Հայտնի է, որ դիմենով տարրեր միջոցների՝ Միացյալ Նահանգները երկար ժամանակ պայքարում էր Իրանի նավթին տիրելու համար: Խոսելով Իրանի «սև ոսկու» մասին՝ չենք կարող շանդրադառնալ դրա նախապատմությանը, ինչպես նաև անհրաժեշտ է որոշ մանրամասներ ներկայացնել այն ժամանակին իրավիճակի վերաբերյալ:

### Պատմական ակնարկ նավթի հայդրաբեկունան և դրա կարևորության շուրջ

Իրանի հարավարևմտյան շրջանում նավթային շերտերի գոյության մասին առաջին անգամ 1855թ. հիշատակել է երկրաբան Վ. Կ. Լոֆտուսը: Հետազայում՝ 1901թ. մայիսի 28-ին, անգլիացի գործարար Վիլիամ Դ'Արսիին հաջողվիմ է Իրանի շահ Մոզաֆֆեր եղ Դինից համաձայնություն ստանալ երկրի՝ տարածքի  $\frac{5}{6}$  մասում նավթի հետազոտման աշխատանքներ կատարելու համար<sup>155</sup>: Նավթ հայտնաբերելու դեպքում նա իրավունք էր ստանալու շահագործել այդ տարածքի հանածոները 50 տարով՝ մինչև 1951թ. մայիսի 28-ը: Ցոր տարի անց Մեսաներ-Սովեյմանում՝ Պարսից ծոցից 200 կիլոմետր հետափորւթյան վրա, հայտնաբերվեցին նավթի ահոնկի պաշարներ: Նավթի հայտնաբերումից հետո բա-

<sup>155</sup> О'Коннор, Империя нефти, Москва, 1958, с. 364.

վականին մեծացավ Իրանի նկատմամբ հետաքրքրությունը: Շահի տված կոնցեսիայի դիմաց գործարար մարդիկ Դ'Արսիին առաջարկում էին մեծ գումար-ներ: Սակայն նա հրամարվեց վաճառել այն և հայտարարեց, որ իր նպատակն է այդ կոնցեսիայի միջոցով դուռ քացել կաթոլիկ միսիոներների առջև՝ պարսիկներին և արաբներին քրիստոնյա դարձնելու համար: Այս մասին Դ'Արսին պատմեց Սիդնեի Զորչ Ռեկի անոնով մի «ճեխեցականի», ով իրականում Ինքնիշխնա սերվիսի գործակալ էր: Նա խորամանկությամբ կարողացավ ձեռք քերել այդ կոնցեսիան<sup>156</sup> և հանձնել այն Մեծ Բրիտանիայի կառավարությանը: Դրա շնորհիվ ձևավորվեց Անգլո-պարսկական նավթային ընկերությունը (1935թ-ից՝ Անգլ-իրանական նավթային ընկերություն, այսուհետ՝ ԱԻՆԸ), որը, չնայած անվանը, ամրողությամբ գտնվում էր անզիացիների ձեռքում: ԱԻՆԸ-ն աշխարհի հզորագույն նավթային ընկերություններից մեկն էր:

1914թ. Անգլիական ուղղմական նավատորմ անցավ մոտորային շարժիչների օգտագործմանը. ընականարար անհրաժեշտ էր համապատասխան վառելայութ: Ուղղմածովային նախարար Ռիխստոն Չերչիլ առաջարկով բրիտանական կառավարությունը 1914թ. ձեռք է քբրում Անգլ-պարսկական նավթային ընկերության բաժներդերի 52,5 %-ը՝ դրա համար վճարելով ընդամենը 2 միլ ֆունտ ստենլինգ: Միաժամանակ բարձրացնում է ընկերության կապիտալը՝ հասցնելով այն 4,5 միլ ֆունտ ստենլինգի, որի 22%-ը պատկանում էր Քիրմա Օլլ Քոմփանիին, իսկ մնացածը՝ տարբեր գործարարների<sup>157</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմից ցուց տվեց նավթի ուղղմավարական և տնտեսական կարևորությունը: Այդ պատճառով էլ դեռ պատերազմի ժամանակ և դրա պավարտից անմիջապես հետո էլ հզոր տերությունների մեջ աշխարհային ընկերությունները դաժան պայքար սկսեցին նոր նավթահանքեր և դրանք իրացնելու շուկաներ ձեռք քերելու համար:

ԱԻՆԸ-ն ուներ 59 դուստր ձեռնարկություններ, որոնք տեղաբաշխված էին Իրաքում, Քուվեյթում, Եգիպտոսում և այլրեւ: Այն միավորում և վերահսկում էր չորս նավթ արտահանող, չորս տրանսպորտային ընկերություն, չորս նավթագոտարան և նավթի բաշխման ու վաճառքի 19 ընկերություն: ԱԻՆԸ-ն ուներ իր սեփական օդակայանները և վայրէջի հրապարակները, իր ուղիղությանները, երկաթուղիները, նավահանգիստները, իսկ Խուզիստանում՝ դատապատիկանական ապարատ: Ընկերությունն Իրանում ազատված էր մաքսատորթերից և եկամտահարկերի վճարումից: Կարելի է ասել ԱԻՆԸ-ը պետություն էր պետության ներսում: ԱԻՆԸ-ի տրամադրության տակ կային ջրհորներ և խմելու ջրով լի ջրամբարներ, իրանցիներին թույլ չեր տրվում այնտեղից ջուր վերցնել նույնիսկ սաստիկ երաշտի ժամանակ: ԱԻՆԸ-ն իր տրամադրության տակ ուներ տներ, կինոթատրոն, խորտկարաններ, խանութներ: Նոյնիսկ Արադանի շուրջը

<sup>156</sup> Հոգե Երեմյա, N 2, 1980, с. 29.

<sup>157</sup> Թրյան Յ. Կ., Պայքար նավթի համար, էջ 57:

3-4 կմ շառավիրվ դաշտը ԱԻՆԸ-ի սեփականությունն էր, որտեղ միրգ և քանչարենին էին աձևցնում և վաճառում միայն ընկերության խանութներում<sup>158</sup>:

250,000 կմ<sup>2</sup> կոնցեսիոն տարածք ունենալով երկրի հարավային մասում՝ ԱԻՆԸ շահագործում էր ավելի քան 300 նավթային աշտարակ, և հանդիսանում էր Արադանի նավթավերամշակման խոշոր գործարանի սեփականատերը: Այդ ձեռնարկությունում աշխատում էր ավելի քան 100 հազ. մարդ<sup>159</sup>:

Կես դարի ընթացքում ԱԻՆԸ, ամենահամեստ հաշվարկներով, Անգլիային տվել է 700–800 միլիոն ֆունտ ստերլինգ եկամուտ: Միայն անգլիական կառավարությանը վճարված հարկը 3 անգամ գերազանցում էր Իրանի հատկացումներին: 1914թ–ից մինչև 1950թ. ընկերությունն Իրանից արտահանել է 324 միլիոն տոննա նավթ<sup>160</sup>:

Արադանի նավթամշակման գործարանները նշանավոր էին նաև նրանով, որ այստեղ հնարավոր էր մշակել նավթի բոլոր բորբամասերը, մինչետև նավթամշակման նման համալիր գործարանները հազվագյուտ էին այդ ժամանակաշրջանում: Նավթամշակման գործարաններին կից կար նավթաբարձման խոշոր նավահանգիստ<sup>161</sup>: Իրանի գրեթե բոլոր նավթավայրերը Արադանի նավթամշակման համակարգի հետ կապված էին նավթամուղային խոշոր ցանցով, որն ուներ 2300 կիլոմետր ընդհանուր երկարություն:

Բացի այդ, ինչպես Իրանը, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքի մյուս երկրները մոտ են գտնվում եվրոպական շուկային, և նավթի տեղափոխման ծախսերը մեծ չեն լինում: Փոքր էր նաև ոփիսային գործոնը նավթի հետախուզական աշխատանքներում, որը ստվորաբար պակլում էր նոր, առավել հարուստ հանքավայրերի հայտնաբերումով: Վերոհիշյալ տարածաշրջանում աշխատուժը բավականին էժան էր: Մեկ բարեկ մերձավորաբեններուն նավթի արտահանման համար արտադրական ծախսերը կազմում էր միջինը 0,08–0,15 դոլար, մինչդեռ Միացյալ Նահանգներում՝ 1,5 դոլար<sup>162</sup>: Իրանում և առողջապահության մեջ առաջատար Սահմանադրությունը պահպանում էր նավթամշակման աշխատուժը՝ մոտ 10 միլիոն դոլար, որը կազմում էր նավթամշակման աշխատուժի մասին գործությունը՝ մոտ 10 միլիոն դոլար: Այս գործությունը պահպանում էր նավթամշակման աշխատուժը՝ մոտ 10 միլիոն դոլար, որը կազմում էր նավթամշակման աշխատուժի մասին գործությունը՝ մոտ 10 միլիոն դոլար:

<sup>158</sup> Алиев С.М., Иран.: Очерки новейшей истории, с. 171. Нишанов М. "Антимпериалистическое движение в Иране (1951–1953)", Ташкент, 1973, с. 11–12.

<sup>159</sup> Новая и новейшая история, N4, M, 1979, с. 115.

<sup>160</sup> Черноусов М., Тогда в Тегеране, Новое Время, N2, 1980, с.29.

<sup>161</sup> Мрյան Գ.Կ., Պայքար նավթի համար, էջ 54–55:

<sup>162</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке. с 62.

<sup>163</sup> Мрյան Գ.Կ., Պայքար նավթի համար, էջ 53:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ը Իրանի նավթի համար պայքարը սկսել էր ավելի վաղ, դեռ 1921թ. նոյեմբերի 22-ին, երբ Իրանի Մեջլիսը վավերացրեց ամերիկյան «Ստանդարտ օյլ» ընկերությանը տված կոնցեսիայի օրինագիծը, ըստ որի՝ Իրան թույլ էին տալիս շահագործել երկրի հյուսիսային նահանգների նավթի պաշարները: «Ստանդարտ օյլ»-ը իրավունք ստացավ 50 տարի ժամկետով նավթամեջերը արդյունահանել Ասորաստական, Գիյան, Մազանդարան, Աստրարադ և Խորասան նահանգներից: Իրանի կառավարության հատկացումը պետք է կազմեր ընկերության մաքուր եկամտի շորչ 10%-ը: Ընկերությունն իրավունք չուներ կոնցեսիան վաճառել ինչպես նաև փայտտեր լինել այլ ընկերության: Խորհրդային կառավարությունը բողոքեց «Ստանդարտ օյլ»-ին շնորհած կոնցեսիայի դեմ: Քանի որ այն հակասում էր որ վաղ անցյալում կնքված խորհրդախրանական այն պայմանագրին, ըստ որի՝ Իրանի կառավարությունը պարտավորվում էր Խորհրդային Ռուսաստանի կողմից Իրանին վերադարձրած կոնցեսիան և գոյրը շիանձնել որևէ երրորդ պետության կամ նրա քաղաքացիներին:

Շուտով ԱՄՆ ժամանեց ԱԻՆՀ-ի ղեկավարներից Զոն Քենմնը, ով «Ստանդարտ օյլ»-ի ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն ձեռք բերեց, ըստ որի՝ ամերիկացիներն ԱԻՆՀ-ին զիջում էին հյուսիսիրանյան նավթի կոնցեսիայի բաժնեթղթերի կեսը: Փոխարենը Անգլիան խոստանում էր ամերիկացիներին տրամադրել Պաղեստինի և Միջազգետքի նավթային պաշարների շահագործման իրավունքը: Առաջին հայացքից պայմանները պետք է որ շահավետ լինեն Միջացյալ Ղահանգների և հատկապես «Ստանդարտ օյլ»-ի համար: 1922թ. փետրվարին «Ստանդարտ օյլ»-ը Իրանի կառավարությանը պաշտոնապես հայտնեց երկրի հյուսիսային նահանգների նավթի պաշարները ԱԻՆՀ-ի հետ հավասար սկզբունքներով շահագործելու՝ իր որոշման մասին: Ի պատասխան՝ դրան՝ 1922թ. մարտի սկզբին Իրանի կառավարությունը չեղայ հայտարարեց ամերիկյան կոնցեսիան, «Ստանդարտ օյլ»-ի հետ կնքած պայմանագրի 5-րդ կետի հիմնավորմամբ, որն արգելում էր վերջինիս գործընկեր վերցնել առանց Իրանի Մեջլիսի համաձայնության<sup>164</sup>: Ահա այսպես ձախողվեց ԱՄՆ-ի երկար տարիների կատարած աշխատանքը. կրկին շահող կողմ հանդիսացավ Անգլիան, քանի նորից պահպանեց իր մնանաշնորհային դիրքը Իրանում չեղորացնելով իրանական նավթին տիրելու ամերիկյան եերթական փորձը:

Հասարակական կարծիքի ձևամաս տակ Իրանի կառավարությունը 1932թ. պահանջեց վերանայել ԱԻՆՀ-ի կոնցենսիոն պայմանները: Նշենք, որ 1909թ.-ից մինչև 1932թ., ԱԻՆՀ-ի մաքուր եկամուտը կազմել էր 171 մլն ֆունտ ստոնինգ, իսկ Իրանի կառավարությունը ստացել էր ընդամենը 11 մլն ֆունտ ստոնինգ, այսինքն՝ նախատեսված 16%-ի փոխարևն՝ ընդամենը 6%<sup>165</sup>: Բացի այդ քավական ծանր էին հասարակ նավթագործների աշխատանքնային պայմանները:

<sup>164</sup> Абдуллаев З.З., Начало экспансии США в Иране, с.57.

<sup>165</sup> Новая и новейшая история, №4, 1979, с.114.

Այդ ամենից հետո դրույթունը սրվում է և ժողովուրդը կառավարությունից պահանջում է դիմել առավել կտրուկ միջոցների: Ռեզա շահի կառավարությունը հարցը հասցնում է Ազգերի լիգա: Վերջապես, Երկար դիմադրելուց հետո, Ազգերի լիգայի ճնշմարք և Պարսից ծոց փոխադրված անզիջական ռազմանավերի թնդանորթների սպառնալիքի ներքո Ռեզա շահի կառավարությունը տեղի է տալիս: 1933թ. ապրիլի 29-ին ստորագրվում է նոր պայմանագիր՝ Իրանի համար «Նպաստավոր» պայմաններով<sup>166</sup>:

ԱՄՆ-ը չէր կարող Երկար ժամանակ Երկրորդական դերում մնալ և հանդուրժել Մեծ Բրիտանիայի գերակայության փաստը Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք նավթառատ երկրներում: 1932թ. ԱԻՆԸ-ի տարածքների սահմանափակումը մեծ հոյս ներշնչեց ամերիկյան նավթային խոշոր տրեստներին:

1937թ. ԱՄՆ-ի նավթային ընկերությունները կրկին փորձեցին ձեռք բերել Իրանի հյուսիսային շրջանների նավթը: «Ամիրանիան Օյլ Քոմփանին»<sup>167</sup> հաջողվել էր կոնցեսիա ձեռք բերել Իրանի հյուսիս-արևմալից մինչև Կասպից ծովի հարավ-արևելք տարածվող նավթային շրջանների նկատմամբ: «Ամիրանիան Օյլ Քոմփանին» կոնցեսիայի ժամկետը 60 տարի էր: Սակայն Մեծ Բրիտանիայի ճնշման ներքո Իրանի Մեջիսը չվավերացրեց կնքված պայմանագիրը: Ամերիկացիները 1943թ. ևս մեկ անգամ փորձ կատարեցին տիրանալու իրանական նավթին: Բրիտանացիները «Ռոյալ Դատչ Շելլ» ընկերության քողի տակ և Երկու ամերիկյան ընկերությունները՝ «Ստանդարտ Վակուում» և «Մինկլերը» ներկայացուցիչները ուղարկեցին Թեհրան կոնցեսիա ստանալու համար<sup>168</sup>: Այդ գործընթացը ևս ավարտվեց անփառունակ, իսկ ԱՄՆ-ը իր ուշադրությունն այդ պահից ի վեր ուղղեց դեպի Սաուդյան Արարիա, որտեղ հայտնաբերվել էին նավթի հարուստ պաշարներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «Ստանդարտ Օյլ Քոմփանի օֆ Նյու Զերին», ԱԻՆԸ-ի հետ համաձայնության գալով, 20 տարի ժամկետով ստանձնեց Իրանի անմշակ նավթի վաճառքի գործը:

Լինելով հարուստ Երկիր, ի հեճուկս պատերազմից հետո սնանկացած Անգլիայի, ԱՄՆ-ը տնտեսական և ուսումնական օգնությունների միջոցով փորձում էր հասնել իր նպատակներին:

Հետապատերազմյան շրջանում Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցավ ուժերի վերադասավորում: Եթե մինչ պատերազմն ԱՄՆ-ը էական ազդեցություն ցուներ Իրանում, ապա հետապատերազմյան շրջանում նկատվում է այդ ազդեցության զգալի աճ: Նոր իրողությունների պայմաններում Միացյալ Նահանգներին անհրաժեշտ էին նոր շուկաներ, նավթի ձեռքբերման աղբյուրներ,

<sup>166</sup> Թերան 3.4., «Պայացար նավթի հանուր, էջ 112:

<sup>167</sup> Ամերիկյան երկու խոշոր նավթային ընկերություններ՝ Պելավար Օյլ Քոմփանին (Ստանդարտ Օյլ Խմբից) և Տեհրան Օյլ Քոմփանին միավորվեցին և գործեցին Ամիրանիան Օյլ Քոմփանի անվամբ:

<sup>168</sup> Խոջիվան գրամառաշան և Րահման գրամառաշան, Խոն և Նետ, Խանրատ Պէ Շահեր-է-Արան, Թերան, 1978թ. մայիս:

ուազմավարական նշանակություն ունեցող տարածքներ և այլն: Դրանք հետագայում իրականացվեցին Իրանում ԱՄՆ-ի գինված ուժերի տեղակայվելու շնորհիվ, իսկ ավելի ուշ՝ Ա. Միլսպոյի և ամերիկյան մյուս խորհրդականների ակտիվ գործունեությամբ: Համաձայն 1944թ. հուլիսի 23-ի ԱՄՆ-ի պետքարտուղարության բյուջետների՝ Հերքերտ Հուվեր Կրտսերը և Ա.Ա. Քերտիսը ժամանեցին Իրան՝ նավային կոնցեսիա ձեռք բերելու նպատակով<sup>169</sup>: 1944թ. Խորհրդային Սիությունը նոյնպես փորձեց երկրի հյուսիսում ձեռք բերել կոնցեսիա: Այդ ժամանակ՝ 1944թ. դեկտեմբերի 2-ին, Մոհամեմադ Մոսահեղի ջանքերով Մեջիսն օրենք ընդունեց, ըստ որի՝ մինչև պատերազմի ավարտ կառավարությանն արգելում էր բանակցություններ վարել նավթի կոնցեսիաներ շտրիկու վերաբերյալ: Օրինագիր ըննարկման ժամանակ պատգամավորներից մեկը կոչ արեց անվավեր համարել նաև ԱԻՆԸ-ի կոնցեսիան: Բայց նրան ոչ ոք չաշակցեց:

Անգլիայի դիրքերի թուլացմանը գոլգընթաց կայունանում էին ԱՄՆ-ի դիրքերը: Եթե 1932թ. Մերձավոր և Միջին Արևելյում նավթի արտահանումից ամերիկյան նավթային ընկերությունների մասնարամակինը հավասար էր գրոյի, ապա 1937թ. այն արդեն հասավ 13,1%-ի՝ անգլիական 76,8%-ի դիմաց: Հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ը դաժան պայքարի բռնվեց Անգլիայի հետ, որպեսզի չեղյալ հայտարարեն 1928թ. հուլիսին կնքած «կարմիր գծի» պայմանագիրը: Այդ պայմանագիրը լրջորեն սահմանափակում էր ԱՄՆ-ի հնարավորությունները մերձավորարևեցան նավթի արդյունահանման և վաճառքի դեպքում: Եվ առաջին անգամ 1944թ. ամերիկյան նավթային ընկերությունները խախտեցին «կարմիր գծի» պայմանագրի սկզբունքները: Այդ քայլով ԱՄՆ-ը մեծ հարված հասցրեց Անգլիայի նավթային դիրքերին<sup>170</sup>: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո նավթի վերահսկման ամերիկյան բաժնը սրբացած աճեց՝ 1945թ. կազմելով 19,2%՝ ընդդեմ անգլիական 74,2%-ի, իսկ 1952թ.՝ 64,5%՝ ընդդեմ անգլիական 26,6%-ի<sup>171</sup>:

### *Պայքար նավթի համար (1946-1954թթ.)*

1940-ական թվականների երկրորդ կեսին նավթագործների նյութական վիճակն ավելի ծանրացավ, որի պատճառով էլ 1946թ. ԱԻՆԸ-ի դեմ ծավալվեցին զանգվածային ցույցեր: Սակայն Իրանում դեռ ուժեղ էր Մեծ Բրիտանիայի ազդեցությունը, քանզի արդյունաբերության միակ ճյուղը, որ զարգացում էր ապրում, նավթարդյունաբերությունն էր, որը գտնվում էր ԱԻՆԸ-ի, այսինքն՝ Անգլիայի ձեռքում: Եվ եթե Իրանի բյուջեն հիմնականում համալրվում էր

<sup>169</sup> متوجه قرمانشهر مأشیان و روحسان قرمانشهر مأشیان، خون و نفت، خطاطرات پیک شاهزاده ایران، تهران، ۱۳۷۸، ص. ۲۶۴.

M. V. Попов, Американский империализм в Иране в годы Второй Мировой Войны, М., 1956, с. 221.

<sup>170</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, Москва, 1977, с. 59.

<sup>171</sup> Орлов Е.А., Россия и Иран в XX веке (основные этапы взаимоотношений), Иран: ислам и власть, М., 2001, с. 200.

Անգլիայի հսկողության տակ գտնվող ընկերության միջոցով, ուստի կարելի է համարձակորեն նշել, որ Իրանի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքանությունը գտնվում էր այդ հզոր տերության ազդեցության ներքո: Սակայն առևտ էին ԱԻՆԸ-ի հետ կապված բազում խնդիրներ, որոնք հոգում էին Իրանի ժողովրդին: Հաս 1933թ. կոնցեսիոն համաձայնագրի՝ ԱԻՆԸ-ը պարտավորվում էր իրանցիներին նախապատրաստել և նշանակել պատասխանատու պաշտոնների: Բայց նոյնիսկ 1946թ. տվյալներով՝ ամենաաճան և սև աշխատանք կատարող բանվորների 96%-ը իրանցիներն էին, որոնք ստանում էին չնշին աշխատավարձ՝ օրական 36 դիմ, կամ մոտավորապես 50 գննու: ԱԻՆԸ-ում աշխատող արարներն ու հնդիկներն ավելի բարձր էին վարձատրվում, քան իրանցիները, համապատասխանարար՝ 70–80 դիմ, 40–45 դիմ, իսկ անգլիացիները ստանում էին 20 անգամ ավելի բարձր աշխատավարձ, քան իրանցիները<sup>172</sup>: ԱԻՆԸ-ի իրանցի ծառայողների վիճակն անսանելի էր. Նրանք բնակվում էին խրճիրներում, որոնք կոչվում էին Խալազարադ (թղթե քաղաք): Բնակավայրը գործ էր հոսող ջրից և էրկրորդներգիալից: Նրանք չունեին հանգստյան օրեր, իիվանդության դեպքում արձակուրդ, հաշմանդամության համար նախատեսվող փոխհատուցում<sup>173</sup>:

ԱԻՆԸ-ն Իրանին շահագործում էր բոլոր առումներով: Եթե 50-ական թվականների սկզբներին Իրաքը 1 քարել նավթի համար ստանում էր 60 գննու, Սաուդյան Արաբիան՝ 56, Բահրեյնը՝ 35, ապա Իրանը՝ ընդամենը 18 գննու: ԱԻՆԸ մեծ վիճակ էր հասցնում երկրին՝ օգտվելով նաև ապրանքների անմաքս ներմուծությունից՝ 1938–1945թթ. ԱԻՆԸ-ի մաքուր եկամուտը կազմում էր 34 մլն ֆունտ ստենլինգ, իսկ արտահանվող նավթի համար ընկերությունը Իրանի կառույթությանը տարեկան վճարում էր ընդամենը 3–3½/2 մլն ֆունտ ստենլինգ՝<sup>174</sup>: Իրանը ձայնի իրավունք չուներ ԱԻՆԸ-ում և իրավասու չէր ստուգելու նրանց աշխատանքային գրքերը: 1945–1950թթ. ԱԻՆԸ-ի ընդհանուր եկամուտը մեծացավ՝ հասնելով 250 մլն ֆունտ ստենլինգի, մինչ դեռ Իրանը ստանում էր ընդամենը 90 մլն: ԱԻՆԸ-ն ավելի շատ եկամուտ տալիս էր բրիտանական, քան իրանական կառավարությանը<sup>175</sup>:

Հատկանշական է ամերիկացի պատմաբան Ք.Փոլակի ներկայացրաց տեսկատվությունը, թե որքան եկամուտ էր ստանում Անգլիան շահագործելով իրանական նավթը: Եթե 1914թ. Իրանն արտահանում էր 300.000 տոննայից պակաս նավթ, ապա 1920թ. այն կազմեց 1,5 մլն տոննա, 1941թ.՝ 6,5 մլն տոն-

<sup>172</sup> Нишанов М., "Антиимпериалистическое движение в Иране (1951–1953)", Ташкент, 1973., с. 17. С.Е.Беликов, Что происходит в Иране, с. 8.

<sup>173</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 52

<sup>174</sup> О'Коннор, Империя нефти, с. 460. Новое Время, N2, 1980, с.29. James F. Goode, The United States and Iran 1946–51, The Diplomacy of Neglect, New York, 1989, p. 47.

<sup>175</sup> Попов М.В., Американский империализм в Иране в годы Второй Мировой Войны, Москва, 1956, с. 218.

<sup>176</sup> Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution , pp.123–124.

նա, 1945թ.<sup>177</sup> 16,5 մլն տոննա: Խոնդիրն այն էր, որ Իրանն այդ ամենից շատ քիչ եկամուտ էր ստանում: Եթե Իրանը կարողանար վերահսկել իր սեփական նավթի եկամուտը, ապա 1950թ. այն կկազմեր 250 մլն ֆունտ ստենլինգ: Սակայն այս ողջ եկամուտը պատկանում էր Մեծ Բրիտանիային<sup>178</sup>:

Այսպիսով, Մեծ Բրիտանիան անտեսում կամ կոպտորեն խախտում էր 1933թ. կոնցենտրատում համաձայնագրի մի շաբթ կետեր, որն անարձագանք չէր կարող մնալ: Աստիճանաբար հասունանում էր Իրանի նավթի ազգայնացման խնդիրը: Անգլիական կողմը չէր ցանկանում զիջումների գնալ, ինչն ավելի էր սրում իրադրությունը: «Հականազիշական տրամադրություններն են ավելի էր բորբոքում Իրանում Միացյալ Նահանգների դևապան Հների Ֆ. Գրեյդը. Նա «հուսադրում էր, որ ամերիկացիները կաջակցեն իրանցիներին անգլիացիների դեմ պայքարում»<sup>179</sup>: Գրեյդը Իրանի նավթը որակում էր որպես «ազատ աշխարհի ճգնաժամային պահի անգնահատելի ապրանք»<sup>180</sup>:

Հասկանապի է, ԱՄՆ-ը, որը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը որևէ ազդեցիկ լծակ չուներ Իրանում, այժմ փորձում էր օգտվել ստեղծված իրադրությունից և մասնակից դառնալ տարածաշրջանային խնդիրների լուծմանը և դրա շնորհիվ ստանալ մեծ եկամուտներ: Իսկ Իրանի հասարակ ժողովուրդը, ինչպես նաև քաղաքական մի շաբթ կուսակցություններ և անհատներ կարծում էին, թե ԱՄՆ-ը իսկապես փորձում է լուծել տարիներ ճգլավոր խնդիրը:

Մինչդեռ Միացյալ Նահանգները հետապնդում էր իր շահերը: Այդ ասիթով Անգլիայի արտգործնախարար Էնթոնի Խեննը վկայակոչում է այն փաստը, ըստ որի՝ պետքարտուղարությունը ջանում էր ստեղծել համամերիկյան հանձնաժողով՝ ԱԻՆԸ-ի արժեթղթերը գնելու համար: Բացի դա, Միացյալ Նահանգների ու ազգական ուժերի գերատեսչության դեկավարները, պատերազմից հետո մշակելով վերոհիշյալ տարածաշրջանում ամերիկյան քաղաքականության ուղիները, մատնանշում էին, որ «Միացյալ Նահանգները հետաքրքրված է արևելյան միջարևածովյան ավագանուվ, ինչպես նաև Միջին Արևելքի ողջ տարածաշրջանով, քանի որ դրանք քավական մոտ են գտնվում խորհրդային արդյունաբերության կարևոր օրինակներին»: ԱՄՆ-ը գտնում էր, որ «Իրանի, Իրաքի և Մերձավոր Արևելքի նավթի պաշարները մեծ նշանակություն ունեն և ապագայում՝ պատերազմի բռնկման դեպքում, կունենան կենսական նշանակություն»: Դրանից էլ հետևություն էր անում, որ «Իրանի, Իրաքի, Մերձավոր և Միջին Արևելքի պաշարները հնարավորության սահմաններում պետք է հեռու պահել խորհրդային Միության ու ազգական ուժերից»<sup>180</sup>:

1947թ. ԱՄՆ-ի համար պարզ դարձավ, որ Իրանում Անգլիայի դիրքերը խարխլվում են, քանի իրանական կառավարությունը մեկ անգամ ևս պահան-

<sup>177</sup> Kenneth M. Pollack, *The Persian Puzzle*, p. 50.

<sup>178</sup> Новая и новейшая история, N4, M, 1979, с.116.

<sup>179</sup> Lenczowski George, *Iran Under The Pahlavis*, California, 1978, p. 210.

<sup>180</sup> Новая и новейшая история, 1979, N4, с.118-119.

ջում է վերանայել 1933թ. ԱԻՆԸ-ի հետ կնքված համաձայնագիրը: 1948թ. զարնանը փորձ արվեց Իրանի և ԱԻՆԸ-ի միջև հարաբերությունները կարգավորել: Ընկերության բրիտանացի տնօրենն Ն.Ա.Հեսար ժամանեց Թեհրան և նշեց, որ ԱԻՆԸ-ն, հաշվի առնելով իրավիճակը, կվերանայի 1933թ. պայմանագիրը: Նա ավելացրեց նաև, որ իրներ պատրաստ են պայքարել պայմանագիրի ամեն տեսակ խախտումների դեմ, եթե իրանցինները կարողանան վավերացնել այն: Իրանական կրողմը ներկայացնող վարչապետ Հարիմին անրավարար էր պատրաստվել բանակցություններին, ինչի պատճառով էլ այն ձախողվեց: Շահը խիստ զայրացած էր Հարիմիի անհաջողությունից: 1948թ. հունիսի 8-ին Հարիմին իրամարական տվեց: Վարչապետ նշանակվեց Արդուշ Հուսեյն Համիդը, որն էլ մեծապես նպաստեց ամերիկյան ազդեցության հետագա ամրապնդմանը Իրանում: Հեսար կրկին ժամանեց Թեհրան, սակայն այդ ժամանակ նրա դիրքորոշման մեջ լուրջ փոփոխություններ էին նկատվում, քանզի Իրանում իրադարձությունները ևս այլ ընթացք էին ստացել:

1948թ. Համիդի կառավարությունն ԱԻՆԸ-ին ներկայացրեց «մեջադրական ակտ», որտեղ նշվում էր, որ նեկարությունը խախտել է կոնցեսիոն պայմանագիրը և պահանջում էր մեծացնել իրանական կառավարության հասանելիք հատկացումները: 1948թ. հոկտեմբերին սկսված բանակցությունների արդյունքում՝ 1949թ. հովհանում 17-ին ստորագրվեց «Լրացուցիչ համաձայնագիրը», որը նախատեսում էր մեծացնել Իրանի կառավարության հատկացումները՝ ուժի մեջ պահելով կոնցեսիան: ԱԻՆԸ-ը իրամարվում էր Իրանի հետ 50/50% սկզբունքով կիսել նավթից ստացվող եկամուտն՝ ամերիկյան նավթային ընկերությունների և Սաույան Արարիայի միջև համաձայնության օրինակով:

Այս իրադարձություններից դգորդ՝ 1949թ. աշնանը Իրանում ձևավորվեց Ազգային Ճակատը, որը ղեկավարում էր Մոհամեմեն Մոսադեդը: Նրան հարեցին Իրանի բազմաթիվ ազդեցիկ ուժեր՝ մտավորականությունը, հոգևորականությունը, աշխատավորությունը, ուսանողությունը, ինչպես նաև մի շարք կուսակցություններ՝ «Իրան», «Ազատության խմբակցություն», «Յեղայան-ե խալամ», «Անկախություն», «Իրանի ազատության միություն», «Իրանի աշխատավորական կուսակցություն»<sup>181</sup>:

Ճիշտ գնահատնելով ստեղծված իրավիճակը և մի կողմ թողնելով իրենց կուսակցական տարաձայնությունները՝ նշված ուժերը համախմբվեցին մի զաղափարի շուրջ պայքարել ընդդիմ ԱԻՆԸ-ի և հասնել Իրանի նավթի ազգայնացմանը:

Ինչ վերաբերում է շահին, ապա նա սկզբում աշակցում էր «Լրացուցիչ համաձայնագրին»: Շահը Փարիզում Իրանի դեսպան Ալի Սոհելիին կարգադրեց մեկնել Պորտուգալիա՝ հանդիպելու ազգությամբ հայ Գալուստ Գյուլբենկյանին՝

<sup>181</sup> Стамболцян А.Г., "Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана" 1951-1953 гг., Ереван, 1984, с. 34-36, The Encyclopaedia of Islam, Volume IV, Leiden, 1978, p.

41. Нишанов М., "Антимонополистическое движение в Иране, с. 37.

Մերձավոր Արևելքի նավթի «Պարոն 5 տոկոսին», ով երկար ժամանակ Իրանի պատվավոր հյուպատոս էր: Նրանց հետաքրքրում էր Գյուլբենկյանի կարծիքն այդ համաձայնագրի վերաբերյալ: Բրիտանացիները սարսափում էին, որ պատերազմի տարիներին Գյուլբենկյանի դժգոհությունն անզյացիների հանդեպ այժմ կարտահայտվի գործողություններում: Սակայն 80-ամյա նավթային մագնատը կարողանում էր տարանշատել անձնականը գործնականից: Նա Սոհեյլին ասաց, որ այդ պայմանագիրը լավագույնն է Իրանի համար: Գյուլբենկյանի հավաստիացումների և անգլիացիների ճնշումների ներքո՝ շահը կարգադրեց Ռազմարային գործել: 1950թ. հոկտեմբերի 18-ին վարչապետն աջակցեց առաջարկով համաձայնագրին ինչպես Սենատում, այնպես էլ նավթային կոմիտեի հանդիպման ժամանակ<sup>182</sup>: Պատմարանների մի մասն այն կարծիքն է, որ «Լրացուցիչ համաձայնագիրը» խևապես ձևուտու էր Իրանին: Մինչդեռ Մոսադեղն ակտիվություն հանդես եկավ «Լրացուցիչ համաձայնագրի» ընդունման դեմ և դրանով էլ արժանացավ Միացյալ Նահանգների բարյացակամ վերաբերմունքին: Ամերիկացիների գործուն միջամտության շնորհիվ Իրանի Մեջլիսը չվագնացրեց «Լրացուցիչ համաձայնագիրը»:

Այդ ամենից զատ, ԱՄՆ-ն օգտագործեց Իրանի ժողովրդի ցանկությունը, այս է՝ նպաստել նավթի ազգայնացմանը: Վերոհիշյալ քաղաքականությունն, ըստ պատմաբան Թրյանի, հետապնդում էր երկու նպատակ, առաջին՝ ԱՄՆ-ի լիկիդացումով թուլացնել անգլիական ազդեցությունը Իրանում, երկրորդ՝ Իրանի կառավարությանը պարտադրել անգլիական կապիտալի ու մասնագետների փոխարեն օգտագործել ամերիկաներ<sup>183</sup>: Սակայն, կարծում ենք, առկա էին այլ նպատակներ ևս: Թուլացնելով Անգլիայի դիրքերը Իրանում ԱՄՆ-ը հավակնում էր գրավել նրա տեղը և ամրողությամբ իր ձեռքում պահել իրանական նավթը: Եթե դա նրան հաջողվեր, ապա Միացյալ Նահանգները կվերահսկեր տարածաշրջանի նավթի գնային քաղաքականությունը: Բացի այդ, ԱՄՆ-ը փորձում էր իր ազդեցության տակ պահել Խորհրդային Սիությանը հարևան բոլոր երկրները, անհրաժեշտության դեպքում նրանց տարածքները որպես ուղղմակայաններ օգտագործելու համար և, ի վերջո, ցանկանում էր տարածաշրջանի ամենաընդարձակ, բնական և մարդկային ռեսուրսներով հարուստ երկրի հետ ունենալ եթե ոչ ամենասերտ, ապա գոնք «ջերմ հարաբերություններ»: Բայց ԱՄՆ-ը իր քաղաքականության շնորհիվ, կարելի է ասել, հասավ շատ ավելիին, քան սուսկ «ջերմ հարաբերություններ» են:

Միացյալ Նահանգների քաղաքականությունը միտված էր նրան, որ անգլիացիներին սիրաշահելով կարողանար դարձնել Հեռավոր Արևելքում իր վարած ազրեսիլ քաղաքականության համախոհը, ինչպես նաև երկյուղ ներշնչել

<sup>182</sup> Goode James F., The United States and Iran, p. 84.

<sup>183</sup> Թրյան Յ.Կ., Պայքար նավթի համար, էջ 187:

իրանցիներին, որպեսզի նրանք տեղի տան և նախընտրեն համաձայնության գալ ամերիկացիների հետ:

1951թ. մարտի 3-ին վարչապետ Ռազմարան Մեջլիսում ասաց. «Չնայած յուրաքանչյուր հայրենասեր իրանցի ձգուում է երկրին վերադարձնել իր սեփական հանածոները՝ դա չպետք է ծառայի մի գործունեության, որը կարող է վնասել Իրանի հետազոտ զարգացմանը»: Նա նշում էր, որ ազգայնացման դեպքում ԱԻՆԸ-ին պետք է վճարվի խոչը փոխհատուցում (մոտ 300-500 մլն ֆունտ ստոնինց), միևնույն ժամանակ սեփական մասնագետների պակասը կհանգեցնի նավթի արտահանման կրծատմանը, որը երկիրը կգրկի զարգացման ծրագրերի ֆինանսավորման անհրաժեշտ միջոցներից<sup>184</sup>:

Ի պատասխան Ռազմարայի քաղաքականության՝ Մոսահելլը Թեհրանում կազմակերպեց 12.000-անոց ցոյց, ըննադատեց կառավարությանը՝ Բրիտանիայից ավելին չպահանջելու համար և նշեց, որ «հակամարտությունը չի լուծվելու, մինչև նավարդյունաբերությունը լիակատար չազգայնացվի»: Այսորվա Քաջանին ևս աջակցում էր Իրանի նավթի ազգայնացման զարգափարին: Նա գտնում էր, որ «նավթի խնդիրը» կլուծի Իրանի մյուս առաջնահերթ խնդիրները և հայուարարում, որ կաջակցի Մոսահելին այնքան ժամանակ, որքան Ազգային ճակատը կշարունակի «սրբազն և ազգային պայքար» ընդդեմ Բրիտանիայի: Սակայն հոգևորականներից ոմանք գտնում էին, որ իրենց դասը չպետք է մասնակցի քաղաքականությանը:

Ռազմարայի սպանությունից մեկ օր անց՝ մարտի 8-ին, Մեջլիսի նավթային հանձնաժողովը միաձայն ընդունեց Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման բանաձևը: Մարտի 11-ին երկրի վարչապետ դարձավ Հոսեյն Ալան, որը կառավարեց ընդամենը մեկ ամիս: Մարտի 15-ին և 20-ին Իրանի Մեջլիսը և Սենատը նույնպես միաձայն հաստատեցին նավթային հանձնաժողովի բանաձևը, իսկ ապրիլի 28-ին և 30-ին հաստատեցին Մոսահելիի առաջակած ազգայնացման հասնելու ուղիները, որտեղ գետեղված էին ԱԻՆԸ-ին փոխհատուցում վճարելու և Իրանի պարտականությունների մասին կետեր, ըստ որոնց՝ Իրանը պետք է նավթ վաճառեր նախկին գնորդներին: Իրանի շահը օրենքը վավերացրեց մայիսի 1-ին:

Նավթի ազգայնացման օրենքի ընդունումից անմիջապես հետո Անգլիայի արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ սպառնալով, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը կշանա խոչընդոտել Իրանի նավթի վաճառքին միջազգային շոկայում: Շուտով Անգլիան իրականացրեց իր խոստումը՝ հայտարարելով, որ Իրանի կողմից վաճառվող նավթը գողացված է և սպառնաց դատական հետապնդումների ենթարկել բոլոր նրանց, ովքեր կփորձնեն ձեռք բերել Իրանի ազգայնացված նավթը: Որ դա լոկ սպառնալիք չէր, իրանցիները համոզվեցին հետաքայում:

<sup>184</sup> Агаев С.Л., Иран в прошлом и настоящем, с.125.

Ամերիկյան մի շաբթ ազդեցիկ քաղաքագետներ (Ա.Ա. Քերթիսը, Հերթերտ Հովկեր Կրտսերը, Մարտ Թորենքերգը, Զորջ Մաքքին), եղնարվ Միացյալ Նահանգների քաղաքական ու տնտեսական շահերից, ըննադատում էին ԱԻՆԸ-ի գործունեությունը: Այդ քաղաքականության ենթատեսատուր հանգում էր նրան, որ Վաշինգտոնը ցանկանում էր իր քամին ունենալ իրանական հարուստ նավարային պաշարներից: Իրանում և առկա էին քաղաքական ոժեր, որոնք ԱԻՆԸ-ի դեմ ծավալած պայքարում նպատակահարմար էին գտնում դիմել ԱՄՆ-ի աջակցությանը: Օգտվելով այդ պատեհ առիթից՝ Վաշինգտոնն առաջարկեց իր աջակցությունն անզու-իրանական նավթային տարածանության կարգավորման հարցում: Ինչպես Բրիտանական կառավարությունն, այնպես էլ ԱԻՆԸ-ն այլընտրանք չունեին, քանի որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Անգլիայի ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելյան նկատելիորեն թուլացել էր: Մեծահարուստ Մորգենթաուն առաջարկում էր ԱԻՆԸ-ի քամենտումսերի 51%-ը ձեռք բերել ՄԱԿ-ի միջոցով և տալ Միջազգային բանկին, որտեղ, ի դեպ, դեկավար դեր ունեին ամերիկյան բանկիրները: ԱՄՆ-ը հանդես եկավ միջնորդի դերում և փաստորեն դարձավ այդ հակասության կողմերից մեկը:

Որպեսզի խապար թուլացնի Անգլիայի ազդեցությունն Իրանում, ԱՄՆ-ը նավթի հարցում բավական զիջումների էր գնում: Այսպես, «Տեխնա Օլը» ընկերության ներկայացուցիչները հայտարարեցին, որ պատրաստ են զիջելու ընդհանուր եկամուտի 60%, եթե Իրանի կառավարությունը իրենց հանձնի նավթի շահագործման իրավունքը: Դրան հետևեց «Սոկոնի-Վակուում Օլ Քոմփանի» նոյն տիպի առաջարկը՝ ընդհանուր եկամուտի 65%-ի զիջման մասին և վերջապես, «ԱՐԱՄԿՕ»-ն հանդես եկավ 72%-ի զիջման առաջարկով<sup>185</sup>:

Սակայն հակված ենք կարծելու, որ սա Միացյալ Նահանգների ենթական խաղն էր. չէ՝ որ Իրանի նավթարդյունաբերության կարվածահար վիճակը ձեռնուու էր նրանց: Նման առաջարկներով նրանք դրդում էին իրանական կողմին անգլիացիների հետ լինել առավել անզիջու: Ակնհայտ է, որ եթե ԱՐԱՄԿՕ-ն հասներ հաջողության և ձեռք բերեր իրանական նավթը ու զիջեր 72%-ը իրանական կողմին, ապա հաջորդ օրը նմանատիպ պահանջով հանդես կգար նաև Սաուդյան Արարիան: Մինչդեռ ԱՐԱՄԿՕ-ն Սաուդյան Արարիայի հետ նավթից ստացվող եկամուտը բաժանում էին 50/50% սկզբունքով: Այսպիսով, կարծում ենք, որ նմանատիպ առաջարկները զուտ Իրանի ուշադրությունը չնելու նպատակ էին հետապնդում: Մերձավոր Արևելյան ամերիկյան ընկերությունները բավականին օգտվեցին ԱԻՆԸ-ի անհաջողություններից: Իրանի նավթի արտահանման դադարեցման պատճառով առաջացած վակուումից օգտվելով՝ ԱՐԱՄԿՕ-ն Սաուդյան Արարիայում մեծացրեց նավթի տարեկան արդյունահանումը՝ 200 մլն բարեկից հասցնելով 300 միլիոնի, իսկ քուվեյթում՝ 128-ից մինչև

<sup>185</sup> Թրյան, «Պայքար նավթի համար, էջ 191:

273մին բարելի<sup>186</sup>: Սակայն, մյուս կողմից, Արադանի նավթավերամշակման գործարանի փակման պատճառով Իրանում առաջացած վակուումը իրական սպառնալիք էր և առև միջազգային կարտելին:

1951թ. ապրիլի 9–19-ը Իրանի և Անգլիայի ներկայացուցիչները ժամանեցին Վաշինգտոն: Իրանն ԱՄՆ-ի հովանավորությամբ Մեծ Բրիտանիայից պահանջեց ճանաչել Իրանի նավթի ազգայնացման փաստը: Չընդունելով ազգայնացման փաստն Անգլիան փոխարենն առաջարկում էր մեծացնել Իրանի եկամտարածինը և իրանցիներին պատասխանատու պաշտոններ առաջարկել ԱԻՆՀ-ում: Իրանի կառավարությունն իր անհամաձայնությունը հայտնեց վերոհիշյալ առաջարկին և բանակցությունները մուտք փակուիլ: «Մենք, – գրում է Էնթոնի Իդենը, – չենք կարող համաձայնելու ամերիկան վերջին առաջարկի հետ, որը կարծես մտադրված էր անգլիական տնկանիկական անձնակազմը հետացնել Իրանից և բավական արժեքավոր անգիտական ակտիվները հանձնել Իրանի: Մենք նմանապես չենք կարող համաձայնելու առանց փոխհատուցման բռնագրավմանը: Ըստ իս՝ առավել լավ է չունենալ պայմանագիր, քան ունենալ վատը»<sup>187</sup>:

ԱՄՆ-ի պետքարտուղար Աշեսոնը և Մերձավոր Արևելքի հարցերով պետքարտուղարի տեղակալ Ջորջ ՄըԳիին համակրում էին բրիտանացիների ղեկավառքով իրանական ազգայնականների գործունեությունը: Նրանք նմանապես անհանգստանում էին, որ Բրիտանիայի ազահությունը Իրանին կմղի կոմունիստների գիրքը: Միննոյն ժամանակ Աշեսոնը և նրա շրջապատը չեն հավատում, որ Մոսադեղը և մյուս իրանցի ազգայնականները կոմունիստներ էին, և նրանց դիտում էին որպես լավագույն մարդիկ, ովքեր ի վիճակի են իրականացնել բարեկիրդումներ քաղաքական կառուցվածքում և երաշխավորում էին, որ Իրանը չի դառնա Խորհրդային Միության ուղեծիքը: Աշեսոնը և ամերիկացի դիվանագետներն Անգլիային խորհուրդ էին տալիս իրանցիների նկատմամբ լինել ավելի ձկուն ու առատաձեռն: Անգամ խորհուրդ էին տալիս հանգիստ լինել նավթարդյունաբերության ամրոցովին ազգայնացման դեպքում, եթե Թեհրանն ԱԻՆՀ-ին հատկացնի խելամիտ չափով փոխհատուցում իր կորուստների համար<sup>188</sup>:

Իրանի նավթային խնդրի ժամանակ մենաշնորհաւերերը կանոնավոր կերպով շփումների մեջ էին գտնվում պաշտոնական Վաշինգտոնի հետ, որ պեսզի գտնեն մի մեխանիզմ՝ անգլ-իրանական տարածայնությունները հարթելու համար: 1951թ. ապրիլին կազմակերպվեց խորհրդաժողով, որին մասնակցում էին ԱՄՆ-ի պետքարտուղարության, պաշտպանության և առևտիր նախարարության ներկայացուցիչներ ու 19 խոշոր նավթային ընկերությունների նախարարներ<sup>189</sup>:

<sup>186</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, Москва, 1960. с. 47.

<sup>187</sup> Мемуары Антона Идена, Международная жизнь, N 4, 1960, с. 131.

<sup>188</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p.55

<sup>189</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке , с. 42.

Մայիսի 1-ին Երանի վարչապետի պաշտոնը գրադեցրեց նավթի ազգայնացման հեղինակ Մոսադեղը: Տարբեր կերպ վերաբերվելով Մոսադեղի գաղափարներին և ազգայնական գործունեությանը՝ արևմտյան հեղինակներից ոմանք նրան որակում էին որպես ծիծաղելի, մյուսները խորհրդավոր քաղաքական գործիչ: Բացի այդ, ոմանք էլ նրան համարում էին խիզախ, խելացի քաղաքագետ՝ տողորված ազգայնացման գաղափարներով: Հե՞ որ 1938թ. Մեքսիկայի նավթի ազգայնացման անհաջող փորձից հետո, նա առաջիններից մեկն էր, ով համարձակվեց հանդես զայ նավթային ընկերությունների ղեմ: Մեր կարծիքով, նա խկացես հայրենասեր մարդ էր, ով փորձում էր ամեն գնով Երանին վերադարձնել այն, ինչ նրա սեփականությունն էր: Սակայն, միևնույն ժամանակ, կարծում ենք, որ նրա խիստ հայրենասահրությունը, սկզբունքայնությունն ու անզիջում պայքարը թույլ չտվեցին նրան տեսնել այդ պահին անզիջինների կողմից Երանին առաջարկված լավագոյն տարրերակը:

Ինչպես և սպասվում էր, Մոսադեղի՝ վարչապետի պաշտոնում առաջին ելույթը վերաբերում էր նավթի խնդրին: «Այսուհետ Երանի համար բաց է ամենահարուստ գանձարանը, որի դռների առջև երկար տարիներ պատկել էր սարսափելի իրեշը՝ ԱՒՆԸ-ն: Նավթից ստացվող եկամտի հաշվին մենք կարող ենք բավարարել մեր բոլոր պահանջները և վերջ տալ աղքասությանը, անգրագիտությանը և իհվանդություններին, որոնցոց վարակված են միջինսավոր աշխատավորներ: ԱՒՆԸ-ի լուծարումը կծառայի իմաստի ամերիկական մասնակիցների լիկվիդացմանը Երանում և երկրին թույլ կտա հասնելու տնտեսական և քաղաքական ինքնուրոյնության»<sup>190</sup>: Նա խոստանում էր, որ նավթային ընկերությունից օրական կգանձվի 300 ֆունտ ստենլինգ, որի շնորհիվ կրարձրանա յուրաքանչյուր իրանցու կենսամակարդակը:

Ամերիկյան մամուլին տված հարցազրույցի ժամանակ Մոսադեղը նշել է, որ Երանի կառավարությունը ողջունում է ԱՄՆ-ի յուրաքանչյուր օգնություն և ակնկալում, որ «ամերիկյան կառավարությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի կամքի կոչման ժամանակ» և «կանխել Անգլիայի կողմից ճնշումն Երանի կառավարության վրա»: Մոսադեղն այդ ժամանակ հայտարարեց, որ ամերիկյան նավթային ընկերությունները կարող են կանխել իրանական նավթարդյունաբերության աշխատանքների ցանկացած խափանում և հույս հայտնեց Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից ստանալ փոխառություն՝ ընդգծելով, որ իրանական կառավարությունը ցանկանում է ամրապնդել բարեկամական հարաբերություններն ամերիկյան կառավարության հետ: Փաստորեն այդ ելույթով Մոսադեղը փորձում էր շահագրգուել ամերիկյան նավթարդյունաբերող ընկերություններին, ովքեր վաղուց ի վեր ցանկանում էին մասնակցություն ունենալ Երանի նավ-

<sup>190</sup> Новое Время, N2, 1980, с.30.

թարդունաբերության գործերին, և կարծում էր, որ հանուն նրանց շահերի՝ ԱՄՆ-ի կառավարությունն ավելի շուտ կաջակցի Իրանին քան Անգլիային:

Հարաբերություններն Անգլիայի հետ ե'լ ավելի սրբեցին, երբ 1951թ. մայիսի 2-ին Մ.Մոսաթեղը հայտարարեց, թե Իրանին պետք է վերադարձվի այն ամրող գումարը, որ զեղչվել է Մեծ Բրիտանիայի նավատորմին նավթամթերք վաճառելու ժամանակ: Նա նշում էր, որ ընկերությունն իրավունք չուներ բրիտանական նավթ վաճառելու համաշխարհային շուկայում գոյություն ունեցող գներից ցածր գնով: Նա հայտնեց նաև, որ ԱԻՆԸ-ի 1933թ. կնքած պայմանագիրը ստորագրվել է ճնշման տակ և չի կարող օրինական համարվել: Այս իրադարձությունների ժամանակ ԱԻՆԸ-ն իրանական կառավարությանը խոստանում էր փոքր-ինչ ավելացնել կոնցեսիոն վճարը, ինչպես նաև վճարել 40 մլն ֆունտ ատեղինք՝ որպես հասուցում անցյալում իրանական կառավարությանը հասանելիք չվճարված գումարների փոխարեն<sup>191</sup>:

Այս «զայրակից» պայմանները ևս չհամոզեցին Մոսադեղին, և նա շարունակեց Իրանի նավթի ազգայնացման գործընթացը: Ի պատասխան դրան՝ Մեծ Բրիտանիան բոյկոտեց իրանական նավթը: Հարկ է նշել, որ դեռ գնաճամի սկզբնական փուլում ԱԻՆԸ-ն նախապես ստացել էր 6 խոշոր այլ նավթային մոնոպոլիաների աջակցությունը «քեծ նավթը» չգնելու վերաբերյալ, եթե այն ազգայնացվեր: 1951թ. մայիսի 15-ին պետքարտուղարությունը հայտարարեց, որ ամերիկյան նավթային ընկերությունները, նկատի ունենալով Իրանի միակողմանի գործողությունն ընդդեմ անգլիական ընկերության, չեն ցանկանում որևէ միջոցառում ձեռնարկել այդ երկրում: ԱՄՆ-ի 5 խոշոր նավթային ընկերություններ Միացյալ Նահանգների կառավարությունից առավել անդրդեմ էին Իրանին չօգնելու գործում: Նրանք վախենում էին, որ Իրանի օրինակը կտարածվի տարածաշրջանի մյուս երկրներում: Ի դեպ, Իրանի վարած քաղաքականությունը իսկապես ոգլուրում էր տարածաշրջանի երկրներին:

Կար ևս մեկ հանգամանք, որը ստիպում էր Միացյալ Նահանգներին համագործակցել Մեծ Բրիտանիայի հետ: Երբ 1951թ. մայիսի 7-ին Մոսադեղի կառավարությունը Մեջլիսում վատահության թիվ ստացավ, որոշ պատզամակունելի հանդիսական Բահրեյն կղզիների նավթը ևս ազգայնացնելու պահանջով, քանզի, իրենց կարծիքով, այդ տարածքը Իրանի մի մասն էր<sup>192</sup>: Բահրեյնի նավթարդյունաբերության ազգայնացման պահանջները հարվածում էին այդ կղզիներու ամերիկյան մենաշնորհների դիրքերին: Այդ պայմաններում պաշտոնական Լոնդոնը և Վաշինգտոնը փնտրում էին այլ եղանակներ՝ Իրանում և Բահրեյնում նավթարդյունաբերության մեջ իրենց դիրքերին սպառնացող իրավիճակը չեղորացնելու համար: Դա է ստիպեց ԱՄՆ-ին և Անգլիային հանդես գալու միասնական ձականությունը: Վաշինգտոնը ճշշում գործադրեց Մոսադեղի

<sup>191</sup>Թրյան Յ.Կ., «Պայրար նավթի համար, էջ 188-189:

<sup>192</sup>Lenczowski George, The Middle East in World Affairs, New York, 1956, p. 174-197

կառավարության վրա՝ ստիպելով նրան հրաժարվել Բահրեյնը Իրանին միացնելու քաղաքականությունից և «Բահրեյն Փեթրոլիում» նավային ընկերության ազգայնացումից: Հասկանալի է, որ Միացյալ Նահանգները ոչ մի կերպ չեր գիշի իր դիրքերը Բահրեյնում Իրանին, դրա համար էլ նրա համագործակցությունը Անգլիայի հետ էլ ավելի սերտացավ:

Իրանի նավթի հարցում Միացյալ Նահանգները չեր կարող անտարեր լինել Մեծ Բրիտանիայի տեսակետի նկատմամբ, քանի որ դրանով կվտանգեր իր սեփական նավթային կոնցեսիան տարածաշրջանում: Չեր կարող կորցնել նաև Մեծ Բրիտանիայի բարեկամությունը, մանավանդ, եթե անհրաժեշտ էր առավելագույն միասնականություն ցուցաբերել Կորեայի հարցում<sup>193</sup>: Ուխնատող Զերչիլլ Թրումենին ուղղակի ասաց, որ բրիտանացիների աջակցությունը Կորեայում (որտեղ անտարակոյս կար դրա կարիքը) կպայմանավորվի Նրանով, թե որքանով ամերիկացիները կաջակցեն Իրանում իրենց<sup>194</sup>: Զմոռանանք նաև, որ որպ էր ստեղծվել ՆԱՏՕ-ն և Անգլիան ԱՄՆ-ին հասկացնել էր տալիս, որ եթե Իրանի նավթի խնդրի ժամանակ Միացյալ Նահանգներն աջակցեն պաշտոնական թերթանին, ապա Լոնդոնը կվերանայի ՆԱՏՕ-ում իր անդամակցության հարցը: 1951թ. մայիսին «Նյուզվիկը» գրում էր, որ Անգլիայի և ԱՄՆ-ի տարածայնություններն իրանական նավթի շուրջ «հնարավոր է, որ ավելի վտանգավոր են, քան տարածայնությունները Հեռավոր Արևելքում», այնուհետև ավելացնում, որ «անգլիացիները ոչ պաշտոնական ձևով ԱՄՆ-ին հասկացրին, որ եթե ամերիկյան նավթային ընկերություններն իրենց վրա վերցնեն ԱԻՆ-ը կառավարման գործը, ապա վերջ կդրվի անգլո-ամերիկյան համագործակցությանը և Հյուսիս-Ատլանտյան դաշինքին»<sup>195</sup>:

Այս կապակցությամբ ուշագրավ է նաև «Նյու Յորք Հերալդ Թրիբյուն»-ի մեկնարանությունը սոյն հարցի վերաբերյալ. «Եթե թույլ տանք, որ Իրանի իրադարձությունների պատճառով խօսվի անգլո-ամերիկյան արդի համագործակցությունը, ապա մեզ կարգելեն մտնել Մերձավոր Արևելքի մի շարք խիստ կարևոր օդային բազաներ: Բոլոր տեսանկյուններով ԱՄՆ-ը ստիպված էր կանգնել Անգլիայի կողքին, բանակցությունների ընթացքում աջակցել նրան և բացահայտ ցույց տալ, որ եթե անգլիացիները վտարվեն Իրանից, ապա այդ երկրի նավթահանքերի և նավթաթոր գործարանների ղեկավարման համար ամերիկացիները ոչ մի դեպքում տեխնիկական անձնակազմ չեն հատկացնի»<sup>196</sup>:

1951թ. մայիսի 18-ին ԱՄՆ-ի պետքարտուղարությունը հայտարարեց, որ «Անգլիական ընկերության դեմ Իրանի միակողմանի գործունեության» դեպքում ամերիկյան նավթային ընկերություններն իրենց վրա չեն վերցնի իրանական

<sup>193</sup> Michael Kahl Sheenan, Iran: The Impact of United States Interests and Policies 1941–1954, N. Y., 1968, p. 58.

<sup>194</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 60.

<sup>195</sup> Newsweek, New York, 1951.

<sup>196</sup> New York Herald Tribune, New York, 16.05.1951.

նավթարդյունաբերության կառավարման գործը, և որ իրանական նավթի հարցն անհրաժեշտ է լուծել ԱԻՆՀ-ի հետ բանակցությունների միջոցով: ԱՄՆ-ի այդ հայտարարությունն անմիջապես իր պատասխան արձագանքը գտավ Իրանում: Մայիսի 21-ին արտգործնախարար Քազեմին Թեհրանում ամերիկայի դեսպան Գրեյդին հանձննեց հուշագիր, որում ասվում էր, որ ԱՄՆ-ի կառավարության հայտարարությունը «անսպասելի էր և անքարենպաստ ազդեցություն բողեց իրանական իրազեկ շրջանների վրա»: «Բայի որ մինչ այդ նավթի հարցի շորջ ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակներն արտահայտում էին իրենց չեզորությունը, Իրանի ժողովուրդը սպասում էր, որ չեզոր դիրքորոշումը կապահպանվի հետագայում է»: Այնուհետև նա նշում էր, որ «նավթի հարցում արտասահմանյան ներկրների որևէ միջամտություն կդիմուի որպես Իրանի ներքին գործերին միջամտելու փորձ»<sup>197</sup>:

Հենց այդ նոյն օրը՝ 1951թ. մայիսի 21-ին մամլո ասովիսի ժամանակ Մոսահեղն ասաց. «Ես և իմ գործընկերները, ինչպես նաև սրտացակ գործիչները երկիրը ճգնաժամից հանելու ուղին տեսնում ենք անհրաժեշտ կապիտալի հավաքման և այն համընդհանուր բարեկեցության ու ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը նպատակաւորելու մեջ: Անհրաժեշտ կապիտալը կարելի է ձեռք բերել երկու ճանապարհով՝ կամ արտաքին պարտքի, կամ ազգային եկամուտի մեծացման միջոցով: Վերջինս հարավային նավթից ստացվող առաջ եկամուտները կարող են լինել: Արտաքին վարկ ստանալու մեր բազմամյա բանակցությունները մինչև այժմ որևէ արդյունք չեն տվել: Մինևոյն ժամանակ հարավի նավթից ստացվող եկամուտը մոտ է մեր ենթականությունը, և ոչ մեկը չի կարող վիճարկել մեր իրավունքները որա նկատմամբ: Նավթի եկամուտի շնորհիվ մենք կարող ենք բավարարել մեր բոլոր կարիքները, վերջ տալ աղքատությանը, անգրագիտությանը և հիվանդություններին, որոնցով տառապում են մեր երկրի հազարավոր աշխատավորներ»<sup>198</sup>:

Կառավարությունը զիսավորենոց մի քանի օր հետո Մոսահեղը Մեջլիսին համոզեց, որ Ազգային ճակատից ընտրեն չորս պատգամավոր իինօֆի խորհրդում, որոնց հանձնարարվում էր օգնել կառավարության՝ ազգայնացման օրենքը ընդունելու գործում: Շուտով Միացյալ Նահանգների նախագահ Հ. Թրումենը նամակ գրեց Իրանի վարչապետ Մ. Մոսահեղին և Անգլիայի վարչապետ Քլիմենտ Էթթլիին, որտեղ կոչ էր անում ինդիրը շուտափույթ լուծել՝ «հանուն համընդհանուր շահերի»: Ապա 1951թ. հունիսի 3-ին ԱԻՆՀ-ի տնօրինությունը հայտարարեց, որ պատրաստ է վերսկսել բանակցությունները Իրանի կառավարության հետ: Անգլիական կողմը խոստացավ Իրանին անմիջապես վճարել 10 մլն ֆունտ ստենլինգ և 1951թ. հովհիսից սկսած՝ ամեն ամիս վճարել 3 մլն

<sup>197</sup> Е. Саркисов, Англо-американские противоречия в Иране и их обострение после II мировой войны, Известия Академии наук Армянской ССР, N1, 1952, с. 35. Орлов Е.А., Внешняя политика Ирана, с.95–96.

<sup>198</sup> نهضه ۲۲.۰۵.۱۹۵۱.

Փունտ ստեղինգ մինչև համաձայնության հասնելը: Սակայն Իրանի կառավարությունը մերժեց նաև այս պայմանը<sup>199</sup>:

1951թ. հունիսին Մոսադեղը հանձնաժողով ուղարկեց Խուզխատան՝ նավթը իրենց ձեռքը վերցնելու համար: Այդ կապակցությամբ Անգլիայի արտաքին գործերի նախարար Հերբերտ Մորիսոնը հայտարարեց, որ իր կառավարությունն անհրաժեշտության դեպքում կդիմի ցանկացած միջոցների՝ Անգլիայի քաղաքացիների կյանքը և սեփականությունը պաշտպանելու համար: Եվ արդեն 1951թ. հունիսին դեպի Արադան շարժվեց 8000 տռնա ջրածավալով «Մավրիցիոս» հածանավը՝ Իրանի ափերը պարեկելու և «...2700 նավթային մասնագետներին պաշտպանելու համար»<sup>200</sup>:

Բանակցությունների ընթացքում արյունքի չհասնելով՝ Անգլիան փորձեց ահարեւելի Իրանի կառավարությանը և նոյնիսկ Իրանի ափերին մոտեցրեց իր ուազմական նավերն՝ ակնկալիով ԱՄՆ-ի հավանությունը և աջակցությունը: Պաշտոնական Լոնդոնը փորձում էր իրականացնել ուազմական ներխուժման իր ծրագիրը, որը հայտնի է «Ծովահեն» /Buccaneer/ ծածկագրով, ինչի ժամանակ 70,000-անոց զորքն ափելը էր արվելու<sup>201</sup>: Սակայն շուտով զեներալ Բրեդլին արտահայտեց ԱՄՆ-ի տեսակետու այդ հարցի կապակցությամբ. «ԱՄՆ-ը չի պարտավորվում ուղարկել իր ուազմական ուժերը Իրան, եթե նոյնիսկ Անգլիան ներքաշվի ուազմական գործողությունների մեջ, այս պահին Իրանը չի համարվում ուազմական լուրջ վտանգի օջախ»<sup>202</sup>:

ԱՄՆ-ի քաղաքական գործիչները համոզված էին, որ Մեծ Բրիտանիայի յուրաքանչյուր ուազմական գործողություն ոչ միայն երաշխավորված չի լինի, այլև առիթ կիանդիսանա Խորհրդային Միության միջամտության համար: Ինչպես դեռևս 1951թ. մայիսի կեսերին նշել է Դ.Աշետոնը. «Ռազմական ուժ կարող ենք օգտագործել Իրանի կառավարության խնդրանքով կամ թե՛նիրանում կոմունիստների հեղաշրջման փորձի և կամ էլ վտանգավոր հարձակումներից Բրիտանիայի հպատակների տարիհանման դեպքում միայն»<sup>203</sup>:

Եթե Աշետոնը տեղեկացավ, որ բրիտանացիները պատրաստվում են ուազմական ներխուժում իրականացնել Իրան, նա Վաշինգտոնում Բրիտանիայի դեսպանին հստակորեն զգուշացրեց, որ Միացյալ Նահանգները չի աջակցի Բրիտանիայի ուազմական ներխուժմանը: Այնուհետև Թրումենը հեռագրեց Բրիտանիայի վարչապետ Էթթիլին, կոչ անելով անմիջապես վերսկսել բանակցությունները Իրանի հետ: Մի քանի շաբաթ տևած ծակը բանակցություններից հե-

<sup>199</sup> Алиев С.М., Иран: Очерки новейшей истории, с.199–200.

<sup>200</sup> Стамболовин А.Г., Внутренняя политика правительства национальной буржуазии Ирана 1951–1953 гг., Ереван,1984, с. 42.

<sup>201</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 56

<sup>202</sup> Элвэлл-Саттон Л., Иранская нефть, Москва, 1956, с. 284–255.

<sup>203</sup> Bill James A., "The Eagle and the Lion. The Tragedy of American–Iranian Relations", London, 1988, p. 75.

տո Հարիմանը և իր թիմը համոզեցին Մոսադեկին, որ նա բանակցություններ սկսի անգլիական մեկ այլ խմբի հետ: Սակայն Հարիմանի բոլոր ջանքերը ապարդյուն էին, բանի որ բրիտանացի բանակցողները դեռևս համաձայն չէին ազգայնացման զաղափարի հետ, իսկ իրանական կողմը չէր համաձայնում որևէ այլ առաջարկի հետ<sup>204</sup>:

Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի նման «քարեհած» քաղաքականությունը վկայում է այն մասին, որ Վաշինգտոնում շատ լավ հասկանում էին, թե ուազմական միջամտության արդյունքում ինչպիսի հնարավորություն կընձեռվի Խորհրդային Միությանը:

1951թ. մայիսի 25-ին Մեծ Բրիտանիան վկայակոչելով 1933թ. անգլո-իրանական պայմանագրի 22-րդ հոդվածը, դիմեց Հազարայի Միջազգային դատարան և շահեց գործը: 'Դրան հակառակ'՝ 1951թ. հունիսի 9-ին Իրանի կառավարությունը հրաժարվեց ճանաչել Միջազգային դատարանի իրավասությունը<sup>205</sup>:

1951թ. հունիսի 15-ին Իրանի մայրաքաղաքի վրա հայտնվեց ԱՄ-ի նախագահ Հարի Թրումենի անձնական ինքնաթիռը՝ «Բոնարթելեյշնը»: Թեհրան էր զայխ նախագահի հասուկ ներկայացուցիչ, հայտնի դիվանագետ և նավթային գործով զբաղվող խոշոր արդյունաբերող Ավերիլլ Հարիմանը: Այդ քայլով Միացյալ Նահանգների նախագահը կարևորում էր առաջացած խնդիրը և փորձում իր անմիջական միջամտության շնորհիվ հարթել ծագած խնդիրը: Հարիմանը հանդես էր զայխ որպես միջնորդ Իրանի կառավարության և Թեհրան ժամանած բրիտանական ներկայացուցիչների միջև: Նա այդ բանակցությունների ժամանակ փաստորեն ամենակարևոր գործող դեմքն էր: Իրականում բանակցությունների ժամանակ խոսքը ԱԻՆԸ-ի ձեռնարկությունները գուտ անվանական ձևով Իրանին հանձնելու մասին էր: Եսկ նավթի հետազոտման և արդյունահանման աշխատանքները, նավթի գոտում և վաճառքը պետք է անցնենի կազմակերպության ձեռքը, որտեղ գլխավոր ներակաստարություն էին ունենալու ամերիկան ընկերությունները՝ ի թիվս «Ստանդարտ Օյլ օֆ Նյու-Ջերսի» կամ «ԱՐԱՄԱԿ-Օ»-ի: Միևնույն ժամանակ Միացյալ Նահանգները Իրանին խոստացավ փոխառություններ, առաջարկեց անզիջացների փոխարեն ուղարկել իր մասնագետներին:

Հարիմանի՝ Թեհրան ժամանելու օրը կոմունիստական «Թուղթ» կուսակցությունը ցոյց կազմակերպեց ի նշան բողոքի: Խնչվես հետաքյայում պարզվեց, դա խևական սաղրանք էր: Մոսարենը կարգադրեց ոստիկանակներ գեներալ Բաղրայիին կանգնեցնել ցոյցը, բայց առանց իր հասուկ հրամանի՝ կրակ չքացել ցուցարարների վրա: Սակայն ցոյցի սաստկացման ժամանակ Բաղրային հրամայեց կրակ բացել ցուցարարների վրա՝ առանց Մոսարենի

<sup>204</sup> Kenneth M. Pollack, *The Persian Puzzle*, pp. 57–58.

متوجه فرماننده ماهیان و رحسان فرماننفر ماهیان، خون و نفث، خاطرات پیک شاهزاده ایران. تهمان ۱۳۷۸، ص ۳۵۵.

Արհամար Ռեալ Հայ Փակիավի. Առաքելություն հայրենիքիս համար, էջ 187:

իմացության կամ համաձայնության<sup>206</sup>: Իրավիճակը վերահսկողությունից դուրս եկալ իիմասկանում Այի Զալիլիի և Ֆարուր Քյվանիի գործուն միջամտությամբ, որոնք 1950թ. վերջին սկսել էին համագործակցել Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) հետ և այս առաջարանքն է, քաստորեն նրանց հնարավորությունների ստուգման լավագույն պայմանը հանդիսացավ:<sup>207</sup> Այդ սահրանքով ակնկալվում էր լուծել երկու խնդիր: Փորձ կատարվեց հեղինակազրկել Մուսադեղին, ինչպես նաև ահաբեկել կոմունիստական «Թուղթ» կուսակցության ներկայացուցիչներին:

Հարիմանի՝ Թեհրան այցելելու դրդապատճառների կապակցությամբ այն կարծիքն էր ձևավորվել, թե ամերիկյան մասնագետները պատրաստ են փոխարինել անզիացիներին Իրանի նավթային ձեռնարկություններում: Ըստ «Ասոշիերիդ Պրես» գործակալության թղթակցի հայտարարության՝ Լու Անժելեսից ինչ-որ ամերիկյան տեխնիկական մի ընկերություն առաջարկել է ուղարկել 2500 մասնագետ՝ անզիական անձնակազմին փոխարինելու և նավթարորման գործարանները դեկավարելու համար<sup>208</sup>:

Հետագայում պարզվեց, որ նավթի հարցից բացի, Հարիմանը բանակցություններ էր վարում նաև տնտեսական այլ հարցերի շորջ՝ փորձելով ավելի ուժեղացնել Միացյալ Նահանգների ազդեցությունը Իրանում՝ ի հաշիվ Անգլիայի: Սակայն բանակցությունների անհաջող ավարտից հետո՝ 1951թ. հունիսի 19-ին, Հարիմանը սպառնաց Իրանին՝ նշելով, որ «... իրանցիներին չի հաջողվի վաճառել ոչ մի դոյլ նավթ, եթե այդ հարցում նրանք մնան անդրդիմիւմ»<sup>209</sup>: Հարիմանն անարդյունավետ բանակցություններից հետո ասաց. «Ես գգում եմ՝ Իրանում մենք վատնում ենք շատ ավելի ժամանակ, քան ԱԻՆԸ-ի բոլոր պաշտոնյաները միասին վերցրած»<sup>210</sup>:

Հովհանն Մուսադեղը դադարեցրեց բանակցությունները նավթային ընկերությունների հետ, եթե հայտնի դարձավ, որ վերջիններս սպառնացել են, թև լցանավերի սեփականատերերից Միջազգային շուկայում չեն ընդունվի Իրանի կառավարության անդրրագրերը:

Միացյալ Նահանգները նախկինի պես զապու էր Լոնդոնին, որպեսզի վերջինս չդիմի ուազմական գործողությունների՝ զգուշանալով, որ այն պայթյունավտանգ իրավիճակ կստեղծի ու կխարիսի իր դիրքերը Մերձավոր և Միջին Արևելքում:

<sup>206</sup> Katouzian Homa, Mosaddeq and the Struggle for Power in Iran, London & New York, 1999, p. 115–116.

<sup>207</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran (Syracuse, 2004), ի դեպ այլ երկու գործակալներին Բերնիր Ռուզվելտը կոչում էր «Ռուզվելտը կուրտային կառավարության մասնակի» և այս անունը կապահպանվել է այս առաջարկության մասին:

<sup>208</sup> Թթյան Յ.Ա., «Պայքար նավթի համար», էջ 194–195:

<sup>209</sup> Թթյան Յ.Ա., Նշվ. աշխ., էջ 195:

<sup>210</sup> متوچهور فرماندرمانیان و روحسان فرماندرمانیان، خلوت و نخت: Խառնություն յիշ շահերձան Արևածար, 1978, 10 թ., 134 էջ, 1978 թ., 10 թ.

ԱՄՆ-ը Իրանի թիվ մեկ գործընկերն էր արդեն ներմուծման բնագավառում, այսինքն՝ նա գրավել էր Իրանի շուկան: Մեծաքանակ օգնությունների շնորհիվ Իրանի ժողովրդի զգայի մասը երկրի առաջնորդացը տեսնում էր ԱՄՆ-ի հետ սերտ համագործակցության մեջ, և Միացյալ Նահանգներն այդ ամենը վտանգի տակ դնել չէր պատրաստվում:

ԱՄՆ-ը գտնում էր, որ Անգլիան պետք է ջանք չխնայի Իրանի հետ համաձայնության գալու համար, և, որ առավել կարևոր էր, Անգլիան պետք է ձեռնպահ մնար «չմտածված քայլերից»<sup>211</sup>: Չմտածված քայլեր ասելով՝ Էլվել Սատունը հիշատակում է այն փաստը, որ Մեծ Բրիտանիան փորձում էր խնդիրը լուծել ուղմական ուժի միջոցով:

Արդեն հոլիսին անզիական ուղմական նավերի թիվը Պարսից ծոցում հասնում էր 9-ի, որն իր եռթյամբ աննախադապ իրողություն էր: Այդ նավերը խարիսխ էին զցել Շատու-Էլ-Արա գետում՝ իրանական Արադան և Խորեմշահը նավահանգիստների մոտ: Անգլիան գործ էր կուտակել Իրաքի տարածքում՝ Իրանի սահմանների մոտ: Անգլիացիները զինում և խոռվության էին հրահրում Իրանի հարավում բնակվող ցեղերին: Ուժեղացավ Լոնդոնի լրտեսական գործունեությունը իրանական խաների և շեյխերի շրջանում, լրտեր էին պտտվում հարավային Իրանի հնարավոր բռնազավթաման մասին:

Պարսից ծոց ուղմանավեր ուղարկելուն զուգահեռ (Արադանի և Բասրայի առաջ խարիսխ էին զցել «Մավրիսիոս», «Ֆլամինգո», «Էրալիոս», «Զերոն», «Չեկերզ», «Չիֆտեյն» և «Չիվալրոս» ուղմանավերը)՝ անզիացիները Կիպրոս փոխադրեցին հջազորայինների գնդեր: Բրիտանական ուղմանադային ուժերին պատկանող «Մետեոր» և «Լամպիր» տիպի ռեակտիվ ինքնաթիռները թուշքեներ էին կատարում Արադանի սահմանամերձ օդային տարածքներում և հաճախ էլ խախտում էին Իրանի օդային սահմանները՝ նպատակ հետապնդելով ահարեկել տեղական բնակչությանը և իշխանությանը<sup>212</sup>:

Բավականին շատ էր խոսվում Պարսից ծոցում ուղղակի նավատորմային գործողությունների իրականացման և Իրաքի հետ Իրանի սահմաններին գործ մտնեցնելու մասին: Այդ կապակցությամբ շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին իր մոտ է կանչում Իրանում Անգլիայի դեսպանին և նշում. «Դուք պետք է հասկանաք, որ եթե Անգլիան հարձակվի Իրանի վրա, ես անձամբ կգիշավորեմ իմ զինվորներին՝ պատերազմելու ձեր դեմ»:

Հավականին շատ էր խոսվում Պարսից ծոցում ուղղակի նավատորմային գործողությունների իրականացման և Իրաքի հետ Իրանի սահմաններին գործ մտնեցնելու մասին: Այդ կապակցությամբ շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին իր մոտ է կանչում Իրանում Անգլիայի դեսպանին և նշում. «Դուք պետք է հասկանաք, որ եթե Անգլիան հարձակվի Իրանի վրա, ես անձամբ կգիշավորեմ իմ զինվորներին՝ պատերազմելու ձեր դեմ»:

Մոսադեղը հետապնդ լինելով նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի իրականացմանը՝ 1951թ. սեպտեմբերի 27-ին կարգադրեց իրանական

<sup>211</sup> Элвелл-Саттон Л., Иранская нефть, с.282.

<sup>212</sup>Թրյան Ռ.Կ., Պայքար նավի համար, էջ 192:

<sup>213</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 85.

գորամասերին գրավել Արադանի նավթավերամշակման գործարանը՝ դրանով իսկ ձևականորեն վերջ տալով Երանում ԱԻՆՀ-ի գործունեությանը<sup>214</sup>. Սեպտեմբերին ԱԻՆՀ-Ն Մոսաղեղի պահանջով տարհանեց իր տեխնիկական մասնագետներին: Անզիական կողմը վստահ էր, որ առանց իր տեխնիկական մասնագետների՝ Երանի Ազգային նավթային ընկերությունը (այսուհետ՝ ԻԱՆՀ) դժվար թե կարողանա գոյատևել: Այդ դժվար կացությունը կարող էին հեշտությամբ լուծել միայն ամերիկյան մասնագետները, ինչը բխում էր ամերիկյան նավթային ընկերությունների շահերից, որին դեմ չեր նաև Երանը: Ընդհանրապես Միջին Արևելքի նավթի պաշարներին տիրելու հավակնությունը պատկանում էր գլխավորապես ԱԻՆՀ-ին և ԱՐԱՄԿՕ-ին:

Սակայն ԱՄՆ-ը հետաքա գործնական բայլերի չփմեց, բանի որ նա ոչ միայն ԱԻՆՀ-ի մրցակիցն էր, այլև գործնկերը, և այժմ ԻԱՆՀ-ի հզորացումը լուրջ վնաս կհասցներ Միջազգային նավթային բիզնեսին:

1951թ. սեպտեմբերի 27-ին տեղի ունեցավ Մեծ Բրիտանիայի կառավարության նիստը: Այդ առավոտ Անզիայի արտաքին գործոց նախարար Մորիտոնը վերադարձել էր Վաշինգտոնից, որտեղ նախագահ Հ.Թրումենը, նրա առաջ շրացելով ամերիկյան մոնոպոլիաների հեռու գնացող ծրագրերը, պարզ հասկացնել էր տվյալ, որ Միացյալ Նահանգները չի աջակցի Երանում անզիական ուժի կիրառմանը: Եթե Մորիտոնը դեռ շարունակում էր պնդել ուազմական ուժ կիրառելու անհրաժեշտությունը և շարադրում էր ներխուժման պայմանները, վարչապետ Քիմմենը Էթրին, որ գրավել էր Երանի խնդիրներով, արագ կանխեց նրան, ու հայտարարեց, որ ուժի կիրառման հարցը բացառվում է: Կառավարության կազմից ոչ որ չառարկեց նրան<sup>215</sup>:

Այդ ամենից հետո Մեծ Բրիտանիան 1951թ. սեպտեմբերի 28-ին որոշեց դիմել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ խնդրելով ազդել Երանի վրա, որ պեսզի վերջինս համաձայնվի իրանական նավթի շահագործումը հանձնել միջազգային ընկերությանը, որտեղ անշուշտ առյուծի բաժինը պատկանելու էր անզիո-ամերիկյան ընկերություններին: Խորհրդային Միությունը, Հնդկաստանը և Հարավալիան ԱԽ-ում հանդես եկան Երանի պաշտպանությամբ: Խորհրդային Միությունը, քնականարար, չեր ցանկանում իր պետության հարավային շրջանների հարևանությամբ տեսնել անզիո-ամերիկյան ուժերին, իսկ որ «միջազգային» ընկերության ստեղծումից հետո ի հայտ էր գալու երկրի հարավային սահմանների «անվտանգության» պաշտպանության խնդիրը, ոչ որ չեր կասկածում: ԻԱՆՀ-Ն նավթի ահօնի մեծ պաշարներ ուներ, բայց այն արտահանելու կամ վաճառելու համար չուներ անհրաժեշտ սարքավորումներ: «Մենք չունեինք մեր սեփական անզամ մեկ լցանավը,» գրում է շահը, – չու-

<sup>214</sup> Բայրության Վ., Երանի պատմություն, Երևան, 2005, էջ 660:

<sup>215</sup> Новая и новейшая история, №4, 1979, с. 117.

նեինք տարրական գիտելիքներ առևտրական կազմակերպությունների մասին: Դրանից էլ օգտվեցին բրիտանացիները»<sup>216</sup>:

Ի դեպ, Իրանի նավթի ազգայնացման ժամանակ, աշխարհի լցանավերի 73%-ը գտնվում էր ԱՄՆ-ի և այլ խոչոր նավթային ընկերությունների վերահսկողության տակ:<sup>217</sup>

1951թ. հոկտեմբերին Մոսադեկան անգլիացի բոլոր մասնագետներին հեռացրեց նավթահանքերից և նավթաթոր գործարաններից: Նրանց վերջին խումբը «Մավրիցիոս» հածանավով հետացավ Իրանից: Ստորագրվեց ժամանակավոր առևտրական համաձայնագիր՝ Խորհրդային Միությանը, Զեխտսով-Վակիային և Հունգարիային նավթ մատակարարենու մասին: Սակայն ԱՄՆ-ի Իրանին հատկացվող օգնությունը դադարեցնելու սպառնալիքից հետո Մոսադեկան կառավարությունը ստիպված էր իրամարվել այդ համաձայնության իրագործումից:

1951թ. հոկտեմբերի 1-ին Նյու Յորքում սկսվում է Անգլիայի խնդրանքով իրավիրված Անվտանգության խորհրդի նիստը: 1951թ. հոկտեմբերին Իրանի վարչապետը ժամանեց Նյու Յորք: Նոյն ամսի 15-ին և 16-ին նա ՄԱԿ-ի ԱԽ-ում հանդես եկավ զեկույցով, որտեղ ներկայացրեց իրենց տեսակետը տեխնիկական մասնագետների տարիանման և ընդհանրապես ծագած հարցի նկատմամբ Իրանի դիրքորոշման վերաբերյալ:

Ահա այդ ժամանակ ԱՄՆ-ի պետքարտուղարի օգնական Զորջ Մաքֆին հանդես եկավ խնդիրը լուծելու առաջարկով: Պայմանագրի 6-րդ կետի համաձայն՝ Իրանը պետք է ստանձններ Բրիտանիային մատակարարել նավթ, յուրաքանչյուր քարելից ստանալով 1 դոլար 10 ցենտ, Պարսից ծոցի նավթի արժեքից 65 ցենտով պակաս, որպես նավթարդյունաբերության ազգայնացման փոխհատուցում: Բազմաթիվ քննարկումներից հետո Մոսադեկանը համաձայնվեց Զ.Մաքֆին և Դ.Աշխոնին առաջարկի հետ: Աշխոնը մեկնեց Փարիզ՝ բանակցելու է. Իդենի հետ: Սակայն Իդենը չհամաձայնվեց այդ պայմանների հետ<sup>218</sup>:

ՄԱԿ-ի ԱԽ-ում ԱՄՆ-ը հասավ ԻԱՆ-ի արժեթղթերի հանձնմանը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, որտեղ գերակշռում էր ամերիկյան կապիտալը:

Նախնական բանակցությունների ժամանակ Մոսադեկանը Միացյալ Նահանգների երկու պաշտոնյաներին՝ Փող Նիթքին և Զորջ Մաքֆին, ասել է. «Դուք երբեք չեք հասկանա, որ սա, ըստ Էնթրյան, քաղաքական հարց է»: Կարծում ենք, որ այդ հարցում Մոսադեկանը իրավացի էր: Խնդիրը միայն Իրանի նավթի հարցը չեր. մեր կարծիքով զգալի նշանակություն ուներ նաև Իրանի

<sup>216</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 86.

<sup>217</sup> The Iranian Journal of International Affairs, Tehran, 2000, p. 276.

<sup>218</sup> Kamrouz Pirouz, Iran's Oil Nationalization: Musaddiq at the United Nation and His Negotiations with George McGhee, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East, Vol.XXI, 2001, p. 115, Տե՛ս նաև Katouzian Homa, Mosaddiq and the Struggle for Power in Iran, p. 140.

нафумаварата на կարևորություն ունեցող դիրքը, որտեղ Անգլիան չէր ցանկանում թուլացնել իր ազիցությունը: Բացի դրանից, բրիտանացիները զգում էին, որ եթե հաջողվի իրականացնել Իրանի նավթի ազգայնացումը, ապա հաջորդը կլինի Սուեզի ջրանցքը, որին էլ կիաջորդեն մնացած նմանատիպ խնդիրները:

Գալով իշխանության գլուխ՝ Մոսահեղը հինգ ամսվա ընթացքում իրագործեց համարձակ մի ծրագիր. երկրից վտարեց ԱԻՆԸ-ին, սակայն նա միաժամանակ փաստորեն անգործության մատնեց Իրանի նավթարդյունաբերությունը, իսկ պետական գանձարանը զրկեց նավթից ստացվող եկամուտից: ԱԻՆԸ-ի սեփականության բռնագրավման հարցը չէր բարձրացվում, բայց ընկերության 60 հազար իրանցի ծառայողներին և բանվորներին, որոնք հարկադրված գործազրկեցին դաշտեկել, ստիպված էին աշխատավարձ վճարել: Խօնելով դիվանագիտական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ՝ այնուհետև արգելելով անգլիական ապրանքների մուտքը Իրան՝ Մ. Մոսահեղը հետո ապարդյուն կերպով փորձում էր անգլիացի գործարար մարդկանց հետ բանակցություններ վարել: Սակայն նրան չհաջողվեց անելանելի վիճակից ելք գտնել: Մոսահեղն անընդմեջ հայտարարում էր, որ ամեննեին չի ցանկացել վեճի մեջ լինել հասարակ անգլիացիների հետ, ովքեր չպետք է պատասխան տան ԱԻՆԸ-ի գործունեության համար: Բայց այս հայտարարությունը նոյնակե անարձագանք մնաց:

Նավթարդյունաբերության ազգայնացման օրենքի 7-րդ կետի համաձայն՝ Իրանը նավթ պետք է վաճառեր միայն արևմտյան երկրներին: Սակայն քանի որ այդ երկրները բոյկոտում էին իրանական նավթը, ինչը հարվածում էր երկրի տնտեսությանը, 1951թ. դեկտեմբերի 12-ին Իրանի կառավարությունը որոշեց, որ եթե 10 օրվա ընթացքում ԱԻՆԸ-ի նախկին սպառողները չցանկանան գնել իրանական նավթը, ապա Իրանի կառավարությունը իրավասու կինի վաճառել այն ցանկացած գնորդի: Այդ որոշման դեմ անմիջապես արձագանքեց ԱՄՆ-ը: Թե՛րանում Միացյալ Նահանգների դեսպան Լոյ Հենդերսոնը Իրանի կառավարությանն «առաջարկեց» ձեռնպահ մաս սոցիալիստական երկրներին՝ ԽՍՀՄ-ին, Չեկոսլովակիային, Լեհաստանին և Հունգարիային նավթ վաճառելու մտադրությունից, հակառակ դիմքում Միացյալ Նահանգները կփոխի իր վերաբերմութը Իրանի նկատմամբ<sup>219</sup>: Նրանց թիվ էր հոգում, որ Իրանը 1951-53թթ. վաճառել էր ընդամենը 3 լցանավ նավթ, ավելի թիվ քան ԱԻՆԸ-ն արտադրում էր մեկ օրում, և որ ժողովուրդը գտնվում է ծայրաստիճան դժվար կացության մեջ: Իրանի նավթարդյունաբերությունն անկում ապրեց, եթե 1950թ. այն կազմում էր 660,000 բարեկ, ապա 1951թ. 340,000, 1952թ. ընդամենը 20,000<sup>220</sup>:

Իրանի նավթի բոյկոտը հնարավոր եղավ, քանի որ այդ ժամանակաշրջանում նավթի պակասորդ չկար: ԱԻՆԸ-ն արագ իրականացրեց իր արժութային

<sup>219</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, с. 49, Новое Время, №3, 1980, с.29.

<sup>220</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 61.

խնայողությունները, որպեսզի այլ երկրներում և հատկապես Քուվեյթում մեծացնի նավթի արդյունահանումը: Այսպիսով, Իրանի նավթը որոշ ժամանակ հայտնվեց համաշխարհային շուկայից մեկուսացված վիճակում: «Մոսադդիր վստահեցնում էր, որ աշխարհը չի կարող առանց Իրանի նավթի և վաստի էր, որ առանց որևէ մենքի օգնության Իրանը կարող է իր նավթն արտահանել: Նա սիսապես իր հաշվարկներում: Ի պատասխան Մոսադդիր անհանդրության՝ Ար-Նշ-ը փակեց իր դռները: Իրանի կառավարությանը հատկացվող վճարները դադարեցվեցին և ԱԻՆ-ը սառեցրեց Իրանի նավթի մյուս վաճառքները, որտեղ ներդրումների մեծամասնությունն իրենն էր: Ահա թե որքան կարոնք էր մեր ողջ նավթը», – գրում է շահը<sup>221</sup>: Իրանցինները իսկապես կարծում էին, թե Արևմտաքը շատ ավելի կլորցնի, քան Իրանը, որն անշուշտ սիսակես էր:

1952թ. փետրվարի 11-ին Թեհրան ժամանեց Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխնախագահ Գարները: Նա հայտարարեց, որ Թեհրանում բանակցություններ է վարելու իրանական նավթարդյունաբերության աշխատանքների վերականգնման շորք:

1952թ. սկզբներին տնտեսական ծանր իրավիճակից դուրս գալու համար Մոսադդին առաջ բաշեց անիրականանալի մի ծրագիր՝ «տնտեսություն առանց նավթի» խորագրով: Սրանով Մոսադդին ակամա հաստատեց, որ երևակայական է այն հոյսը, թե միայն ԱԻՆ-ի ազգայնացմամբ կլուծվեն երկրի ողջ խնդիրները և մասնավորապես կիաննեն տնտեսական անկախության: Չնայած որ մինչև վարչապետ դառնալը նա անդադար հայտարարում էր, որ երկրի նավթը կիոքա բոլոր խնդիրները: Նավթը Իրանի միակ հարստությունը չէ, սակայն ընական այլ ռեսուրսները շահագործելու համար անհրաժեշտ էին մեն զումարներ, որի համար Մոսադդիր կրկին դիմեց Միացյալ Նահանգներին: Ի պատասխան՝ ԱՄՆ-ի պետքարտուղարությունը հայտարարեց, որ Իրանն այդ միջոցները կարող է հայթայթել նավթարդյունաբերության աշխատանքները վերականգնելու ձևապարհով:

1952թ. ամռանը Մոսադդիր դեկտեմ ստորագրեց, որի համաձայն բոլոր հողատերները իրենց թերքի 20%-ը պետք է հանձնեն պետությանը, որից 10%-ը կտրամադրվեր գյուղացիությանը, 10%-ն էլ գյուղական նորարար բանկերին, որպեսզի նրանք կարողանան հատկացնել վարկ գյուղացիներին: Խստրեն սկսեց հարկահավաքման ծրագիրը, հատկապես հարուստներից: Նրա լիազորությամբ ձերբակալվում էր ցանկացած ոք, ով կընդդիմանար այդ որոշմանը՝ միաժմանակ առգրավելով նրա գույքը<sup>222</sup>: Պարզ է, որ այդ քայլերը դժգոհություն առաջացրին Իրանի հատկապես ունեսոր դասի մոտ:

1952թ. հունիսին անզիյացիները իրականացրին իրենց սպառնալիքն առաջ, որ կիսումնդրութեն իրանական նավթի վաճառքին միջազգային շուկայում:

<sup>221</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 85.

<sup>222</sup> Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, p.126.

Աղեն նավահանգստում նրանք կանգնեցրին «Ռոզ Մարի» լցանավը, որը թևոնված էր 1000 տոննա նավթով<sup>223</sup>: Աղենի դատարանը հայտարարեց, որ խտայական և ճապոնական նավերի վրա գտնվող նավթը Անգլիայի սեփականություն է: Այսուամենայնիվ, այդ գործնքացը հաջողություն ունեցավ միայն Աղենում, իսկ Իտալիայի և Ճապոնիայի դատարանները ճանաչեցին Իրանի հետ կնքած պայմանագրի օրինականությունը<sup>224</sup>:

ԱՄՆ-ը Իրանի կառավարությանն անընդհատ առաջարկում էր հարթել Անգլիայի հետ նավթի հարցում առկա խոշնդրությունները և ԱԻՆԸ-ն փոխարինել կոնսորցիոնը: Մոսադեն Իրանի համար անընդունելի էր համարում նման տարրերակը, և այդ առիթով նա հայտարարեց: «Ավելի լավ է լինել անկախ և տարբեկան արտադրել մեկ տոննա նավթ, քան արտադրել 32 միլիոն տոննա և լինել Անգլիայի ստրուկը»<sup>225</sup>:

Եթե մի քանի օրով վարչապետի պաշտոնում Մոսադենին փոխարինելու եկամ Հավամ օս-Սալբանն, 1952թ. հունիսի 19-ին ԱՄՆ-ի դեսպան Լոյ Հենդերսոնը պաշտոնապես այցելեց նրան և երկար խոսեց Իրանի ու Միացյալ Նահանգների հարաբերությունների մասին: Սակայն, ինչպես գիտենք, ժողովուրդն ըմբռատացավ՝ վարչապետի պաշտոնում Հավամին տեսնելով, և ի պաշտպանություն Մոսադենի տեղի ունեցավ բազմահազարանց ցոյց: Կառավարական գործերը փորձեցին ձեշել ցոյցը, բախման ժամանակ զոհվեց 69, վիրավորվեց մոտավորապես 750 մարդ<sup>226</sup>: Ընդամենը հինգ օր կառավարելուց հետո Հավամը հրաժարական տվեց և հեռացավ երկրից: Վարչապետի պաշտոնը կրկին ատանձնեց Մոսադենը:

Մոսադենը մերժեց նաև Դ.Աշխանի առաջարկը, ով Հ.Թրումենի համաձայնությամբ Իրանի կարծրացած դիրքորոշումը փոփոխելու համար առաջարկում էր որպես ժամանակավոր միջոց հատկացնել 100 մլն դոլար վարկ հետագայում նավթի շահագործման դիմաց: Աշխանը հայտարարեց, որ Իրանում զարգացող իրադարձությունները կարող են խզել Իրանի և Միացյալ Նահանգների հարաբերությունները ևս, «որից հետո ոչինչ չի փրկի երկիրը կումոնիստական «Թուղթ» կուսակցությունից»<sup>227</sup>:

Մոսադենի վարած քաղաքականությանը տարիներ անց ընդդատարար է մոտենում Մոհամմադ Ռեզան՝ նշելով. «Մոսադենը հրաժարվեց գործարքից, նոյնիսկ այն բանից հետո, եթե ԱԻՆԸ-ը համաձայնվեց հարաբերական ազգայնացման զայտափարին և պատրաստ էր բանակցություններ վարել: Փաստ էր, որ եթե Բրիտանիայի կառավարությունը թեհրան ուղարկեց Ստորսի առաքելությունը, նրանք համաձայն էին 50/50 սկզբունքին, որից երկար ժամանակ խուսափում

<sup>223</sup> Эльвепп-Сэттон Л., Иранская нефть, с.370.

<sup>224</sup> Lenczowski George, The Middle East In World Affairs, New York, 1956, p. 198.

<sup>225</sup> Lenczowski George, American Presidents and The Middle East, p. 35. Новое Время, N4, 1980, с. 28.

<sup>226</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 62.

<sup>227</sup> Lenczowski George, American Presidents and The Middle East, p. 35.

էին: Սակայն Մոսադեղը, ինչպես այս, այնպես էլ հետազայում Հարիմանի, Զերշիլի, Թորումենի, Համաշխարհային քանվի, Եզգնիհանութիր և Միջազգային դատարանի միջնորդությունները մերժեց»<sup>228</sup>: Ավելին՝ 1952թ. հոկտեմբերի 16-ին խօՏեց դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի հետ<sup>229</sup>:

Իսկ մինչ այդ, 1952թ. հոկտեմբերին, ըստ Խելինակ Աղասի, շահը Պատրամնառում ուղղակի հայտարարել էր իր համերաշխությունը Մոսադեղի վարած ազգայնացման քաղաքականությանը: Շահը նոյնիսկ նշել էր. «Քանի որ նա ներկայացնում է ազգայնական քաղաքականություն, ես պետք է աջակցեմ նրան առավել քան որևէ մեկը»<sup>230</sup>: Սակայն ինքը՝ Մոհամմադ Ռեզան, տարիներ անց լրիվ հակառակն է գրու. «1952թ. հովհանն ես զգացի, – գրում է շահը, – որ այլև չեմ կարող աջակցել մի մարդու, որը երկիրը տանում է կործանման: Ազգայնացումից ի վեր մենք նավոք չենք վաճառել: Չեր ստորագրվել և ոչ մի պայմանագիր, միայն 7-ամյա զարգացման ծրագիրն էր, այն էլ ինքնահոս վիճակում էր»<sup>231</sup>:

Սակայն Մ.Մոսադեղը շատ լավ հասկանում էր, որ այդ պայմաններում Իրանին անհրաժեշտ են նավոք արտահանելու համար լցանավեր և մասնագետներ: «Հենց այս մասին էլ մենք մտադիր ենք քանակցել անզիջացների հետ, – հայտարարում էր Մոսադեղը: – Եթե նրանք ցանկանում են, կարող են մեզ հետ համագործակցել: Բայց նավոքը պատկանում է Իրանին, և մենք ոչ մի պայմանով չենք ցանկանում պահպանել ԱԻՆԸ-ի նախկին իշխանությունը»:

Մոսադեղի ուսկմավարությունը խարսխվում էր երկու կարևոր սկզբունքների վրա.

1. Կանխել կամ ոչնչացնել ամերիկա-բրիտանական համագործակցությունն Իրանի խնդրում:
2. Ամերիկյան աջակցության քացակայության դեպքում սպառնալ, որ Իրանը կդառնա կոմունիստների «զոհը»:

Սակայն Մոսադեղը սխալեց իր հաշվարկներում, եթե փորձում էր սեպի Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի միջև: Փաստորեն խրախուսելով ամերիկյան ներթափանցումը Իրան՝ նա հոյս ուներ ԱՍԴ-ից ֆինանսական օգնություն ստանալ և ամերիկյան ընկերությունների հետ իրանական նավթի արդյունահանման ու վաճառքի համար տեխնիկական օգնության համաձայնագրեր կնքել: Բայց նրա հոյսերը չարդարացան: ԱԻՆԸ-ի ազգայնացումից հետո ԱՍԴ-ի կառավարությունը, շարունակելով ֆինանսական և ուսկմական աննշան օգնություն ցուցաբերել Իրանին, հասավ այն բանին, որ Անգլիայի հետ հետազայում մասնակցեց երկրի նավթի պաշարների շահագործմանը:

<sup>228</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 85.

<sup>229</sup> مارک گازپرووسکی، سیاست خارجی آمریکا و شاه تهران، ۱۹۷۱، ص. ۲۷۱.

<sup>230</sup> Агаев С.Л., Иран в прошлом и настоящем, с. 131.

<sup>231</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 86.

Իր հաշվարկներում Մոսադեղը սխալվեց նաև այն ժամանակ, եթե կարծում էր, թե համաշխարհային տնտեսությունը չի կարող գոյատևել առանց Իրանի նավթի և դրանից էլ օգտվելով՝ Իրանը հսկավորություն կստանա ինքնուրույն վաճառել իր երկիր նավթը՝ անտեսելով միջազգային նավթային ընկերությունների տեսակետները: Սակայն Իրանի նավթի արտահանման դադարեցումից մենապես օգտվեց Միացյալ Նահանգները՝ տարածաշրջանի այլ երկրներում, մասնավորապես արարական երկրներում, մեծացնելով նավթի արդյունահանման չափերը: Դա բերեց զերշահույրներ, ոչ միայն ամերիկյան գործարարներին, այլև այդ երկրների իշխող դասին:

Անգլիան, կորցնելով նավթի իր հիմնական աղբյուրները, ստիպված եղավ որոշ քանակի նավթ գնել ամերիկյան ընկերություններից, ինչը նշանակում էր վասնել օրական մեկ մլն դոլար:

Փաստորեն, ի սկզբանե բացառելով նավթի վաճառքը սոցիալիստական երկրներին, Մոսադեղը ենթադրում էր արժանանալ Միացյալ Նահանգների քարեհածությանը: Տեսնելով, որ իր այդ քաղաքականությունն ըստ արժանվոյն չի գնահատվում, վարչապետը որոշեց ցուց տալ Վաշինգտոնին, որ Իրանը կարող է հակվել նաև դեպի սոցիալիստական աշխարհը: Սակայն դա լոկ շանտած էր:

Հետազայում Ենթոնի Իդենը իր հուշերում 1951թ. մասին գրեց. «Մենք հայտնվեցինք Իրանից դուրս, մենք կորցրինք Արադանը, Միջին Արևելքում ամենուր մեր դիրքերը խիստ խարիսխվել են: Չերչիլ ամեն ինչում մնշադրում էր լեյքրիտական կառավարությանը, որի ձեռքում էր այդ ժամանակ իշխանությունը: Եթե Անգլիայում լիներ պահպանողական ուժեղ կառավարություն, – հայտարարում էր Չերչիլը, – իրանական ճգնաժամն այդ ձևով երթեր ի հայտ չեր գա»<sup>232</sup>:

Սակայն, մեր կարծիքով, անկախ Մեծ Բրիտանիայում կառավարող իշխանությունից՝ այս իրադարձությունները տեղ էին գտնելու Իրանի պատմության մեջ: Իսկ Ռ. Չերչիլը նման հայտարարություն արեց, քանզի Անգլիայում մոտենում էին պաղամենտական ընտրությունները, և նա ընականարա ցանկանում էր, որ իշխանության գային խիստ պահպանողական թևի սերկայացուցիչները:

Միևնույն ժամանակ ԱՄՆ-ը ցանկանում էր շուտափոյթ լուծել այդ խնդիրը, քանզի տարածաշրջանում կային նմանատիպ այլ խնդիրներ, և Իրանի օրինակով նրանք նույնպես կարող էին գրիս բարձրացնել, ինչը ձեռնոտու չեր ԱՄՆ-ին: Սակայն նրանք չկարողացան խոսափել դրանից, և Իրանի նավթի ազգայնացմանը զուգընթաց մեծացավ Մերձավոր և Միջին Արևելքի մողովուրդների պահանջը. նրանք ցանկանում էին իրենց երկրներից արտաքսել արտասահմանյան կոնցեսիոններներին: Իսկ այդ երկրների դեկավար շրջանները պնդում էին, որ մեծացվեն կոնցեսիաների վարձակալության վճարները: Ասպես, օրինակ՝ Լիբանանը, որի տարածքով անցնում էր ամերիկյան նավթամու-

<sup>232</sup> Новое Время, №3, 1980, с. 27.

դը, որպէս վարձակալության վճար ստանում էր 7 մլն դոլար և արդեն պահանջում էր այն հասցնել մինչև 100 մլն դոլարի: 1953թ. Միջնրկրական ծովի ափին գտնվող Սահորում՝ Նավթամուղի վերջնակետում, տեղի ունեցավ բռողքի ցոյց: Ցուցարարները պահանջում էին վտարել ամերիկյան ընկերություններին Լիբանանից: Նման պահանջներ ներկայացրին նաև արարական մյուս երկները: Իրանի օրինակով՝ Մերձավոր Արևելքի երկրները նոյնպես ըմբուտացան նավթային մենաշնորհատերերի դեմ: 1952թ. վենտրվարին Քուվեյթում առաջին անգամ «Քուվեյթ Օյլ Քումիֆանիի» աշխատողները դիմեցին գործադույլի: Աշխատողները պահանջում էին (ինչպես և իրանցի նավթագործները) աշխատավարձի բարձրացում, աշխատավայր հասնելու համար տրանսպորտի միջոցներ, բնակարանների և սանիտարական պայմանների բարելավում և խմելու ջրի ապահովում: Մեծ գործադույլ տեղի ունեցավ Բասրայի «Իրաք Փեթրոլյում Քումիֆանի»-ում: 1952թ. դեկտեմբերին 4.600 եգիպտացի աշխատողներ Եգիպտոսի կառավարությունից պահանջնեցին ազգայնացնել «Սունգի ջրանցք միջազգային ընկերությունը»<sup>233</sup>:

Շուտով ամերիկյան և անգլիական նավթային ընկերությունները ստիպված էին վերանայել Սաուդյան Արաբիայի, Իրաքի, Քուվեյթի հետ կորած պայմանագրերի կիսումը: Հատ նոր համաձայնագրի՝ նավթային կոնցերները տեղական կառավարությանը վճարելու էին ստացվող եկամտի 50%: Այս սկզբունքը գործեց Սաուդյան Արաբիայում (1950թ.), Քուվեյթում (1951թ.), Իրաքում (1952թ.), Ղաքարում (1952թ.):

Մերձավոր և Միջին Արևելքի երկրների նավթի նկատմամբ Միացյալ Նահանգների ունեցած հավակնությունները յուրաքանչյուր տարի մեծանում էին: Եթե 1939թ. այս տարածաշրջանի նավթի պաշարների 70%-ը գտնվում էր անգլիացիների ձեռքում, ապա 1954թ. այն իշակ մինչև 28%-ի, փոխարենը՝ ամերիկացիների 15%-ը հասավ 65%-ի<sup>234</sup>:

1952թ. ԱՄՆ-ում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո Վաշինգտոնի դիրքորոշումը Իրանի նավթի հարցի կապակցությամբ կտրուկ փոխվեց: Հարկ է նշել, որ Մոսադելլ կարծում էր, թե նոր նախագահն աջակցություն կցուցարերի Իրանին, և դրանով էր պայմանավորված, որ Մոսադելլ անզիջում գտնվեց Թրումենի կառավարության կողմից առաջ քաշված յուրաքանչյուր առաջարկի նկատմամբ: Սակայն Մոսադելլը սխալվեց իր հաշվարկներում: Ըստհանրապես 1952թ.-ից հետո անզիջ-ամերիկյան կողմն այլև այդքան էլ չէր ձգում հարցը լուծել բանակցությունների միջոցով, քանզի Մոսադելլն անդրդվելի էր:

<sup>233</sup> Самыловский И.В., Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке, с. 111–113.

<sup>234</sup> Там же, с. 74.

ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Դ.Դ.Էջենհառուերը, կտրուկ շրջադարձ կատարելով և իրաժարվելով նախկին վարչակազմի քաղաքականությունից, որոշեց աջակցել Միացյալ Նահանգների նավարարդուստրերողների շահերին: 1953թ. սկզբին նա հերթական մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց. «ԱՄՆ-ի կառավարությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի կանխի «կոմունիստական վտանգը Իրանում»<sup>235</sup>: Իսկ ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարության պաշտոնյաներից Զարլ Բուլանը հայտնեց իր կարծիքը. «Եթե Իրանը կոմունիստական դառնա, Իրաքը և հավանաբար Միջին Արևելքի երկրները նոյնպես կոմունիստական ուժին կրոնեն, և մեր դիրքերն ամբողջովին կիսարիվլեն: Այսիսկ մենք պետք է մեր ջանքերն ամեն գնով կենտրոնացնենք Իրանը կոմունիզմից ազատենու վրա»<sup>236</sup>:

Միացյալ Նահանգների քաղաքականության մեջ այդպիսի կտրուկ շրջադարձ կարելի է բացատրել մի հանգամանքով ևս. 1952թ. ԱՄՆ-ի նախագահական ընտրարշավի համար վասնվել էր 100 մլն դոլար և համաձայն նախկին ռադիոհաղորդավար Ֆրենկ Էնդվարդսի հայտարարության՝ այդ գումարի կեսը նավթարդյունաբերողների կողմից ներդրվել էր Դ.Էջենհառուերի օգտին<sup>237</sup>: Ինչպես գրում է ամերիկացի հետազոտող Բարնեթ Մյուլերը, «Փաստ է, որ այսօրվա պայմաններում ոչ մեկը չի կարող ԱՄՆ-ի նախագահ ընտրվել՝ առանց խոշոր բիզնեսի կողմից հատկացրած ֆինանսական մեծ լրագարների: Եվ արդեն 100 տարի է, ինչ այդպես է»<sup>238</sup>:

Սպիտակ տանը դեմոկրատներին փոխարինելու էին գալիս հանրապետականները, իսկ նրանց հետևում ավանդաբար կանգնած էր Ռոբֆելլերների գերդաստանը: Բնականաբար, նախագահ ընտրվելուց հետո Էջենհառուերը պետք է պաշտպաներ նավթարդյունաբերողների շահերը Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Էջենհառուերը նշում էր, որ նավթային համաձայնագրերը կօգնեն ԱՄՆ-ին՝ իրականացնելու իր նպատակները Միջին Արևելքում: Իսկ այդ նպատակներն էին. գրավել Միջին Արևելքի երկրների հովաքային և առաջին հերթին նավթային բոլոր պաշտոնները, այդ երկրներում ուժիղացնել սեփական ազդեցությունը և դրանք վերածել իր ուսումնավարական կենտրոնների:

Համաձայն ամերիկացի հայտնի տեսաբան Դյու Պերսոնի տեսակետի՝ պետքարտութարությունում դժվար կլիներ գտնել մի պաշտոնյայի, որն այսպես թե այնպես կապված չլիներ նավթային մենաշնորհատերների հետ: Դատեք ինքներդ՝ պետքարտութար Դին Աշետոնը «Ստանդարդ օլ օֆ Նյու-Ջերսի»-ի գործերն իրականացնող իրավաբանական ֆիրմայի համատեքն էր: Պետքարտու-

<sup>235</sup> Нишанов М., «Американский империализм и государственный переворот 19 августа 1953г. в Иране», Материалы по Востоку. Ташкент, 1966, с. 39.

<sup>236</sup> فصلنامه تاریخ روایت خارجی، شماره ۴، تهران، ۱۳۷۶، ص ۸۲-۹۲.

<sup>237</sup> О'Коннор, Империя нефти, с.280.

<sup>238</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, с. 13.

դարի առաջին օգնական Դեյվիդ Բրյուսը, «Գալֆ օյլ»-ի հետ ուներ ընտանեկան կապեր: Նրա մայրը 7 հզոր ֆինանսիստ-արդյունաբերողներից մենքն էր: Դեյվիդ Բրյուսի առաջին կինը միլիարդատեր Էնդրյու Մելոնի աղջիկն էր, ով աշխատում էր Ավերիլ Հարիմանի «Ու.Ա. Հարիման ընկ Ք.» բանկում: Պետղեպարտամենտի քաղաքական ծրագրավորման բաժնի պետ Պոլ Նիտցեն ամուսնացած էր խոշոր նավթարյունաբերող Պրատտի թռողնուհու հետ: Ի դեպ, «Կրեոլ Փետրոլիում»-ի տնօրենն Նելսոն Ռոբֆելլերը, 1951թ. նախագահ Թրումենի վարչակազմում, նույն է միջազգային զարգացման խորհրդակցական խորհրդի նախագահը: Այդ խորհրդի տանը հանձնարարական տվես «Թրումենի ծրագրի 4-րդ կետի» վերաբերյալ<sup>239</sup>:

1952թ. նոյեմբեր-դեկտեմբերին պետքարտուղարությունը նավթային ընկերությունների տնօրենների հետ անցկացրեց մի շարք խորհրդակցություններ՝ նպաստակ ունենալով ստեղծել Միջազգային կոնսորցիում՝ իրանական նավթի շահագործման համար: Հատկանշական է, որ ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում եական փոփոխության չեր ենթարկվում, անկախ այն հանգամանքից, թե որ կուսակցության առաջնորդն էր դեկավարութերիքը: Թե՛ դեմոկրատները և թե՛ հանրապետականները պաշտպանում էին ամերիկյան խոշոր մենաշնորհատերերի կապիտալի շահը, դա անխոս վերաբերում էր նաև Մերձավոր և Միջին Արևելքում իրնաց նավթային մենաշնորհների կապիտալի շահերին: Սակայն երկու կուսակցություններից նավթային մենաշնորհների հետ առավել սերտ հարաբերությունների մեջ էին հանրապետականները: Ռոբֆելլերները և Մելոնները, որոնք բավականին մեծ ազդեցություն ունեին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության կուրսի ձևավորման վրա, հիմնականում զրադարձ էին մերձավորարևելյան նավթի շահագործմամբ:

1953թ. փետրվարին Իրանի կառավարությանը հանձնվեց ԱՄՆ-ի և Անգլիայի համատեղ առաջարկը: Այնտեղ նշվում էր, որ դրա ընդունման դեպքում ԱՄՆ-ը 135 մլն դոլարի նավթ կգնի և Իրանին կհատկացնի 100 մլն դոլարի փարկ<sup>240</sup>: Այդ առաջարկը ևս դրական արդյունք չտվեց:

ԱՄՆ-ը Մոսահենի կառավարությանը որոշակի աջակցություն էր ցուցաբերում՝ պատճառաբանելով, որ քարչապետ Իրանում պայքարում է կոմունիզմի դեմ: ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը 1953թ. մարտին, Անգլիայի արտգործնախարար Է.Ի.դենի հետ ունեցած գրույցի ժամանակ, նշել է, որ «ամենայն հականականությամբ, պատրաստ է ճնշում գործադրել ամերիկյան նավթային ընկերությունների վրա և գնալ գգալի գիշումների՝ Մոսահենի իշխանությունը պահելու համար, քանի որ Մոսահենը Արևմուտքի միակ հույսն է Իրանում»<sup>241</sup>:

<sup>239</sup> Новое Время, №3, 1980, с.28.

<sup>240</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, с. 50.

<sup>241</sup> Eden A., The Memoirs of Sir Anthony Eden, London, 1960, p.212.Տե՛ս նաև Արաև, Իրան в прошлом и настоящем, с. 132.

Սակայն կարծում ենք, որ այդ հայտարարությունն արվել էր՝ Մոսադենի գգոնությունը թուլացնելու և նրա, ինչպես նաև Իրանի ժողովրդի մեջ ձևավորելու այն կարծիքը, թե ԱՄՆ-ի նորընտիր նախագահը հակված է հաշվի նստելու Իրանի ժողովրդի ցանկության և պահանջների հետ: Դրան հավելյալ, ամերիկյան նավթային ընկերությունները շահագրգոված էին անգլո-իրանական բանակցությունների ձգձման և նոյնիսկ տապալման մեջ, քանի որ նրանք դրանվ ժամանակ կշահեին՝ ավարտին հասցնելու գաղտնի բանակցություններն անգիտական նավթային ընկերության հետ:

Բացի դա, ամենայն հավանականությամբ, այդ հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի նախագահը փորձել էր Ասգիյայի արտգործնախարարին ցուց տալ Միացյալ Նահանգների դիբորոշումը իրանական նավթի հարցի շորջ՝ ակնկալելով Մեծ Բրիտանիայի կողմից իրական զիջումներ՝ ամերիկյան նավթային ընկերությունների հետ բանակցությունների ժամանակ: Արդյունքը երկար ժամանակ սպասեցնել չտվեց:

Շուտով անգլո-ամերիկյան նավթային ընկերության տնօրենները համաձայնություն ձեռ բերեցին իրանական նավթի հարցի շորջ, որով ԱՄՆԸ-ի արժեթղթերի 40%-ը տրվեց ամերիկյան նավթային ընկերություններին: Դրանից անմիջապես հետո Եյզենհաուերի վերաբերմունքը Մոսադենի կառավարության նկատմամբ կտրուկ փոխվեց: Նա Էնքոնի Իդենի հետ ունեցած հիշյալ գրուցից ընդունենք 5 ամիս հետո համաձայն էր Իրանում իրականացնել նոյնիսկ ուղարկան հեղաշրջում, որն էլ տեղի ունեցավ 1953թ. օգոստոսի 19-ին: Արդյունքում նոր վարչապետ նշանակվեց գեներալ Ֆավլուլահ Զահենիին:

Հետաքրքիր փաստ արձանագրվեց «Նյու Յորք Թայմսի» 1953թ. օգոստոսի 26-ի համարում, ըստ որի՝ Իրանի նավթի ազգայնացման կապակցությամբ մենաշնորհատերերին անհանգստացնում է ոչ այնքան անգլո-իրանական նավթային ընկերությանը հասանելիք փոխհատուցման հարցը, որքան համաշխարհային շուկայում նավթի գների վրա հավանական անդրադարձն այն դեպքում, եթե Մոսադենի կառավարությանը հաջողվեր արտահանել իր երկրի նավթը: Նոյն թվականի օգոստոսի 30-ի համարում իրապարակված մեկ այլ հոդվածում ասվում էր. «Եթե իրանական նավթը, կարտելներից անկախ, կարողանար մուտք գործել համաշխարհային շուկա, ապա անդրադարձ նավթի համաշխարհային գնի վրա չափազանց աննպաստ կլիներ: Եվ իրոք, նման մտավախություններից ենելով, նավթի միջազգային կարտելներն արգելեցին Իրանի նավթի մուտքը համաշխարհային շուկա»<sup>242</sup>:

1953թ. հոկտեմբերի կեսերին Իրանի նավթի շորջ բանակցելու համար Թեհրան ժամանեց ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ.Ֆ.Դավիսի խորհրդական Հ.Հուվերը: Իրանի նոր կառավարությունը, ի դեմս վարչապետ Ֆ.Զահենիի, պատ-

<sup>242</sup> The New York Times, 26.08.1953, 30.08.1953.

բաստակամորեն իրազործում էր նավթային մենաշնորհատերերի պահանջները և վերջ էր տվել ազգայնացման ծրագրին: 1953թ. հոկտեմբերի սկզբին Վաշինգտոնի աջակցությամբ Մեծ Բրիտանիայի և Իրանի կառավարությունների միջև սկսվեցին փոխհարաբերությունների վերականգնման աշխատանքները: 1953թ. վերջին Անգլիայի կողմից առաջ բաշված նավթային բանակցությունների վերականգնման համար, որպես պայման ընդունելով դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը՝ Իրանի կառավարությունը ցանկություն հայտնեց, որ երկիրը ուղարկվեն դիվանագիտներ, որոնք մինչ այդ Իրանում չեն աշխատել: Դեկտեմբերի 5-ին պաշտոնապես հայտարարվեց Անգլիայի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին:

Սակայն ԱՄՆ-ի և Անգլիայի ներկայացուցիչները տարածայնություններ ունեին նավթային կոնսորցիոնում անգլիական և ամերիկյան ընկերությունների մասնարամնի վերաբերյալ: Այդ հարցը լուծվեց 1953թ. դեկտեմբերի 15-ին Լոնդոնում Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նավթային խոշոր ընկերությունների խորհրդակցության ժամանակ, որը նախաձեռնել էր ԱՄՆ-ի կառավարման ներկայացուցիչ Ֆրեզերը: Ամերիկյան ներկայացուցիչները պետու էին, որ ինչքան թիվ լինի անգլիացիների մասնարամնը և շատ՝ ամերիկացիներինը, այնքան ավելի կմեծանա հավանականությունը, որ Իրանը կընդունի նավթային կոնսորցիոնի ծրագիրը: Անգլիացիները մերժեցին Հովհերի առաջարկը, ըստ որի՝ Անգլիային պետք է տրվեր բաժնեբարերի միայն 25%-ը, դրա փոխարեն նրանք պահանջում էին նվազագույնը 50%-ը:

1954թ. ապրիլի սկզբներին Թեհրան ժամանեց Միջազգային նավթային կարտելի պատգամավորությունը՝ «Ստանդարտ օյլ օֆ Նյու-Զերսիթ» ներկայացուցիչ O.Հարուենի գլխավորությամբ: Ապրիլին Թեհրանում սկսված բանակցությունների ժամանակ L.Հովհերը կրտսերը և անգլիայի դեսպան Ռոբեր Սրիվենսը հանդես եկան դիտորդի կարգավիճակով: Ի վերջո, 1954թ. ապրիլի 10-ին համաձայնագիրը ստորագրվեց Լոնդոնում, որով աշխարհի ուր խոշորագոյն նավթային ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվեց Միջազգային նավթային կոնսորցիոն (ՄՆԿ)՝ իրանական նավթ շահագործելու համար:

Ամերիկացիները կարծիք հայտնեցին, թե այլևս հարկ չկա, որ անգլիացի մասնագետները վերադառնան Իրան, քանի որ նավթարդյունաբերության վերականգնման գործը ցանկալի էր հանձնարարել այլ երկրի մասնագետներին, մասնավորապես՝ ամերիկացիներին:

1954թ. օգոստոսի 5-ին Թեհրանում և Լոնդոնում տպագրվեցին պաշտոնական հայտարարություններ, որոնք հստակեցնում էին նավթի հետ կապված նոր պայմանագրի կետերը: Իրանի կառավարությունն Անգլիային գիշում էր շատ ավելին, քան կարող էին ներարկել իրանցիները: Նոր պայմանագիրը ուժի մեջ էր մնալու մինչև 1979թ., ցանկության դեպքում այն կարող էին երկարացվել մինչև 1994թ.: Նավթի արտահանման մենաշնորհը պատկանելու էր կոնցենտին:

Ինչպես նշում է Ելվելլ-Սատոռնը, կարևոր այն էր, որ իրանական կառավարությունը հրաժարվեց արտադրական գործողությունների ուղղակի վերահսկողությունից և համաձայնվեց այն հանձնել կոնսորցիումին<sup>243</sup>: Այն, ինչ այժմ Մեծ Բրիտանիան առաջարկում էր Իրանին, ավելի քիչ էր, քան այն, որ առաջարկում էր ԱԻՆՀ-ն՝ 1951թ. անարդյունավետ բանակցությունների ժամանակ:

Կոնսորցիումում ԱԻՆՀ-ի մասնաքամինը կազմում էր 40% (որպեսզի խուսափի ավելորդ շահարկումներից, 1955թ. դեկտեմբերից այն վերանվանվեց «Բրիտանական նավթային ընկերություն»), «Ռոյալ Շատչ Շելլ<sup>244</sup>»՝ ստացավ 14%, 40%-ն անցավ ամերիկյան 5 ընկերություններին՝ «Գալֆ Օլի Քորփորյաց», «Սորոնի-Վակուում Օլի Քորփորյաց», «Ստանդարտ Օլի Քոմպանի (Նյու Զերսի)», «Ստանդարտ Օլի Քոմպանի օֆ Քալիֆորնիա» և «Թեխսա Քոմպանի»,՝ յուրաքանչյուրն ուներ 8 % և «Քոմպանի ֆրանսենգ դե վեթրոր»՝ ին 6%<sup>245</sup>: Որպես ԱԻՆՀ-ի իրավահաջորդ՝ «Բրիտանական նավթային ընկերությունը» վերը նշված ընկերություններին հանձնած 60% արժնությունը դիմաց ստացավ 600 մլն դոլար: Նախատեսվում էր վճարումը կատարել՝ արտահանվող նավթի յուրաքանչյուր բարելից հավաքելով 10 ցենտ<sup>246</sup>:

Վերոհիշյալ պայմանագիրը երաշխավորում էր հաջորդ երեք տարիների ընթացքում Իրանին տալ 420,000,000 դոլարի տարեկան եկամուտ և վերադարձնել նրան աշխարհի նավթարդյունաբերողների շարքը: Միաժամանակ, ըստ պայմանագրի, Իրանը պարտավորվում էր 10 տարվա ընթացքում, որպես նավթարդյունաբերության ազգայնացման համար փոխհատուցում, վճարել 25,000,000 ֆունտ ստենլինգ, որը համարժեք է 70,000,000 դոլարին: Եվ կոնսորցիումի և փոխազիտմների պայմանագիրը Իրանի պաղամանեսի կողմից պետք է վավերացվեր մինչև օգոստոսի 24-ը: Կոնսորցիումի պայմանագիրը պետք է հաստատվեր 2 կողմնի ղեկավարների կողմից: Կոնսորցիումը երաշխավորում էր առաջին երեք տարվա համար արտահանել նվազագույնը 80,000,000 մ<sup>3</sup> (500,000,000 բարել) հումք և մշակված արտադրանք: Հավելյալ 5,000,000 մ<sup>3</sup> կարտորվեր տեղական պահանջարկը բավարարելու համար: Առաջին տարում նվազագույնը կարտադրվեր 17,500,000 մ<sup>3</sup>, երկրորդ տարում 27,500,000 մ<sup>3</sup> և

243 Элвейл-Саттон Л., Иранская нефть, с. 399–400.

244 1907թ. վետրվարին «Ռոյալ Շատչ» (Սիդերանդական թագավորության Ծնկերություն) և անզիական «Շելլ» ընկերությունները կերպնայ այդ ժամանակ ֆինանսական ծանր վիճակի մեջ եր գոնվում ստորագրեցին վերջնական միաձուլման մասին համաձայնագիր: Ըստ որի, աղքածրքի 60%-ը պատկանում էր «Ռոյալ Շատչ»-ին և միայն 40%-ը «Շելլ»-ին (Ա.Ա. Փորսենկո «Нефтяные войны» (конец XIX-начало XXв.), Ленинград, 1985, с. 94.).

245 Avery Peter, Modern Iran, p. 453–454.

246 Нефтяная промышленность капиталистических стран Западной Европы, Ближнего и Среднего Востока, Дальнего Востока, Канады и Латинской Америки, Москва, 1959, с. 125.

երորդ տարում 35,000,000 մ<sup>3</sup>: Այդ գործողությունների շնորհիվ Իրանը կարող էր հասնել 1950թ. արտադրության մակարդակին<sup>247</sup>:

Դիվանագիտական հարաբերությունների վերականգնումից և դեսպանների փոխանակումից հետո՝ 1954թ. փետրվարին, Մեծ Բրիտանիա ուղղութեաց Իրանի գործարարների մի մեծ խումբ՝ մեկ մլն ֆունտ ստենլինգ ընդհանուր արժեքով գյուղատնտեսական մերձաներ գնելու: Նոյն տարվա նոյեմբերին Ազգիայի կառավարությունը որոշեց Իրանին տրամադրել 10 մլն ֆունտ ստենլինգ փոխառություն՝ անզիջական ապրանքներ ձեռք բերելու և ծառայություններից օգտվելու համար:

Նոր համաձայնագրի մասին իրապարակված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ դրա հիմքում ընկած էին գրեթե նոյն այն պայմանները, որոնք առաջարկվում էին ԱԻՆԸ-ի և կորուկանապես մերժվում Իրանի կողմից: Այսպիս, օրինակ, ԱԻՆԸ-ի փոխհատուցման ժամկետը մինչև 1993թ. էր, իսկ կոնսորցիոնին շնորհվել էր 25 տարվա ժամկետ՝ գումարած 15 տարով /3 անգամ 5 տարով/ ժամկետը երկարաձելու իրավունք, ստացվում է 1994թ: Այնուհետև, համաձայնագրի մյուս պայմանների ըննարկումից պարզվում է, որ նավթարդյունահանման, մշակման, արտահանման և վաճառման բոլոր գործողությունները դեկավարելու է կոնսորցիոնը, և վարչության մեջ, բացառությամբ իրանական երկու ներկայացուցիչների, մյուս բոլոր դեկավար անդամները լինելու են օտարերկրացիներ: Վերջապես, փոխհատուցման վճարի հիմք է ընդունվել 50%-ը, սակայն դրա մեջ էին մտնում նաև պետական հարկերը, մաքսային և բոլոր տեսակի այլ ստորերը, ուստի կոնցենտրում վարձի իրական չափը իմանալու համար պետք է հանել նշված հոդվածները: Բացի այդ, համաձայնագրի բացասական կողմերից պետք է համարել նաև այն, որ իրանական կառավարությունը պարտավորվում էր 10 տարվա ընթացքում որպես փոխհատուցում ԱԻՆԸ-ին վճարել 25 մլն ֆունտ ստենլինգ, նաև այն, որ սարքավորումների ամրությացման դիմաց, եկամտից պիտի հանել տարեկան 6,7 մլն ֆունտ ստենլինգ: Այդ բոլորից հետո դժվար է հասկանալ, թե վերջիվերջ առաջին 10 տարիների ընթացքում երկրի նավային հարստությունների շահագործումից ինչ եկամուտ էր ստանալու Իրանի կառավարությունը: Կոնսորցիոնը գործելու էր երկու նոր ընկերությունների միջոցով, որոնք գրանցվել էին Հոլանդիայում՝ Նավթահետախուզական և նավթահանման իրանական ընկերություն և Իրանական նավթահանման ընկերություն:

ԻԱՆԸ ձևականորեն հայտարարվեց բոլոր հանքավայրերի և ողջ ունեցվածքի սեփականատերը, սակայն իր իրավունքները ՄՆԿ-ի հետ ձեռք բերված

<sup>247</sup> Joint Statement Issued by the Government of Iran and the Consortium of Oil Companies, Tehran, August 5, 1954, Document on American Foreign Relations 1954, New York, 1955, p. 385-387.

Iran and Oil Group Initial Agreement to Resume Output, by Welles Hangen, August 6, 1954, The New York Times, <http://www.nytimes.com/library/world/mideast/080654iran-output.html>

համաձայնությամբ հանձնում էր վերոհիշյալ օպերատիվ երկու ընկերություններին, որոնցից առաջինը ստանում էր հետախուզելու և նավթ արդյունահանելու իրավունք, իսկ երկրորդը՝ նավթաթոր գործարանների շահագործումը:

1954թ. ԻԱՆՀ-ի ձեռքում փաստորեն մնացին միայն Նաֆթ-և Շահի նավթահանքերը, որտեղից տարեկան ստանում էին 300 հազար տոննա նավթ, և Քերմանշահի ու Նաֆթ-և Շահի նավթաթոր գործարանները<sup>248</sup>:

ՄՆԿ-ն չընդունեց Իրանի առաջարկը՝ գրադարձ միայն նավթի վաճառքով, և ԻԱՆՀ մնաց նավթային արդյունաքերության լոկ ձևական-իրավական սեփականատեր: Հնարավորություն չունենալով ինքնուրույն դուրս գալ միջազգային շուկա՝ Իրանի կառավարությունն այդ պայմաններում ստիպված գոհանում էր Իրանում ՄՆԿ-ին վերահսկելու իրավունքից: Նավթից ստացվող շահույթը պետք է հավասար բաժանվեր կառավարության և կոնսորցիոնի միջև: Հստ եռթյան՝ Մեջլիսը և Սննատը չեին կարող որևէ փոփոխություն մտցնել ՄՆԿ-ի հետ ձեռք բերված համաձայնագրում: ՄՆԿ-ի պատգամավորության ղեկավար Հովհար Փեջոն այս կապակցությամբ հայտարարեց. «Մեջլիսը պետք է ընդունի համաձայնագիրը կամ էլ ընդհանրապես չանդրադառնա դրան: Մենք չենք կարող հավերժ բանակցություններ վարել»<sup>249</sup>:

Անզո՞-իրանական վեճից հետո, Իրանը երկար ժամանակ չէր կարողանում հասնել նավթի արտահանման նախկին չափերին, քանի որ այդ ընթացքում մեծացել էին Քուվեյթի, Ղարաբի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի նավթի արտահանման չափերը: Բացի այդ, արտասահմանյան մենաշնորհատերերն այլև հետաքրքրված չեին Մերձավոր և Միջին Արևելքում նավթի արտահանման չափերը մեծացնելու հարցում, քանզի 1952թ. գրանցվել էր նավթի պահանջարկի նվազում:

*Իրանի նավթի արդյունաման և վերամշակման գովազները 1950–1961թթ.  
(մլն տ.)<sup>250</sup>*

Տարի	Արտահանում	Վերամշակում
1950	31.8	24.0
1955	15.8	7.5
1956	25.9	11.7
1957	34.8	15.8
1958	39.8	14.9

<sup>248</sup> Шарипов У.З., "Эволюция нефтяной политики иранского государства в 50–70-х годах", Иран. Проблемы экономического и социального развития в 60–70-е годы, М., 1980, с. 67.

<sup>249</sup> Эвлелли-Саттон Л., Иранская нефть, с.406.

<sup>250</sup> Petroleum Times, 14.12.1951, 04.03.1955, 28.03.1958, 12.03.1960, 10.02.1961 Школьников Б. А., Иран в конце 50-х начале 60-х годов в XX в., М., 1985, с. 22.

1959	44.7	15.4
1960	51.0	17.0
1961	57.0	15.0

Արդյունքում Իրանի նավթից ստացվող եկամուտները դանդաղորեն աճեցին. եթե 1955թ. այն կազմում էր 90 մլն դոլար, ապա 1960թ.<sup>251</sup> 285 մլն դոլար, իսկ 1964թ. այն հասավ 482 մլն դոլարի<sup>252</sup>:

Բավարարված լինելով պայմանագրի կետերից՝ ԱՄՆ-ի կառավարությունն Իրանին 10 միլիոն դոլարի օգնություն հատկացրեց: Իսկ նոյեմբերին ԱՄՆ-ն Իրանին առաջարկեց ևս 127,3 միլիոն դոլար: Չնայած այդ օգնություններին՝ ԱՄՆ-ը և Անգլիան ավելի շատ էին խանդավառված, քան Իրանը: Եթե Ուշերչիլ շնորհավորական նամակ հղեց Մոհամեմադ Ռեզա շահին, վերջինս շատ սառն արձագանքեց դրան՝ նշելով. «Ես համոզված եմ, որ Դուք արեցիք այն ամենը, ինչ հնարավոր էք, որպեսզի հասնեիք պատվարեր համաձայնության»<sup>253</sup>: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնքոնի Իդենն էլ պայմանագրի ստորագրման առիթով գերմորեն շնորհավորել էր Իրանի արտգործնախարար Արդյունակ Էնթեզամիին<sup>254</sup>:

Իրանի ժողովուրդը, ինչպես նաև Իրանի բանակը դժգոհությամբ ընդունեց նավթի հարցի լուծման այդ տարրերակը: Սա էլ հալածանքների պատճառ դարձավ Իրանական սպայակազմի համար: 1954թ. Իրանի թերթերը հաճախ տպագրում էին զինվորականների ձերքակալությունների, նրանց մահվան դատապարտման կամ ցմահ բանտարկությունների մասին: «Նյու Յորք Հերալդ Թրիբյուն»-ը նշում էր, որ զինվորականների ձերքակալություններն անմիջականորեն կապված են «նավթային հարցի» հետ: «Թայմսը» ընդունում էր, որ Իրանի ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ ձերքակալությունները և մահապատճենները ոչ այլ ինչ են, եթե ոչ «նավթի համաձայնագրի հավելումը, և այդ համաձայնագրի արդյունքը, որը մինչև այժմ խիստ վրդումունք է առաջացնում»<sup>255</sup>:

Ի՞նչ ստացավ ԱՄՆ-ն այս ամենից: Իրատեսական իր քաղաքականության շնորհիվ Միացյալ Նահանգները, որ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, ըստ էության, մասնակցություն չուներ իրանական նավթի շահագործման գործում, անգո-իրանական նավթային անհամաձայնության ժամանակ, դառնալով «միջնորդ», կարողացավ ձեռք բերել Իրանի «սև ուկու» 40%-ը: Իրանում իր «մասնագիտների» ներկայությունը, հնարավորություն էր ընձեռում հարկ եղած դեպքում միջամտել Իրանի ներքին գործերին և ազդեցության հա-

<sup>251</sup> Kenneth M. Pollack, *The Persian Puzzle*, p. 75.

<sup>252</sup> Эввелл-Саттон Л., Иранская нефть, с. 406.

<sup>253</sup> [www.pakyt.net/politics/cia-docs/nytimes-article/041600iran-archive-articles](http://www.pakyt.net/politics/cia-docs/nytimes-article/041600iran-archive-articles).

<sup>254</sup> Самыловский И.В., Экспансия американского империализма на Ближнем и Среднем Востоке, с.121.

վեսալ լծակներ ձևոք բերել այդ երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի նկատմամբ: Բացի այդ, մերձավորարևեսյան նավթը ռազմավարական նշանակություն ուներ, այն բավարարում էր Արևմտյան Եվրոպայում, Հարավարևեսյան Ասիայում և Հնողավոր Արևելքում տեղակայված Միացյալ Նահանգների ռազմական տեխնիկայի պահանջները: Մերձավորարևեսյան նավթը մատակարարվում էր Միջերկրական ծովում, Հնդկական և Խաղաղ օվկիանոսներում գտնվող ԱՄՆ-ի ռազմական նավատորմի միջոցով:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի նավթային ընկերությունները, որոնք մտել են ՄՆԿ-ի մեջ, իրենց գործունեության առաջին 3,5 տարիների ընթացքում ամենահամեստ հաշվարկներով ստացան 173,2 մլն դոլար մաքուր եկամուտ: Միևնույն ժամանակ Իրանին հատկացրած ԱՄՆ-ի օգնության ընդհանուր գումարը (Ներառյալ «4-րդ կետ», «անհատույց օգնություն», 4-րդ կետից հավելյալ տեխնիկական օգնություն, ռազմական աջակցությունները և ԱՄՆ-ի երկարաժամկետ փոխառությունները միասին) կազմում էր 168,2 մլն դոլար: Եվ ինչպես նշում էր «Պրավիդա» թերթը. «Իրանում Միջազգային կոնսորցիոն ստեղծելուց հետո Մերձավոր և Միջին Արևելքում չի մնացել ոչ մի խոչըն նավթահանք, որի շահագործմանը չմասնակցի ամերիկյան կապիտալը»<sup>255</sup>:

Ան թե ինչպիսի հաջողությունների հասավ ԱՄՆ-ը հիշյալ տարածաշրջանում ի հաշիվ Իրանի ծանր իրավիճակի:

Նոր պայմանագրի արդյունքում նավթից ստացվող եկամուտը Իրանում տարեկան աճեց. 1954–1955թթ. ընթացքում 34 մլն դոլարից մինչև 1956–1957թթ. 181 մլն: 1960–1961թթ. ստացան 358 մլն դոլար, իսկ 1962–1963 թվականներին՝ 437 մլն դոլար: Նավթային տարեկան աճող եկամուտի հետ միասին, 1953–1963թթ. Միացյալ Նահանգները Իրանին 500 մլն դոլար ընդհանուր արժեքով ռազմական օգնություն ցուցաբերեց: Օգտվելով այս ամենից շահն ավելացրեց ռազմական ուժերի թիվը՝ 120,000 զինվորից մինչև 200,000: Ավելացրեց նաև ռազմական բյուջեն, որը 1953թ. կազմում էր 80 մլն, իսկ 1963թ.՝ մոտ 183 մլն դոլար, հետագայում՝ 1977թ. այն հասավ 7,3 մլրդ դոլար<sup>256</sup>:

Հարկ է նշել, որ Իրանի պատմության մեջ տեղ գտած նավթի ազգայնացման իրադարձությունները դեռ երկար ժամանակ սպառնալիք էին Մերձավոր և Միջին Արևելքի՝ նավթով հարուստ այն երկրների համար, որոնք փորձում էին իրենց նավթի ազգայնացման հարցի շուրջ նոյնիսկ մտածել: Ուշադրության է արձանի 1956թ. օգոստոսին Դավթի արած հայտարարությունը. «Այնպիսի ակտիվների ազգայնացումը, որոնց մեջ ներդրվել է միջազգային կապիտալ... պեսոր է պահանջել միջազգային ինտերվննցիա»: Դավթը հնարավոր էր համարում ազգայնացնել միայն այն նավթը, «որի մեջ արտասահմանյան շահեր

<sup>255</sup> Правда, 23.10.1956.

<sup>256</sup> Abrahamian E., Iran Between Two Revolutions, p. 419–420. Abrahamian E., The Iranian Mojahedin, London, 1989, p.13.

ներգրավված չեն»<sup>257</sup>: Այդ առնչությամբ մի շարք հայտարարություններ են արվել նոյնիսկ ԱՄՆ-ի Կոնգրեսում և Սննատում: Անհրաժեշտ ենք համարում մեջքերել սենատոր Կեխովերի ելույթից մի հատված, որը նշանակալի դեր է խաղացել քազմազգ ընկերությունների հետաքննության գործունեության ժամանակ: 1957թ. փետրվարին՝ Կոնգրեսում «Եյզենհաուերի դոկտրինի» քննարկման առիթով, Կեխովերը հայտարարեց. «Եթե ինչ-որ պատճառով՝ Միջինարևելյան նավթով հարուստ որևէ երկիր ցանկանա ազգայնացնել իր նավթարդյունաբերությունը, ապա դրան անմիջապես կիազորդի... շահագրգության ընկերության անհապաղ դիմումը մեր կառավարությանը՝ պահանջերով պաշտպանել իրավունքները ինտերվենցիայի միջոցով... նավթային ընկերությունների պահանջն անմիջապես կիազորդի փաստացի ներխուժումը»<sup>258</sup>:

Այստեղից ակնհայտ է, որ տարածաշրջանում Միացյալ Նահանգների շահերի «տոնահարման» կամ, ավելի ճիշտ, ազդեցության նոր լծակներ ձեռք բերելու պարագայում, եթե ԱՄՆ-ի կառավարությունը ստանա այդպիսի «քրողք-նամակ», ապա գերտերությունն իրավունք կվերապահի իրեն միջամտելու այլ երկրների ներքին գործերին՝ խախտելով միջազգային իրավունքի նորմերը: Կամ էլ այդ պեսուրյունները կգրկվեն օգնության հատկացումներից: Որպես դրա ապացույց կարող ենք հիշատակել մի շարք երկրների օրինակներ. 1969թ. Պերուի կառավարությունն ազգայնացրեց «Խնքերնեյշլ Փետրոյիլում Քումիանին», դրան հաջորդեց ԱՄՆ-ից հատկացվող օգնության խիստ կրծատումն այդ երկրին: Ի պատճիս Ս.Ալիենդեի կառավարման ժամանակ ամերիկյան ձեռնարկությունների և բանկերի ազգայնացմանը՝ Վաշինգտոնն ամբողջովին դադարեցրեց իր տնտեսական օժանդակությունը Չիլիին: Վիետնամի և Լաոսի պատերազմից հետո ԱՄՆ-ն անմիջապես հրամարեց այդ երկրներին օգնություն հատկացնելու ծրագրերից:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է նշել, որ Իրանը, ի դեմս Մոհամեդ Մոսադեդի, փորձ արեց պաշտպանել իր երկրի շահերը՝ արդարացիորն հարգանք պահանջնով շրանի ինքնիշխանության հանդեպ: Փորձեց ազգայնացնել այն, ինչ գտնվում էր իր երկրի ընդերքում և շահույթ ստանալ դրանից՝ ի բարօրություն իր մողովդի, ձերքագատվելով գերտերությունների ազդեցություններից: Սակայն այդ պայքարում Իրանը պարտություն կրեց, քանի որ վճռական պահին մասնատվեց, և ազգային միասնության գաղափարին փոխարինելու եկան միջկուսակցական նեղ շահերը: Բացի այդ Իրանն այդ ժամանակ չէր կարող միայնակ պայքարել Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի նման պետությունների դեմ:

<sup>257</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, с. 96–97.

<sup>258</sup> Новая и новейшая история, №4, Москва, 1979, с 126.

Հետագայում ԱՄՆ-ի և Իրանի շահի միությունն առավել ուժեղացավ։ Միացյալ Նահանգները նշանակալի դիրքեր գրադացրեց Իրանի տնտեսության և երկրի կյանքի մի շարք այլ բնագավառներում։ Ահա այդ եր պատճառը, որ եր 1973թ. շահը հայտարարեց նավթի ազգայնացման մասին, ԱՄՆ-ը չընդունացավ դրան, ինչպես եղավ նավթի ազգայնացման առաջին փորձի ժամանակ։ 1973թ. մայիսին Իրանի կառավարությունը, ժամկետից 6 տարի շուտ լուծարքի ենթարկեց 1954թ. համաձայնագիրը<sup>259</sup>. 1970-ական թվականների կեսերին Իրանը դարձավ արևմտյան երկրներ նավթ արտահանող ամենախոշոր երկրներից մեկը։ 1979թ. Իրանում տեղի ունեցած Իսլամական հեղափոխությունից հետո, կառավարությունը չեղյալ հայտարարեց կոնսորցիումի հետ համաձայնագիրը և նրանց մենաշնորհատերերին վտարեց երկրից։ Իրանի ազգային նավթային ընկերությունը հաստատեց իր վերահսկողությունը երկրի նավթային բոլոր գործողությունների նկատմամբ։

Ի վերջո, տարիներ անց իրականություն դարձավ ինչպես Մոհամմեդ Մուսադեղի, այնպես էլ Իրանի ժողովրդի բաղձալի երազանքը։ Այժմ նրանք կարող են տնօրինել իրենց երկրի բնական հարստությունները ըստ իրենց պահանջների, և դրան այսօր չի կարող խանգարել գերտերություններից և ոչ մեկը։

<sup>259</sup> Шарипов У.З., Влияние конъюнктуры мирового рынка нефти на внешнеэкономическую политику Ирана, Нефтедоллары и социально-экономическое развитие стран Ближнего и Среднего Востока, Москва, с. 185–186.

ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1953-60 ԹԹ.

1953թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ ԻՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԾ «ԱՅԱՔՍ»  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայտնի է, որ Իրանի Խալամական Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև այսօր գոյություն չունեն դիվանագիտական հարաբերություններ, դրանք խզվեցին 1980թ. ապրիլի 8-ին: Որոշ պատմաբաններ գտնում են, որ դրա արմատները ձգվում են դեպի 20-րդ դարի կեսերը: Հատ նրանց, 1953թ. Իրանում տեղի ունեցած դեպքերը խորը ազդեցություն են բռնել իրանա-ամերիկյան հետագա հարաբերությունների վրա: Համաձայն Ս.Կ. Ֆարունի՝ Իրանի ժողովրդի ատելությունը շահի և Միացյալ Նահանգների հանդեպ համբնդիանուր այն հիշողության արդյունքն էր, որը կապված էր 1953թ. Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) աջակցությամբ իրականացված հեղաշրջմանը և դրան հաջորդող ամերիկյան միջամտությանն Իրանի քաղաքական, սոցիալական և տնտեսական կյանքին<sup>260</sup>:

Մենք, վերապահումով մոտենալով վերոհիշյալ գնահատականին, կարծում ենք, որ 1953թ. հեղաշրջումը խևապես սև թիվ թողեց իրանա-ամերիկյան հարաբերությունների պատմության վրա: Միաժամանակ կարծում ենք, որ պատմական նման հիշողությունը դժվար թե խոչընդոտ հանդիսանար երկու երրունիք դաշնակից պետությունների հետագա փոխհարաբերությունների վրա: Դա մեկնարանում ենք այն փաստով, որ ինչպես Ցարական Ռուսաստանը (հետագայում էլ՝ Խորհրդային Միությունը), այնպես էլ Մեծ Բրիտանիան քազմից միջամտել են Իրանի ներքին գործերին, ավելին, մի քանի դար հարստահարել և իրենց ազդեցության տակ են պահել երկիրը, սակայն դա չի խանգարում այսօր ԻԻՀ-ին շփվելու թի՛ Ռուսաստանի Դաշնության և թի՛ Անգլիայի հետ: ԱՄՆ-ի հետ Իրանի հարաբերությունների սրման պատճառները շատ ավելի խորն են և դուրս են մնում մեր հետազոտության շրջանակներից:

Այդուամենայնիվ, մինչև 1953թ. Իրանի ժողովուրդը կարծում էր, թե Միացյալ Նահանգների քաղաքանությունն անշահանդիր էր և նշանակալիորեն տարբերվում էր մյուս գերտերությունների՝ ԽՍՀՄ-ի և Անգլիայի քաղաքանությունից: 1953թ-ից հետո Իրանի ժողովրդի գգալի մասը հասկացավ, որ մյուս գերտերությունների նման, ԱՄՆ-ը ևս, հանուն իր շահերի, կարող է մի-

<sup>260</sup> Farsoun Samih K. & Mashayekhi Mehrdad, Iran Political Culture in the Islamic Republic, London and N.Y., 1992, p. 237.

ջամտել օտար երկրների ներքին գործերին, ինչի համար նոյնիսկ ստեղծվեցին հասուկ կազմակերպություններ:

Դեռևս 1947թ. ԱՄՆ-ում ընդունված Ազգային անվտանգության մասին օրենքի հիման վրա ստեղծվեց Կենտրոնական հետախուզական վարչությունը, որը գաղտնի գործողություններ իրականացնելու մասին դրույթ չէր ընդգրկում: Այդ օրենքի համաձայն՝ ԱՄՆ-ի նախագահի դեկավարությամբ ստեղծվեց Ազգային անվտանգության խորհուրդ, որը կարող էր ժամանակ առ ժամանակ հենվել ԿՀՎ-ի վրա: ԿՀՎ-ի ստեղծումից 2 ամիս հետո՝ 1947թ. դեկտեմբերի 1-ին, առաջին իսկ նիստի ժամանակ, ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհուրդն ընդունեց ինստ գաղտնի իրահանգ՝ 5412/2-համարով, որով ԿՀՎ-ին իրավունք էր վերապահելու գաղտնի գործողություններ իրականացնել օտար երկրներում, եթե դա բխում էր Միացյալ Նահանգների անվտանգության շահերից: Հրահանգում նշված էր, որ գաղտնի գործողությունները պետք է իրականացվեն այնպես, որ ԱՄՆ-ի կառավարությունն անհրաժեշտության դեպքում կարողանա իրածարվել դրանցից<sup>261</sup>:

Այլ խոսքով, ԱՄՆ-ը իր համար անհրաժեշտ պահին կարող էր միջամտել այլ երկրների ներքին գործերին՝ խախտելով ՄԱԿ-ի դրույթները: ԿՀՎ-ն կարող էր գործել՝ հենվելով սեփական տեղեկատվության վրա:

Փորձելով անուղղակի կերպով միջամտել զարգացող երկրների կոնֆլիկտային իրադրություններին, մինևոյն ժամանակ խուսափելով դրանց ուղղակի մասնակցությունից՝ նախագահ Հ.Թրումենը որոշեց մի շարք գործառույթներ տալ ԿՀՎ-ին: 1948թ. Ազգային անվտանգության խորհուրդը հասուկ իրահանգով ԿՀՎ-ի վրա դրեց զարգացող երկրներում «հասուկ գործողությունների» իրականացման աշխատանքը: Այդ գործողությունները գտնվում էին պետքարտուղարության, ԿՀՎ-ի և Պենտագոնի ներկայացուցիչներից բաղկացած կոմիտեի վերահսկողության տակ: Կոմիտեն (որը կոչվեց «Կոմիտե 40») հետագայում վերջնական որոշումներ է կայացրել ԱՄՆ-ի քաղաքական ճգնաժամային մի շարք հարցերի կապակցությամբ. օրինակ՝ 1953թ. Իրանում Մոսադեհի կառավարության տապալման, 1954թ. Գվատեմալա ներխումած վարձկանների, 50-ական թվականների կեսերին Լատում գաղտնի պատերազմի ծավալման, 1961թ. Կուրսա ներխումած վարձկանների կազմակերպման շուրջ<sup>262</sup>:

Եթե Հնդկաշխնում Միացյալ Նահանգները համեմատարար ավելի արագ անցան ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարին, ապա Մերձավոր և Միջին Արևելքում այդ գործընթացը զարգանում էր դանդաղ և դժվար: Վաշինգտոնի ուշադրությունը սևեռված էր տարածաշրջանում երկու առավել խոշոր

<sup>261</sup> «An Interim Report of the Select Committee to Study Governmental Operations with Respect to Intelligence Activities, United States Senate» Washington, 1975, p. 9.

<sup>262</sup> Newsweek, September 23, 1974, p. 13. Տե՛ս նաև How a Plot Convulsed Iran in '53 (and in '79) <http://www.nytimes.com/library/world/mideast/041600iran-cia-intro.html>

հակամարտությունների վրա: Առաջինը Մեծ Բրիտանիայի հետ Իրանի և արաբական երկրների սրված հարաբերություններն էին, իսկ երկրորդը՝ արաբախարյական հակամարտությունը: Միացյալ Նահանգները փորձում եր օգտվել այդ խառնակ իրավիճակից և խապար թուղացնել Ասզիայի ազդեցությունը իշխալ տարածաշրջանում:

ԿՀՎ-ի առաջին խոշոր և ըստ էության փորձնական քայլ այդ ուղղությամբ պետք է հանդիսանար 1953թ. Իրանում պետական հեղաշրջման կազմակերպումը, որի արդյունքում ԱՄՆ-ին անրաբեհած Իրանի կառավարությունը կիշխանազրկվելու:

1951թ. ապրիլին Իրանում նավթի ազգայնացման պատճառով երկրում առաջացած ծայրահեղ լարված իրավիճակի լուծման միակ ուժին Մեծ Բրիտանիան համարում էր պետական հեղաշրջումը, որով իշխանանկ կանեն վարչապետին, ով ոչ մի կերպ չէր համաձայնում առաջարկվող պայմանների հետ, քանզի այն չէր բխում իր երկրի շահերից:

1952թ. հուլիսին Մ.Մոսադեղը ի վերջո Մեջլիսից և շահից ստացավ լիազորություններ, որպեսզի կարողանա շարունակել պայքարը բրիտանացիների դեմ: Նաև լիազորություններ մինչ այդ ոչ մի վարչապետ չէր ունեցել: Սակայն լիազորությունների մեծացումը միանշանակ շնորհվեց նոյնիսկ Մոսադեղի «զինակիցների» կողմից և 1952թ. հուլիսին վարչապետի դեմ դուրս եկան իր նախկին համակիրներից շատերը: Նրանցից առավել հայտնին Այաթոլլա Արուդասեմ Քաշանին էր՝ աչքի ընկնող հոգնորականն ու քաղաքական ակտիվ գործիչը, ով օգրստովին ընտրվեց պատլամենտում որպես խոսնակ: Նա Մոսադեղի կոպահիայի ղեկավարներից էր, սակայն վարչապետի ձեռք բերած լիազորություններից հետո Քաշանին հեռացավ Մոսադեղից և նոյնիսկ ակտիվ մասնակցություն ունեցավ 1952թ. հուլիսին՝ նրա դեմ ուղղված բողոքների ժամանակ: —

Միացյալ Նահանգների պաշտոնյաներն այդ ընթացքում տեղեկություններ էին ստանում, այն մասին, որ Քաշանին նմանապես հանդիպում է «Թուղե» կուսակցության առաջնորդների հետ: Թուղեականները համաձայնվել էին օգնել նրան Մոսադեղին տապալելու և Միացյալ Նահանգների ազդեցության դեմ պայքարելու գործում: Կուսակցիայի մի շարք ազդեցիկ անդամներ ևս երես թերթեցին Մոսադեղից և շուտով լրեցին Ազգային ճակատի շարքերը, դրանց թվում էին՝ Հուսեին Մարքին, Արուդ Հասան Հաերիզադեն, Մոզաֆար Բաղայը, վերջինս զիսավորում էր «Իրանի աշխատավորների» կուսակցությունը<sup>263</sup>, ինչպես նաև Խալիլ Մալեքին՝ «Նիրույն սեվլուն» կուսակցությամբ:

1952թ. սեպտեմբերին Հ.Թրումենը և Ու.Չերչիլը վերջին անգամ միավին նոտա հղեցին Մոսադեղին՝ առաջարկելով նավթի հարցի կարգավորման ևս մի քանաձեւ: Մ.Մոսադեղն այն շնորհնեց, ավելին՝ հոկտեմբերի 22-ին խօց դիվա-

<sup>263</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, eds., Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran (Syracuse: Syracuse University Press, 2004).

նագիտական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ: Ահա հենց այդ ժամանակ էլ Անգլիայով առաջին անգամ խոսեցին հեղաշրջման անհրաժեշտության մասին: Սակայն Մեծ Բրիտանիայի ղեկավարությունը տարակուսում էր. այդ ծրագիրը չէր կարող իրականացնել միայնակ, քանզի առկա էր նաև ԽՍՀՄ-ի վտանգը: Դրա համար էլ 1952թ. նոյեմբերին Բրիտանիայի Գալոպնի հետախուզական ծառայությունից (SIS-ԳՀԾ) Քրիստոֆեր Մոնթեքյո Վուդհաուար և Արտաքին գործերի նախարարությունից Սևմ Ֆոլլ Ժամանեցին Վաշինգտոն՝ հանդիպելու ԿՀՎ-ի պաշտոնյանների հետ: Նրանք առաջարկում էին երկու երկրների կառավարության ջանքերով լուծել Երանում առաջացած խնդիրները: Այդ առաջարկը մվրում ԿՀՎ-ի պաշտոնյաններին զարմացրեց, քայլ նրանք խոստացան ուսումնասիրել խնդիրը: Վուդհաուարը և Ֆոլլը իրենց հետ քերել էին 15 իրանցինների անոններ, ովքեր, ըստ անզինական կողմից, կարող էին փոխարինել Մ.Մոսադեկին: Ցուցակը գլխավորում էր Ֆալլը Զահեդին<sup>264</sup>:

Գործողության իրականացման՝ բրիտանացինների հիմնավորումը պարզ էր՝ վերստանալ ԱԻՆԸ-ի նավթային կոնցեսիան: Միացյալ Նահանգներին դա թիւ էր մտահոգում. նրանց հոգում էր ազդեցության բացահայտ փոխարինման սպառնալիքը հօգուս Խորհրդային Միության:

Ըստ Էության՝ անգլիացինները հասկացան, որ անիմաստ է ավելացնել Հ.Թրումենի վարչակարգից եական քայլեր, քանի որ նրա նախագահական շրջանը մոտենում էր ավարտին: Բացի դա էլ, Թրումենի վարչակարգը գտնում էր, որ Մոսադեկը շատ զգոն էր «Թուղթի» և Խորհրդային Միության նկատմամբ և հավատում, որ իր ժողովրդի վատահությունը վայելող վարչապետը կվարողանա արդյունավետ պայքարել «Թուղթի» ազդեցության դեմ: Այդ ժամանակաշրջանում Երանում աշխատող Միացյալ Նահանգների գրեթե բոլոր պաշտոնյաները կիսում էին այն տեսակետը, որ «Թուղթի» գործունեությունը վտանգավոր չի Երանում, քայլ կդառնա այդպիսին, եթե իրավիճակը չվերահսկվի:

<sup>264</sup> Ֆ.Զահեդին ծնվել էր 1897թ.: Նա 1932թ. ստանձնել էր Թեհրանի ոստիկանապետի պաշտոնը: 1941թ. նշանակվել Սպահանի ղոփխայի գեներալ-հրամանատար: Եղորդոր համաշխարհային պատերազմի տարիներին կապված թ եղել հիմլերյան լուտեական ցանցի հետ և նոյնիկ Իրանում միացած գործերի մուտքեց հանու էլ շարունակում թ վարե ընդհատական բայրացի գործունեություն: Նա անգլիացինների կողմից ծերպակալվել էր և արտաքսվել Պահանջման: Ենթականության ստագման տարիներին նա սերութեան համագրծակցում էր ամերիկան խորհրդականների հետ: Իրանական ժամանակաշրջայի կայացման գործունեությունը: 1946թ-ից Իրանի Ֆարանգի դիմիքիայի հրանանատարն էր, իսկ 1949թ. Կրկն ստանձնեց Թեհրանի ոստիկանապետի ագրեցիկ պաշտոնը: 1950թ. շահի կողմից Զահեդին նշանակվեց սենատոր, իսկ 1951թ. ստանձնեց ներքին գործերի նախարարի պաշտոնը: Պարզվեց նաև, որ Ֆ.Զահեդին մասնակցել էր 1953թ. Գիտության ազգային ժողովուրության գլուխուն պահպանի Մասադար: Տերքակալվել էր սակայն շոտով պացան արձակվել: Նրա որդին՝ Արդեշիր Զահեդին, որը կորուրյուն էր ստացել Միացյալ Նահանգներում, 1950-1953թք. համոխանում էր Թեհրանում «Թրումենի ծրագրի 4-րդ կտոր» իրականացման անթրիլայս քաշակարգի դեմքարդենի հասուն օգնականը: ԿՀՎ-ն հավանություն տվեց Զահեդինի թեկնածությանը, քանի որ նա համարձակ էր, ամերիկանետ և միակն էր, ով քաշահայտ մրցուն էր գործառնության պաշտօնի համար: Յատկանշական է, որ Զահեդին միշտ աշքի էր ընկել միապետությանը հավատարին լինելու մեջ:

1953թ. Անգլիայի գաղտնի ծառայությունները որոշեցին գործել միայնակ: Անգլիացիները և գններալ Ջահերին սկսեցին ժողովրդին սաղբել բախումների կառավարության հետ և 1953թ. փետրվար-ապրիլ ամիսներին ջանուս էին բանակին իրենց կողմը քաշել: Սակայն նրանց ծրագրերը անհաջողության մատնվեցին:

Միացյալ Նահանգների պետքարտուղարությունում ևս նավթի շորջ քննարկումների ժամանակ մասնագետները վստահեցնում էին, որ Մոսադեղը Իրանում կրունկիզմին դիմագրավելու միակ այլընտրանքային ուժն է: Բրիտանացիները և ԱԻՆՀ-ի պաշտոնյաները հայտարարում էին, որ մի օր Մոսադեղը կիշխանագրկվի և «Թուրք» կուսակցության այլընտրանք չի լինի:

Այդուամենայնիվ, 1953 թվականը շրջադարձային էր լինելու Իրանի համար: Նախ 1953թ. հունվարի 20-ին տեղի ունեցավ ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Դ.Դ.Լյունինառուերի երդման արարողությունը, որով ազդարարվում էր նրա կառավարման ժամանակաշրջանը:

Ի դեպ, նորընտիր նախագահը Հանրապետական էր, իսկ այդ կոսակցության ավանդարար աշակցում են նախագային խոչը ընկերությունները: Նորընտիր նախագահի վարչակազմում դժվար էր գտնել քաղաքական գործչի, որը կապված չլիներ խոչը նախարարությունաբերողների հետ, ուստի նրանց շահերից բխում էր այն, որ Իրանի կառավարության բարձր պաշտոնները զրադացնեին ԱՄՆ-ին բարեհաճ քաղաքական գործիչներ: Եվ քանի որ ԱՄՆ-ը նախկինում դեմ էր արտահայտվել Իրանի նկատմամբ ուժ գործադրելու Մեծ Բրիտանիայի ծրագրերին, զգուշանալով Խորհրդային Միության անկանխատեսիլ քայլերից, նրանք որոշեցին համատեղ կազմակերպել գաղտնի գործողություն և այդ ձանապարհով լուծել ծառացած խնդիրները: Այդ ամենին զուգահեռ, 1953թ. մարտին մահացավ Վ.Ստալինը, ով իսկապես սարսափ էր ներշնչում արևմտյան տերությունների առաջնորդներին: Այդպիսով ստեղծվել էր հարմար պահ գործելու համար:

Հարկ է նշել, որ բրիտանական հետախուզությունը գործողությունն անվանել էր «Բոութ/Boot/՝ Ճշբակողիկ», սակայն հակամասադեյան այդ գործողությունն ամերիկացիները կոչեցին «Այարս/AJAX/ TPAJAX»<sup>265</sup>:

Նախածանց համարվող TP-ին նշանակում է՝ գործողությունը իրականացվելու է Պարսկականություն: Մենք կարծում էնք, որ անվան ընտրությունը պատահական չէր և ամերիկացիները, հղում տալով Հելլադայի հայտնի երկու անրածան ընկերներին՝ Այաքսներին, գործողությունը կոչեցին նրանց անունվ՝ ի նշան Իրանի շահի և ԱՄՆ-ի կառավարության համբեր բարեկամության: Սակայն ամերիկացի պատմարան Մ.Գափրովսկին, համացանցի միջոցով տեղեկացրեց մեզ, որ ամերիկացիները գործողությունը կոչել էին «Այարս»՝ 1950-ական թվա-

<sup>265</sup> The Iranian Journal of International Affairs, Tehran, 2001, No. 1, p. 111.

عبدالرضا هوشنگ، مهدوی، سیاست خارجی ایران در دوران پهلوی، ۱۳۷۰-۱۳۷۵، تهران، ۲۰۰۶، ص ۸۸۳-۸۸۴.

կանոներին ԱՄՆ-ում հայտնի օճառի անվամբ, իբրև թե «գնում են մաքրելու Իրանը կոմունիստական աղուց»:

1952թ. վերջերին և 1953թ. մարտին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնթոնի Շենքը բրիտանական հետախուզության ՄԻ-6-րդ բաժանմունքի գործակալների ուղևորությամբ երկու անգամ ժամանեց՝ Վաշինգտոն՝ գործողության ծրագիրը քննարկելու համար:

Առաջին այցի ժամանակ անգլիացիները և ԿՀՎ-ի աշխատակիցները քննարկեցին միայն գործարքի հարցերը: Քննարկումների ժամանակ ԱՄՆ-ի կողմից մասնակցություն ունեցան ԿՀՎ-ի տնօրենները Ալեքս Դավիթը և Բենջի Սմիթը:

1953թ. փետրվարի սկզբներին բրիտանացիների մեկ այլ խումբ այցելեց Վաշինգտոն: Փետրվարի 3-ին Ա.Դավիթի մասնակցությամբ տեղի ունեցավ ժողով, որտեղ բրիտանացիները գործարքում առաջին անգամ պաշտոնապես առաջարկեցին Քերմիթ (Կիմ) Ռուզվելտի<sup>266</sup> թեկնածությունը: Ամերիկացիները համաձայնեցին հարցը քննարկել Փաթ Դինի, Բենջիի և պիտքարտուղար Ֆութեր Դավիթի հետ:

Քննարկումները տեղի էին ունենում ինչպես բրիտանացիների հետ, այնպես էլ առանց նրանց: Տիհա այդպիսի քննարկումներից մեկի մասին է պատմում Ք.Ռուզվելտը: «Հանդիպումներից մեկի ժամանակ, Իրանում ԱՄՆ-ի դիսպան Լոյ Հենդերսոնը ասել է. «Մենք հայտնվել ենք անհոյս և վտանգավոր դրության մեջ, որտեղ մի խելազար փորձում է ինքնակամ միավորվել ոռուների հետ: Մենք այլընտրանք չունենք, քան շարունակել այդ նախաձեռնությունը»: Իսկ ինքը Ք.Ռուզվելտը Զ.Ֆ.Դավիթին վստահեցնում էր. «Դա հեշտ կիրականացվի: Անհնար է համոզված լինել, քայ որոշ հանգամանքներից ենթերվ՝ ես վստահ եմ: Մենք կարող ենք դա անել»<sup>267</sup>:

Հեղաշրջման ծրագիր քննարկման ժամանակ պիտքարտուղար Զ.Ֆ.Դավիթը նշել է, որ «եթե ոռուներին հաջողվի վերահսկվել Իրանը, ապա նրանք կվերահսկեն նաև Պարսից ծոցը: Դա նրանց վաղեմի երազանքն է»<sup>268</sup>, որն անրնդունելի էր ԱՄՆ-ի համար: Գրականության մեջ համար կարելի է հանդիպել վկայությունների, որոնց համաձայն ԱՄՆ-ի նախագահ Լյզենհաուերը ասրապիում էր Իրանը կոմունիստական ազդեցության տակ տեսնելու հետանքարից, դրանով էլ փորձում են արդարացնել կազմակերպված հեղաշրջումը: Դրա լավագույն ապացույցը նախագահ Էյզենհաուերի խոսքերն են. «ԱՄՆ-ի կառավարությունը կդիմի անհրաժեշտ միջոցների, որպեսզի կանխի կոմունիստական վտանգն Իրանում»<sup>269</sup>:

<sup>266</sup> 37-ամյա Քերմիթ Ռուզվելտը, 1901-1909թթ., ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բոոը Սերձավոր և Սիցիլ Արևելքում ԿՀՎ-ի ներկայացուցիչն էր:

<sup>267</sup> Roosevelt Kermit, Countercoup: p 18.

<sup>268</sup> Lenczowski George, "American Presidents and the Middle East", London, 1990, p. 37.

<sup>269</sup> Нишанов М. "Антимпериалистическое движение в Иране (1951-1953)", Ташкент, 1973, с. 115. Материалы по Востоку. Ташкент, 1966, с. 39.

Բացի այդ, 1953թ. ապրիլին Իրանի վարչապետ Մ.Մոսադեղը հանդես եկավ բացահայտ ելույթով, ըստ որի՝ «Իրանը չի մասնակցի Միջին Արևելքի պաշտպանական ոչ մի կազմակերպության»<sup>270</sup>: Խոկ սա բավական համարձակ մարտահրավեր էր Միացյալ Նահանգներին, քանզի վերջինս ցանկանում էր տարածաշրջանում ստեղծել հզոր կազմակերպություն Իրանի մասնակցությամբ: ԱՄՆ-ն Իրանի կառավարության նկատմամբ փոխեց իր վերաբերմունքը հատկապես այն բանից հետո, երբ Իրանի օրինակով՝ Զամալ Արդել Նասերը, Կահիրենում 1953թ. մայիսին Դավիթի հետ ունեցած հանդիպման ժամանակ, հրամարվեց աջակցել ամերիկյան ծրագրերին Մերձավոր և Միջին Արևելքում<sup>271</sup>: Այդ բանից հետո ԱՄՆ առանց երկմուկու միավորվեց Մեծ Բրիտանիայի հետ:

Մոսադեղը բարդացնում էր իր վիճակը նաև երկրում: Նա երկրից վտարեց շահի մորը և երկվորյակ քրոջը՝ Աշորաֆ Փահլավիին, ծրագրել էր վտարել միապետին ևս: «1953թ. փետրվարին Մոսադեղը խորհրդութ տվեց ինձ, — գրում է շահը, — ժամանակավորապես հետանալ երկրից: Նրան իր որդեգործ քաղաքականության հետ ազատ թողնելու և որոյ չափով էլ նրա նյութած դավերից ու խարդավանքներից հեռու մնալու նպատակով՝ համաձայնեցի: Մոսադեղն առաջարկեց, որ ճանապարհորդության ծրագրը չիրապարակվի: «Հակառակ որոյ գգուշությունների՝ զայտնիքը բացահայտվեց: Ժողովուրդը հանդես եկավ զանգվածային ցուցերով և դրանով արտահայտեց շահի հանդես ունեցած իր հրամանի հավատարմությունը, և ես փոխեցի մտադրություն ու մնացի երկրում»<sup>272</sup>:

Իրադարձություններն այդ ընթացքում էլ ավելի շիկացան, քանի որ Իրան օգնության մեջ կարիք ուներ: Անգինա թույլ չէր տալիս վաճառել նավեր, ԱՄՆ-ը անհրաժեշտ քանակությամբ օգնություն չէր հատկացնում, զանձարանը դատարկ էր, գլուխ էր բարձրացրել գործազրկությունը: Նախազահ Էյզենհաուները նախազգուշացրեց վարչապետին, որ մինչև նավթի խնդիրը չուժի, Միացյալ Նահանգներն օգնության չափը չի ավելացնի: Վարչապետը իր հերթին հայտարարում է, որ ԱՄՆ-ը պետք է լրացնից օգնություն մատակարարի Իրանին, որպեսզի զերծ պահի վերջինիս կոմունիզմի վտանգից:

1953թ. մարտին Ք. Ռուզիկետը կարձակ այցով զայտնի ժամանեց Իրան՝ նախատեսվող հեղաշրջման մանրամասները տեղում ուսումնասիրելու համար: Գործողության ծրագրը հաստատել էին պետքարտուղար Ջոն Ֆուրեր Դավիթը, նրա ներքայը՝ ԿՀԿ-ի տնօրեն Ալեն Դավիթը և պետքարտուղարի տեղակալ՝ ԿՀԿ-ի նախկին տնօրեն, գեներալ Ռուդի Բեղի Սմիթը: Էյզենհաունը լիովին համաձայն էր նրանց հետ: Սակայն ծրագրը անհաջողության դեպքում նախազահը, ինչպես նաև պետքարտուղարը և ԿՀԿ-ի տնօրենը հերքելու էին իրենց առնչությունը հեղաշրջման կազմակերպմանը:

<sup>270</sup> Дорошенико Е.А., Борьба народов Азии за мир (1945–1961), Москва, 1962, с. 35.

<sup>271</sup> Кременюк В.А., Борьба Вашингтона против революции в Иране, М., 1984, с. 15.

<sup>272</sup> Սփիաման Ռեզա Շահ Փահլավի, Սուածելություն հայրենիցին համար, էջ 198., Mohammad Reza Pahlavi The Shah of Iran, Answer To History, New York, 1980, p. 88.

Հետաքրքրական է, որ դեռևս 1953թ. մարտին «Նյու Յորք Թայմսը» տպագրեց մի հոդված, որից պարզորդ կերպով երևում էր, որ գեներալ Զահենին պատրաստ էր ստանձնելու վարչապետի պաշտոնը. Զահենին նշում էր, որ ամենից առաջ միջոցներ կձեռնարկի ներքին կարգուկանոնի վերականգնման և սահմանադրական կառավարման ուղղությամբ: Այսուհետև կփորձի պարզություն մտցնել Իրանի արտաքին քաղաքականության մեջ: Եթե այդ միջոցառումներն իրականացվեն, ըստ նրա՝ նավթի հարցը շատ արագ կլուծվի: Նավթից ստացվող եկամուտը կկանխի տնտեսության քայլայման վտանգը<sup>273</sup>: Փաստուեն, արդեն սկսել էր գործել քարոզական մեքենան:

1953թ. մայիսի կեսերին ԿՀՎ-ի խորհրդական Դոնալդ Վիլբերը և ԳՀԾ (SIS) պաշտոնյա Ռորման Դարրուշաերը<sup>274</sup> հանդիպեցին Նիկողայոս հեղաշրջման նախնական ծրագիրը կազմելու համար: Մայիսի 13-ից մինչև մայիսի 30-ը Վիլբերը և Դարրուշաերն աշխատեցին հեղաշրջման նախնական ծրագրի վրա, կապ պահպանելով ԿՀՎ-ի շտաբ-կայանի և Թեհրանում ԿՀՎ-ի մասնաբժի հետ:

Երկու կողմերը ծրագրի նախնական քննարկումից առաջ ներկայացրին Իրանում ունեցած իրենց հսարավորությունները: Դարրուշաերը Վիլբերին ներկայացրեց Իրանում գործող ԳՀԾ-ի քաղաքական գործողությունների ցանցը, որը գործում էր Ռաշիդյան<sup>275</sup> կուբը եղայրների միջոցով: 1952թ հուլիսից Ռաշիդյան եղայրները Զահենիի հետ սկսեցին դավեր սյուրել Մոսադեհի դևս: Հետո անզիջացիները զարգացրին հեղաշրջման նախնական ծրագիրը, ըստ որի՝ Ռաշիդյան եղայրները պետք է օգտագործեն իրենց ցանցը՝ թեհրանում վերահսկողությունը իրենց ձեռքը վերցնելու համար, այնուհետև ձերքակալեին Մոսադեհին և նրա նախարարական կազմը: 1952թ. նոյեմբերին Վուդհաուսը և Ֆոլլ հենց այդ առաջարկով էին նեկել Միացյալ Նահանգներ: Այն իր հետ Նիկողիա էր տարել նաև Դարրուշաերը:

<sup>273</sup> The New York Times, 28.03.1953.

<sup>274</sup> Դ.Վիլբերը Երևան տարիներ աշխատել էր Իրանում և Սերծանի Արևելքի մի շարք երկրներում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել է Ռազմավարական ծառայության գրասենյակում, որը ԿՀՎ-ի նախահմբն էր: Դարրուշաերը և Երկար տարիներ ծառայել է Իրանում: Ժամանակին նաև մասնակցել է ԳՀԾ-ի քաղաքական գործողություններին: Այդ ժամանակ նա զիսավրում էր ԳՀԾ-ի Իրանի քամին:

<sup>275</sup> Ռաշիդյան եղայրները երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր աշխատում էին անզիջացիների համար և ստեղծել էին շիման մի ցանց, որտեղ ընդգրկվել էին Իրանի քաղաքական վերնախավի շատ անդամներ՝ քաղաքական գործիչներ, պալատականներ, ոսօնվական սպաներ, գործարարներ, երերոյի խօսքականներ, հոգեորականներ, ներառայական պաշտամնենի անդամներ և այլք: 1951թ. ապրիլին, եթե Իրանում ազգայնացվեց նախարարությունները, այդ ցանցի զիսավրու Խնդիրը էր անկայունացնել Մոսադեհի կառավարությունը: Ռաշիդյանները այն իրավանացնեմ էին մանուկում համասնային հոգվածներ տպագրելով, ցույցեր կազմակերպելով, փորձում էին ազդեցիկ մարդկանց հակառակ Մոսադեհին և այլն: Անզիջացիները նրանց անեկան հասանացնում էին 10,000 ֆուն սրբազն մուտագրապես համարժեք է 28, 000 դոլարին, ինչը քավական մեծ գումար էր այդ ժամանակ:

Վիլբերը Դարրուշակին ներկայացրեց Իրանում ԿՇՎ-ի գլխավոր քաղաքական գործողությունների ցանցը<sup>276</sup>, որը կարող էր օգտակար լինել նախատեսվող գործողության իրականացման ժամանակ:

Վիլբերը և Դարրուչաները զարգացրին հեղաշրջման նախնական ծրագիրը, որը բաղկացած էր 6 կետից:

— Ի-Թերիանի ԿՀՎ-ի բաժանմունքն անմիջապես սկսում էր անկայունություն սերմանել Մուսաղեղի կառավարության դեմ քարոզչության միջոցով:

II-Ֆ. Զահեղին անմիջապես ձեռնամուխ պետք է լիներ կազմակերպելու քանակային սպասներից բաղկացած ցանց՝ իրականացնելու հեղաշրջման ուղմական կողմից՝ օգտագործելով ԿՎՀ-ի և ԳՀԾ-ի կողմից հատկացրած 60,000 դոլարը (որից 35,000 հատկացնում էր ԿՎՀ-ն, իսկ 25,000՝ ԳՀԾ): Ասիրամելչության դեպքում ԿՎՀ-ն կփորձեր առանձին «հատկացումներ» կատարել ազեղին սպաներին:

III-Իրանում ԱՄՆ-ի Դեսպան Լ.Հենդերսոնը և Միացյալ Նահանգներից մի անանոն գործակալ պետք է ջանան ստանալ շահի համագործակցությունը՝ վաճառքում Մոսարեղի փոխարեն Ֆ.Զահենիին նշանանելու հարցում:

VI-Ռաշիդյանները «կկաշտեն» Խրանի պաղամենտի զգալի թվով անդամներին, որպեսզի «զբերե օրինական» Կերպով քվեարկեն Մոսահեղի կառավարութան գրման օգտին:

Վ-Հեղաշրջման օրը Զալիխն և Քեյվանին<sup>277</sup>, Ռաշիոյան եղբայրները, կրոնավորները և շուկայի առաջնորդները կկազմակերպեն հազարավոր մարդկանցից քաղկացած ցույց, թեսթ կնատեն<sup>278</sup> պատղամենուու ու կրնադատեն Մոսահելին, որ Իրանը տանու է կրծանման, ինչպես նաև նրան կմեղադրեն «հակակրոնական» լինելու մեջ։ Սա Կաշխատեցնի մեխանիզմը և «գրեթե օրինա-

<sup>276</sup> Այս ասեղովկը էր 1940-ական թվականների վերջինից՝ հակառակութական գրքովորություններ ծավալելու համար, երա գալուստագիրը և ՏՊBEDAMN: Այդ ցանցի շրջանակներում Վիլբրու և ԿԴԿ-ի մոտ երաբարձրություն տպագրում էին հոդվածներ, ծարականներներ, թուղթներ, գրքեր, այնուհետև ցանցում աշխատող իրանցիների միջոցով րազմանալու էին պատկերներ: ԿԴԿ-ի շահարկություններում նաև հակառակութական կազմակերպություններ հնաշիմք էին «Պան-իրանական կուսակցությունը», Իրանի «Ազգային սոցիալիստական աշխատավորութափական կուսակցությունը» (SOMKA), առաջնային «Աշխատավորական կուսակցությունը»: Այս կուսակցությունները TPBEDAMN-ի մեջ էին և նրանց Մշակումն ֆինանսավորում էին, որպեսին անհնարինակ հարձակվեն բույսեականների վրա: Նրանք Վճարում էին նաև հոգևորականներին, որպեսին նրանց քննադատության Սյունիքամբ և «Թուժենին»: Եվ շատ համար TPBEDAMN ցանցն այնպիս էր գործում, որ դրա մեջ մերժակած անձիք պատվիրացնում անզամ չլունին, որ ներարկվում են ԿԴԿ-ի մամիշաւույշիային: Mark Gasiorowski and Malcolm Byrne, Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

<sup>277</sup> 1950թ. վերջին և 1951թ. սկզբներին 2 հիանցիներ Ալի Զալիխին և Ֆարուր Բժելկանին, սկսեցին համագործակցել ԿՀՀ-ի հետ։ 1951թ. հուլիսին, Երանց սարդարիք արդյունքով, թուղթավաճերը ցույ կազմակերպեցին ընդուն Ավերիլ Հարիմանի այցի։ Նրանց իրենց ցանցում ունեն 100 գործակալ են։

<sup>278</sup> Բայց կոտավարության գրողությունների դեմ ուղղված պահապահության մեջ, եթզ դժողով խնդրեց տեղապահության մեջ անձնանշանի վայրերում (Նզկիր, Մեջլիս, դեսպանատուն, պալատ) և մեն ինձանությունները բարձրացնելու համար:

կան» կերպով Մեջիսը կրվեարկի հօգուտ Մոսադեղի պաշտոնանկության: Հենց այդ նոյն ժամանակահատվածում Զահեղի ռազմական ցանցը քայլեր կձեռնարկի կանխելու «Թուղե» կուսակցության, մոսադեղամետ դաշղայի ցեղերի հնարավոր հակազդեցությունը:

VI-Եթե այդ «գրեթե օրինական» ջանքերը չիրականանան, Զահեղի ռազմական ցանցը բռնությամբ կօպավիր իշխանությունը<sup>279</sup>:

Ըստ ծրագրի՝ ԱՄ-ի հատուկ ներկայացուցիչը պետք է հանդիպեր շահին և ներկայացներ Միացյալ Նահանգների ու Մեծ Բրիտանիայի ընդհանուր տեսակետը (մեջ են թերփու կարևոր կետերը).

1. Երկու կառավարությունները նավթի իմորֆին տախու են երկրորդական տեղ:
2. Գլխավոր ինժերն է աջակցել Իրանի ազատությանը և հեռու պահել նրան Խորհրդային Միության ուղեծրից:
3. Ներկա դինաստիան լավագույն պատվարն է Իրանի ազգային ինքնիշխանության համար:
4. Քանի դեռ Մոսադեղը իշխանությունում է, ԱՄ-ը ոչ մի օգնություն չի տրամադրի Իրանին:
5. ԱՄ-ը և Միացյալ Թագավորությունն օգնություն կհատկացնեն միայն նոր կառավարությանը:

Այնուհետև սկսվում են իրական սպառնալիքներ՝ շահը պետք է իր ձեռքը վերցնի Մոսադեղի տապալման գործը, այլապես երկրի քայլայման պատասխանատվությունը կընկնի իր վրա: Դրան կիաջորդի շահի դինաստիայի տապալումը, իսկ ԱՄ-ը և Ասգլիան այլևս նրա թիկունքում կանգնած չեն լինի: Պահանջում էին նաև ձերբակալել «Թուղե» կուսակցությունից ու Ազգային ճակատից նվազագույնը 100 անդամի<sup>280</sup>:

Մայիսի 30-ին Վիլբերը և Դարրուշաերն, ավարտելով այդ տարրերակի բննարկումը, կրկնօրինակներն ուղարկեցին Վաշինգտոն և Լոնդոն:

Հունիսի 10-13 Բնյրություն հանդիպեցին Դ.Վիլբերը, Ք.Ռուզվելտը, Ռոջեր Գոհրան և Զորջ Քարոլը՝ ծրագրի վրա հավելյալ աշխատելու համար: Հունիսի 15-ին Վիլբերը և Ռուզվելտը ժամանեցին Լոնդոն և հանդիպեցին ԳլՇ-ի դեկավարների հետ: Հունիսի 17-ին նրանք վերադարձան Վաշինգտոն և վերջնական տեսքի թերեցին ծրագիրը՝ համատեկելով Բնյրություն և Լոնդոնում տեղ գտած վերանայումները: Վերջնական ծրագիրն, ընդհանուր առմամբ, Նիկողայի նախնական ծրագիրն էր, պարզաբան ավելացվել էին որոշ դետալներ, հատկապես դրա ֆինանսավորման և վերջնակետին հասնելու պայմանների վերաբերյալ: Վերջնական ծրագրով Զահեղին 60,000 դոլարի փոխարեն տրվելու էր 75,000 դոլար: Նրանք պետք է ձերբակալեին Մոսադեղին, նրա հիմնա-

<sup>279</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, eds., Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran. [www.nytimes.com/library/world/mideast/iran-cia-intro.pdf](http://www.nytimes.com/library/world/mideast/iran-cia-intro.pdf)

<sup>280</sup> Initial Operational Plan for TPAJAX as Cabled from Nicosia to Headquarters on 1 June 1953, Appendix A, [www.nytimes.com/library/world/mideast/iran-cia-intro.pdf](http://www.nytimes.com/library/world/mideast/iran-cia-intro.pdf)

կան զինակիցներին, ինչպես նաև 100 ակտիվիստ թուղթականների: Իրենց ձեռքը պետք է վերցնեին զլսափոր գորամասերի շտաբ-կայանները, զինվորական ռադիոկայանները, Թեհրանի ռադիոկայանը, կենտրոնական հեռախոսակայանը, պառամենտը, ազգային բանկը և Մոսադեհի տունը<sup>281</sup>:

Այսպիսվ, Ա.Դալեսի երաշխավորագրերի հիման վրա Եյգենհաուերի վարչակազմը հաստատեց հեղաշրջման ծրագիրը, և այն իրականացնելու «պատիվը» ստացավ Ք.Ռուզվելտը: Սակայն կար մի խնդիր, որ հուզում էր պետքարտուղար Դալեսին. «Մենք պետք ենք իշխնք, որ Կիմը անձամբ ծանոթ է Նորին Մեծությանը: Եվ նա շատ նշանավոր ընտանիքից է: Եթե նա կարողանա հեռու մնալ տեսադաշտից և խուսափի իրեն ճանաչող մարդկանց հետ հանդիպումներից, հատկապես շահից, ես կարծում եմ, որ ամեն ինչ շատ լավ կանցնի»<sup>282</sup>: Դալեսն անհանգուտացած էր, բանի որ սկզբնական շրջանում Մոհամեդ Ռեզա Փահլավին կտրականապես դեմ էր հեղաշրջման գաղափարին և համաձայն միայն իրավիճակի բարդացման ու արտաքին ճնշումների հետևանքով: Ամեն դեպքում, նշանակայի ըննարկումներից հետո Ալեքսանդրը թույլ տվեց հավաքագրել մարդկանց, որպեսզի տապալեն Մոսադեհին:

Բացի Միացյալ Նահանգների շահերից Դալեսն եղայրները ունեին իրենց անձնական շահերը<sup>283</sup> Մոսադեհին տապալելու համար: Եվ նոյնիսկ Եյգենհաուերը իր հուշերում արձանագրել է այն փաստը, որ ԱՄՆ-ի ոչ մի պետքարտուղար այնքան ժամանակ և ուշադրություն չի հատկացրել մերձավորաբեկյան գործերին, որքան Դալեսը<sup>284</sup>:

Ի դեպ, ինչպես իրավացիորեն նշում է Ք.Ռուզվելտը, «Այսրա» գործողությունը միավորելի էր աշխարհի մի շարք հայտնի քաղաքական գործիչների՝ Իրանի շահ Մոհամեդ Ռեզա Փահլավիին, Անգլիայի վարչապետ Ուիլսոնու Չերչիլին, արտգործնախարար Էնթոնի Ինդենին և մի շարք այլ բրիտանացիների, ԱՄՆ-ի նախագահ Եյգենհաուերին, Զոն Ֆուստեր Դալեսին, ԿՀՎ-ի տնօրին Ալլեն Դալեսին և այլոց: Այդ միությունը ձևավորվել էր Իրանի վարչապետ, դոկտոր Մոհամեդի Մոսադեհին իշխանազրկելու նպատակով:

Մոսադեին իր գործունեությամբ փաստորեն խանգարում էր ժամանակաշրջանի գրեթե բոլոր նշանավոր քաղաքական գործիչներին: Եսկ Իրանում Մոսադեին օրեցօր մնացնում էր իր լիազորությունները՝ փորձելով սահմանա-

<sup>281</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, eds., Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

<sup>282</sup> Roosevelt Kermit, Counter coup, p. 121-122.

<sup>283</sup> Եղերեւովան բանի տնօրինելու մեջ՝ Ֆրենկ Թիարլուց (որի հետ Ա.Դալեսը ժամանակին գործնական հարաբերությունների մեջ էր) ԱՄՆ-ի տնօրինության անդամ էր: Խոկ նոյնորդյան «Անդիվեն ընթ Բրոմվի» գրասենյակը, որտեղ Դալեսն եղայրները գործելուների էին, երկար ժամանակ իր գործերն իրավանացնում էր Վերո նշանակած ընկերության հետ: Մի խորսոր, Իրանի նախարարության անդամությունը, բրույր խորհրդինքի քահանա, ամերիկանորդին բախտիմ էր նաև Դալեսների շահերին: Անո թե ինչնոր երացաւը այդպահ այդանունը գործությունը Իրանում: Սերգеев Ф.М., Роль ЦРУ в свержении правительства Мосаддика в 1953г., Документальные очерки, Новая и Новейшая история, N 4, 1979, с. 120.

<sup>284</sup> Боронов Р., Нефть и политика США на Ближнем и Среднем Востоке, Москва, 1977, с. 37-38.

փակել շահի իրավունքները: Շուտով Ազգային ճակատի ավանդապաշտ և ժամանակակից թևերի միջև տարածայնությունները հասան զագարնակետին, երբ Մոսադեղը Մեջլիսից խնդրեց իր արտակարգ լիազորությունները երկարացնել ևս 12 ամսով: Ընդդիմանալով խնդրանքին՝ կղերական մի շարք գործիչներ հեռացան Ազգային ճակատից և կազմեցին իրենց սեփական՝ «Խալամական Փակ խմբակցությունը» (Ֆրակցիոն-և Խալամ)<sup>285</sup>: Չնայած այդ ամենին 1953թ.՝ հունվարին, Մեջլիսը բավարարեց Մոսադեղի արտակարգ լիազորությունների ժամկետը երկարացնելու հայցը: Շահը դժկամորդն այն հաստատեց:

ԱՄՆ-ի նախագահական ընտրություններից և Եյզենհատուերի երդման արարողությունից հետո, դեսպան Լոյ Հենդերսոնը վերադարձավ Թեհրան, Մոսադեղի հետ իր քննարկումներին: Ի դեպ, մայիսի 30-ին Հենդերսոնը հանդիպեց շահին և հարցրեց, թե ինչ կարծիք ունի նա Զահենդիի վարչապետ դառնալու մասին: Շահը պատասխանել է, քանի որ Զահենդին «փնտելելուուղ հսկա» չի, ապա նրա թեկնածությունն ընդունելի կիխնի, եթե նա ունենա զգայի աջակցություն ժողովրդի կողմից, իշխանության զա օրինական ճանապարհով և Մեծ Բրիտանիայից կամ Միացյալ Նահանգներից կարողանա ստանալ «ծանրակշիռ տնտեսական օգնություն»: Շահը Հենդերսոնին բացատրել է, որ Մոսադեն առավել ընդունակ է լուծել առկա նավթային վիճը, քան ուզմական հեղաշրջմամբ իշխանության եկած Զահենդին<sup>286</sup>:

Այսպիսով, 1953թ. հուլիսի 1-ին գործողությունը կյանքի կոչելու իրենց համաձայնությունը տվեցին Անգլիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը, արտգործնախարար Էնթոնի Խենքը, իսկ հուլիսի 11-ին ԱՄՆ-ի նախագահ Դուայը Եյզենհատուերը և պետքարտուղար Ջոն Ֆուրեր Դավիթը<sup>287</sup>:

Ա.Դավիթը չէր կարող իրեն հաշիվ չտալ, որ խաղաքարտի վրա դրված է ոչ միայն ԱՄՆ-ի՝ որպես գերտերության հենինակությունը, ԿՀՎ-ի վարկը, որը ուժ էր հավաքում և փորձում էր մտնել միջազգային ընդարձակ քատերարեմ, այլև իր՝ որպես հետախուզության դեկավարի, սեփական հենինակությունը: Ա.Դավիթը ԿՀՎ-ին վերաբերվում էր նախ և առաջ որպես արտաքին քաղաքականության մեջ հաջողության հասնելու զաղոտնի գործիքի, որին դիվանագիտական ուղիներով հնարավոր չէր լինի հասնել: Այս գործողության ընթացքից մեծապես կախված էր Ա.Դավիթի հետազա դիրքի ամրապնդումը և՝ որպես ԿՀՎ-ի դեկավարի, և՝ որպես ԱՄՆ-ի նախագահի ազդեցիկ խորհրդականի: Այդ ամենը նկատի ունենալով՝ Ա.Դավիթը շատ լուրջ էր վերաբերվում Իրանում պետական հեղաշրջում կազմակերպելու գործընթացին: Այն ԿՀՎ-ի՝ այդ տիպի ամենախոշոր գործողությունն էր:

<sup>285</sup> Abrahamian Ervand, Iran Between Two Revolutions, Princeton, New Jersey, 1983, p. 276.

<sup>286</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

<sup>287</sup> Rooselvet Kermit, Countercoup, p. 1-19

Պետական մակարդակով կազմակերպվող գործողությանը գալիս էին «օգնելու» ինչպիս քարոզչությունը, այնպես էլ մի շաբթ պաշտոնյաների կողմէ հայտարարությունները Իրանի գործող կառավարության հասցեին: 1953թ. հովհանքին Զ.Ֆ.Դավթեան արտահայտուց ԱՄՆ-ի հակակրանքը Իրանի կառավարության հանդեպ: «Մենք գտնում ենք, որ անհնար է համագործակցել Մոսադեկի հետ, և ցանկացած նոր՝ ոչ կոմոնինիստական կառավարություն, որն Իրանում իշխանության զլլիվ կզա, մեզ համար ավելի գերադասելի է, քան այսօրվա կառավարությունը»<sup>288</sup>: Այս հայտարարությունը կարելի է համարել Մոսադեկի դատավճիռը, քանի որ դրանից հետո սկսվեց իեղաշրջման ծրագրի իրականացումը:

Մեկ այլ հանդիպման ժամանակ պիտքարտուղարը հայտարարեց. «Իմ կառավարությունն անհանգստացած է Իրանում կոմոնինիստական կուսակցության անօրինական գործունեությամբ և Իրանի կառավարության անուշադրությամբ: Այդ զարգացումներն անկանությամբ ավելի կրծքագործական ԱՄՆ-ի կողմից օգնության տրամադրումն Իրանին»<sup>289</sup>:

Թե՛ Անգլիան և թե՛ ԱՄՆ-ը համոզված էին, որ եթե ընդհանրապես հնարավոր է համաձայնության գալ, ապա միայն մեկ այլ և ոչ Մոսադեկի կառավարության հետ: Անհրաժեշտ էր ցանկացած միջոցներով, ներառյալ նաև Իրանում առկա ուժերը, քարոզչությունը և դիվանագիտական ձևումները Մոսադեկին չեղոքացնել:

Պետքարտուղար Դավթեան՝ վերը նշված խոսքերին արագ արձագանքեցին ամերիկյան մի շաբթ թերթեր և ամսագրեր, որոնցից էր նաև «Եյո Յորք Փոստ»-ը, որն այդ օրերին գրեց. «Մոսադեկի կառավարությունը մինչև տարվա վերջ կտապալվի... Հավանական է, որ Մոսադեկը կիշխանագրկվի զորքի միջոցով..., որը սերտորեն կապված է Միհայլ Նահանգների հետ և նրանցից ստանում է ժամանակակից պապազինություն»<sup>290</sup>:

Հովհանք 19-ին Վիլբերի թիմը ԿՀՎ-ի տեղեկությունների հիմնա վրա կազմեց լայնածավալ քարոզչական նյութեր և ուղարկեց Թեհրան: Հովհանք 22-ին ԿՀՎ-ի ներկայացուցիչներն այդ կողմերը տարածեցին TPBEDAMN-ի և Ռազմական ներկայացուցիչների ցանցով, որոնք տպագրվեցին 20 թերթերում: Նյութերի մեծ մասը օգտագործեցին Թեհրանում, մասացձ՝ Ասրաքատականում: Եվ ընդհանրապես 1953թ. ամռանը վեց նոր թերթեր «հանկարծ» լույս տեսան Թեհրանում, դրանք բոլորը չարախոսում էին Մոսադեկին: Հայտնի իրանագետ Ռիշարդ Քոթթամը, ով այդ տարիներին նաև հանդիսանում էր Իրանում ԿՀՎ-ի քարոզիչներից մեկը, նշում է, որ ամառվա վերջին Իրանի թերթերի 4/5 մասը գտնվում էր ԿՀՎ-ի ազդեցության տակ: Օգոստոսի սկզբներին Մոսադեկի իրամանով փակվեցին

<sup>288</sup> ایرادج ذوقی، رقتار سیاسی آمریکا در قبال نهضت ملی شدن صنعت نفت ایران، ۱۳۴۴-۱۳۴۳، تهران، ۱۹۸۰، ص ۱۷۷.

<sup>289</sup> پوراهان الکساندر و آن دانز، تاریخ میستنت روایت دی جانبه ایران و ایالات متحده آمریکا، تهران، ۱۹۷۸، ص ۲۷۸.

<sup>290</sup> The New York Post, 13.07.1953. Стік Білк Новая и новейшая история, N4, 1979, с. 119. Новое Время N 2, 1980, с. 28.

ընդիմադիր մի շաբթ պարբերականներ: Մոսադեջի դեմ ԿՀՎ-ի ջանքերով «Ան քարոզություն» էր իրականացվում. կեղծելով իրականությունը՝ վկայակոչում էին, թե Մոսադեջը ծագումով հրեա է<sup>291</sup>:

1953թ. հուլիսի 19-ին Կիմ Ռուզվելտը Բաղդադից կեղծ անձնագրով կրկին ժամանեց Իրան: Նա ծպոյալ հասավ մայրաքաղաք և այդուն էլ իշխանությունների տեսադաշտից անհետացաց՝ անցնելով ընդհատակ: Զորջ Քարուլը, ով վերահսկելու էր գործողության ռազմական մասը, Իրան ժամանեց հուլիսի 21-ին<sup>292</sup>:

ԿՀՎ-ի ցուցմունքով Դարրուշաերը և ԱՄՆ-ի քանակի գնդապես Ստեֆան Միդն այցելեցին Ֆրանսիա՝ հանդիպելու շահի երկվորյակ քրոջը Աշրաֆ Փահլավիին, ով բավական աշխույժ մասնակցություն էր ունենում երկրի քաղաքական իրադարձություններին: Նրանք Աշրաֆին հորդորում էին խոսել եղրոր հետ իրենց ծրագրի մասին: Վերջինս համաձայնեց միայն այն քանից հետո, եթե Դարրուշաերից ստացավ օգափի գումար, իսկ Միդն էլ չի աշազրոված խոսուում տվեց. Եթե անգամ հեղաշրջումը ձախողվի, ապա Միացյալ Նահանգները կապահովեն շահի ապրելակերպն այնպես, ինչպես նա սովոր է:

Հուլիսի 29-ին Աշրաֆը պայմանավորվածության համաձայն հանդիպեց եղրորը, փոխանցեց ստացած տեղեկատվությունը և հետո վերադարձավ Ֆրանսիա: Հուլիսի 30-ին և 31-ին շահին այցելեց Ասադողա Ռաշիդյանը: Օգոստոսի 1-ին շահին հյուրընկալվեցին նաև Ն.Շվարցկովֆը և Քերմիք Ռուզվելտը: Նրանք Մուհամամեդ Ռեզա Փահլավիին համոզում էին ստորագրել գործերի հրամանատարի պաշտոնում Զահենիին նշանակելու հրամանը և աշակցել հեղաշրջմանը: Շահը տատանվում էր:

Իրականացվող գործողության ընթացքում Կիմ Ռուզվելտին աջակցում էին ԱՄՆ-ի դեսպանատան 5 աշխատակիցներ, ովքեր ԿՀՎ-ի ներկայացուցիչներն էին և 7 իրանցիներ, որոնցից երկուսը Իրանի հետախուզության բարձրաստիճան պաշտոնյաներ էին: Նրանք իրար հետ կապում էին միջնորդների միջոցով՝ ջանալով հնարավորության սահմաններում խոսափել անձնական շփումներից: Այդ գործում Ռուզվելտին օգնում էին նաև Իրանի արքունիքը և պաշտոնաթող սպայակույտը՝ գեներալ Ֆ. Զահենիի գլխավորությամբ: Դավադրության ժամանակ գործուն աջակցություն ցոյց տվեց նաև Ֆ. Զահենիի որդին՝ Արդեքիր Զահենի:

Սակայն, ԿՀՎ-ն տեղեկացված էր, որ Իրանի քանակի ազդեցիկ սպաների մեծ մասը համախուն են Մոսադեջին, ներառյալ զիսավոր հրամանատար, գեներալ Թաոլի Ռիահին և Թեհրանում գտնվող 5 գիլսլիական բրիգադներից 3-ի հրամանատարները: Զորջ Քարուլը հավաքագրեց գնդապետներ Արքա Ֆարզանեղանին, Հասան Աղավիին և Զանդ-Քարիմին: Նրանք դարձան ռազմական հեղաշրջման ցանցի միջուկը և աջակցեցին Քարուլին՝ ուզմական հեղաշրջման

<sup>291</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran. Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 65.

<sup>292</sup> Roosevelt Kermit, Counter coup, p. 139, Mark Gasiorowski and Malcolm Byrne, eds., Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

վերջնական ծրագիրը կատարելագործելու ժամանակ: Օգոստոսի 10-ին գնդապիտ Աղավին հանդիպեց շահի հետ և ներկայացրեց նրան ուազմական ցանցի կառուցվածքը: Շահը կարգադրեց Աղավին հանդիպել Զահեղիի հետ: Քննարկման ժամանակ Զահեղին համաձայնվեց գեներալ Նադեր Բաթմանը-լիշին նշանակել շտարի պետ: Զահեղին հանդիպեց Բաթմանը-լիշի և Զանդ-Քերիմի հետ՝ ուազմական ծրագրի գրոծելակերպ քննարկելու համար: Օգոստոսի 13-ին Քարող, Բաթմանը-լիշը և ուազմական քարտուղարությունը հանդիպում ունեցան և եզրակացրին, որ ուազմական ցանցը գործողության համար կարող է մորիխզացվել՝ ինդարչօջախան աջակցելու, շահի որոշումից անմիջապես հետո, 4 ժամվա ընթացքում<sup>293</sup>:

Ունենալով ընդարձակ ցանց՝ բագավորին հավատարիմ սպաներն աշխատում էին անկայուն վիճակ ստեղծել կառավարությունում: Նրանք գենք էին տրամադրում ապատամք ցեղերին, հատկապես շահունակներին, բախրիառներին, աֆշարներին և բուրզմաններին: Նրանք հարաբերություններ հաստատեցին ոչ միայն հայտնի պահպանողական հոգևորականների, ինչպիսիք էին այաբոլլա Բնիքեհանին և Բորուցերդին, այլև Ազգային ճակատի պառակտիչների՝ մասնավորապես Քաջանիի, Դոնաթարադիի, Մաքրիի, Բաղայիի և Շայեգանի հետ: Նրանք սպանեցին գեներալ Աֆշարթուսին՝ Մոսադեկի հավատարիմ գինակցին և նրա խոշտանգված մարմինը թողեցին Թեհրանի սահմաններից դուրս՝ իրեւ նախազգուշացում Մոսադեկի մյուս գինակցներին<sup>294</sup>:

Ռաշիդյանները, Զահեղին և Քելվանի իրակրում էին բազմությանը բնար նստել պառամենտում, մզկիթներում, Թեհրանի հասարակական մի շարք վայրերում: Այդ նոյն ժամանակ շուկայի հսկողները պետք է փակեին Թեհրանի շուկան, որպեսզի առավել սրեն իրավիճակը:

Օգոստոսի 10-ին ամերիկյան մամուլը տեղեկացրեց, որ Ա. Դալլեսը մտադիր է կնոջ հետ իր արձակուրդն անցկացնել Հվեյցարական Ազգերում: Սակայն իրականում նա ցանկանում էր ինդարչօջախան վերջին մանրամասները ճշուել: Չնայած Իրանում լարված ճգնաժամային վիճակին՝ Թեհրանում ԱՄՆ-ի դիսպանը՝ Լոյ Հենդերսոնը, նոյնպես հնարավոր համարեց «հանգստանալ» Հվեյցարիայում: Ների Հվեյցարական Ալյաքը ուղևորվեցին նաև Իրանի դեկազրա շրջաններից մի շարք ազգեցիկ դեմքեր, որոնք 1953թ. գետրվարի 23-ին, գինվորականության կողմից Մոսադեկի դեմ ձեռնարկած անհաջող դավադրությունից հետո, հեռացել էին երկրից՝ հանգրվան գտնելով Հոռմում: Նրանց թվին էր պատվանում նաև շահի բոյքը՝ Աշրաֆ Փահլավին:

Ասադուղի Ռաշիդյանը կրկին այցելեց շահին և տեղեկացրեց, որ Ռուզվելտը պատրաստվում է հեռանալ երկրից, եթե շահը չհամագործակցի ԿՀՎ-ի ծրագրին: Շահը ի վերջ համաձայնեց ստորագրել Զահեղիի նշանակման իրա-

<sup>293</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, eds., Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

<sup>294</sup> Abrahamian Ervand, Iran Between Two Revolutions, p. 279.

մանը և հաջորդ օրն էլ հանդիպեց նրա հետ: Այնուհետև շահը մեկնեց Կասպից ծովի ափին գտնվող արքայական Ռամսար հանգստավայրը: Ռուզվելոր և Ռաշիյանը շահի ստորագրությանը ներկայացրին միանգամից 2 հրաման, մեկը՝ Մոսադեղի պաշտոնանկության, իսկ մյուսը՝ Զահենիի նշանակման մասին: Օգոստոսի 12-ի երեկոյան գնդապետ Ն.Նասիրին այդ փաստաթղթերը տարավ Ռամսար, և շահը ստորագրեց 2 հրամաններն է:

Այդ օրերին Թեհրան ժամանեց բրիգադային գեներալ Ն.Շվարցկովիցը, ում ղեկավարությամբ մի քանի տարի առաջ ձևավորվել էին իրանական ոստիկանությունը և ժանդարմերիան: Նա իր այցը բացատրեց «իին ընկերներին»<sup>295</sup> տեսնելով պատճառարանությամբ: Միաժամանակ նա գաղտնի հանդիպումներ ունեցավ շահի և Զահենիի հետ: Դրանից առաջ Շվարցկովիցը եղել էր Պակիստանում, որտեղ նոյն ժամանակ գտնվում էր նաև Ալի Ռեզան՝ շահի եղբայրը:

Հեղաշրջումից մի քանի օր առաջ Իրանում ԱՄՆ-ի ռազմական խորհրդականների խմբի ղեկավար գեներալ Մարքյուրը գաղտնի հանդիպում ունեցավ գեներալներ Զահենիի, Շահրախտիի, Ահմեդիի և Մյուսների հետ, որոնց հանձնարարեց վստահելի պայմաների միջոցով Թեհրանի կայազորը հրահրել Մոսադեղի դեմ: Այդ նոյն ժամանակ գեներալ Շվարցկովիցը իր վրա էր վերցրել զինվորական վերնախավը խոռվության հրահրելու նախապատրաստումը: Բայց ի վերջո, ինչպես հավաստիացնում է արևմտյան մամուլը, տեղական մասնակիցների անփոխության պատճառով թիզ էր մնում գործողությունը ձախողվեր:

Օգտվելով սահմանադրական իր իրավունքից, ինչպես նաև տեղի տալով արտաքին ձեմանը՝ Մոհամմադ Ռեզա Փահլավին օգոստոսի 13-ին հրաման արձակեց վարչապետի պաշտոնում Մ.Մոսադեղի փոխարեն Ֆ.Զահենիին նշանակելու մասին: Սրանով նա փորձում էր խուսափել ԱՄՆ-ի կողմից իրականացվող հեղաշրջումից: Այդ մասին գրում է նաև Էջբնիհանուրը: «Շահը որոշեց ռազմական հեղաշրջման չփիմել: Դրա փոխարեն նա որոշեց օգտվել վարչապետին պաշտոնանկ անելու սահմանադրական իր իրավունքից»<sup>296</sup>:

Շահի հրամանը Զահենիին և Մոսադեղին պետք է հանձններ արքայազորի գնդապետ Ն.Նասիրին: Ակգրում նա գտավ Զահենիին, ով շորջ մեկ ամիս թաքնվում էր Մոսադեղի ոստիկանությունից: Այդ օրերին նա հանգրվան էր գտնել այդքոլլահ Բանի Սադրի բնակարանում<sup>297</sup>: Նասիրին հանձնեց նրան վարչապետության հրամանը: Զահենիին համաձայնեց: Հաջորդը Մոսադեղն էր:

<sup>295</sup> Յամածայն Լու-Յորը Թայմսի, պետքարտողարությունն այդ ժամանակ Շվարցելովին հանձնարարել էր այցելել Լիբանան, Սիրիա և Պակիստան: Իրան կատարած այցը նրա անձնական նախաձեռնությունն էր: Moscow Says U. S. Aided Shah's Coup August 20, 1953

<http://www.nytimes.com/library/world/mideast/082053iran-moscow.html> տես նաև Sheenan Michael Kahl, Iran: The Impact of United States Interests and Policies 1941-1954, N.Y., 1968, p. 61.

<sup>296</sup> ՀօվօԵ Բրեմя N 2, 1980, c. 29.

<sup>297</sup> Եզանյան Յ.Ա., Հովովականության դերը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում, Երևան, 1987, tց 38:

Օգոստոսի 14–15–ին Մոսադեղի կառավարությունը տեղիկացավ նախատեսվող հեղաշրջման փորձի մասին: Օգոստոսի 15–ին ժամը 23–ին շահական գվարդիայի մի քանի սպա՝ զնդապետ Ն. Նասիրիի զիսավորությամբ, փորձեցին ձերքակալել Մոսադեղին: Վարչապետի տան շորջը ուժեղ պահակախոսք տեսնելով՝ նրանք հայտարարեցին, որ եկել են Մոսադեղին հանձնելու շահի հրամանը: Նասիրին հանձնեց նամակը և մեկուկես ժամ սպասեց ստացականի: Մոսադեղը հրամարվեց ենթարկվել շահի հրամանին՝ գրադեցրած պաշտոնն ազատելու վերաբերյալ՝ համարելով այն անօրինական<sup>298</sup>: Ռազմական ցանցի մյուս անդամները սկսեցին իրականացնել հեղաշրջման ծրագրի իրենց քածինները: Ձերքակալեցին Մոսադեղին հավատարիմ քաղաքական և ռազմական գործիչների, շրջափակեցին կենտրոնական հեռախոսակայանը:

Ծուով Նասիրիին հայտնում են, որ Մոսադեղի զորաբանակի զիսավոր հրամանատար Ռիահին կարգադրել է Նասիրիին անհապաղ ներկայանալ կենտրոնական շտար: Հենց այնտեղ է Նասիրին ձերքակալվում է՝ հեղաշրջման մեջ մասնակցություն ունենալու մեղադրանքով:

Ժամը 2:30 հակամոսադեղյան ուժերը հասկանալով, որ հեղաշրջման փորձը տապալվում է, հանձնվում են: Գեներալ Բաթմանքելիշն ընդհատակ անցավ, Ֆարզանեղանը բարձրվեց ԱՄՆ-ի դեսպանատանը: Թեհրանի ուսումնական անմիջապես հեռարձակեց վերջին նորությունը, ըստ որի՝ հաջողվել է կասեցնել հեղաշրջման փորձը: Մոսադեղի կողմանակից զորամիավորումները հաստատեցին իրենց վերահսկողությունը քաղաքի վրա: Նրանք ձերքակալեցին հեղաշրջմանն աջակցություն ցուցաբերած կասկածայներին: Ի վերջո, հայտնաբերվեցին և ձերքակալեցին Բաթմանքելիշին, Զանդ-Քարիմին, ինչպես նաև ռազմական ցանցի մի շարք այլ բարձրաստիճան սպաներ, Բաղային, Բեհրութիին, Արդարադատության նախարար Արուլ Ղասեն Ամինին, շահի մտերիմ Էնենսը Փերուին և մի շարք այլ կասկածայալ-դավադիմիների: Նրանք ինտենսիվիդեն փնտրում էին գեներալ Զահենիին: «Թուղեն» հեղաշրջաման մանրամասները տպարեց թերթերում և ի պաշտպանություն Մոսադեղի կազմակերպեց ցույց: Արտգործնախարար Հուսեին Ֆարեմին<sup>299</sup> ուղիղուով հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ հայտնեց իր համախոհությունը Մոսադեղին, քննադատեց շահին և նրան դավաճան անվանեց<sup>300</sup>:

Հեղաշրջման ծրագրի համաձայն՝ նախատեսվել էր, որ եթե Մոսադեղը չհնազանդվի շահի հրամանին և չհաջողվի ձերքակալել նրան, շահն առժամանակ կինուանա երկրից: «Մենք գտնում ենք, որ իմ մեկնումը կապացի իրավի-

<sup>298</sup> Avery Peter, *Modern Iran*, London, 1965, p. 438.

<sup>299</sup> Ֆարեմին ընկեր էր Մոսադեղի կասկածայաների ցուցակի մեջ և անգամ մեկ զիշերով ձերքակալվել, այնուհետև ազատ արձակվել: Սակայն, կաքում ենց, որ Մոսադեղը նրան առավելապես կասկածում էր կոմունիստների հետ ակտիվ հանգործակցությամ մեջ:

<sup>300</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, *Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran*.

ձակը, Մոսահեղի իսկական դեմքը կերևա, երբ նա ուժ գործադրի, իսկ դա էլ կմիավորեն հանրային կարծիքը գահի շուրջ»<sup>301</sup>.

Օգոստոսի 16-ին Մոսահեղը հանդես եկավ ելույթով և հայտարարեց, որ շահի՝ իրեն տապահելու ծրագիրն անհաջողության է մատնվել: Անհաջողության լուրը ստանալուն պես շահը և թագուհի Սորայան «Բիշբրաֆթ» տիպի ինքնարթով մեկնեցին Իրաք:

Օգոստոսի 17-ին ԿՀՎ-ի շտար-կայանից Ռուզբելտին ևս խորհուրդ տվեցին որքան հնարավոր է շուտ հեռանալ Իրանից: Սակայն նա չհետևեց խորհրդին, ավելին, պատրաստվեց իրականացնելու հեղաշրջման երկրորդ փորձը:

Շահի հեղինակությունը բուլանում էր ոչ միայն մայրաքաղաքում, այլև Թավրիզում ու Շիրազում: Մոսահեղամետ ուժերը հասան Քերմանշահ, Քերման, Բարլասար և այլ քաղաքներ:

Հատկանշական է, որ երբ շահը հանգրվան գտավ Իրաքում, Մոսահեղի կողմանակիցները փորձնեցին ձերքակալել նրան: «Մոսահեղի արտօքին գործոց նախարար Ֆարենմին հեռագրեց Բաղդադում մեր դեսպանին՝ կարգադրելով ձերքակալել ինձ: Աներևակայելի էր, նա շանաց ի կատար ածել այդ առաջադրանքը, բայց, իհարկե, ապարդյուն»<sup>302</sup>: Այդ հրամանը հետագայում Ֆարենմիին թանկ արժեցավ:

Ամենայն հավանականությամբ, շահը կարծում էր, որ այլև չի վերադառնա հայրենիք, մինչեւ Միհայջալ Նահանգների նախագահը հակառակուսն էր համոզված: Այսուհետև Մոհամմադ Ռեզան Բաղդադից մեկնեց Հռոմ, որտեղ մնաց ընդամենը երկու օր:

Օգոստոսի 16-ի երեկոյան ԿՀՎ-ի ներկայացուցիչներից մեկը 50,000 դոլար փոխանցեց Զալիլիին և Քեյվանիին՝ հակամուսաղեղյան գործողությունների երկրորդ փուլի իրականացման համար: Նրանք իրենց գործակալների միջոցով հաջորդ առավտոյան Թեհրանի կենտրոնում ցույց կազմակերպեցին, ձևացնելով թե այն կազմակերպել են թույեականները: «Թույեի» իրական անդամները, ովքեր կապ չունեին այդ ցույցի հետ, նոյնպես, դուրս եկան փողոց: Այդ բացմությունը իրական քառս առաջացրեց Թեհրանում: Գրոհեցին Ռեզա շահի դամբարանի վրա: Երբի ժամանակ նրանք մայրաքաղաքում քանդեցին շահերի արձանները: Շահի նկարները հանվեցին շատ տներից, ուստորաններից, աշխատավայրերից և նախարարություններից: Հարձակվեցին մզկիթների վրա, կոտրեցին պատուհանները, բալմվեցին մոսահեղամետ ուժերին, ներխուժեցին Մոսահեղի կողմանակիցների և «Պան-իրանական կուսակցության» շտար-կայաններ և կոչ արեցին վտարել ամերիկացիներին երկրից: Օգոստոսի 18-ին «Թույեն» կոչ արեց տապալել միապետությունը, իիմնել դեմոկրատական հանրապետությունը:

<sup>301</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 89.

<sup>302</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 90.

«Այս» գործողության կազմակերպիչները որոշել էին, որ դեսպան Լոյ Հենդերսոնը չի վերադառնա Իրան մինչև գործողության ավարտը: Դեսպանատան աշխատակազմն այդ օրերին չփետք է դուրս գար աշխատանքի, դեսպանատանը պետք է գործեր ԿՀՎ-ից միայն մի փոքր խոսք: Սակայն քանի որ օգոստոսի 16-ի գործողություններն ավարտվել էին անհաջողությամբ, Միացյալ Նահանգների կառավարող շրջանակները Լոյ Հենդերսոնին կարգադրեցին անմիջապես վերադառնալ Իրան և Մոսադեհին հայտնել ԱՄՆ-ի դիրքորոշումն առկա խնդրի վերաբերյալ: Եվ այդպես, օգոստոսի 17-ին, 11 շաբաթվա բացակայությունից հետո, Բեյրութից Թեհրան վերադարձավ ԱՄՆ-ի դեսպան Լոյ Հենդերսոնը: Հասել էր նրա գործելու պահը: Օգոստոսի 18-ին նա այցելեց Վարչապետին և հայտարարեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը կիտչընդոտի նրա իշխանությանը, պնդելով, որ նա անմիջապես հրաժարական տա, եթե չի կարող կարգուկանու հաստատել երկրում: Միացյալ Նահանգները խոստանում էր օգնություն ցուցաբերել Իրանին, եթե երկրում վերականգնվի բնականուն վիճակը: Միաժամանակ դեսպանը մեղադրանք ներկայացրեց վարչապետին, որ ամբոխը հարձակվում է ամերիկացիների վրա ու նշեց, որ նա խորհուրդ կտա բոլոր ամերիկացիներին հեռանալ Իրանից, քանի որ համապատասխան ուժերը ի վիճակի չեն ապահովել նրանց անվտանգությունը<sup>303</sup>: Սա մի խայժ էր Մոսադեհի համար, որն էլ նա, կարծում ենք, անգիտակցարար «կուլ տվեց»: Մոսադեհը կայացրեց ձականագրական մի որոշում, զանգահարեց ոստիկանապետին և կարգադրեց շարդել ցուցարարներին: Հայրուրավոր մասնակիցներ, ովքեր Մոսադեհի գաղափարական համակիրներն էին, քանտ նետվեցին:

Այդ ամենից հետո Մոսադեհը համակիրների երրեմնի ստվար բանակը նորացավ: Իրանը հիմնականում ուսանողներ էին, հոգևորականներ և մտավորականներ: Դա տեղի ունեցավ «Թուղե» կուսակցության մի շարք վիճակների հետևանքով: Այդ ընթացքում իրար հաջորդող երկու զարգացումներ տևելի ունեցան, որոնք էլ վճռական դարձան Մոսադեհի համար: Առաջին «Թուղե» կուսակցության հակազդեցությունն էր: Այն գործում էր արագ, որպեսզի ընդունելի գերազանցության հասնի անգոր-ամերիկյան անհաջող գործունեության համար: «Թուղեի» առաջնորդներն ալիսայտ հավանություն էին տախի համընդհանուր ցուցերին՝ ընդդեմ Փահլավիների: Բայց ցուցարարները, ենթարկվելով ԿՀՎ-ի գործակալների սադրանքներին, միևնույն ժամանակ հարձակվեցին կրոնական խորհրդանիշների՝ ներառյալ մզկիթների վրա: Օգտվելով այդ սխալից՝ Միացյալ Նահանգների երկու գործակալներ կաշանեցին մի շարք մարդկանց, որոնք էլ միացան բազմությանը և դրենցին կրկին հարձակվել կրոնական խորհրդանիշների վրա: Անհնարին է գերազանահատել նրանց գործունեության կարևորությունը<sup>304</sup>: Այդ պատճեռով էլ Մոսադեհի բարեպաշտ կողմնակից-

<sup>303</sup> Mark Gasiorowski and Malcolm Byrne, Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

<sup>304</sup> Cottam Richard W., Iran and the United States. A Cold War Case Study, Pittsburgh, 1988, p. 108.

Ները խուսափեցին նրան սատարելուց: Բայց պարզ է, որ «Թուղթն» սխալվեց իր հաշվարկներում, ինչն էլ պարտություն քերեց նրան՝ հաղթանակի անիվը վճռականորեն շրջելով դեպի Զահենին:

Օգոստոսի 18-ին բանտից ազատվեցին նաև այն քաղաքացիները, ովքեր մեղադրվել էին նախկինում Մոսադեհի դեմ դավադրություններին աջակցելու մեջ: Նրանք հաջորդ օրը՝ օգոստոսի 19-ին, միացան այս անգամ արդեն հաջողված հեղաշրջմանը: Այս ամենից այն տպավորությունն է ստեղծվում, որ Մ. Մոսադեհը բաջատենյակ էր հեղաշրջման մասին և իրավիճակից այլև եթ չտեսնելով՝ որոշեց այդ ձանապարհով հեռանալ քաղաքական ասպարեզից: Կաևկաները հատկապես ամրապնդվում են այն փաստով, որ Մոսադեհի կառավարության ժամանակ Իրանի դեսպանն ԱՄՆ-ում՝ Ալլահ-Ցար Սալեհին, մինչև հեղաշրջումը հայտարարել էր, որ ինքը չի համագործակցի Մոսադեհի դեմ իրականացվող որևէ գործողության. «Ես հավատում եմ, որ Մոսադեհը ներկայացնում է Իրանի ժողովրդի ցանկությունը: Երա դեմ ուղղված ցանկացած շարժում կիանդիխի բոլոր ազիմի իրանցիների հակադրությանը: Ես չեմ համագործակցի Մոսադեհի դեմ իրականացվող որևէ գործողության»<sup>305</sup>: Հաւկանալի է դառնում, որ ԿՀԿ-ն նրան ևս փորձել է հավաքագրել, սակայն նա, գոնեւ առերևութարա մերժել է համագործակցել ԿՀԿ-ի հետ: Սակայն եթե դեսպանը գիտեր ապավելիք գործողության մասին, միաժամանակ չէր համագործեցելու դրան, ընականարար նա պետք է տեղեկացներ այդ մասին նաև վարչապետին:

Ըստ արևմտյան մամուլի՝ կոմունիստական «Թուղթ» կուսակցությունն ուներ իր սեփական ծրագիրը, որն իրականացնելու համար օգտվում էր Մոսադեհի ազգայնացման քաղաքականությունից: Համաձայն արևմտյան հեղինակների՝ «Թուղթ» կուսակցությունը ծրագրել էր շահին վտարել երկրից, այնուհետև ամրապնդել իր դիրքերը և Խորհրդային Միության ջանքերով Մոսադեհին հետացնել իշխանությունից, որից հետո Իրանը կիայտնված իրենց վերահսկողության ներքո: Այդ փաստի մասին գրում է նաև Մոհամամադ Ռեզա Փահլավին՝ «Պատասխան պատմությանը» իր գրքում. «Կոմունիստները ծրագրել էին սկզբում օգտագործել Մոսադեհին՝ ինձ գահընկեց անելու համար: Հետո հայտնաբերվեցին «Թուղթի» թերթիկները, որոնցում ցոյց էր տրվում, որ իմ արտաքսումից երկու շաբաթ անց Մոսադեհը ևս կիետացվեր: Ես տեսել եմ փոստային նամականիշներ, որոնք տպվել էին Իրանի ժողովրդական Հանրապետություն վերտառությամբ»<sup>306</sup>: Իսկ մեկ այլ գրքում շահը գրում է, որ թուղթեական սպաները ձերբակալվելուց հետո խոստվանել են, թե «մտադիր են եղել Մոսադեհի ձեռքով Փահլավի դինաստիան ոչնչացնելուց հետո, պետական հարվածով վերը

<sup>305</sup> Britain Is Cautious on Revolt in Iran, By Peter D. Whitney, August 20, 1953  
<http://www.nytimes.com/library/world/mideast/082053iran-britain.html>

<sup>306</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 91.

տալ նրա կյանքին և ինչպես ընդունված է մի շարք երկրներում, Իրանում նմանապես հաստատել կոմունիստական իշխանություն»<sup>307</sup>:

Եթե սա համապատասխանում է իրականությանը, ապա վարչապետն իր կառավարման վերջին օրերին, ամենայն հավանականությամբ, տեղեկացվել էր դրա մասին: Այդ պարագայում հաւաքանայի է դառնում, թե ինչո՞ւ օգոստոսի 17–18-ին նա ձնշում գործադրեց ցուցարարների վրա, որոնք հրահրվել են Իրանի Ազգային կուսակցության և «Թուղթեի» կողմից:

Այդ ամենն ամրագրվում է 1953թ. սեպտեմբերի 18-ի ֆրանսիական «Մոնդ» թերթում գետնելված հրապարակմամբ, ըստ որի՝ «Մոսահեղի համար նախընտրելի էր ցանկացած այլ լուծում՝ բացառությամբ խիստ ձախերի հաջողությունից...Նա նախընտրեց հետունալ, քայլ չաշակցել նրանց»<sup>308</sup>:

Հիրավի, կոմունիստական շարժման թափը սարսափեցրեց կառավարությանը: Մոսահեղի կառավարության բոլոր անդամները, բացառությամբ արտգործնախարար Ֆաթեմիի, դեմ էին Իրանի Հանրապետության հոչակման գաղափարին: Նրանք մերժեցին Իրանի Ազգային կուսակցության հետ համատեղ գործելու առաջարկը ևս:

Իսկ այդ ընթացքում ԿՀՎ-ն իրականացնում էր լայնածավալ քարոզչություն, ընդգրկելով դրա մեջ ինչպես տեղական, այնպես էլ ամերիկյան լրագրողներին: ԿՀՎ-ն համագործակցում էր «Նյու Յորք Թայմսի» թղթակից Բենեթ Լովի հետ, որը շոտով հանդիպեց Արդեշիր Զահենդիին: Նրան տրվեց շահի որոշման կրկնօրինակը, որն էլ նա հետագայում բաժնեց այլ թղթակիցների: Օգոստոսի 18-ին հակամատելյան թերթերը տպագրեցին Զահենդիին վարչապետ Նշանակելու՝ շահի հրամանը և Բաղդադում շահի արած մի շարք հայտարարություններ:

Մինչ այդ, օգոստոսի 17-ի երեկոյան, Ռուզվելտը երկարատև հանդիպում ունեցավ Ֆազլողան և Արդեշիր Զահենդիների, Ֆարզանեղանի, Գիլանշահի և Ռաշիդյանների հետ: Այդ հանդիպման ժամանակ նրանք որոշեցին օգոստոսի 19-ին գրոհ սկսել ընդեմ Մոսահեղի՝ հենվելով երեք ուղղությունների վրա: Առաջին՝ նրանք որոշեցին կապ հաստատել Այարոլլա Բեհերեհանիի հետ և խնդրել նրան, որ հրահրի շիա հոգևորականությանը: Երկրորդ՝ նրանք որոշեցին աջակցություն վնատրել Թեհրանից դորս գտնվող կայազորներում: Երրորդ՝ Ռուզվելտը և նրա գործընկերները որոշեցին օգոստոսի 19-ին կազմակերպել լայնածավալ հակամասադելյան ցույց՝ «Եկեղ է ժամանակը որպեսզի բանակի սպաները, գինվորներն աջակցություն ցույց տան կրոնին և զահին» կարգախոսով: Այդ ծրագիրը իրականացնելու համար ԿՀՎ-ն աշխատում էր մի քանի ուղղություններով: Ռաշիդյաններն ակնկալում էին Այարոլլա Բաշանիի

<sup>307</sup> Սուհամմա Ուզա Շահ Փահլավի, Առաքելություն հայրենիքին համար, էջ 217: George Lenczowski, Iran Under The Pahlevis, Stanford, 1978, p. 374.

<sup>308</sup> Աղաս Շ.Լ., Իրան և պատմություն և նախական պատմություն, Մոսկվա, 1981, c.137.

օգնությունը, ինչի համար էլ իրենց զինակցին՝ Ահմադ Արամեջին տվեցին 10,000 դրամ, որն էլ հանձնեց Քաշանիին՝ ցոյց կազմակերպելու համար<sup>309</sup>:

Հաս ծրագրի՝ Զավիին բազմությանը պեսոք է առաջնորդեր ուսումական ուստիկանության շտար-կայան, որտեղ պահպան էին գնդապետ Նասիրին և գեներալ Բաթմանքելիշը ու ազատեր նրանց բանտարկությունից:

Մեխանիզմը գործի դրվեց ժամանակացոյցի համաձայն՝ օգոստոսի 19-ին: Գնեներալ Զահենին, ով շորջ 2 օր թաքնվում էր ԿՀՎ-ի աշխատակիցներից մեկի տանը, Ռուզվելտից տեղեկացավ, որ պահը հասունացել է և եկել է իր գործելու ժամանակը:

Առաջին հերթին պեսոք է ազատեին բանտում պահպան հակամասադեղյան ակտիվիստներին և գործողության առանցքային դեմքերին: Շուտով բանտապահը «ներս է մտնում և Նեմաթոլլա Նասիրիին հանձնում է զինվորական հանդերձանքը ու կարգադրում հեռանալ բանտից: Դրա պատճառ այն էր, որ որոշել էին դատարկել բանտը», – այդպես է ներկայացնում շահը<sup>310</sup>: Այստեղ հարց է առաջանում՝ ինչո՞ւ էին որոշել դատարկել բանտը, և ի՞նչն էր սպառնում կառավարության դեմ ընդգամ բանտարկելուներին: Չահը, իհարկե, լուս է այն փաստի մասին, որ այդ նոյն բանտապահը կաշառվել կամ էլ հատուկ հրահանգ էր ստացել բանտարկյաներին ազատ արձակելու վերաբերյալ:

Հետաքրքրության է արժանի, եթե շահը նկարագրում է, թե ինչպես էր հասարակ ժողովուրդը «փայտերով» պայքարում զինված ուստիկանների դեմ: «Նասիրին տեղեկանում է, որ քաղաքի բնակչությունը փայտերով զինված, հարձակվել է բանտի վրա և անտեսելով բանտի հսկիչների «կանգ առ» հրամանը՝ ենթարկվել գնդակոծության: Սակայն մյուսները շարունակել են ավելի սաստիկ գրոհել, փախուստի մատուել հսկիչ ուժերին ու վերջապես գրավել են բանտը»<sup>311</sup>:

Կրկին հարց է առաջանում՝ կարո՞ղ էր արդյոք Թեհրանի բնակչությունը, զինված լինելով միայն փայտերով, գրավել բանտը, որն ի դեպ, պաշտպանվում էր «ոչ փայտով» զինված հսկիչների կողմից: Տարրերակները երկուսն են. կամ ժողովուրդը փայտերից բացի զինված էր նաև առավել «պիտանի զենքերով», կամ, որը մեր կարծիքով առավել հավանական է, հսկիչներին հրաման էր տրվել ձևական պաշտպանություն ցոյց տալուց հետո թողնել դիրքերը:

Հնդապետ Նասիրին ազատ արձակվեց և զինավորեց արքայագործ: Օգոստոսի 19-ին հակամասադեղյան ալիքը նոր թափ ստացավ: Ծահամետ ուժերը միացան բազմությանը և արդեն 10:15 նրանը վերահսկում էին Թեհրանի զինավոր հրապարակները: 5 տասկ և 20 քեռնատար՝ մերժնա համալրված զինվորներով, միացան բազմությանը: Օգոստոսի 19-ի առավոտյան բազմութ-

<sup>309</sup> Kenneth M. Pollack, *The Persian Puzzle*, p. 67.

<sup>310</sup> Սոհամանա Ռեզա Շահ Փահլավի, Առաքելություն հայրենիքին համար, էջ 207–208:

<sup>311</sup> Նոյն տեղում, էջ 208:

յունը Թեհրանի հյուսիսից շարժվեց դեպի քաղաքի կենտրոն՝ արտահայտելու իր աջակցությունը շահին: Ռուզվելտի լրտեսների մեծ մասը թափառող արտիստների անվան տակ Թեհրանի կենտրոնում երբ կազմակերպեցին: Անկարգության լուրաքանչյուր մասնակցի տրվեց դրամական պարզե:

Զահեղին սախօրոց ծրագրել էր ուղղվել Սպահան և այդ շրջանի զորքանակը շարժել դեպի Թեհրան: Քերմանշահի հավատարիմ զորքանակներին ևս կարգադրված էր լինել կազմ ու պատրաստ՝ անհրաժեշտ պահին Թեհրան շարժվելու համար:

Օգոստոսի 19-ին, մինչ «Թուլե» կուսակցությունը նահանջում էր Մոսա-դեկի հարվածներից, Զահեղին Շերմանի 35-րդ տանկային դիվիզիային հրա-մայեց շրջափակել վարչապետի նստավայրը<sup>312</sup>: Ամերիկյան զենքով, քեռնա-տարներով և տանկերով զինված՝ զեներալ Զահեղի զորամասերը մտան Թեհ-րան: Շահին հավատարիմ իրանական զինվորականությունը, ԿՀՎ-ի աշխա-տակիցների հրահանգով, գրավեց Թեհրանի ոստիոնյանը, գրոհեց նախա-րարությունների շենքերի վրա: Շոտով նրանք իրենց ձեռքը վերցրին հեռագ-րության, քարոզության և մամուլի նախարարությունը: Բազմության վյուն հատ-վածը հարձակվեց ոստիկանատների, բանակի շտար-կայանների և արտօնու-նախարարության վրա: Կառավարական շենքերը զավթելու ժամանակ 300 մարդ սպանվեց և 100-ր վիրավորվեց: Պարբար շարունակվեց մինչև կեսօր:

Մոսահեղը միայն վերջին պահին որոշեց գործել և հրամայեց թերթան մտցնել կառավարությանը դեռ հավատարիմ զորքեր: Այդ ընթացքում Ռուսվելտը, իրադարձությունների մեջ ներքաշելով ավելի ու ավելի շատ մարդկանց, արագացրեց գորիք: Իրանում ԱՄՆ-ի ռազմական գործունեության մասին հետևյալն է ներկայացնում ամերիկացի գեներալ Ստյուարտը. «Մենք Իրանի զորքին արագ մատակարարեցինք հանդերձանք, կոչկենեն, էլեկտրագեներատորներ, դեղորայք, որպեսզի հարմար պահին նրանք աշակեն շահին: Հրացանները, որոնք գինուրների ձեռքին են, թենատար մերենաները և զրահամերենաները, որոնցով նրանք տնդափոխվում են, կապի միջոցները՝ այդ ամենը մենք ենք տվել: Եթե մենք դա չանենք, հավանական է, որ կառավարության դեմք մոտ կանգնած լինեն ԱՄՆ-ի նկատմամբ ոչ բարեկամարար տրամադրված անձինք»<sup>313:</sup>

- Օրենքի գերակայության և հանրային անվտանգության վերահստատում:

<sup>312</sup> Abrahamian Ervand, Iran Between Two Revolutions, p. 280.

<sup>313</sup> We are very grateful to our editor and to the anonymous referee for their useful suggestions.

- Բարեկեցության սանդղակի բարձրացում և ապրուստի համար անհրաժեշտ մինիմումի նվազեցում:
- Գյուղատնտեսության մեխանիզացում և գյուղացիության համար համայնքական կոռպերատիվների ձևավորում:
- Բանվորների աշխատավարձի բարձրացում:
- Անվճար բուժօգնություն:
- Լայնածավալ ասֆալտ ճանապարհների կառուցում:
- Մարդկանց անհատական ազատության և հանրության անկախության վերականգնում<sup>314</sup>.

Ի հարկե, այդ ծրագրի գգալի մասին վիճակված չէր իրականություն դառնալու, քանզի հենց հեղաշրջումից հետո երկրում մտցվեց պարետային ժամ, որի ընթացքում ունահարվեցին հազարավոր մարդկանց «անհատական ազատություններ», նոյնիսկ գրկվեցին խոսքի ազատությունից:

Ծուրզ 9 ժամ մարտեր ընթացան շահի և Մոսադեղի կողմանակիցների միջև, որի ժամանակ զոհվեց 300 մարդ: Ռազմավարական բոլոր կետերը գրավելուց հետո, այժմ պայքարն ընթանում էր Մոսադեղի տան շորք: Հստ շահի հաղորդած տեղեկության՝ «Թեհրանում Մոսադեղի տունը պահպանում էր շորջ մեկ դյուժին (12) տանկ»<sup>315</sup>: Վարչապետի տան պաշտպանությունը իրականացվում էր նաև թիկնազորի և հրետանու միջոցով: Ի վերջո, Մոսադեղի պաշտպանները պարտվեցին՝ տարով 200 զոհ: Մոսադեղի տունը հրդեհվեց ու թալանվեց: Մոսադեղը դիմեց փախուստի:

ԿՀՎ-ի նախկին բարձրաստիճան պաշտոնյա Հարրի Ռոգենկին վկայակոչում է, որ «1953 թ. օգոստոսի հեղաշրջումը ղեկավարվում էր ԿՀՎ աշխատակիցներից բաղկացած ոչ մեծ խմբի կողմից, որը գործում էր Թեհրանի նկուղներում: Դրան նախորդելի էր քարոզարշավ շատ պարզ թեմայով՝ եթե Մոսադեղի հակաշահական ոմերը մնան իշխանության գլուխ, ապա Խորհրդային Միությունը և իրանական կոմունիստները («Թուղե» կուսակցությունը) կգրավեն երկիրը...: ԱՄՆ-ի կազմակերպած հեղաշրջման իսկական պատճառները Խորհրդային ուժեմքից դուրս գտնվող կառավարության նկատմամբ ցոյց էին տալիս, թե որքան հեշտությամբ էր Վաշինգտոնը «ազգայնականությունը» շփորում «կոմունիզմի» հետ: Մոսադեղի կազմակերպած Ազգային Ճակատը գիսավորապես գրավվում էր նախարարին խնդրի լուծման հարցերով, և նա նոյնիսկ հրաժարվեց օրինականացնել «Թուղե» կուսակցությունը, ինչպիս նաև համագոր-

<sup>314</sup> Royalists Oust Mossadegh; Army Seizes Helm August 20, 1953 . By Kennett Love, The New York Times  
<http://www.nytimes.com/library/world/mideast/082053iran-army.html>

<sup>315</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p 88.

ծակցել նրա հետ: Մոսադեղը տարօրինակ մարդ էր, բայց ոչ կոմունիստ», – նշում է Ռոզիցին<sup>316</sup>:

Ի տարրերություն Ռոզիցինի՝ մենք գտնում ենք, որ Միացյալ Նահանգների կառավարող շրջանակները կարողանում են տարանջատել «ազգայնականությունը» «կոմունիզմից», սակայն աս այն դեպքն էր, որ իրենց շահերից թիւմ էր «շփոթել» այդ երկուսը:

Մոսադեղը ևս ժխտում է իր կոմունիստ լինելու հանգամանքը. «Դմ հենարանը ո՞չ բանակն էր, ո՞չ էլ կոմունիզմը: Ես հենվել էի մի խումբ հասկացող և հայրենասեր մարդկանց վրա, որոնց հեղաշրջումը չեղորացրեց՝ ի շահ գաղութատիրության»<sup>317</sup>:

Օգոստոսի 19-ին շահը, ԲիթիՍի լրատվամիջոցից տեղեկանալով Զահենիի հաղթանակի մասին, Բրիտանական ավիատուիներով օգոստոսի 22-ին վերադարձավ Իրան: Թագուիի Սորայան, արքայադուստր Աշրաֆի հետ որոշեցին առմամանակ մնալ Հոռոմում<sup>318</sup>:

Հարկ է նշել, որ «Այսրս» գործողության կազմակերպման ծախսերի մասին գրականության մեջ հանդիպում ենք բազմաթիվ իրարամերժ տվյալների: «Այսրս» գործողությունը, ըստ Լենքովսկու, արժեցավ 100.000 – 200.000 դոլար<sup>319</sup>: Մենք չենք կիսում նրա տեսակետով, բանզի այդ գումարը հազիվ կրավարերեր միայն քարոզչությանը, այն էլ՝ սկզբնական շրջանում: Իսկ այլ տվյալներով՝ այն միայն ԱՄՆ-ի վրա նստեց ավելի քան 10 մին դոլար<sup>320</sup>: Զկենդերով իրականություն՝ Մոհամմադ Ռեզա շահը գրում է, որ «Մորդադի 28-ի (օգոստոսի 19-ի) պատմական ընդվզումը կերտող հասարակ ժողովրդին տրված է եղել մեծ գումարներ՝ ամերիկյան դոլար և անգլիական ֆաունդ (Փունտ) ստեղծվելով»<sup>321</sup>: «Մի շարք փաստաթղթեր ապացուցում են, – գրում է շահը, – որ այդ ժամանակ ԿՀՎ-ն հաջորդության հասնելու համար ծախսել է ոչ ավելի, քան 60.000 դոլար: Ես իսկապես չեմ կարծում, որ այդ գումարով հնարավոր կիներ մի քանի օրվա ընթացքում ուղի հանել ողջ երկիրը»<sup>322</sup>:

1961թ. հունիսի 24-ին «Նեյշն» լրագիրը հետաքրքիր փաստ ներկայացրեց Իրանում կազմակերպված հեղաշրջման վերաբերյալ, ըստ որի՝ ամերիկյան վարչակազմը զգացավ մեծ գումարներ և զենք տրամադրել՝ հեղաշրջումն իրականացնելու համար: Միայն Ա.Դալլասի գերատեսչությունը Իրանի քանակի սպաներին ու պետական պաշտոնյաներին կաշառելու և Մոսադեղի դեմ քա-

<sup>316</sup> Новое Время N 4, 1980, с. 30.

<sup>317</sup> خطوات و ملخصات دكتور محمد مصدق، بقلم دكتور محمد مصدق، 1982.

<sup>318</sup> Shah Leaves Rome to Fly to Teheran

<http://www.nytimes.com/library/world/mideast/082153iran-rome.html>, [www.payk.net/politics/cia-docs/nytimes-article/041600iran-archive-articles](http://www.payk.net/politics/cia-docs/nytimes-article/041600iran-archive-articles).

<sup>319</sup> Lenczowski George, American Presidents and the Middle East, p. 38.

<sup>320</sup> Аниев С.М., Иран. Очерки новейшей истории, Москва 1976, с. 244.

<sup>321</sup> Սփնանա Ռեզա Չահ Փահապի, Սաբելուրյուն հայրենիքին համար, էջ 219:

<sup>322</sup> Mohammad Reza Pahlavi, Answer To History, p. 91.

բողջություն ծավալելու համար հատկացրեց 19 մլն դոլար: Շվարցկոպֆի համար բանկում բացվեց անսահմանափակ վարկ՝<sup>323</sup>:

Մի շաբթ աղյուրների հավաստիացմամբ, հեղաշրջումից երկու օր անց ԱՄՆ-ը 5 մլն դոլար է տրամադրում Իրանի նոր կառավարության դիրքերն ամրապնդելու համար՝<sup>324</sup>:

1953թ. նոյեմբերից մինչև 1954թ. մարտը ամերիկացիները Զահենիի կառավարությանը տվեցին 1,5 մլն դոլար, որպեսզի վերջինս իրու պարզեավճար հատկացնի Իրանի բանակի, ժանդարմերիայի և ոստիկանության անձնակազմին: 1953թ. նոյեմբերին 320 հազար դոլար պարզեավճար հանձնվեց բանակին, 300 հազար դոլար՝ ժանդարմերիային և 120 հազար դոլար՝ ոստիկանությանը: 1954թ. նոյն նպատակներով բանակում ծախսվեց 640 հազար դոլար՝<sup>325</sup>:

Իսկ 1984թ. Լոյ Հենդերսոնի հարցագրույցից երևում էր, որ միայն գեներալ Զահենիին տրվել էր 2 մլն դոլար, որից մեկ միլիոնը ԿՀՎ-ն տվեց Զահենիին կանխիկ՝ հեղաշրջումից անմիջապես հետո՝<sup>326</sup>:

1953թ. հեղաշրջումից հետո, եթե Մոսադեղը հեռացվեց իշխանությունից, Իրանում ամերիկյան շահերն իրականացնելու և ազդեցության ոլորտները մեծացնելու համար, ԱՄՆ-ի կառավարության առաջ բացվեց գործունեության աննախադեպ լայն դաշտ:

Մ.Մոսադեղը և իր համախոհները՝ Ռազավիխն, Շայեգանին, Ֆաթեմին, ինչպես նաև ուր բարձրաստիճան այլ սպաներ, ովքեր աշակցում էին վարչապետին, ինչպես նաև նախարարների հիմնական մասը՝ ներառյալ Արուլ Ղասեմ Ամինին, «Էրան», «Երրորդ Ուժ» ու «Ազգային կուսակցություն» խմբակցության առաջնորդները հանձնվեցին ռազմական դատարանին:

Մահապատճի ենթարկվեցին միայն Ֆաթեմին և արդարադատության նախարար Լուֆթին, այն պատճառաբանությամբ, որ նրանք ամենից շատ էին ընկեր կոմոնիստական ազդեցության տակ: Փաստորեն միայն նրանց նկատմամբ իրականացվեց Իրանի Սահմանադրության 317-րդ հոդվածը, ըստ որի. «Յուրաքանչյուր ոք, ով կիրականացնի կառավարության դեմ հարձակում, կրայքի միապետության ժառանգականությունը կամ ժողովրդին կիրակի ապստամբության միապետության դեմ, կդապարտվի մահվան»՝<sup>327</sup>:

<sup>323</sup> The Nation, 24.VI.1961, p. 549.

<sup>324</sup> How a Plot Convulsed Iran in '53 (and in '79),

<http://www.nytimes.com/library/world/mideast/041600iran-cia-intro.html>

<sup>325</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке, с.187.

<sup>326</sup> متوهجه فرمانفرماشيان، خون و نفت، خاطرات پک شاهزاده ايران، تهران، ۱۹۷۸، ص.

Mark Gasiorowski and Malcolm Byrne, Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

<sup>327</sup> Iran Dooms Aide of Mossadegh for Role in Revolt Against Shah, October 11, 1954, By Kennett Love, <http://www.nytimes.com/library/world/mideast/101154iran-aide.html>

Ազգային ճակատի մյուս դեկավար անդամների հանդեպ ավելի ներողամիտ գունվեցին՝ դատապարտելով նրանց առավելագույնը իինք տարվա ազատազրկման։ Այնուամենայնիվ, «Թուղթի» նկատմամբ վերաբերմունքն առավել ծայրահեռ էր։ Հաջորդ չորս տարիների ընթացքում աստիճանաբար բացահայտվեցին «Թուղթի» բաքատողները, անվտանգության ուժերը գլխատեցին քառասուն պաշտոնյաների, ևս տասնչորսին տանջամահ արեցին, շուրջ երկու հարյուր հոգու ցմահ դատապարտեցին, իսկ երեք հազար շարքային անդամների ձերբակալեցին<sup>328</sup>։

Ի դեպ, շահի տվյալների համաձայն՝ Մոսադեղի կառավարման վերջին շրջանում բույեականների թիվը բանակում կտրուկ աճել էր։ Ըստ նրա՝ գրանցվել էին ավելի քան 600 բույեականներ։ Շահը վկայում է, որ Մոսադեղի կառավարումից հետո դատաքննությունը բացահայտեց և նոր լուս սփռեց 1951–1953թթ. տարօրինակ իրադարձությունների վրա։ Օրինակ, երբ 1951թ. Մոսադեղը իր վերահսկողության տակ առավ ուազմական նախարարությունը, սպաներից միայն 110-ն էին «Թուղթ» կուսակցության անդամ, մինչդեռ 1953թ.՝ իր տապալման ժամանակահատվածում, այդ սպաների թիվը հասավ 640-ի<sup>329</sup>։

Մոսադեղը, որը փաստորն այս ամենի հեղինակն էր, դատապարտվեց երեք տարվա ազատազրկման, որից հետո նա ցմահ մնաց տնային կալանքի տակ։ «Ես գիտեի, – գրում է շահը, – որ նա (Մոսադեղ-Ռ.Գ.) դավաճանության համար, անշուշտ, դատապարտվելու է մահապատճի։ Դրա համար ես կարգադրեցի դատարանին հաշվի չառնել նրա գործոդուրություններն ընդդեմ ինձ։ Եթեք տարվա բանտարկությունից հետո Մոսադեղն ազատ արձակվեց։ Նա մեկնեց Ահմադ-Աքադ՝ Թեհրանից արևմտուք գտնվող իր կալվածքը, և այնտեղ էլ 1967թ.՝ կորեց իր մահկանացուն։ Ես ի վիճակի չէի կանխել Մոսադեղի կառավարության արտաքին գործերի նախարար Ֆաթեմիի մահապատճիժը, քանի որ նա կունունիստ էր։ Այնուամենայնիվ, ես անձամբ ֆինանսավես ապահովեցի նրա ընտանիքի գոյատևումը։ Այս աջակցությունը դադարեց, եթե տիկին Ֆաթեմին, ով բնակվում էր Լոնդոնում, վերադարձավ Իրան՝ աջակցելու Խորմենիին»<sup>330</sup>։

Ի դեպ, շահը չի բացատրում, թե ինչպես եղավ, որ Մոսադեղին ոչ միայն մահապատճի չենթարկեցին, այլ նաև այդ աստիճան մեջմ դատեցին «դավաճանության» համար։ Մենք կարծում ենք, որ դա հնարավոր էր մի քանի պայմաններում։

1. Շահը խոսափում էր երկիրն ավելորդ անգամ ննթարկել հուզումների։
2. Եթե Մոսադեղին դատապարտեին մահապատճի, նա կվերածվեր ազատության դեմ պայքարի ելած մարտիկի խորհրդանիշի, իսկ դրա դեմ պայքարելը շահի համար շատ ավելի դժվար կլիներ։

<sup>328</sup> Abrahamian E., Iran Between Two Revolutions, p. 280.

<sup>329</sup> Mohammad Reza Pahlavi, Answer to History, p. 91.

<sup>330</sup> Ibid.

3. Նրա մահը կմիավորելու հակաշահական ուժերին, որից էլ կօգտվելու կոմունիստական ուժերը:
4. Եվ ի վերջո, հնարավոր է նաև, որ Մոսադեղը նույնպես տեղեկացվել էր «Թուրքի» ծրագրերի մասին, ըստ որի՝ շահի արտաքսումից հետո ինքը նույնպես իշխանազրկվելու է: Ենթադրում ենք, որ նա հանդիպել էր ԿՀՎ-ի գործակալների կամ գործարքի մեջ էր մտել շահաման ուժերի հետ, որ ձևական դիմադրություն ցույց տալուց հետո կհանձնվի: Դրա փոխարեն իրեն դատապարտելիս շատ խիստ չեն գտնվի:

Մի քանի տարի բանտում անցկացրեց նաև Մոսադեղի մեկ այլ համախուր՝ կրթուրան նախկին նախարար, իսկ հետազայտում Իրանի Ազգային նավարային ընկերության կարգադրիչ-տնօրին Մեհրի Բազարզանը, որն էլ հետո գլխավորեց Իրանի ժամանակավոր կառավարությունը: Բանտից ազատվելով՝ Բազարզանը կրկին միացավ քաղաքական պայքարին. նա «Իրանի ազատագրման շարժման» կուսակցության հիմնադիրներից մեկն էր, որը մտել էր Իրանի Ազգային ճակատի մեջ: Բազարզանը հակաշահական ընդդիմության ազդեցիկ գործիչներից էր<sup>331</sup>:

1953թ. հեղաշրջումից հետո Իրանում գրեթե բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությունը փաստորն արգելվեց: Փակվեցին բազմաթիվ թերթեր և ամսագրեր, դրանց թվին էին պատկանում՝ «Բեսոյն այանդե», «Շահրազ», «Բախթար-ե Էմրուզ», «Շուրեշ» և այլն:

Սակայն չի կարելի ժխտել այն փաստը, որ երկրում դեռ մնացել էին Մոսադեղին հավատարիմ մարդիկ, ովքեր էլ 1953թ. նոյեմբերի 12-ին Թեհրանում «Մոսադեղը կիաղթի» կարգախոսով ցույց կազմակերպեցին: 1953թ. դեկտեմբերի 7-9-ը Թեհրանի համասարանի ուսանողները համբուղանուր գործադրությունը կոչ արեցին՝ ի նշան բողոքի Անգլիայի հետ դիվանագիտական հարաբերությունների վերահաստատման և ԱՄՆ-ի փոխնախագահ Նիքոնի՝ Իրան կատարած այցի կապակցությամբ:

1953թ. Իրան վերադառնալուց հետո շահը բոլոր միջոցներով ամրապնդեց իր իշխանությունը: Իր ձեռքը վերցրեց Իրանի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականությունը: Նա անձամբ էր ընտրում վարչապետին և բոլոր նախարարներին: Այդ ընթացքում Իրանի կառավարությունը վարում էր ընգծված ամերիկամետ քաղաքականություն և Միջին Արևելքում պաշտպանում էր Միացյալ Նահանգների գրեթե բոլոր միջոցառումները<sup>332</sup>:

Աղյուսով, հեշտությամբ իրագործված այդ հեղաշրջումը կարելի է բացարձել մի բանի փաստարկով. Ազգային ճակատում ավանդական և միջին խավի միջև տեսակենտների տարածայնությունների խորացմամբ և քաղաքային

<sup>331</sup> Новая и Новейшая история, N 4, 1979, с. 124.

<sup>332</sup> Sheenan Michael Kahl, Iran: The Impact of United States Interests and Policies 1941–1954, New York, 1968, p. 65.

վարչակազմի ու գինսվորական կորպուսի հարաբերությունների սրմամք: Դրան ավելացավ նաև երկու գերիզոր տերությունների՝ ԱՄՆ-ի և Անգլիայի միջամտությունը, որն էլ ավելի հեշտացրեց գործողության իրականացումը: Կարելի է փաստել, որ հեղաշրջումը Մոսադեհի տեղական և արտասահմանյան ընդդիմադիրների սերտ համագործակցության արդյունքն էր: Օտարերկրյա ուժերը չէին կարող իրականացնել հեղաշրջումը, առանց տեղական ընդդիմադիրների հետ համագործակցելու:

ԱՄՆ-ը և Անգլիան կարծում էին, որ այդ հեղաշրջումը պետք է դաս հանդիսանա Մերձավոր և Միջին Արևելքի մուս բոլոր երկրների համար: Այդ կապակցությամբ «Եյու Յորը Թայմսը» գրել է. «Չնայած Իրանի նավթի շուրջ ծագած խնդիր լուծումը թանկ նատեց բոլոր մասնակիցների վրա՝ սակայն այն փայլուն օրինակ կիանդիսանա հարուստ ուստրաներ ունեցող բոյլ գարգացած երկրների համար: Իրանը համոզվեցին, թե որքան թանկ վճարեց Իրանը իր մոլեուլանդ ազգայնամոլության համար»<sup>333</sup>:

«Այսպէս» գործողության շնորհիվ Միացյալ Նահանգները երեք ձեռքբերում ունեցավ: Առաջին՝ «1950-ական թվականներին մեծացավ Իրանի կախվածությունը ԱՄՆ-ից, ավելին՝ այն մերձեցավ արևմտաթի հետ: Երկրորդ՝ Իրանն արդեն ակնհայտորեն բացառում էր կոմունիզմը: Երրորդ՝ անգլո-ռուսական ավանդական մրցակցությունը փոխարինվեց ամերիկա-խորհրդային մրցակցությամբ»<sup>334</sup>: Մենք կավելացնենք նաև չորրորդ ձեռքբերումը, որը կարծում ենք ամենակարևորներից էր՝ Իրանի նավթի 40%-ը, ինչին ԱՄՆ-ը ձգտում էր շատ երկար տարիներ:

Հաջող հեղաշրջումից հետո, նրա իրականացման առանցքային դեմքերը ստացան մի շարք պարզեւատրումներ: Գեներալ Նադեր Բաթմանքելիշը նշանակվեց զորքի գլխավոր իրամանատար և հետազյում էլ ստանձնեց ներքին գործերի նախարարի պաշտոնը: Արքա Ֆարզաննեղանը նշանակվեց փոստի և հետահարողագրության նախարար: Գնդապետ Թեյմոր Բախտիարին շնորհվեց գեներալի կոչում և ուզմական դրույթան ժամանակ նշանակվեց Թեհրանի պարես: Հետազյում Բախտիարը դարձավ ՍԱՎԱՔ-ի առաջին ղեկավարը: Նախրիին շնորհվեց գեներալի կոչում, նա փոխարինեց Բախտիարիին, երբ վերջինս հետազյում գլխավորեց ՍԱՎԱՔ-ը: Արդեմիր Զահենին կառավարությունում գրանցեցրեց քարձը պաշտոններ, իսկ հետագայում էլ երկար տարիներ Միացյալ Նահանգներում Իրանի դեսպանն էր: Բացի այդ, նա ամուսնացավ (հետո ամուսնալուծվեց) շահի աղջկա հետ: Ռաշիդյանները բավական հարստացան իրենց թիգնեսը զարգացնելով՝ օգտագործելով շահի հետ ունեցած կապերը: Թերմիթ Ռուզվելտը հեղաշրջումից մի քանի օր անց մեկնեց Լոնդոն, որտեղ հաղիպեց Չեքիշին և վերջինս էլ ասաց. «Եթե ես գոնե մի քանի

<sup>333</sup> The New York Times, 6 August, 1954.

<sup>334</sup> Saikal Amin, The Rise and Fall of The Shah, New Jersey, 1980, p. 45.

տարով երիտասարդ լինելի, մեծ սիրով կծառայելի Ձեր հրամանատարության տակ»<sup>335</sup>: «Ք.Ռուզվելտի կատարած «փայլուն» աշխատանքն ըստ արժանվոյն գնահատության Միացյալ Նահանգների կառավարության կողմից: 1958թ. հետախուզությունից հետանալով՝ ստացավ Ազգային Անվտանգության մեջալ և ծառայության անցավ «Գալֆ Օլի Քորփորեյշն»—ում, որտեղ 1960թ. արդեն գրանցում էր փոխականական պաշտոնը: Ի դեպ, «Գալֆ Օլի Քորփորեյշն»—ը 1954թ. օգոստոսի 5-ի պայմանագրով ստացավ իր մասնարամինը իրանական նավթից: Իսկ ավելի ոչ Ռուզվելտը հիմնեց իր սեփական հաջող բիզնեսը՝ օգտվելով Իրանի շահի և Մերձավոր Արևելքի մի շարք առաջնորդների հետ ունեցած մտերմիկ հարաբերություններից: Բարձր գնահատելով հեղաշրջման ժամանակ նրա վաստակը՝ արևմտյան մամուլը Ռուզվելտին տվեց «պարոն Իրան» մականունը: Իրանի շահը նոյնպես բարձր գնահատեց Քերմիտ Ռուզվելտի աշխատանքը՝ ասելով. «Դմ զահի համար պարտական եմ Աստծոն, իմ ժողովրդին, իմ զորքին և Ձեզ»<sup>336</sup>: Բացի այդ նրան նվիրեց իր անձնական ուժիցօք ծխախոտատությը: «Այսրա» գործողությունն մասնակցություն ունեցած ամերիկացիներից շատերը հաջող կարիքարա ունեցան ԿՀՎ-ում: Դավեա եղարյանները հետագայում Ռուզվելտին խնդրեցին գլխավորել հեղաշրջման գործողությունները Գվատեմալայում, Եգիպտոսում և այլ երկրներում, սակայն նա իրածարվեց, նշերվ, որ իրավիճակը բարենպաստ չէ: Մի շարք բրիտանացիներ ևս մեծ հաջողությունների հասան Անգլիայի հետախուզական մարմիններում:

Հետաքրքիր է անգլիական «Էկոնոմիստ» շարաթաթերթի վկայակոչումը: Հակամարտության հենց սկզբից էլ այդ շարաթաթերթը նշում էր, որ Իրանում իր կոնցեսիաներով հանդերձ՝ Լոնդոնը նավթահորերից և ներդրումներից բացի, շատ ավելին կկորցնի: «Այն լորջ հարված կիասցնի Անգլիայի առևտորական և տնտեսական դիրքերին: Իրանում կոնցեսիաների կորուստը կնշանակի անգլիական հզոր և միակ մաքոր նավթային ձեռնարկության կորուստ, և դա խիստ կրուպացնի Մեծ Բրիտանիայի դիրքերը: Մեկ տարվա ընթացքում նավի այդ աղբյուրները կիրականացնեն, բայց այդպիսի կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող ձեռնարկության կորուստն անուղղելի կլինի»<sup>337</sup>:

1954թ. օգոստոսի 5-ին Մեծ Բրիտանիան և Իրանը եկան համաձայնության նավթի հարցի շորջ՝ հարց ինչի պատճառով հենց իրականացվեց «Այսրա» գործողությունը: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էնթոնի Իդենը իր հուշերում փաստորեն արդարացնում է համատեղ իրականացրած գործողությունը և գրում. «Ես գտնում էի, որ եթե Մոսադենի կառավարությունը տապալմա,

<sup>335</sup> Roosevelt Kermit, Countercoup: The Struggle for The Control of Iran, p. 207, Mark Gasiorowski and Malcolm Byrne, Mohammad Mosaddeq and the 1953 Coup in Iran.

<sup>336</sup> Sick Gary, All Fall Down America's Tragic Encounter with Iran, N.Y., 1985, p. 7.

<sup>337</sup> Economist, 26.V.1951.

ապա նրա տեղը կարող էր գրադացնել առավել խելամիտ կառավարություն, որի հետ հնարավոր կլիներ հանել ընդունելի համաձայնագրի ստորագրման»<sup>338</sup>:

Մի քանի տարի անց՝ 1962թ., ԿՀՎ-ի տնօրեն Ա.Դավթեսի փոխարինումից հետո, նոր մանրամասներ բացահայտվեցին այդ հեղաշրջման կապակցությամբ: Ամեն գնով շանալով վերականգնել ԿՀՎ-ի վարկանիշը՝ նա սկսեց տարփողել իր նախկին հաջողությունները և ակամա բացահայտեց այդ վարչության մի շարք գաղտնիքներ:

1963թ. տպագրվեց Ա.Դավթեսի «Հետախուզության արվեստը» գիրքը, որտեղ հետարքրական են ԿՀՎ-ի նախկին տնօրենի մտորամենքը իրականացրած հեղաշրջման մասին: Նա ԿՀՎ-ի փայլու աշխատանքը համաստորեն ներկայացնում է որպես դրսի աշակցություն: «Իրանում Մոսահեղը և Գվատեմալյանում Արքենար իշխանության էին ենկել կառավարության սովորական փոփոխության հետևանքով, այլ ոչ թե Զեխտարկվակիայի կոմունիստական հեղաշրջման օրինակով: Նրանցից ոչ մեկը այդ ժամանակ չէր բացահայտում իր մտադրությունները կոմունիստական պետություն ստեղծելու վերաբերյալ: Եթե դա պարզ դարձավ, դրսից օգնություն ցուցաբերվեց հակակոմունիստական տարրերին: Մի դեպքում աշակցություն ցուցաբերվեց շահին, մյուս դեպքում՝ Գվատեմալյայի հայրենասերներին: Երկու դեպքում էլ վտանգը հաջողությամբ հաղթահարվեց»<sup>339</sup>:

Միայն 1976թ. ԱՄՆ-ի հետախուզական մարմինների գործերի հետաքննությամբ գրադադար Սենատի հատուկ հանձնաժողովը պաշտոնապես հաստատեց, որ ԱՄՆ-ը միջամտել է Իրանի ներքին գործերին. «1953–1954թ. ԿՀՎ-ն իրականացրել է երկու առավել հանդուզն գործողություններ. առաջինը՝ Իրանում՝ Մոհամմեդ Մոսահեղի կառավարության դեմ, իսկ երկրորդը՝ Գվատեմալյայի նախագահ Զակոր Արքես Գուսմանի դեմ»: Երկու գործողություններն էլ անցկացվել են արագ և փաստորեն առանց արյունահեղությունների: Դրանց իրականացումը թույլ տվեց իշխանությունից հեռացնել կոմունիստամետ համարկող երկու առաջնորդների և նրանց փոխարինել արևմտամետ կողմանորդություն ունեցող գործիչներով»<sup>340</sup>:

Մոսահեղի իշխանագրկումից հետո ԱՄՆ-ը վերսկսեց իր օգնության ծրագիրը Իրանին: Ռուզվելտի առաջարկով Վաշինգտոնն Իրանին հատկացրեց խոշոր գումարի մի «անհատույց օգնություն», որով փակվեց Իրանի բյուջեի

<sup>338</sup> Eden A., The Memoirs of Sir Anthony Eden, London, 1960, p. 201.

<sup>339</sup> Dulles Allen W., The Craft of Intelligence, New York, 1963, p. 224. Michael Kahl Sheenan, Iran: The Impact of United States Interests and Policies 1941–1954, New York, 1968, p. 64.

\*Օվամտեմալյայի կառավարությունը՝ ճախազան Զ.Արթուր Ոլենայությամբ, 1952թ. որոշեց ազարայի բարեկայտումներ իրականացնել, որը պետք է սահմանափակել անդրիկյան «Յունայթի Ֆորուր բանհանրի» հոլովան խոշոր տիրությունը (այն կազմում էր Գվատեմալյայի լավագույն հողերի 20 %-ը): Այս բայց բնավ դոր չեկավ Վաշինգտոնին: Կրեմենուկ В.А., Политика США в развивающихся странах. Проблемы конфликтных ситуаций 1945–1976, Москва 1977, с. 116.

<sup>340</sup> «Final Report of the Select Committee to Study Governmental Operations with Respect to Intelligence Activities. United States Senate», Washington, 1976, p. 45.

Ճեղքածքը և կառավարության ընթացիկ ծախսները: Հիրավի, Մոսադեղի պաշտոնանկությունից հետո ամերիկյան օգնության տարափ սկսվեց:

Վարչապետ Ֆ.Չահեդին նամակ հղեց Վաշինգտոն՝ տնտեսական շուապ օգնության խնդրանքով: 1953թ. օգոստոսի 26-ին նախազահ Դ.Դ. Էյզենհաուերը ստացավ այդ նամակը, որտեղ նշվում էր, որ Իրանին հատկացվող ամերիկյան օգնության քանակը և ձևը բավարար չեն երկրի ֆինանսական և տնտեսական առկա ճգնաժամը հաղթահարելու համար: Նախակում նաև շեշտվում էր. «Գանձարանը դատարկ է, ազգային տնտեսությունը՝ քայլայված, Իրանը ֆինանսական շուապ օգնության կարիք ունի, հնարավորություն ընձեռեք դուրս գալ տնտեսական և ֆինանսական այս քասից»<sup>341</sup>:

ԱՄՆ-ի նախազահ Էյզենհաուերն արագ արձագանքեց նախակին և նոյն օրը՝ օգոստոսի 26-ին, Չահեդին գրեց. «Ես ԱՄՆ-ի դեսպան Հենդերսոնին հրահանգել եմ խորհրդակցել Ձեզ հետ՝ մասնավորապես Իրանին ֆինանսական օգնություն տրամադրելու նախապատրաստման և ծրագրի կազմման վերաբերյալ: Ստասենը (ԱՄՆ-ի Արտասահմանյան օվերացիաների վարչության պետ, -Դ.Գ.) անմիջապես Իրան կուղարկի հատուկ ներկայացուցիչների, որպեսզի օգնեն Հենդերսոնին այդ գործում: Ես շեշտում եմ, որ Ձեր կարիքներն անհապայ պետք է բավարարվեն, և Ձեր պահանջները կընսարկվեն ամենայն սրտացավորությամբ...»<sup>342</sup>: Օգոստոսի 28-ին Չահեդին հայտարարեց, որ Անձ Բրիտանիայի հետ նավթի հարցի շուրջ բանակցությունները կսկսվեն սեպտեմբերի երկրորդ կեսին:

Քանի որ ԱՄՆ-ը, Միջին Արևելքում իր ուազմավարական գլխավոր հենարաններից մեկը չէր ցանկանում կորցնել, 1953թ. սեպտեմբերի 1-ին Իրանում ԱՄՆ-ի դեսպան Հենդերսոնը և վարչապետ Չահեդին նամակներ փոխանակեցին՝ Իրանին ամերիկյան օգնություն հատկացնելու մասին: Սեպտեմբերի 3-ին Արտասահմանյան օվերացիաների վարչությունը հայտարարեց, որ ԱՄՆ-ն Իրանին 23,4 մլն դոլարի տեխնիկական օգնություն տալու մտադրություն ունի, իսկ երեք օր անց նախազահ Դ.Դ. Էյզենհաուերը մամուլում հայտարարեց Իրանի տնտեսությանը 45 մլն դոլարի օգնություն ցուց տալու մասին<sup>343</sup>: ԱՄՆ-ի հատկացրած 45 մլն դոլար օգնության դիմաց Չահեդին պարտավորվեց. առաջին 3 ամսում ճնշել կոմունիստներին Իրանում և հող նախապատրաստել՝ տարածաշրջանում Իրանը երկրորդ թուրքիա դարձնելու համար: Երկրորդ՝ հասարակության մեջ պետք է բարերար հող նախապատրաստեր Անգլիայի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնման և նավթի հարցի լուծման համար: Երրորդ՝ թուրքիայի և ԱՄՆ-ի հետ պետք է կսրբ ուազմա-

<sup>341</sup> Bill James A., *The Eagle and the Lion. The Tragedy of American–Iranian Relations*, London, 1988, p. 113–114.

<sup>342</sup> Орлов Е.А., *Внешняя политика Ирана после второй мировой войны*, с.116.

<sup>343</sup> غلام رضا نجاشی، *تاریخ سیاسی بیست و پنج ساله ایران، تهران، ۱۳۷۶*, ص. ۵۱۶.

կան դաշինք, որով կմիանար «ազատ աշխարհին»<sup>344</sup>: Ահա թե ինչ գնով էր Միացյալ Նահանգներից Իրանը օգնություն ստանում, որից երկար ժամանակ գրկվել էր Մոսադեղի պայքարի պատճեռով: Մրանով ԱՄՆ-ի ազդեցությունն Իրանում նոր հարթության վրա դրվեց: Դրանից քաջի Իրանին հատկացվեց ևս 20 մլն դոլարի ուղղմական օգնություն: Հարկ է նշել, որ այդ օգնությունն «անվերադարձ ֆինանսական օգնություն էր», որով ԱՄՆ-ի կառավարությունը փորձում էր Էլ Ավելի ամրապնդել իր դիրքերն Իրանում և վերջնականապես խարխլել Մեծ Բրիտանիայի՝ ավանդական դարձած դիրքերը:

Եթե Միացյալ Նահանգները Իրանին 1951թ. հատկացրել էր տեխնիկական օգնություն 1,3 մլն դոլարի չափով, 1952թ.՝ 23,6, 1953թ.՝ 23,2, ապա Մոսադեղի կառավարության տապալումից հետո՝ 1954թ., տեխնիկական օգնության ծավալը եռապատկվեց հասնելով՝ 84,8-ի, 1955թ. դրա թիվը փոքր-ինչ նվազեց՝ հասնելով 75,5-ի, իսկ 1956թ. այն հասավ 73,0 մլն դոլարի<sup>345</sup>:

Օգնություններից ամենաաշքի ընկնողը 1954թ. նոյեմբերի 2-ին Իրանին հատկացված 127 մլն դոլարի նպաստն էր: Բացի այդ Իրանը 1953-1957թթ. ընթացքում Միացյալ Նահանգներից ընդհանուր արժեքով 145 մլն դոլար արտակարգ ֆինանսական օգնություն ստացավ, որով երկիրը փրկվեց սնանկացումից<sup>346</sup>: Ճիշտ է, պայմաններից ենենլով, Իրանը նորանոր օգնությունների խիստ կարիք ուներ, սակայն դրանը հետազայտմ ծանրանալու էին ժողովրդի ուսերին:

Մոսադեղի կառավարության տապալումից հետո ամերիկյան կապիտալի առջև բացվեցին Իրանի առևտորի դոները: 1955թ. օգոստոսի 15-ին Իրանն ԱՄՆ-ի հետ կնքեց «Բարեկամության պայմանագիր», որի համաձայն՝ Իրանի կառավարությունն ամերիկյան ընկերություններին և անհատ անձանց լայն իրավունքներ հատկացրեց՝ Իրանում առևտորային գործունեության և ձեռներեցության ծավալման համար: Այդ պայմանագրով ԱՄՆ-ի քաղաքացիներին թույլ տրվեց մուտք գործել Իրան և ապրել այնտեղ, գրադիվ առևտորային գործունեությամբ և ձեռներեցությամբ:

«Բարեկամության պայմանագրի» 4-րդ կետով նշվում էր, որ ԱՄՆ-ի քաղաքացիների սեփականությունը և ընկերությունները, ինչպես նաև դրանց եկամուտները «գտնվում են մշտական պաշտպանվածության ներքո» և չեն կարող սանեցվել «առանց անհապաղ հավասարաթեք փոխհատուցման վճարման»: Այդ օրենքի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացիներին, ընկերություններին և անհատ գործարաններին իրավունք էր տրվում Իրան ներկրել իրենց կապիտալը ինչպես կանխիկ դրամի, այնպես էլ հաստոցների, ֆարրիկանների և գործարանների տեսքով: Նրանք շուրջ 5 տարի ազատվում էին հարդերի վճարումներից: Դրանով հանդերձ՝ Նրանց տրվեցին այն բոլոր արտօնություններն ու իրավունք-

<sup>344</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с.119.

<sup>345</sup> Bill James A., The Eagle and the Lion. The Tragedy of American–Iranian Relations, London, 1988, p. 124.

<sup>346</sup> Abrahamian E., Iran Between Two Revolutions, p. 419.

Ները, որոնցից օգտվում էին իրանական մասնավոր կապիտալը և արտադրական ձևոնարկությունները: Բացի այդ, օտարերկրյա կապիտալի սեփականատերներին բռոյլ էր տրվում ամեն տարի, արտասահմանային տարադրամի տնաքով Իրանից մաքուր եկամուտ դրս թերել: Իրանի կառավարությունն իր վրա վերցրեց օտարերկրյա ողջ կապիտալի և դրա եկամուտների «օրինական հովանավորչության» պարտականությունը: Օրենքում ասվում էր, որ եթե օտարերկրյա կապիտալի սեփականատերը ինչ-որ պարագայում զրկվի Իրանում սեփականության իրավունքից, ապա իրանական կառավարությունը «երաշխավորում է արդարացնելուն փոխաստոցել հասցված վեասը»: Ինչպես շուտով պարզվեց, ամերիկյան մենաշնորհները չահմանափակվեցին մասնավոր կապիտալի ներգրավման մասին օրենքով: ԱՄՆ-ի պետքարտուղարությունը զգուշացրեց Իրանի կառավարությանը, որ ամերիկացի կապիտալիստների համար այդ օրենքի ընդունումը բավարար չէ, և որ նրանք իրանական կառավարությունից պահանջում են լրացուցիչ երաշխիքներ: «Պետքարտուղարությունն առաջարկեց Իրանի և ԱՄՆ-ի կառավարությունների միջև կարել հատուկ համաձայնագիր, որով երկու կառավարություններն էլ իրենց վրա կվերցնեն Իրանում ամերիկյան մասնավոր ներդրումների երաշխավորումը<sup>347</sup>: 1957թ. մայիսին կնքվեց այդ պայմանագիրը ևս՝ «մասնավոր կապիտալի ներդրման երաշխիքների» մասին:

1955թ. «Բարեկամության պայմանագրի» կնքման արդյունքում՝ 1955թ. օգոստոսի կեսերին Իրանի կառավարությունը որոշեց ԱՄՆ-ի հյուպատոսարաններ բացել Ֆարս, Խորասան, Քերման և Ասրաքատական նահանգներում:

Հարկ է նշել, որ ամերիկյան օգնություններին անդրադառնում են նաև իրանցի գիտնականները: Նրանք, չկեղծելով անցյալի իրողությունները, նոյնպես մատնանշում են ԱՄՆ-ի օգնությունն Իրանին՝ իհարկե յուրովի մեկնարանելով այն:

Ամերիկյան տնտեսական և ռազմական օգնություններն Իրանին՝ ըստ իրանական աղբյուրների<sup>348</sup> (միլիոն դոլարով).

<sup>347</sup> Васин Н.В., Экспорт американского частного капитала в Иране—одна из форм экспансиионистской политики США, Краткие сообщения Института Народов Азии, 77, Афганистан, Иран, Турция; История и экономика М, 1964, с. 64–65.

<sup>348</sup> علیرضا از عندي، روایت خارجی ایران (دولت دست نشانده) ۱۳۷۶—۱۳۷۷، تهران، ص. ۲۵.

Տարի	Ընդամենը	Ռազմական	Տնտեսական
1946–48	25,8	-----	25,8
1949–52	33,1	16,6	16,5
1953	59,2	27,3	31,9
1954	111,0	26,5	84,5
1955	146,3	17,5	128,8
1956	98,0	23,6	74,4
1957	90,5	39,0	51,5
1958	114,9	73,0	51,9
1959	137,8	90,9	46,9
1960	127,3	89,1	38,2

Իսկ Դոլամենքա Նաջարի աշխատության համաձայն՝ ամերիկացիների օգնության մակարդակը 1955–57թթ. հասավ 500 մլն դոլարի, որից 125 մլն-ը հատկացվեց որպես ուազմական օգնություն<sup>349</sup>.

Օգնության մեկ այլ ձև էր համարվում ԱՄՆ-ում իրանցի ուսանողների կրթությունը: 1955թ. «Թրումենի դոկտրինի 4-րդ կետի» համաձայն, ԱՄՆ-ում ուսում ստացող 1170 իրանցիներին ցույց տրվեց ընդհանուր առմամբ 4,7 մլն դոլարի նյութական օգնություն<sup>350</sup>:

Այդ օգնությունների շնորհիվ կրկնակի աճեց իրանցի ուսանողների թիվը Միացյալ Նահանգներում: Հարց է ծագում, թե Վաշինգտոնն ինչո՞ւ էր շահագրգության Միացյալ Նահանգներում իրանցի ուսանողների ուսումնառության և նպաստավոր պայմաններ ստեղծելու համար: Տրամարանական պատճառներից մեկն այն է, որ ամերիկյան կրթություն և դաստիարակություն ստացող ուսանողները սերտորեն կկապվեին ԱՄՆ-ի հետ, իսկ մի քանի տարի հետո արդեն նախկին ուսանողներից շատերը կհայտնվեին Իրանի կառավարության քարձրագոյն պաշտոններում<sup>351</sup>:

Բացի վերոհիշյալ օգնություններից Եյզնհաուերի կառավարությունն այլ “օգնություններ” է էր ցուցաբերում Իրանի շահին. օրինակ սեպտեմբերին աջակցեց ղաշխայիների ապստամբության ձնշման ժամանակ, 1954թ. ընտրությունները կեղծելիս, ինչպես նաև ՍԱՎԱՔ-ի ստեղծման գործում<sup>352</sup>:

<sup>349</sup> غلامرضا شجاعی، تاریخ سیاسی جوست و پنج ساله ایران، تهران، ۱۹۷۴، ص ۵۱۶.

<sup>350</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке, с.199.

<sup>351</sup> Կավանարյան Գ., Ամերիկյան օգնություններն Իրամին որպես իրանա-ամերիկյան հարաբերությունների կարևորագույն գործն, Սերմանը և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XIX, Երևան, 2000, էջ 67:

<sup>352</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, pp. 76–77.

«4-րդ կետի» տեխնիկական առաքելությունը մեծապես զբաղված էր Թեհրանում կրթության կազմակերպման գործով: ԱՄՆ-ը զգալի աջակցություն ցուցաբերեց Իրանի կրթական համակարգի գրեթե բոլոր օդակներին՝ նախակրթարաններին, միջին և մասնագիտական դպրոցներին: Սակայն առավել զգալի էր նրա գործունեությունը Իրանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ամերիկյան մասնագիտները դասախոսություններ էին կարում համասրաններում, ընտրում էին շնորհական երիտասարդների, որոնց հատկացվում էր կրթաքոչակ և աջակցություն՝ իրենց պրատիկան Միացյալ Նահանգներում անցկացնելու համար: Բացի ամերիկյան օգնությունից՝ 1957–65թթ., պետության միջոցներով կրթություն ստանալու համար ԱՄՆ ողջորվեցին 6521 իրանցիներ, որոնցից 3802-ը (58%-ը) ստացան ԱՄՆ-ի քաղաքացիություն և չվերադարձան հայրենինից<sup>353</sup>:

Իրանում գործում էր նաև «Ռոքֆելլերի ֆոնդ» բարեգործական կազմակերպությունը, որը մասնակցում էր Իրանի կրթության համակարգի վերակազմակորման գործընթացին: «Ռոքֆելլերի ֆոնդը» Շիրազի համալսարանի կենսաբիմական լաբորատորիային հատկացրեց 5 մլն դիմայ՝ սարքավորումներ գնելու համար<sup>354</sup>:

Զգտելով հետագայում էլ ամրապնդել իր դիրքերը Իրանում՝ Միացյալ Նահանգները զգալիորեն մեծացրեց ուսումնական խորհրդականների ինստիտուտը, որը վերահսկում էր բանակը, հետախուզությունը, ժանդարմերիան, ոստիկանությունը, պետական ապարատը, ինչպես նաև տնտեսությունը: Հեղաշրջումից հետո այդ խորհրդականների ընդհանուր թիվը երկրում կազմում էր մի քանի հազար մարդ: Այդ ամենի հետևանքով՝ արդեն այդ ժամանակ դրվում էին ամերիկա-իրանյան հետագա ակտիվ ուսումնական համագործակցության հիմքերը: Հենվելով դրանց վրա՝ Պենտագոնը և ԿՎ-ն ձանապարհ էին հարցում Իրանին ամերիկյան նորագոյն գինամբերը մատակարարելու համար և փորձում էին իրականացնել ծրագիր, ըստ որի՝ Իրանի տնտեսությունն ավելի ու ավելի պետք է ենթարկվեր Միացյալ Նահանգների ուսումնական արդյունաբերության համակարգի շահերին:

Երկրի տնտեսության զարգացման համար իրեն չարդարացրեց Արևմուտքի ֆինանսական օգնությունը, քանի որ դրա առյուծի բաժինը ՍԵՆՏՕ-ի ծրագրերով նախատեսվում էր ծախսել ուսումնական ապարատի համար:

Սակայն հարկ է նշել, որ ինչքան էլ այդ օգնություններն անհրաժեշտ էին, այնուամենայնիվ, Իրանը թանկ վճարեց դրանց համար: Ամերիկյան օգնությունը, ինչպես իրենց փորձի վրա համոզվել են երիտասարդ պետությունները, տանում էր դեպի ֆինանսական կախվածություն և արտաքին պարտքի մեծացում: Հիմնական պարտքը և դրանից առաջացած տոկոսը մարելու համար պետության

<sup>353</sup> Дорошенко Е., Иран, Специальный бюллетень, N 12/103/, с. 43–44.

<sup>354</sup> Дорошенко Е., Иран, Специальный бюллетень, N 12/103/, с. .45.

յունները կրկին օգնություն էին խնդրում ԱՄՆ-ից: Ամերիկացի հայտնի քաղաքացին Հարիմանը ժամանակին բացահայտ հայտարարել է, որ «ԱՄՆ-ի օգնությունը օգնության ֆոնդ է հենց իրեն՝ Միացյալ Նահանգներին»<sup>355</sup>. Խոկ ԱՄՆ-ի պետքարտուղար Զ.Ֆ.Դավթյանը, անդրադառնարկվ ինչպես Իրանում, այնպես է Մերձավոր և Միջին Արևելքի այլ երկրներում իրականացվող ԱՄՆ-ի քաղաքականությանը, գրել է «Արտասահմանյան պետությունը գրավելու երկու ուժի կա. մեկը՝ երկրի բնակչությանը զինված ուժի միջոցով ոազմական վկահակողության տակ պահելն է. մյուսը՝ ֆինանսական քաղաքականության միջոցով երկրի տնտեսության նկատմամբ վերահսկողություն հաստատելը»,<sup>356</sup> որն է անում եր Միացյալ Նահանգները Իրանում:

Հեղաշրջումից հետո ամերիկյան քաղաքականության ազդեցությունը Իրանում նկատվում էր բոլոր բնագավառներում: ԱՄՆ-ի դեսպան Հենդիբունը միակ քաղաքական գործիչն էր, ով իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ կարող էր պալատում հանդիպել շահին կամ վարչապետի նստավայրում գններալ Զահենիին: Մինչեւ Իրանի քարձրաստիճան քաղաքական գործիչները մի քանի օր պետք է չարչարվեին՝ շահի կամ վարչապետի հետ հանդիպելու թույլտվություն ստանալու համար: Ըստ Էռյան՝ երկրում «սպիտակ ահարեկություն» էր հայտարարվել:

1957թ. մայիսին նախագահ Էյզենհաուերն ամերիկյան ժողովրդին հղած իր ուղերձում նշեց, որ կումոնիզմի վտանգն Իրանում խկացես առկա էր, և այն հանդես էր գալիս ի դեմ Մոսարակի: Նա հայտարարեց. «Համարձակ շահի դեկավարությամբ Իրանի ժողովուրդը դեմադրելու դուրս եկավ այդ վտանգին: Ժողովրդի ջանքերով վերականգնվեց տնտեսական կայունությունը, Իրանը մեզանից ստացել է անհրաժեշտ օգնություն... Իրանն ազատ է մնում: Եվ նրա անկախությունը շարունակում է ապացուել մեր անկախության խիստ կարևորությունը»<sup>357</sup>:

1957թ. ուզմական դրության դադարեցմանը գուզընթաց միապետության դիրքերի ամրապնդման և Իրանի ժողովրդի նկատմամբ զանգվածային հաշվեհարդարի հիմնական զենքը դարձավ նոր զադանի ոստիկանությունը՝ Ազգային անվտանգության և տեղեկատվության կազմակերպությունը: Շուտով բոլորին քաջ հայտնի դարձավ ԱՎՀԱՔ հապալիսը (Սազման-ե Էթելեա'աթ վա Ամսիյաթ-ե Բեշվար), որի առաջին դեկավարը դարձավ գեներալ Թեյմոր Բախտիարը, շահի կնոջ՝ Սորայայի հորեղբայրը<sup>358</sup>, ով ակտիվ գործունեություն էր ունեցել

<sup>355</sup> Зименков Р., Под флагом "помощи", Новое Время, N 8, Москва, 1980, с. 20.

<sup>356</sup> Известия, 31.03.1967.

<sup>357</sup> Pahlavi Mohammad Reza, Answer to History, p. 91–92.

<sup>358</sup> Esposito John L., The Islamic Threat Myth or Reality?, N.Y., 1995, p. 104. Abrahamian E., Iran Between to Revolutions, p. <sup>419</sup>. Maziar Behrooz, Rebels With a Cause, The Failure of the Left in Iran, London-N. Y., 2000, p. 1.

و پنج ساله ایران، تهران، ۱۳۷۶، ج ۵۱۷. متوجه قرمانفرماشیان، خون و نفت، خاطرات پک شاهزاده ایران، تهران، ۱۳۷۸، ص ۲۸۷. غلامرضا نجاتی، تاریخ سوسایس بیوست

հեղաշրջման ժամանակ: Միացյալ Նահանգները Իրան ուղարկեցին գնդապետ Ստեփան Զ. Մելին, որպեսզի օգնի Իրանում գաղտնի ոստիկանություն ստեղծելու համար: ԱՍՎԱԲ-ը ստեղծվեց 1957թ. և այդ կառույցի ստեղծման գործուն իր ուրույն դերն ունեցան Իսրայելի հետախուզական ծառայությունը՝ «Անսար»-ը, ԱՄՆ-ի ԿՀՎ-ն և Ֆեղերալ հետախուզական բյուրոն, ինչպես նաև՝ Ֆրանսիան ու Անգլիան:

1953թ. հեղափոխությունից հետո շահին հավատարիմ 20 ապաներ գեներալ Բախտիարի գլխավորությամբ վերապատրաստվեցին ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի ՖՀԲ-ի հատուկ դպրոցում, ինչպես նաև Լենգլիում գտնվող ԿՀՎ-ի շտարում լեցին մի ամբողջ դասընթաց: Նրանք էլ հենց դարձան ԱՍՎԱԲ-ի ողնաշարը: Տար տարիների ընթացքում և հակաված 50-ականների կեսերին, Իրանի 2000 ապա ուղևորվեց Միացյալ Նահանգներ՝ վերապատրաստվելու: Մյուսները մենքնեցին Ֆրանսիա և Գերմանիա<sup>359</sup>:

Ամեն տարի ԱՍՎԱԲ-ի 35 աշխատակիցներ գործողվում էին ԱՄՆ, 24-ը՝ Իսրայել, 16-20-ը՝ Անգլիա: ԱՍՎԱԲ-ը իր մասնաճյուղերն ուներ նաև ԱՄՆ-ում, որտեղ հետևում էին ամերիկայում բնակվող իրանցիներին: Հազարավոր մարդկանց, ում կասկածում էին հակաշահական ընդդմության մեջ, ԱՍՎԱԲ-ը բանտ էր նետում և շաված տանչանքների ենթարկում: Հատկապես դաժան հայածանքի ենթարկվեցին «Թուղե»-ի անդամները, որոնք ստիպված էին ընդհատակ անցնելու: 360 հազար քաղաքացիներ գլխատվեցին կամ մահացան խոշտանգումներից ԱՎԱԲ-ի բանտախցերում: Ի դեպ, ԱՍՎԱԲ-ը ուներ 6 հազար բանտ<sup>360</sup>:

Կարելի է վստահ ասել, որ Մ.Մոսադեջի կառավարության տապալումն ուժեղացրեց Իրանի տնտեսական, քաղաքական և ռազմական կախվածությունը Միացյալ Նահանգներից: Իրան հասնելու համար ԱՄՆ-ն առաջին հերթին հոգաց ամրապնդելու շահի դիրքերը և բարձրացնելու նրա հեղինակությունը, որի համար իրագործվեցին մի շարք ծրագրեր: Օրինակ՝ 1955-1956թ. միջոցառումներ ձևանարկվեցին Մեջլիսը «երիտասարդացնելու» ուղղությամբ. ընտրությունների ժամանակ մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի պահպանողական ուղղության կայգածատեր-պատգամավորներին փոխարինելու գային նրանց որդիները:

1957թ. իրականացվեց Սահմանադրության մասնակի բարեփոխություն, ըստ որի՝ պառլամենտի լիազորությունների ժամկետը 2 տարուց երկարացվեց 4-ի, իսկ դեպուտատների թիվը 136-ից՝ 200-ի: Միևնույն ժամանակ շահը ձեռք բերեց «վեսույշ» իրավունք, որի համաձայն՝ կարող էր պառլամենտական օրինագիծը, այդ թվում նաև ֆինանսական հարցերը, հետո ուղարկել վերանայման: 1957թ. Իրանում ԱՄՆ-ի օրինակով ձևավորվեց երկկուսակցական համակարգ՝

<sup>359</sup> Кременюк В. А., Борьба Вашингтона против революции в Иране, М., 1984, с. 40. Hurewitz J.C., Middle East Politics: The Military Dimension, p. 284-286.

<sup>360</sup> Новая и Новейшая история, N 4, Москва, 1979, с.128, Кременюк В.А., Борьба Вашингтона против революции в Иране, М., 1984, с.41-42.

«Մելիոն» (Ազգայնական) և «Մարդում»-ը (ժողովուրդ): Առաջին կուսակցության առաջնորդ վարչապետ Մանուչեր Եղբալն էր, իսկ կառավարության «ընդդիմադիր» կուսակցության՝ «Մարդում» առաջնորդ շահի գինակից և խոշոր հոդատար Ասադոլլահ Ալիամին էր<sup>361</sup>: Իրանցիներն այս երկու կուսակցություններին կոչում էին “այս և այս պարոն” կուսակցություններ, շեշտելու համար, որ երկուսն էլ հավատարիմ են շահին:

1957թ. ստեծվեց «Փահլավի ֆոնդ» բարեգործական կազմակերպությունը, իսկ 1958թ. սեպտեմբերից շահը մի քանի անգամ մասնակցեց մամլո ասուլիսների: Որպեսզի ինչ-որ կերպ կանչի կորուպցիան, կաշառակերպությունը, գանձարանների թալանը, 1958թ. շահի կարգադրությամբ ընդունվեց օրենք, որն արգելում էր կառավարության աշխատողներին, դեպուտատներին, պետական ծառայողներին և շահի ընտանիքի անդամներին մասնակից դառնալ կառավարական մակարդակով կնքվող համաձայնագրերին: 1959թ. շահի կարգադրությամբ ընդունվեց ևս մեկ օրենք, որը հայտնի էր «Ուրտեղից ևս վերցրել» անվամբ: Այն նախատեսում էր պարբերաբար տեղեկատվություն հավաքել պետական ծառայողների և անշարժ գույքի վերաբերյալ: Փորձեր արվեցին բարձրացնելու միապետության հեղինակությունը բաղարային միջին խավի շրջանում, հատկապես ծառայողների շրջանում: Նրանցից շատերին ապահովեցին աշխատանքով Ծրագրավորման կազմակերպություններում, ԻՄՆՀ-ում և այլ բազմաթիվ կազմակերպություններում, որոնք ստեղծվել էին երկրորդ յոթամյա ծրագիրը (1955–1962թթ.) իրազործելու համար:

Միացյալ Նահանգները խորհուրդ տվեցին Մոհամեդ Ռեզա շահին, ուշադրություն դարձնել Ներքաղաքական վիճակի վրա: 1958թ. ԿՀՎ-ի հետագոտությունները փաստում էին, որ եթե շահը չիրականացնի բարեփոխումների ծրագիր, ապա նա կիշխանագրիկի: Ամենին, ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհուրդը հայտատարեց, որ Միացյալ Նահանգները պետք է ձնչում գործադրեն շահի վրա, որպեսզի նա իրականացնի ներքին բարեփոխումների ծրագիր և եթե նա իրածարվի, ապա Վաշինգտոնը կճանաչի և կսատարի նրա իրավահաջորդին<sup>362</sup>: Մոհամեդ Ռեզա շահը, գիտակցելով երկրում առկա լարվածությունը, բարեփոխումների մի ողջ շղթա իրականացրեց, որն առավել հայտնի է “Սահտակ հեղափոխություն” անվամբ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ Միացյալ Նահանգներն, իր երկիր անվտանգության պահպանման բոլի տակ, կարող է միջամտել օտար երկրների ներքին գործերին, իրականացնել հեղաշրջումներ, իշխանության բերել ԱՄՆ-ի բաղարականությանը զաղափարակից մարդկանց: Ավելին, նրանք իրանում ունեցած հաջող փորձը հետազոտ իրա-

<sup>361</sup> Школьников Б.А., Иран в конце 50-х начале 60-х годов в XX в., М., 1985, с. 68, Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, p. 140.

<sup>362</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 79.

կանացին Մերձավոր և Միջին Արևելքի այլ երկրներում ևս: Ամերիկյան մամուլ հաճախ էր գրում, որ Սունգի հարցը պետք է լուծել «իրանական օրինակով»: Այսինքն՝ Եգիպտոսին ենթարկել տնտեսական ռոյկոտի, միջազգային կոնսորցիոնի ստեղծման և վերջապես՝ Եգիպտոսում պետական հենարջում իրականացնելու ձանապարհով լուծել ծառացած խնդիրը: Ակնհայտ է, որ Միջայլ Նահանգները հազվադեպ է իրաժարվում իր մշակած և հաջողորդամբ իրականացրած ծրագրերից: Իրանում հաղթանակած ԱՄՆ-ը գտնում էր, որ կարող է մեծ հաջողորդամբ նոյն քաղաքականությունն իրականացն նաև Եգիպտոսում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Մերձավոր և Միջին Արևելքի ցանկացած այլ երկրում:

Հատկանշական է, որ տարիներ անց՝ 2000թ. ապրիլի 19-ին ԱՄՆ-ի պետքարտուղար Մաղլեն Օլրայքն անդրադարձավ «Այսր» գործողությանը և ըննադատեց ամերիկյան նման գործելակերպը: Դա իրոք խիստ կարևոր մի քայլ էր, եթե ԱՄՆ-ի պետքարտուղարը Իրանի ժողովրդից ներս խնդրեց՝ 1953թ. Իրանի ներքին գործերին միջամտելու համար: «Եյզենհաուերի վարչակազմը հավատում էր այդ տեսակ գործողություններին: Այն արդարացվում էր ուղմակարական տեսանկյունից: Բայց հետաշրջումը ուղղակի խոչընդունեց Իրանի քաղաքական գարգացմանը: Եվ դրա պատճառով է, որ այժմ շատ իրանցիներ դեռևս վրդովված են իրներ գործերին ամերիկացիների միջամտությունից», – նշել է Մաղլեն Օլրայքը<sup>363</sup>: Սա իհարկե դիվանագիտական քայլ էր, որով փորձ արվեց թուացնել լարված մքննորտը երկու պետությունների միջև: Սակայն, այնուամենանայնիվ, կարծում ենք, որ այն իրական, արդյունավետ քայլ էր, որով Միջայլ Նահանգները, գոնեն առերևութաքար, ընդունում է իր մսալը:

Հատկանշական է, որ այդ ելույթին անմիջապես արձագանքեց ԻԻՀ արտգործնախարար Քամալ Խարազին. «Այդ հայտարարությունները ուշագրավ են, թե՛ Իրան-ԱՄՆ հարաբերությունների պատմության և թե՛ տարածաշրջանում կայունությանն ուղղված ԻԻՀ-ի կարևոր դերակատարության վերաբերյալ՝ ԱՄՆ-ի կառավարության դիրքորոշումներում տեղի ունեցած փոփոխությունների առումով»<sup>364</sup>:

Մինչև այսօր էլ Իրանի ժողովուրդը մեծ հարգանքով և հպարտությամբ է իշխում Մոհամմեդ Մուսադեխին և նրա վարած քաղաքականությունը, գտնում են, որ նա խկական հայրենասեր էր, ով մտածում էր իր երկրի բարօրության մասին: Դրա վկայությունն է այն փաստը, որ մինչև այժմ Մուսադեխի վերաբերյալ տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, գրքեր և ընթանրապես հետաքրքրությունը նրա չքացահայտված ֆենոմենի շուրջ բավական մեծ է:

<sup>363</sup> How a Plot Convulsed Iran in '53 (and in '79), By JAMES RISEN  
<http://www.nytimes.com/library/world/mideast/041600iran-cia-intro.html>

<sup>364</sup> Իրանի ԱԳ նախարար Խարազին՝ մասուկին ուղղված պատասխանները ԱՄՆ-ի պետքարտուղար Ս.Օլրայքի Իրանին վերաբերու հայտարարության մասին: ՀՅ ԱԳՆ, «Պատմադիվանագիտական բաժին» (արխիվ), Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Իրանի քայլն, ցուցակ 6, գործ N 67:

## ԻՐԱՆԻ ԱՆԴԱՍԱԿՑՈՒՄԸ ՄԻԱՅՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԿԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մինչև 1950-ական թվականների սկզբները, Իրանի արտաքին քաղաքականության կուրսը շարունակում էր մնալ ավանդական չեզորությունը: Այդ կորուսը երկար ժամանակ համարվում էր Իրանի կառավարության պաշտոնական տեսություն, և այդ մասին երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հավաստիացրել են ինչպես Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փահլավին, այնպես էլ քարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ:

Սակայն 50-ականների կեսերին Իրանի կառավարող շրջանակները հրաժարվեցին ավանդական չեզորության քաղաքականությունից, քանի որ վերը շարադրված իրադարձություններից հետո, բնական էր, որ նրանք պետք է առավելապես համագործակցեն Միացյալ Նահանգների հետ: Հակած ենք կարծելու, որ Իրանի քաղաքական կուրսի փոփոխության վրա մեծապես ազդել է ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ.Ֆ.Դալլեսի այն հայտարարությունը, թե «Ճամանակակից աշխարհը չի հավատում չեզորության քաղաքականությանը»<sup>365</sup>: Այդ հայտարարությունից և ընդհանրապես 1953թ. հեղաշրջումից հետո զգալի փոփոխություն արձանագրվեց Իրանի արտաքին քաղաքական կուրսի մեջ: Նավթային վեճի սկզբում ԱՄՆ-ը որոշեց աջակցել Իրանին՝ իր դիրքերն ամրապնդելու և Անգլիայի ազգեցությունը տարածաշրջանում բուլացնելու համար: Սակայն մյուս կողմից ԱՄՆ-ը մտահոգված էր, որ Մոսադեհին օգնելուց հետո նա ձիյտ այնպես կվարվեր, ինչպես Նասերը Եգիպտոսում (Վերջինս, իշխանության գլուխ գալով, մերժեց Մերձավոր Արևելքում որևէ ուազմական բլոկի ստեղծման գաղափարը): Ահա այս հանգամանքը նկատի առնելով՝ ԱՄՆ-ը գերադասեց աջակցել Անգլիային, որպեսզի չեզորացնի Մոսադեհին: Նրանք առավել համախմբվեցին, երբ 1953թ. ապրիլին Մոսադեհը իր ելոյթի ժամանակ հայտարարեց. «Իրանը չի անդամակցի Միջին Արևելքի պաշտպանության ոչ մի կազմակերպության»<sup>366</sup>: Իրանի նավթի հիմնախնդրի լուծումից հետո, 1953թ. Անգլիայի և ԱՄՆ-ի քաղաքականության օրակարգում քարձրացվեց Մերձավոր և Միջին Արևելքի ուազմաքաղաքական բլոկում Իրանի մասնակցության հարցը:

50-ականների երկրորդ կեսից Իրանի՝ ավանդական չեզորության կուրսը փոփառին վեց «դրական ազգայնականությամբ», ըստ որի՝ պետք է սերտացվեն ուազմական հարաբերություններն արևմտյան երկների, առաջին հերթին ԱՄՆ-ի հետ:

Միացյալ Նահանգները ցանկանում էր Խորհրդային Միության տարածքի զգալի մասը շրջափակել իրեն հավատարիմ երկներով անդամակցված կազմակերպությունների միջոցով: Նախատեսվում էր այդ երկներում տեղակայել ԱՄՆ-ի

<sup>365</sup> Պրավда, 12.10.1955.

<sup>366</sup> Дорошenco E.A., Борьба народов Азии за мир (1945–1961), Москва, 1962, с.35.

ռազմական բազաները, որոնք անհրաժեշտության դեպքում կօգտագործվեին Խորհրդային Միության դեմ: Մեր կարծիքով ԱՄՆ-ը նպաստում էր այդ կազմակերպությունների ստեղծմանը, բանցի առավել հեշտ էր իր ազդեցության տակ պահել մի քանի կազմակերպություն, քան մի քանի տասնյակ երկիր:

Դեռևս 1949թ. Եվրոպայում ստեղծվեց ՆԱՏՕ-ն, որի նպատակն էր զարգել Խորհրդային Միության բաղաքականությունն այդ ժամանակաշրջանում: Միացյալ Նահանգները ծրագրել էր Մերձավոր Արևելքում և ստեղծել նման մի կազմակերպություն: ԱՄՆ-ի կողմից Մերձավոր և Միջին Արևելքում բազմաթիվ փորձեր կատարվեցին ուսումնական կազմակերպությունների ստեղծությամբ, որի մեջ փորձ էր արվում առաջին հերթին ներգրավել արարական աշխարհի երկրներին: Վերջիններին դիրքորոշումը, սակայն, սույն հարցի վերաբերյալ մնաց անհողողող:

1950թ. մայիսին ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան հանդես եկան մերձավորակնեյան երկրներին գինելու ղեկարացիայով և առաջարկեցին Մերձավոր Արևելքում ստեղծել ուսումնական բրոլ: Մերձավոր և Միջին Արևելքում ուսումնական կազմակերպության ստեղծման առաջին տարրերակներից էր «Միջինարևելյան հրամանատարության» ստեղծումը: Այդ գաղափարը 1951թ. պաշտպանում էին Միացյալ Նահանգները, Անգլիան, Ֆրանսիան և Շոտլարդիան: Այն իրականացնելու համար նշված երկրները երկու տարի շարունակ ջանք ու եռանդ չխնայեցին: 1951թ. հոկտեմբերի 14-ին նրանք դիմումուն եցիտուսին, Սիրիային, Լիբանանին, Իրաքին, Սաուդիան Արաբիային, Եմենին, Խորայիլին և Հորդանանին՝ առաջարկելով մասնակցել «Միջինարևելյան հրամանատարության»: Այդ ծրագիրը նախատեսում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ուսումնական ոժերը միացնել մեկ ընդհանուր հրամանատարության մեջ: Նրանց տարածքներում տեղակայել ինչպես ուսումնական բազաներ, այնպես էլ օտար երկրների ուսումնական ուժեր: Հրամանատարության շտաբը պետք է գտնվեր եցիտուսում: «Միջինարևելյան հրամանատարության» պարտականությունների մեջ էր մտնում իր գործունեության համաձայնեցումը ՆԱՏՕ-ի հետ: Մերձավոր Արևելքի երկրները «Միջինարևելյան հրամանատարության» տրամադրության տակ պետք է դնենին նաև իրենց ուսումնական բազաները, հաղորդակցության միջոցները, նպահանգիստները: Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր երկրները, բացառությամբ Խորայիլի, մերժեցին «Միջինարևելյան հրամանատարության» ստեղծման ծրագիրը:

1952-53թթ. ԱՄՆ-ն առաջ քաշեց պաշտպանական մի շարք այլ կազմակերպությունների ստեղծման ծրագրեր, որոնք ունեին այլ անուններ, սակայն, ըստ եռյան, ոչնչով չէին տարրերվում «Միջինարևելյան հրամանատարության» ծրագրից:

1952թ. Գիտուվարին Պակիստանի արտգործնախարար Զաֆրուլլա խանը կրկին առաջ քաշեց ամերիկացիների կողմից նախագծված «Պաշտպանական դաշինք» կազմակերպության ծրագիրը, որին պետք է անդամակցեին արարական երկրները, Խորայիլը, Շոտլարդիան, Իրանը, Աֆղանստանը և Պակիստանը:

Երբ այդ ծրագիրը ևս աջակցություն չստացավ, ԱՄՆ-ի պետական այրերը եկան այն եզրակացության, որ անհաջողության պատճառը Խորայի առկայությունն է: Որոշեցին ստեղծել մի կազմակերպություն, որտեղ շեշտող դրվում էր կրոնական հիմքի վրա: Փորձ արվեց ստեղծելու «մահմետական բլոկ», որը կրոնի դրոշի տակ կիսամայմբեր ժորժիային, արաբական երկրներին, իսկ հետո՝ նաև Իրանին: Շուտով պարզ դարձավ, որ այդ ծրագիրը ևս չէր իրականանալու:

Դրան հաջորդեց «Արևելամիջներկրածովյան պակտ» ստեղծելու ծրագիրը, որն առաջարկել էր Խապանիայի արտգործնախարար Արտախոն: Այն պետք է լրացներ ՆԱՏՕ-ին՝ ընդգրկելով Խապանիան, Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Թուրքիան և Հունաստանը<sup>367</sup>: Այդ ծրագիրը ևս չիրականացավ:

ԱՄՆ-ի պետքարտուղար Դալլեսը և Արտասահմանյան օվերացիաների վարչության պետ Ստասենը Մերձավոր և Միջին Արևելյան «պաշտպանական կազմակերպություն» ստեղծելու ուժիներ փնտորելու համար 1953թ. մայիսին այցելեցին տարածաշրջանի երկրներ՝ Պակիստան, Սաուդյան Արաբիա, Իրաք, Թուրքիա, սակայն պետքարտուղարը ցուցադրարար չայցելեց Իրան՝ այդ կերպ ցոյց տալով իր հակակրանքը Մ.Մուսադեղի կառավարության նկատմամբ:

Այդ այցելության արդյունքում Դալլեսի մոտ մի նոր գաղափար ձևավորվեց. դա «Հյուսիսային գոտու պաշտպանություն» էր, որի մեջ ընդգրկվելու էին Խորհրդային Միությանը սահմանակից երեք հարևան պետություններ՝ Թուրքիան, Իրանը և Պակիստանը, իսկ հետագայում նախատեսվում էր նրանց միացնել նաև Մերձավոր և Միջին Արևելյան մյուս երկրները: Այս գաղափարը իրականացնելիս Դալլեսը օգտագործում էր քարոզարշավի մեթոդները, իսկ հիմնական նշանաբանը կունունիտական սպառնալիքն էր:

ԱՄՆ-ի նոր քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելյան ձևակերպվեց 1953թ. հունիսի 1-ին Դալլեսի՝ ուսանող երրորդ հետո, որտեղ նա նշում էր. «Միջինարևելյան պաշտպանական կազմակերպությունը հանդիսանում է ավելի շուրջ ոչ թե մոտ, այլ հետավոր ապագայի խնդիր: Արաբական լիգայի մի շարք երկրներ այնքան են խորացել Խորային, Ասուլիայի կամ Ֆրանսիայի հետ տարածանությունների մեջ, որ թիվ ուշադրություն են դարձնում խորհրդային վտանգի վրա: Սակայն առավել անհանգստացած են Խորհրդային Միության սահմանակից երկրները: Ընդհանուր առմամբ հյուսիսային թիվ երկրները գտնակցում են վտանգը: Առկա է ձգտումը ստեղծել կոլեկտիվ անվտանգության համակարգ»<sup>368</sup>:

Այդ կապակցությամբ ուշագրավ է ամերիկյան ծովակալ Ֆենթելի այցը Թուրքիա և 1953թ. դեկտեմբերին ամերիկյան կոնգրեսականների ու ԱՄՆ-ի փոխնախագահ Նիքոլսոնի այցը Իրան ու Միջին Արևելյան մյուս երկրներ: Այդ այ-

<sup>367</sup> Акопов Г.М., И.А.Сухарев, Империалистические блоки: Реальность и перспективы, Москва, 1969, с. 157. Орлов Е.А., США и военно-политический блок на Ближнем и Среднем Востоке, с. 20.

<sup>368</sup> Орлов Е.А., США и военно-политический блок на Ближнем и Среднем Востоке, Политика США на Ближнем и Среднем Востоке, с. 21-22.

ցերը կապված էին Միջին Արևելքում նոր պաշտպանական կազմակերպության ստեղծման հետ: Բացի այդ, ԱՄՆ-ի փոխախազագահ Նիքոլսի և նրա կողմէ Փերի այցը Թեհրան ամրապնդում էր Միացյալ Նահանգների հարաբերություններն Իրանի հետ և ցոյց տալիս, թե Վաշինգտոնը ինչպիսի աջակցություն է ցուցաբերում շահին<sup>369</sup>:

Շահանելով որոշակի հաջողությունների՝ Դավիթը որոշեց փոխել ռազմական դաշինք ստեղծելու եղանակը: Նախագծի կենսագործումը հետացնելու նպատակով որոշվեց, որ «Միջինարևելյան երկրների Հյուսիսային գոտու պակտը» հանդիս գա ոչ թե կոլեկտիվ պայմանագրի ձևով, այլ առանձին պետությունների միջև համաձայնությունների համակարգով<sup>370</sup>: Դրանից հետո տվյալ երկրները իրենց գործունեությունը պետք է տարածեին հարավյախն գոտու երկրների վրա (Եգիպտոս, Սիրիա և արաբական մյուս երկրներ):

1953թ. դեկտեմբերին ԱՄՆ-ի փոխախազագահ Նիքոլսի և Պակիստանի արտգործնախարար Ջաֆրուլլա-խանի<sup>3</sup> Իրան կատարած այցի ժամանակ, Թեհրանում բանակցություններ տարվեցին իրանա-պակիստանյան դաշինք կնքելու շորջ:

Առաջին անհաջողությունից հետո գերտերություններն առաջ քաշեցին մի նոր ծրագիր՝ տարածաշրջանային դաշինք ստեղծել Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Պակիստանի մասնակցությամբ, իսկ հետո նրանց օգնությամբ տարածաշրջանի մյուս երկրները ևս ներգրավելու ռազմական այդ դաշինքի մեջ: Առաջին քայլն այդ ուղղությամբ արվեց 1954թ. ապրիլի 2-ին, որի արդյունքում Կարաշիում ստորագրվեց թուրք-պակիստանյան դաշինքը: Այդ պայմանագրի 4-րդ կետը նախատեսում էր երկու կողմերի համագործակցությունը ռազմական բնագավառում, կողմերը պարտավորվում էին փոխանակել տեղեկատվություն ռազմական տեխնիկայի բնագավառում, միմյանց տրամադրել սեփական արտադրության որոշ տեսակի գննք և գինամթերք, հանդիս գալ համատեղ պաշտպանությամբ՝ կողմերից որևէ մեկի վրա արտաքին հարձակման դեպքում: Մինչև պակտի ստորագրումը, Թուրքիայի արտգործնախարարը հանդիս եկավ պաղամենտում նշելով, որ թուրք-պակիստանյան պակտը քա է Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր երկրների առաջ և հանդիսանում է Միջինարևելյան ռազմական բրուկի ստեղծման միջուկը:

1954թ. մայիսի 11–14-ին Ստամբուլում կայացավ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում լիազորված ամերիկան դիվանագետների խորհրդակցություն: Քննարկման էր դրվել Մերձավոր և Միջին Արևելքի վրա պակտի տա-

<sup>369</sup> Sick Gary, All Fall Down America's Tragic Encounter with Iran, N.Y., 1985, p. 7.

<sup>370</sup> متوسطه فرماندرمانشیان و روحسان فرماندرمانشیان، خون و نفت، خاطرات يك شاهزاده ايراني، تهران، ۱۳۷۸، ص.

<sup>370</sup> Ականանուվ Ս.Ս., Մերձավոր և Միջին Արևելքում ըլլկներ ստեղծելու հարցի շուրջ (1953–1958), Արևելագիտական ժողովածու, N1, Երևան, 1960, էջ 109.

րածման հարցը: Այնտեղ հիմնականում քննարկվում էր թուրք-պակիստանյան պայմանագրի ընդլայնման հարցը՝ ի հաշիվ արարական երկրների:

ԱՄՆ-ը ցանկանում էր այս բրոկի անդամ տեսնել նաև Իրանին և դրա համար Թեհրանին մի շարք գայթակղիչ առաջարկություններ էր անում: 1954թ. հունիսի 8-ին Իրանում Խորհրդային Միության դեսպանը Իրանի արգործնախարար Ա.Ենթեզամիին հանձնեց ԽՍՀՄ-ի կառավարության հուշագիրը, որով Իրանի կառավարության ուշադրությունը հրավիրեց 1927թ. հոկտեմբերի 1-ի պայմանագրային պարտականությունների վեա, ըստ որի՝ կողմերը չպետք է մասնակցին ազրեսիվ խմբավորումներին, որոնք կվսասեին մյուս կողմի շահերին:

1954թ. դեկտեմբերին Վաշինգտոնում շահի և ԱՄՆ-ի պետական գործիչների միջև սկսվեցին ոչ պաշտոնական բանակցություններ, որոնց ժամանակ քննարկվեցին Իրանի ուսուական ուժերի վիճակի, ուսուական օգնության չափերի մեծացման և Իրանի ուսուական ուժերի հզրացման հարցերը: Ամերիկացիները շահին խոստացան, որ եթե Իրանը սերտորեն համագործակցի Թուրքիայի և Պակիստանի հետ, ապա ամերիկյան ուսուական օգնությունն Իրանին զգալիորեն կմեծանա, ո իրանական բանակը կզինավի ժամանակակից գենքրով:

Ամերիկյան պաշտոնական ներկայացուցիչները շահին ներկայացրին, որ ԱՄՆ-ի ուսուավարական և քաղաքական նպատակն է Միջին Արևելքում ստեղծել ուսուավարական ուժեղ դաշինք: Նրանք նշում էին, որ Իրանի և Իրաքի համագործակցությունը Թուրքիայի ո Պակիստանի հետ և նրանց միջև ուսուական պայմանագրի կնքումը կնպաստի այդպիսի դաշինքի ստեղծմանը:

Շահն իր պաշտոնական ելույթներում ամերիկացիներին հավաստիացնում էր, որ «Իրանը պատրաստ է լավագույն կերպով իրականացնելու իր դերը ազատ աշխարհի պաշտպանության գործում»<sup>371</sup>:

1955թ. հունվարին Բաղդադում հավաքվեցին Թուրքիայի և Իրաքի պետական այրերը, որի արդյունքում կնքվեց թուրք-իրաքյան դաշինք: 1955թ. հունվարի 12-ին Թուրքիայի վարչապետ Ա.Մենդերեսը և Իրաքի վարչապետ Նորի Սահիդը որոշեցին կնքել «փոխադարձ անվտանգության» պայմանագիր:

1955թ. փետրվարի կեսերին Թեհրանում, Մերձավոր և Միջին Արևելքից վերադարձած Իրանի դեսպանների հետ, քննարկվում էր միջինարևելյան պաշտպանական պակտին Իրանի անդամակցելու հարցը: Հենց այդ ժամանակ էլ Թեհրան ժամանեց ԱՄՆ-ի պաշտպանության նախարարի՝ միջազգային անվտանգության հարցերով օգնականը:

1955թ. փետրվարին Իրանի շահը ժամանեց Լոնդոն՝ բանակցելու թուրք-պակիստանյան միությանը՝ Իրանի անդամակցման հարցի շորք: Հատկանշական էր նաև այն հանգամանքը, որ միջինարևելյան պաշտպանության անզիական տեսակետները տարբերվում էին ամերիկյանից: Անգիացիները չէին ցանկանում ընդարձակել թուրք-պակիստանյան պակտը և դեմ էին Իրանի միաց-

<sup>371</sup> Ժամանակ 16.12.1954.

մանը այդ պակտին: Հակառակ անզիհական մոտեցման՝ Միացյալ Նահանգները ջանք ու եռանդ չեր խնայում, որ Իրանն անդամակցի հիշյալ միությանը:

Պատճառը մեկն էր: Բրիտանական կառավարող շրջանակները չպետք է մասնակցեին բուրք-պակիստանյան պակտին, ինչի համար էլ բողոքեցին այդ պակտի ընդարձակման դեմ՝ ի հաշիվ Իրանի: Չե՛ որ վերջին տարիներին Իրանում մեծացել էր ԱՄՆ-ի ազդեցությունը: Մեծ Բրիտանիայի դեկավար մարմինները գիտակցում էին, որ ամերիկացիների ջանքերով ստեղծված դաշինքն է՛լ ավելի կրուպացնի անզիհական դիրքերը տարածաշրջանում, դրա համար էլ առաջարկեցին բրոկի մեջ ընդգրկել նաև Իրաքին, որտեղ Մեծ Բրիտանիայի դիրքերը համեմատարար առավել կայուն էին:

1955թ. փետրվարի 24-ին Բաղդադում կնքվեց «Իրաքի և Թուրքիայի միջև համագործակցության պակտ», որը կոչվեց «Բաղդադի պակտ» և դարձավ «Միջնարևելյան բրոկի» միջուկը: Կողմանը համաձայնվեցին «համագործակցել իրենց անվտանգության պահպանման շրջանակներում»: Պայմանագրի առաջին հոդվածում նշվում էր, որ մասնակիցները ՄԱԿ-ի 51-րդ հոդվածի համաձայն, կիամագործակցեն՝ ի շահ իրենց անվտանգության ու պաշտպանության»<sup>372</sup>: 5-րդ կետը նախատեսում էր, որ պակտի դոները բաց են Արարական լիգայի և Մերձավոր ու Միջին Արևելյան բոլոր երկների առօլ:

Շահը, ԱՄՆ և Եվրոպա կատարած ձանապարհորդությունից վերադառնալով, կանգ առավ Բաղդադում, որտեղ բանակցություններ վարեց բուրք-իրաքյան պայմանագրին անդամակցելու համար: Շահը և ամերիկացի պաշտոնյաները դեռ ԱՄՆ-ում էին պայմանավորվել, որ Թուրքիայի նախագահ Զ.Բայարը կայցելի Իրան և բանակցություններ կվարի Բաղդադի պակտին Իրանի միանալու հարցի շուրջ:

1955թ. մարտի կեսերին Անգլիայի վարչապետ Է.Իդենը, վերադառնալով Բանգլակում տեղի ունեցած ՍԵԽՏՕ-ի խորհրդաժողովից, հայտարարեց, որ Անգլիան անպայման պետք է միանա Բաղդադի պակտին:

Ապրիլի 4-ին բուրք-իրաքյան պակտին միացավ Անգլիան, այսպիսով Բաղդադի պակտը դադարեց լինել զրոտ տարածաշրջանային դաշինք: Հարկ ենք համարում նշել, որ Միացյալ Թագավորության անդամակցումը Բաղդադի պակտին հակասում էր ԱՄՆ-ի մտադրությանը, այն է՝ տարածաշրջանում խապատ բուլացնել պաշտոնական Լոնդոնի ազդեցությունը: Անգլիայի արագ միացումը նոր դաշինքին բացատրվում է նրանով, որ վերջինս ցանկանում էր ապահովել իր ձայնի իրավունքը Միջին Արևելյան գործերում:

Անգլիայի և Իրաքի միջև կնքվեց «հատուկ համաձայնագիր»՝ ըստ Բաղդադի պակտի առաջին հոդվածի: Ինչպես նշում է արևմտյան մամուլը, անգլո-իրաքյան համաձայնագրին կից կար հատուկ գաղտնի արձանագրություն ևս,

<sup>372</sup> See Pact of the Central Treaty Organisation, February 24<sup>th</sup>, 1955, The Middle East and North Africa 1964-65.

որի համաձայն՝ Իրանում որևէ տեսակի «իրադարձությունների» դեպքում անգլիական կառավարությունն իրավասու կիֆսի իր գորամասերը մոցնել Իրաքի տարածք։ Այսպիսով, անզիփացիները Իրաքի տարածքը օգտագործելու էին որպես հենակետ՝ Իրանում ամեն տեսակ շարժումների դեմ<sup>373</sup>։

Իրանական մամուլը գրում էր, թե «...Թուրքիայի նախագահ Ջ.Բայարը, Պակիստանի վարչապետ Մուհամեմեդ Այխն և Իրաքի արտգործնախարարը շուտով կայցելեն Իրան, որտեղ 1955թ. ապրիլի վերջին Իրանի շահի նախագահությամբ կգումարվի կարևոր խորհրդակցություն, և որը «չի կարող չանդրադառնալ Միջինարևելյան պաշտպանական պալտին»։

Բաղդադի պակտին Իրանի անդամակցման կարևորությանը բազմից անդրադարձել է արևմտյան մամուլը. «Նյու-Յորք Թայմս Մազրզինը», արժնութելով Իրանի դերն ու գործունեությունը, մի հոդվածում նշել է, որ «Իրանը հնագոյն պետություն է մահմետական Միջին Արևելքում և հանդիսանում է ազատ աշխարհի պաշտպանության հյուսիսային գոտու անկյունաբարը։ Այն առաջնակարգ ուղղմավարական նշանակություն ունի»<sup>374</sup>. Այդ օրերին համաշխարհային լրատվական գործակալությունները գրում էին հիմնականում կազմակերպվող դաշինքի մասին։ «Ֆրանս Պրես» գործակալությունը նշում էր. «Ոչ մենքը չի թաքցնում, որ այդ նոր կազմակերպությունը կարող է բարդություններ առաջացնել Մերձավոր Արևելքում»։ «Ռեյքեր» գործակալությունն իր հերթին հայտնում էր, որ շուտով կիրականանա ԱՄՆ-ի պետքարտուղար Դավիթ «Հյուսիսային գոտու ստեղծման ծրագիրը»<sup>375</sup>։

1955թ. սկզբներին Իրանի կառավարությունը դեռ հայտարարում էր իր ավանդական չեզորության մասին՝ նշելով, որ չի միանա թուրք-իրաքյան պակտին։ Սակայն հետո վճռեց, որ եթե պետք է մասնակցել, ապա անհրաժեշտ է հնարավորինս շատ օգուտ քաղել հիշյալ պակտին անդամակցելուց։ Թեհրանում գիտակցում էին, որ Միացյալ Նահանգները շահագրգոված է պակտում տեսնել Իրանին, քանզի նա ակնկալում էր, որ Իրանը պետք է դառնա այդ դաշինքի ուժեղ օղակ, հակառակ դեպքում Խորհրդային Միության հարավում, 1700 կմ երկարությամբ ձգվող սահմանը, որն ի դեպ ամենաերկարն էր՝ Խորհրդային Միության մյուս հարեւան երկրների հետ համեմատած, քաց կմաս։ Իսկ դա աներելի սխալ կիլիներ։

Իրանն ավանդական իր «չեզորության կուրսից» հրաժարվեց 1955թ. Բանդունգում, երբ իրանական պատվիրակությունը՝ Պակիստանի, Թուրքիայի, Իրաքի և Ֆիլիպինների ընկերակցությամբ, հանդես եկավ չեզորության բա-

<sup>373</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, с. 57–58.

<sup>374</sup> The New York Times Magazine, 22.02.1959.

<sup>375</sup> Правда, 14.10.1955.

նաձնի, «Փանջա շիլայի» խաղաղ գոյակցության սկզբունքների և նույնիսկ միջուկային գենքի արգելման դեմ<sup>376</sup>:

1955թ. աշնանը Իրանի արտօնքին քաղաքականության մեջ նկատվում էր Էական փոփոխություն: Իրանն աստիճանաբար հեռանում էր իր ընտրած չեզորության քաղաքականությունից: Սեպտեմբերի 20-ին Իրանի վարչապետ Հոսեին Ալան Մեջիսում հանդես եկավ հայտարարությամբ, որով հոր նախապատրաստեց Իրանի ապագա ծրագրերի իրկանացման համար. «Մենք պետք է հղորացնենք մեր ուսումնական ոժերը, որպեսզի դիմագրավենք հնարավոր ագրեսիային, և պետք է հնարավորինս շատ համագործակցենք այդ նոյն իրավիճակում հայտնված երկրների հետ, որ միայնակ չլինենք վտանգի դեպքում»<sup>377</sup>:

Նոյն թվականի սեպտեմբերի 23-ին Բաղդադի պակտին անդամակցեց նաև Պակիստանը: ԱՄՆ-ին և Անգլիային չհաջողվեց պակտի մեջ ներքաշել արարական մյուս երկրներին և Աֆղանստանին: Այդ ժամանակ Անգլիան և Միացյալ Նահանգները մեծացրին ձևով Իրանի վրա, քանզի այն կապող օդակ պետք է հանդիսանար Թուրքիայի և Պակիստանի միջև:

Ինչպես հայտնի է, որոշ ժամանակ անց Իրան այցելեց թուրքական կառավարական պատվիրակությունը՝ Թուրքիայի նախագահ Զ. Բայարի գլխավորությամբ: Այցը պաշտոնապես կոչվեց «քարեկամական»:

Բաղդադի պակտի մեջ մտնելով՝ Իրանն ակնկալում էր լուծել մի շարք խնդիրներ. առաջին հերթին հետ վերադարձնել Բահրեյն կղզիախոմը, աջակցության երաշխիքներ ստանալ պակտի անդամ երկրներից՝ տարածքային և այլ չլուծված խնդիրների կարգավորման կապակցությամբ: Առկա էր Սիստան շրջանում Վիժանստանի հետ սահմանարածան գծի հարցը և Հիլմենդ գետի շրային ռեսուրսների բաժանման խնդիրը: Բացակայում էր Պակիստանի հետ սահմանագույնի գիծը: Կային բազմաթիվ չլուծված հարցեր Թուրքիայի և Իրաքի հետ: Այդ հարցերն անընդհատ վեճի առիթ էին հանդիսանում Իրանի և հարևան երկրների միջև:

Նշված հիմնահարցերը լուծելու համար Թեհրանը դիմեց պարսկական հայտնի խոսանավելու քաղաքականությանը, որպեսզի առավել բարձրացնի Իրանի արժեքը պակտի անդամ երկրների շարքում և ստանա անհրաժեշտ զիջումներ՝ ինչպես պակտի անդամ երկրներից, այնպես էլ պաշտոնապես պակտին շանդամակցած Միացյալ Նահանգներից: Այս կապակցությամբ 1955թ. հոկտեմբերի 3-ին Թեհրանում հրապարակվեց թթակցություն այս մասին, որ «Նորին Մեծություն շահնշահը և թագուհին մեծ բավականությամբ ընդունել նև Նորին Գերազանցություն մարշալ Վորոշիլովի հրավերը»՝ 1956թ մայիս-հունիս ամիսներին այցելել Խորհրդային Միություն<sup>378</sup>: Այս հայտարարությանն արձագ

<sup>376</sup> نیویورک 25.04.1955.

<sup>377</sup> اعلانات 20.09.1955

<sup>378</sup> Известия, 4.10.1955, Правда, 4.10.1955.

գանքեց Միացյալ Նահանգները: Հաջորդ օրը՝ 1955թ. հոկտեմբերի 4-ին, Իրանում ԱՄՆ-ի դեսպան Սերբն Չեպինս այցելեց վարչապետ Հոսեխն Ազային և ըստ մամուլի տեղիկատվության՝ վերջնագիր ներկայացրեց, որ եթե Իրանը մոտակա օրերին չմիանա «ՄԻջնարևելյան պաշտպանական պակտին, որպեսզի կապի Կարաչի-Անկարա-Բաղրամ հզված շղթան», ապա նրանք չեն կարող օգտվել ԱՄՆ-ի ուսգմական և ֆինանսական օգնությունից<sup>379</sup>: Այդ կապակցությամբ ֆրանսիական շարաբարեր «Ֆրանս օրսերվաթերը» 1955թ. հոկտեմբերի 20-ի համարում գրում էր, որ ԱՄՆ-ի դեսպանն Իրանի վարչապետ Հ. Ազային ասել է. «Եթե Իրանը չտապի մտնել Բաղրամի պակտի մեջ, ապա բանակում կակավեն անկարգություններ և հակակառավարական երկյալներ»<sup>380</sup>:

Իսկ ՏԱՍՍ գործակալության հոկտեմբերի 13-ի հաղորդագրության համաձայն՝ հոկտեմբերի 12-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, Իրանի վարչապետի տեղակալ Համզավին հայտարարեց, որ վարչապետ Հ. Ազան Իրաքի վարչապետ Նուրի Սայիդին հաղորդագրություն է ուղղվել, որում, հյում տալով Բաղրամի պակտի 5-րդ կետին, հայտարարում է «իհշյալ պակտին շահնշահական կառավարության միացման մասին»: ԱՄՆ-ի պետքեալարտամենտը պաշտոնական հաղորդագրություն հրապարակեց՝ ողջունելով Բաղրամի պակտին Իրանի անդամակցման որոշումը, որը հաղորդագրության մեջ կոչվում էր «սուրածաշրջանային համաձայնագիր»:

Այսպիսով, շահական Իրանը որոշեց անդամակցել Բաղրամի պակտին: 1955թ. հոկտեմբերի 12-ին Իրանի կառավարությունը Սենատին ներկայացրեց Բաղրամի պակտին Իրանի միանալու մասին պաշտոնական տեքստի քննարկումը: Օրինագիծը քննարկման դրվեց նաև Մեջլիսում: Օրինագիծը 1955թ. հոկտեմբերի 19-ին հաստատվեց Սենատի և հոկտեմբերի 23-ին՝ Մեջլիսի կողմից, իսկ հոկտեմբերի 24-ին այն հաստատեց նաև շահը: Նոյն թվականի նոյեմբերի 3-ին օրինագիծը ուժի մեջ մտավ: Այդ բաղաքականությամբ Իրանը հրաժարվեց իր ավանդական չեղորդության կրուսից, որի լավագույն ապացույցը նրա անդամակցումն էր Բաղրամի պակտին<sup>381</sup>:

Բաղրամի պակտի հիմնադիր ժողովը տեղի ունեցավ Իրաքի մայրաքաղաք Բաղրամում՝ 1955թ. նոյեմբերի 21-22-ին: Մասնակցում էին Իրանի վարչապետ Հոսեխն Ազան, Պակիստանի վարչապետ Զոուդխուրի Մոհամմեդ Ալին, Թուրքիայի վարչապետ Աղնան Սենեկենը, Իրաքի վարչապետ Նուրի Սայիդը, Ազգիայի արտօգործնախարար Հարութ Մաքմիլլանը: Պակտին մասնակից չլինելով՝ ԱՄՆ-ը համաժողովում ներկայացված էր պատվիրակների մի մաս խմբով: Բաղրամում ԱՄՆ-ի դեսպանն այդ նստաշրջանին մասնակցում էր դի-

<sup>379</sup> Правда, 8.10.1955.

<sup>380</sup> Мирский Г., Багдадский пакт—орудие колониализма, Москва, 1956, с. 30, Прокофьев В., Агрессивный блок СЕНТО, с. 22.

<sup>381</sup> Кожекина М.Т., И.Е.Федорова, Политика Великобритании и США на Среднем Востоке в английской и американской историографии, Москва, 1989, с. 105.

տորդի կարգավիճակով, իսկ ուզմական կոմիտեի նիստերին մասնակցեց ամերիկյան բանակի ներկայացուցիչը: Բաղդադի պակտը նախատեսվում էր դառնալ ՆԱՏՕ-ի աջ թևը:

Անդամակցելով Բաղդադի պակտին՝ Իրանի կառավարող օդակները հոյս էին փայփայում ավելի շատ տնտեսական օգնություն ստանալ ԱՄՆ-ից, միաժամանակ ակնկալում էին ստանալ ևս 100 մլն դոլար փոխառություն՝ բյուջեի պակասորդը փակելու համար:

Կարևորելով Իրանի հանգուցային դերը մերձավորարևելյան ուզմական այդ խմբավորման մեջ՝ ԱՄՆ-ն ավելացրեց Թրումենի դոկտրինայի «4-րդ կետով» Իրանին սահմանված օգնության մասնաբաժնը, իսկ տնտեսական կամ անհատույց օգնության շնորհիվ Իրանը փակեց բյուջեի ձեղբաձը<sup>382</sup>:

Բաղդադի պակտին Իրանի անդամակցումից հետո ԱՄՆ-ի ուզմական դիտորդ ծովակալ Քենսենի հայտարարեց, որ իր կառավարության ըննարկման առարկա կդարձնի Իրանին մեծ օգնություն հատկացնելու առաջարկը: Իրանցիները կանխատեսում էին, որ օգնությունների այդ մակարդակը կիացվի տարեկան 100 մլն դոլարի<sup>383</sup>:

1954-55թթ. ԱՄՆ-ի գործուն աջակցությամբ, ՆԱՏՕ-ի օրինակով, ուզմաքաղաքական միուրյուններ ստեղծվեցին հարավարևելյան Ասիայում և Մերձավոր Արևելքում: Դրանք էին Բաղդադի պակտը, որը հետագայում վերանվագեց ՍԵՆՏՕ-ի, ՍԵՆՏՕ-ն, և այդ կազմակերպություններին անդամակցեցին Թուրքիան, Իրանը, Պակիստանը, Ֆիլիպինները, Թայլանդը<sup>384</sup>:

Իրանի անդամակցումից հետո Միացյալ Նահանգները և պակտի անդամ երկրները իրենց հայցըն ուղղեցին արարական աշխարհի կողմը: Պակտի գլխավոր նպատակներից էր կազմակերպության մեջ ներգրավել Արարական աշխարհին, որոնցից շատերը սերտ հարաբերություններ ունեին ԽՍՀՄ-ի հետ, ինչն անհանգստության առիք էր տալիս ինչպես Միացյալ Նահանգներին, այնպես էլ տարածաշրջանում ԱՄՆ-ի դաշնակից պետություններին:

Պակտի մեջ նրանց ներգրավելու համար Միացյալ Նահանգները դիմում էր սիրաշահելու, հովանավորելու, ինչպես նաև ձնշումներ իրականացնելու մեթոդներին: Այսպիս, Բաղդադի պակտին միանալու համար «ուզմական» և տարրեր տեսակի օգնություն առաջարկելով սիրիական կառավարությանը՝ Վաշինգտոնը փորձում էր համոզել Դամասկոսին միանալ Բաղդադի պակտին<sup>385</sup>: Ճնշում գործադրվեց Սաուդյան Արարիայի, Եգիպտոսի և Կատարի մաս-

<sup>382</sup> Мамедова Н. М., Иран в XX веке: роль государства в экономическом развитии, Москва, 1997, с. 22.

<sup>383</sup> Стб. Правда, 1.12.1955.

<sup>384</sup> Беляев И., "США и Ближний Восток", США: Региональные проблемы внешней политики, М., 1971, с.9.

<sup>385</sup> Կարապետյան Ռ., Միջիա-ամերիկյան հարաբերություններ (1967-1996), Երևան, 2000, էջ 13:

նակցությունը ուազմական որևէ բլոկի: 1954–55թթ. ԱՄՆ-ը Եգիպտոսին խոստացավ տնտեսական և ուազմական նշանակալի օգնություն, եթե վերջինս անդամակցի Բաղդադի պակտին: Անգիան և Բաղդադի պակտի մյուս երկրները միասին ճնշում էին գործադրում Լիբանանի, Հորդանանի և Կատմամբ<sup>386</sup>: Չնայած բոլոր միջոցառումներին՝ արարական երկրներից ոչ մեկը տեղի չտվեց:

Իր հերթին «Ֆրանս ալբե» գործակալությունը ճշում էր, որ ուազմական այդ նոր համակարգը «հանդիս է զարու որպես Հյուսիս-ատլանտյան դաշինքի լրացում և այն աշխարհագրականորեն կկապվի Հարավարևելյան Ասիայի երկրների պաշտպանական դաշինքին»<sup>387</sup>:

Հետաքրքիր տեղեկատվություն է հաղորդում եգիպտական «Ալ-Ահրամ» թերթը, որը արտատպել էր «Պրավդա» թերթում նշելով որ «Թուրք-իրաքյան դաշինքին Իրանի պաշտոնական միացումից հետո», Իրանի տարածքում կստեղծվին ամերիկյան ուազմական բազաներ: Թերթը նշում է նաև, որ Մերձականությունը և Միջին Արևելյում ուազմական բլոկների կազմակերպիչներն արդեն ծրագրում են բոլորական գորքերի գործողություններն Ասրաւատականում և Քրդասանի տարածքներում, իսկ Պակիստանի գորքերը մոտնենում են Իրանի Խորասան նահանգին»<sup>388</sup>:

Հարկ ենք համարում նշել նաև, որ Բաղդադի պակտին անդամակցելու որոշումը Իրանի ներքին գործն էր, սակայն ճշմարտությունը պահանջում է ասել, որ Իրանի կողմից իրականացված այդ քայլը հակասում էր 1927թ. ուսումնական պայմանագրի 3-րդ կետին, որն ուղղակիրեն նշում էր: «Պայմանագրությամբ կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է փաստացի կամ ձևականորեն շմասնակցել քաղաքական դաշինքներին կամ համաձայնագրերին, որոնք ուղղված կիննեին պայմանագրությամբ մյուս երկրի անվտանգության, ինչպես նաև նրա ամրութականության, անկախության, ինքնիշխանության դեմ՝ ցամաքարում կամ ծովում...»<sup>389</sup>: Ճիշտ է, Բաղդադի պակտի կանոնադրության մեջ նշված չէ, որ այն ուղղված է որևէ երկրի դեմ, սակայն ԽՍՀՄ-ի կառավարությունը բազմից նշում էր պակտի ագրեսիվ լինելու մասին:

Սահմանադրության մեջ պահպանվում է այս պահանջումը՝ որ պահպանը կատարվությանը կապված է կառավարությանը: Խորհրդային կառավարությունը նոյնամբերի 26-ի նոտայով մեկ անգամ ևս հավաստեց, որ «իրավիճակը, որը ստեղծվել է Բաղդադի պակտին՝ Իրանի անդամակցելու հետևանքով, ինչ է վուանգով խորհրդային Միության սահմանների համար»<sup>390</sup>.

Պետք է արձանագրել նաև այն փաստը, որ Մեջլիսի որոշ դեպուտատներ՝ դեմ էին արտահայտվում Իրանի չեղորդության խախտմանը: Ի թիվս նրանց՝

<sup>386</sup> Правда, 6.12.1955, 22.12.1955.

<sup>387</sup> Правда, 13.10.1955.

<sup>388</sup> Правда, 13.10.1955.

<sup>389</sup> Правда, 13.10.1955.

<sup>390</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, с.191.

Մեջիսի դեպուտատ Ղոնաքարաղին նշում է, որ «Երանը պետք է լինի չեզոք և վարի ինքնուրոյն ազգային քաղաքականություն»: Պատգամավոր Քաշանին ավելացնում է: «Չպետք է հերքել այն փաստը, որ Երանը թույլ երկիր է, իսկ եթե թույլ երկիրը մտնի ուզմական բրոկի մեջ, ապա ոչ մի օգուտ չի ստանա դրանից: Նրա վրա կդրվի ամենակեղոտու աշխատանքը, իսկ անհրաժեշտության դեպքում նրան կզոհաբերեն»<sup>391</sup>:

Բնականարար իրանական մամուլը, որն է մեկնարանութուն, առավել ևս ընադատություն չի ներկայացնում Քաղդադի պակտին Իրանի անդամակցելու հարցի շուրջ, նրանք պարզապես ներկայացնում են տեղեկատվություն: «Երթեկաար» թերթը նշում է, որ 1955թ. նոյեմբերի 12-ին Թեհրան ժամանեց Աֆրիկայում և Միջին Արևելքում ամերիկյան ուզմական խորհրդականների ղեկավար գեներալ Կուկը: Նա Իրանում ամերիկյան ուզմական խորհրդականների հետ ըննարկեց «Երանին ամերիկյան ուզմական օգնություն հատկացնելու հարցը», ինչպես նաև հանդիպեց ուզմական ուժերի նախարարի և գինվորական այլ գործիչների հետ: «Քեյհան» թերթը այդ առիթով ավելացնում է, որ նոյն օրը Թեհրան ժամանեց նաև Միջին Արևելքում Անգլիայի ուզմածովային կողորդ Լինկլերը<sup>392</sup>:

Հատկաշական է, որ ԱՄՆ-ը այդպես էլ չանդամակցեց Քաղդադի պակտին, ինչի համար այնքան եռանդ ու ֆինանսական միջոցներ էր վատուել: 1956թ. ապրիլի 9-ի «Նյու Յորք Թայմս» անդրադարձավ պակտին միանալու՝ ԱՄՆ-ի մերժման հարցին. «ԱՄՆ-ի՝ պակտին միանալու մերժումն անհանգստություն և դժգոհություն առաջացրեց բրոկի երկրների շրջանում... Անգլիան, Իրաքը, Իրանը, Պակիստանը և Թուրքիան գիտակցում են, որ դաշինքի հաջողությունը մեծապես կախված է Միացյալ Նահանգների՝ պակտին ակտիվ կամ պահիվ մասնակցությունից»<sup>393</sup>:

Քաղդադի պակտի մշտական խորհրդի երկրորդ նատաշրջանը տեղի ունեցավ 1956թ. ապրիլի 16-19-ին Թեհրանում: Քաղդադի պակտի անդամ՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ղեկավար շրջանները բազմից բարձրացրել են մյուս անդամ պետություններին հավասար իրավունքներով Միացյալ Նահանգների՝ դաշինքին մասնակցելու հարցը: Սակայն ԱՄՆ-ը չցանկացավ սրբի հարաբերություններին արարական երկրների հետ, իրամարվեց միանալ բրոկին: Միևնույն ժամանակ 1956թ. ապրիլին Միացյալ Նահանգները միացավ պակտի տնտեսական և քայլայիշ գործունեության դեմ պայքարի հանձնաժողովներին:

Քաղդադի պակտին անդամակցելուց հետո Իրանը, Թուրքիան և Պակիստանը սկսեցին համագործակցել քաղաքականության, տնտեսության և մշակույթի ոլորտներում: Այդ պահից սկսած՝ միշագգային հարաբերությունների

<sup>391</sup> Правда, 13.10.1955.

<sup>392</sup> ملایم، 13.11.1955. کیان، 13.11.1955.

<sup>393</sup> The New York Times, 9.04.1956.

իիմանական խնդիրների վերաբերյալ Իրանի կառավարության արտաքին քաղաքականության դիրքորոշումը պայմանավորվում էր Բաղրադի պակտի ու օգմավարության հետ: 1956թ. մայիսին Իրանի շահ Մոհամեմադ Ռեզա Փահլավին առաջին անգամ այցելեց Թուրքիա: 1956թ. ստորագրվեց իրանա-թուրքական առևտրական պայմանագիրը, 1957թ. հաստատվեց Իրան-Թուրքիա երկաթգծի միացման ծրագիրը: 1956թ. հովհանքին թերթան ժամանեց Պակիստանի նախագահ Խոկանդար Միրզան: Ծահի և նախագահի միջև բանակցություններն ընթանում էին Բաղրադի պակտի ամրապնդման, իրանա-պակիստանյան առևտրական հարաբերությունների մեծացման հարցերի շորք:

Մինչույն ժամանակ պակտի երկրներում մեծացավ ամերիկյան ու օգմանական խորհրդականների թիվը: 1955թ. օգոստոսին երկիր ժամանեց խորհրդականների խումբ՝ Իրանին ու օգմանական օգնություն ցույց տալու համար, որը հայտնի էր ՄԱԱԳ-հապավմամբ: 1956թ. վերջին իրանական բանակում և ժամանակամատայում ԱՄՆ-ի առաքելության աշխատավիճների թիվը հասավ 444-ի<sup>394</sup>: Ի դեպ կազմակերպությանն անդամակցելոց հետո, Իրանը ու օգմանական իր կարիքները բավարարելու համար տարեցտարի ավելի շատ գումարներ էր վատնում: Եթե 1939-40թթ. ու 1955-56թթ. գումարները կազմում էին առաջնային 21,1%-ը, ապա 1955-56թթ.՝ 42%-ը<sup>395</sup>:

Հասուն տեղ էին գրադեցնում ամերիկյան ու օգմանական խորհրդականները, ովքեր գործում էին Իրանի գինված ուժերի հրամանատարությունում: Նրանց աշխատանքներն անմիջականորեն զիսավորում էր առաքելության դեկավարը, որի հսկողության ներքո գործում էին երեք բաժիններ՝ ցամաքային գործիք, ու ուղարկված էին առաջնային ուժերի հետ համագործակցող խմբերի բաժինները: Այսպիսի քաղաքականությամբ ԱՄՆ-ը իր անմիջական հսկողության տակ էր պահում ոչ միայն Իրանի, այլ նաև դաշնակից մյուս երկու երկրների՝ Թուրքիայի և Պակիստանի գիտելիք ուժերը:

Ամրապնդելով իրենց դիրքերը իրանական բանակում՝ ամերիկացիները Միլապոյի գործունեությունից տապ տարի հետո կրկին փորձեցին վերահսկողությունը հաստատել Իրանի կառավարության նկատմամբ: Սակայն այժմ այդ խնդիրը իրագործման պարտականությունը դրվագ էր Թրումնի դոկտրինի «4-րդ կետը» իրականացնող հանձնախմբի վրա: Եթե գործունեության առաջին տարիներին այն իմանականում ուշադրություն էր դարձնում գյուղատնտեսության, առողջապահության և կրթության վրա, ապա 1955-1956թթ. իրավիճակը փոխվեց: Այդ ժամանակ արդեն ավելի շատ խորհրդականներ էին հայտնվում Իրանի կենտրոնական վարչական ապարատում: Ի տարրերություն երկրորդ համաշխարհային պատերազմի տարիների՝ Իրանը իրենց վրա դրվագ առաջարանքները կատարելու համար շատ ավելի լավ էին պատրաստված:

<sup>394</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, с. 192.

<sup>395</sup> Прокофьев В., Агрессивный блок СЕНТО, с. 11.

1956թ. տեղի ունեցավ շահի նախատեսված այցը ԽՍՀՄ: Հանդիպման ժամանակ Նիկիտա Խրուչչովը խոստովանեց, որ անցյալում իր երկիրը թոյլ է տվել մի շարք սիսակներ և ավելացրեց, որ Իրանի ժողովուրդը կարող է հավատ ընծայել իր և ԽՍՀՄ-ի՝ ներկա ղեկավարների բարյացակամուրյանը: «Ես հավատիացրի Խրուչչովին, որ խորն են իրանցիների բարեկամական զգացումները նրա և ուս ժողովրդի նկատմամբ, սակայն Նշեցի, որ եթե մարդ արարածը դասեր չքաղի անցյալի պատմությունից, կապացուցի իր ծայրահեղ հիմար լինելու հանգամանքը...»,՝գրում է շահը<sup>396</sup>: Ի պատասխան Խրուչչովի այն հայտարարության, թե Իրանին ստիպել են անհամակցել պակտին՝ շահը պատասխանել է. «Իրանն իր հակ կամքով և համահավասար իրավունքներով է մասնակցել Բաղդադի ուխտին, և ոչ մեզ չի ստիպել գնալ այդ քայլին: Եվ եթե նոյնիսկ ձնշում գործադրվեր մեզ վրա, մենք անպատճառ պիտի դիմադրեինք: Ավելացրի նաև, որ մենք երբեւ թոյլ չենք տա, որ մեր երկիրը օգտագործվի հարձակողական նկատություններով՝ ընդեմ Ռուսաստանի: Ազա զինվորականի խոսք տվեցի Խրուչչովին, որ քանի ես եմ նատած Իրանի բազավորական զահին, իմ երկիրը չի հանդուրժի և չի ընկերակցի Ռուսաստանի դեմ ագրեսիվ և պատերազմական ոչ մի բաղարականության հետ»<sup>397</sup>:

Բանակցությունների ժամանակ հարթվեցին նաև Իրանի և ԽՍՀՄ-ի միջև գոյություն ունեցող սահմանային կնճոտ տարածայնությունները: Կնքվեցին տարանցիկ և ապրանքների փոխադրման վերաբերյալ պայմանագրեր, որոնք ԽՍՀՄ-ի տարածով դեպի Արևմտյան Եվրոպայի երկրներ և հակառակ ուղղությամբ պեսը է արտահանելին և ներմուծելին իրանական ապրանքները:

Հաս ՏՎԱՍՍ գործակալության հաղորդագրության՝ 1956թ. հոկտեմբերի 6-ին Իրանի շահը, բացելով Սենատի 7-րդ նատաշրջանը, ասաց, որ հետևելով ՄԱԿ-ի կանոնադրությանը և հավատարիմ մնալով կնքած դաշինքներին՝ Իրանի հարաբերությունները բոլոր երկրների հետ կլասուցվեն փոխադրձ հարգանքի ու բարեկամության սկզբունքներով:

Հարք ենք իմարում նշել, որ Բաղդադի պակտին անդամակցելուց հետո անդամ երկրների միջև առաջ եկան բազմաթիվ տարածայնություններ, որոնք մեծապես խոչընդոտում էին պակտի արդյունավետ գործունեությանը:

Այսպես, Իրանի և Անգլիայի հարաբերությունները սրբեցին Բահրեյն կղզիների<sup>398</sup> պատկանելության հարցի շուրջ: Իրանի և Պակիստանի միջև նոյն-

<sup>396</sup> Սոհամնադա Ուզա Շահ Փահլավի, Սոսթելություն հայրենիքին համար, էջ 252:

<sup>397</sup> Սոհամնադա Ուզա Շահ Փահլավի, Սոսթելություն հայրենիքին համար, էջ 253-254:

<sup>398</sup> Այդ լրգինը 1861թ.-ից ի վեր գտնվում էին բրիտանական հովանակրության տակ: Ցիշտ է, 1948թ. ապրիլի 15-ին Իրանի Սեղլիս ժմանակ քվաելուն հօգուս Բահրեյնի մկանամաք Իրանին զերացույց իշխանության հաստատման, սակայն, ինչպես Անգլիան, այնպէս էլ ԱԱՆ-ը չճանաչեցին Բահրեյնի մկանամաք Իրանի հավակնությունները: 1957թ. նոյեմբերին Իրանի կառավարությունը պաշտոնական հայտարարության մեջ պահպան է առնելու համար: Faroughy Abbas, The Bahrain Islands (750-1951), New York, 1951, p. 113-114. Պրոկոֆьев В., Агрессивный блок СЕНТО, с. 86.

պես կային տարածայնություններ: Իրանը մասնավորապես պահանջում էր անգլիացիների կողմից 1896թ. Իրանից խված և ներկայումս Պակիստանի կազմի մեջ գտնվող Բելուշիստանի մի մասը:

1956թ. Եգիպտոսի նկատմամբ իրականացված անզո-ֆրանս-իսրայելական ազրեսիայի հետևանքով Նշանակալի տարածայնություններ առաջացան պակտի երկրների միջև: Պակտի արևելյան երկրները՝ Իրաքը, Իրանը և Պակիստանը փաստորեն ընդադատեցին պակտի արևմտյան երկրի՝ Անգլիայի գործունեությունը:

Սակայն, այնուամենայնիվ, բրոկը դեռ երկար ժամանակ գործեց, իսկ Միացյալ Նահանգները ցուցաբերում էր ամեն տեսակ անհրաժեշտ օգնություն դրա անդամ երկրներին: Օրինակ՝ մինչև 1957թ. բավականին մեծացավ ամերիկյան ոպազմական օգնության ծավալը Իրանին: Այդ ժամանակահատվածում քանակի, ոստիկանության և ժանդարմերիայի կարիքների համար հատկացվեց շուրջ 300 մլն դոլար<sup>399</sup>: Հարկ է նշել, որ այդ օգնությունները նպաստեցին տարածաշրջանի երկրների զինված ուժերի բվի մեծացմանը: 1957թ. Թուրքիայի զինված ուժերում արդեն կար 500 հազար, Պակիստանում՝ 300 հազար, Իրանում՝ ավելի քան 170 հազար զինվոր<sup>400</sup>:

Այդ ամենով հանդերձ՝ պակտի անդամ երկրները ցանկանում էին համալրել իրենց շարքերը՝ նոր անդամ-պետություններով: Դրա համար դիմում էին տարբեր մերժումների: Պակտի անդամ երկրները և ԱՄՆ-ը վստահ էին, որ վաղ թե ոչ կարող են համախմբել տարածաշրջանի ողջ մահմեդական երկրները մեկ ընդհանուր կազմակերպության մեջ: Այդ կապակցությամբ Իրանը Միջին Արևելքում միջոցառումներ էր ձեռնարկում, որպեսզի կազմակերպի մահմեդական երկրների համաժողով:

Ամենայն հավանականությամբ սա կրկին ԱՄՆ-ի գաղափարն էր: Նա ցանկանում էր Բաղդադի պակտի և Արարական լիգայի անդամ երկրների շփումները դարձնել հաճախակի, որի արդյունքում, համաձայն նրանց ակնկալիքների, հնարավոր կիներ նոր երկրներ ներթաշել Բաղդադի պակտի մեջ: Իրանը նման առաջարկով դիմեց Միջին Արևելքի մի շարք երկրների կառավարությունների՝ առաջարկելով գումարել մահմեդական երկրների համաժողով՝ իրենց միջև առկա տարածայնությունները հարթելու նպատակով<sup>401</sup>: Սակայն Միջիան, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և Հորդանանը հրաժարվեցին մասնակցել հիշյալ համաժողովին:

Հատկանշական է, որ Բաղդադի պակտի շրջանակներում զգայի տեղ էր հատկացվում նաև Իրանի կրթության բնագավառին: Այսպես, 1956թ. Պակտի շանքերով Թեհրանի համալսարանում ստուդենտ էր այսպես կոչված «միջուկային

<sup>399</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке, с.192.

<sup>400</sup> Красная звезда, 18.01.1958.

<sup>401</sup> Ст в Правда 25.12.1956.

կենտրոն», որի նպատակն էր Բաղդադի պակտի անդամ Երկրների ուսանողներին, ովքեր իրենց հետաքրքրությունների ոլորտը համարում էին միջուկային ծրագրերի ուսումնասիրումը, խորացնեն իրենց մասնագիտական հմտությունները Թեհրանի համալսարանում<sup>402</sup>: Ամերիկացիների օգնությամբ այդ կենտրոնում, 1962թ. տեղադրվեց 5 մլն դոլար արժողությամբ միջուկային ռեակտոր, իսկ Թեհրանի և Շիրազի համալսարաններում կազմակերպվեցին կենսարձիայի, կենսաֆիզիկայի, տեղագրագիտության լարորատորիաներ<sup>403</sup>: Հետագայում, 1960-ականների վերջից, Թեհրանի համալսարանի միջուկային կենտրոնում գործի դրվեց Միացյալ Նահանգների կողմից տեղադրված 5 ՄՎտ ընդհանուր հզրությամբ հետազոտական ռեակտորը, որն աշխատում էր բարձր հարստացված ուրանով /հարստացման աստիճանը հետազյում 93%-ից իջեցվեց 20%-ի/: ԱՄՆ-ը հատկացրել էր նաև «տաք խոց»՝ ոչ մեծ քանակի պլոտոնիում առանձնացնելու համար<sup>404</sup>:

1957թ. հունվարի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Դ.Էջենիառուերը Միջին Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության հարցի վերաբերյալ ուղերձով դիմեց Կոնգրեսին: Ուղերձից հետո ԱՄՆ-ի պաշտոնական շրջանակներում մշակվեց ծրագիր, ըստ որի՝ արտասահմանյան Երկրներում պետք է տեղաբաշխվեին հատուկ նշանակության միջուկային գորամասեր: Այդպիսի հնարավոր պետություններից էին Թուրքիան և Իրանը: ԱՄՆ-ը, Միջին Արևելքը դարձնելով միջուկային պատերազմի կիզակետ, դրանով իսկ ձգտում էր իրենց հեռացնել հնարավոր միջուկային պատասխան հարվածները:

1957թ. մարտի 9-ին ԱՄՆ-ի Կոնգրեսը հոչակեց «Էջենիառուերի դոկտրինը», որով ԱՄՆ-ի նախագահին շնորհվում էր, իր հայեցողությամբ, ամերիկյան ռազմական ուժերն օգտագործելու լիազորություններ՝ «օգնություն ցուցաբերելու ցանկացած երկրի, որը օգնություն կինդրի՝ պայքարելու ընդեմ միջազգային կոմունիզմի»: Այդ դոկտրինի իրականացման համար ԱՄՆ-ի Կոնգրեսը հատկացրեց 200 մլն դոլար<sup>405</sup>:

1957թ. մարտի 12-ին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում օգնության ծրագրի իրականացման առաքելության ղեկավար, ԱՄՆ-ի նախագահի հատուկ օգնական Զեյմս Ռիչարդն այցելեց Աֆղանստան, Պակիստան, Թուրքիա, Իրան, Իրաք, Լիբանան, Սաուդիան Արաբիա, Եմեն, Իսրայել, Լիբիա, Սուդան, որպեսզի այդ երկրների կառավարություններին պարզաբանի «Էջենիառուերի դոկտրինի» սկզբունքները և հասնի այդ երկրներում դրա ընդունմանը:

Իրանի կառավարությունը հավանություն տվեց «Էջենիառուերի դոկտրինին», դրանով իսկ ձանաչեց ԱՄՆ-ի իրավունքը՝ վտանգի դեպքում գործ

<sup>402</sup> Yossi Melman and Meir Javedanfar, *The Nuclear Sphinx of Tehran*, Mahmoud Ahmadinejad and the state of Iran, New York, 2007, p.77.

<sup>403</sup> Дороненко Е., Иран, Специальный бюллетень N 12/103/, М. 1969, с. 40–42.

<sup>404</sup> Р.М. Тимербаев, Россия и ядерное нераспространение, М, 1999, с. 151.

<sup>405</sup> Акопов Г.М., Сухаръков И.А., Империалистические блоки: Реальность и перспективы, с. 160.

մտցնել Իրան՝ պաշտպանության նպատակով: Միացյալ Նահանգների կառավարությունը խոստացավ ֆինանսավորել արդեն ծրագրավորված ուազմական շինարարությունը, երկրի ուազմական ուժերի կարիքները բավարարելու, ինչպես նաև այդ ուժերի համար որոշակի քանակության տարրեր տիպի ուազմամթերք մատակարարելու: Տեսության երթյունն այն էր, որ ԱՄՆ-ը 400 մլն դոլար ուազմական և տնտեսական օգնություն ցոյց տալով և կոմունիստական ազգեսիայի դեմ պայքարելու կարգախոսով՝ միջամտում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների ներքին գործերին: Սա առաջին հերթին Դավիթ Քաղաքական ուղու հաղթանակն էր, որը, ըստ երթյան, հետապնդում էր մի նպատակ՝ վերջ տալ արևելյան երկրների չեղորդության քաղաքականությանը և Ասիայի ու Աֆրիկայի երկրներին ներքաշել «սար պատերազմ» մեջ:

Այդ գործողությունների շնորհիվ, գնալով սերտանում էին Միացյալ Նահանգների և Իրանի հարաբերությունները՝ վերածվելով «քաղաքական քարեկամության»: 1957թ. ձմռանը ուազմական նահանգապետի գրանցմանը, որը գրավվում էր գրաքննությամբ, արգելեց արատավորող հաղորդագրություններ տպագրել Իրանի, շահի, նրա ընտանիքի, քանակի և ամերիկացիների վերաբերյալ: Անգլիացիների նկատմամբ, կառավարության կողմից նման աջակցություն չէր խոստացվել: Սա ամերիկացիների նկատմամբ քարեկամության դրսուրման լավագոյն ձևն էր: Հատկանշական է, որ նոյնիսկ Ազգային ճակատի առաջնորդ Մոսադեղը, նավարդյունաբերության ազգայնացման ընթացքում, թույլ չէր տվել որևէ լորջ թշնամական երոյա ԱՄՆ-ի ներկայացուցիչների նկատմամբ: Պատք է նշել նաև, որ 1953-1973թթ. ամերիկյան մամուլում դժվար կլիներ գտնել ըննադատական հոդվածներ շահի կամ Իրանում Միացյալ Նահանգների քաղաքականության վերաբերյալ: Շահը ներկայացվում էր որպես մի առաջամամբ դեկավար, ով կողմնակից է արդիականացմանը, սակայն նշվում էր, որ նրա գլխավոր խնդիրը հետամսաց հասարակությունն է և Իրանի մոլեուանդ որոշ խմբերը<sup>406</sup>:

1957թ. մարտի վերջին ԱՄՆ-ի նախագահ Էջենիսհաուերը Բերմուդյան կղզիներում հանդիպեց Անգլիայի վարչապետ Մաքմիլլանի հետ: Բանակցությունների ընթացքում նրանք քննարկեցին Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցող զարգացումները: Արդյունքում, ԱՄՆ-ը հայտարարեց, որ անդամակցելու է Բաղդադի պակտի ուազմական կոմիտեին, ինչը և տեղի ունեցավ 1957թ. հունիսին:

Իրանի կառավարությունն ակտիվ մասնակցություն էր ունենում պակտի հանձնաժողովի և նախարարների խորհրդի նխատերի աշխատանքներին: Իրանի վարչապետ Ա. Ռեյալը ողջունեց պակտի ուազմական հանձնաժողովին միանալու՝ ԱՄՆ-ի որոշումը: Եղբայի կառավարությունը ևս ուազմաստիկանական ուժերի կարիքները հոգալու համար ծախսում էր բյուջեի մոտ 40%-ը:

<sup>406</sup> Keddie Nikki R., Modern Iran: roots and results of revolution, p.133.

Մինույն ժամանակ ԱՄՆ-ը հրաժարվում էր պակտի երկրներին հատկացնել ֆինանսական օգնություն այն դեպքում, եթե այն չէր բխում Մերձավոր և Միջին Արևելքում իր ուղղման ծրագրերից: ԱՄՆ-ը այլև հատկացումներ չէր կատարում պակտի երկրների բյուջեի ճնշովածքը փակելու համար: Սա նույնպես անդամ երկրներին դժգոհելու առիթ տվեց: Եթե 1955-56թթ. ԱՄՆ-ը անհատույց օգնությունից և փոխառություններից հատկացրեց 50 մլն դոլար, իսկ 1956-57թթ.<sup>407</sup> 20 մլն՝ Իրանի բյուջեի ճնշովածքը փակելու համար, ապա 1957-58թթ. և դրան հաջորդող մնացած տարիներին հրաժարվեց այդ նպատակի համար գումարներ հատկացնել<sup>407</sup>: Ընդհանրապես, 1954-1962թթ. Իրանի ձեռք բերած փոխառությունների ընդհանուր գումարը կազմեց 1.450 մլն դոլար, որի 83%-ը հատկացրեց ԱՄՆ-ը: Փոխառությունները տրվում էին 6-20 տարով, տարեկան 3.5-6.25%-ով<sup>408</sup>:

1953թ.-ից մինչև 1962թ. ԱՄՆ-ը Իրանին հատկացրեց 528,1 մլն դոլարի անհատույց ուղղման օգնություն: Ամերիկյան ուղղման օգնության ծավալով Մերձավոր և Միջին Արևելքում Իրանը զիջում էր միայն թուրքիային<sup>409</sup>:

1957թ. ամերիկյան քաղաքականությունը Իրանում փոքր-ինչ ներարկվեց փոփոխության: Գործարար շրջանները գտնում էին, որ եկել է պահօ, երբ պետք է կրծատել Իրանին հատկացվող անհատույց օգնության քանակը և այն փոխարինել կառավարական փոխառություններով ու պարտքերով: Այդ պահից սկսած՝ մեծացան ամերիկացիների ներդրումներն Իրանի տնտեսության մեջ:

1957թ. մայիսին կնքվեց «Մասնավոր կապիտալի ներդրման երաշխիքների» մասին պայմանագիրը ԱՄՆ-ի և Իրանի միջև, ինչն ամերիկյան ներդրումներին հատկացնում էր հատուկ առանձնաշնորհներ և երաշխիքներ, ի հակառարություն այլ օտարերկրյա կապիտալի: 1957թ. մայիսի 25-ին ամերիկյան ծրագիրն առանց փոփոխության ընդունվեց Սննատի, իսկ 1957թ. հունիսի 11-ին՝ Մեջլիսի կողմից: 1957թ. հուլիսի 29-ին համաձայնագիրը ստացավ օրենքի ուժ<sup>410</sup>: Ամերիկյան կապիտալի առավել ակտիվ ներդրման փաստն արձանագրվեց Իրանի քանկային համակարգում:

Այդ պահից ի վեր Իրանում ակտիվացավ քանկային գործունեությունը: 1958թ. Իրանում օրենք ընդունվեց, որով վերացան արտասահմանյան քանկային կապիտալի գործունեության սահմանափակումները: Նյույորքյան «Լազեր եղայրներ» և «Չեյզ ինքսերնյացիզլ բրոփորեյշն» քանկային ընկերությունները թենիքանում, իրանական կապիտալի մասնակցությամբ, ստեղծեցին երկարատև

<sup>407</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке, с. 242.

<sup>408</sup> «Азия и Африка сегодня», 1965, N 2, с.163-164

<sup>409</sup> Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 154.

<sup>410</sup> Васин Н.В., Экспорт американского частного капитала в Иране—одна из форм экспансионистской политики США, с. 65.

Ներդրումների բանկ, իսկ «Բանկ օֆ Ամերիկանը» պայմանավորվել էր նպաստել Իրանի Պետական բանկի միջոցների արտահանման զարգացմանը<sup>411</sup>:

1958թ. հովհանքի 1-ին Վաշինգտոն կատարած այցի ժամանակ շահը օդանավակայանում հայտարարեց ԱՄՆ-ի հանդեպ իր և պաշտոնական թեկրանի հիացմունքի ու քարեկամության մասին. «Միշտ հաճույքով եմ այցելում Միացյալ Նահանգներ՝ պատույթյան և անկախության պատվար: Փորձությունները, որոնք վտանգում են Իրանի և ԱՄՆ-ի քարեկամական հարաբերությունները, այժմ մնացել են ետևում»<sup>412</sup>: Չափ նմանապես հոյս հայտնեց, որ այդ հարաբերություններն ապագայում են ավելի կամրանան:

Սակայն 1950-ական թվականների վերջին կրկին նկատվում էր Բաղդադի պակտի արևելյան երկրների դժգոհության աստվածում ԱՄՆ-ի նկատմամբ, քանզի նա, ոչ մի կերպ չէր ցանկանում միանալ պակտին, այլ լոկ մասնակցում էր դրա որոշ կոմիտեների աշխատանքներին: 1958թ. սկզբներին Իրանի արտգործնախարարը հանդես եկավ հայտարարությամբ. «Մենք հոյս ունենք, որ ԱՄՆ-ը կիայտարարի Բաղդադի պակտին իր լիարժեք անդամակցելու մասին, որպեսզի ավելի ամրապնդվեն դրա հիմքերը»: Բացի դրանից, նախարարների խորհրդի բոլոր նատաշրջաններում Իրանը, Թուրքիան և Պակիստանը քարձացնում էին ԱՄՆ-ի և Ասգլիայի կողմից ուղղված տեսական օգնության չափերի մեծացման հարցը, սակայն ամեն անգամ նատաշրջանից հեռանում էին իրենց հատկացրած ուղղվածական և տնտեսական օգնության չափերից դժգոհ:

Բաղդադի պակտի ձգնաժամն առավել խորացավ 1958թ. հովհանքի 14-ին՝ Իրաքում տեղի ունեցած հենագիտությունից հետո, որը մտածելու առիթ տվեց մասնակից բոլոր երկրներին: 1959թ. մարտի 24-ին Իրաքը պաշտոնապես լրեց պակտի՝ առանց այն էլ նվազ շարքերը: Իրաքի դուրս գալով՝ կազմակերպությունը բնականարար այլև չէր կարող կոչվել իին անունով: 1959թ. օգոստոսին՝ Բաղդադի պակտի հիման վրա ստեղծվեց Կենտրոնական դաշինքի կազմակերպությունը (ԽԵՆՏՕ), որի կազմի մեջ մտան պակտի մեջ մնացած երկրները՝ Թուրքիան, Իրանը, Պակիստանը և Ասգլիան, իսկ կենտրոնը Բաղդադից տեղափոխվեց Անկարա:

Սակայն ձիշտ չի լինի հայտարարել թե պակտի գործունեությունը դադարեց կամ դանդաղեց Իրաքի հեռացմամբ: 1958թ. հովհանքի 24-ին Բաղդադի պակտի Տնտեսական հանձնաժողովի հաղորդագրության մեջ ասվում է, որ ԱՄՆ-ը Իրանին հատկացրել 2 մլն դոլար՝ Թավրիզ-Մուշ երկարության իրանական հատվածը կառուցելու նպատակով:

Հենց այդ ժամանակաշրջանում ստեղծվեց և կատարելագործվեց քարձր հաճախականության ուղղիո-հեռախոսային-հեռագրային կապ Անկարայի,

<sup>411</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, с. 158.

<sup>412</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, с. 272.

Թեհրանի, Կարաջի և Լոնդոնի միջև: Կառուցվեցին օդանավակայաններ Թեհրանում, Համադանում, Շիրազում, Ցաղդում, Մեշհեդում, Թավրիզում, Քերմանում, Ռեզայենում, Սպահանում: Այս ամենն ապահովում էր մշտական կապ անդամակից երկրների միջև: Դեռևս 1957թ. Միացյալ Նահանգներն Իրանին հատկացրեց 2,5 մլն դրամ՝ արդեն տասը տարի ձգձգվող Մեհրաբաղի օդանավակայանի կառուցում ավարտին հասցնելու համար, որը մինչև օրս հանդիսանում է Իրանի լավագույն օդանավակայաններից մենքը: Յոթնամյա ծրագրի շրջանակներում էլ որոշվեց ուշադրություն դարձնել օդանավակայանների վերագինմանը, որոնք այդուհետ կարող էին ընդունել նաև ուսակութիվ ինքնարթիոներ: Վերացինման հիմնական աշխատանքներն իրականացվելու էին Թեհրանի (Մեհրաբաղի օդանավակայան), Քերմանշահի, Քերմանի, Ցաղդի, Շիրազի և Սպահանի օդանավակայաններում: Ծրագրի շրջանակներում Մաշհադից հարավ կառուցվեց նոր մեծ ուազմական օդանավակայան:

1960թ. Ավալից Թավիկից մինչև իրանա-թորքական սահմանն ընթացող երկարգի շինարարությունը: ԱՄՆ-ը հատկացրեց 18,3 մլն դրամ՝ Անկարան, Թեհրանը, Կարաչին կապող հիմնական մայրուղիները բարելավելու, ինչպես նաև Անկարայի, Թեհրանի և Կարաչի միջև գերկարճակիր ուղղութեական ցանց կառուցելու համար<sup>413</sup>:

1958թ. Վերջին ԱՄՆ-ի և Իրանի միջև ստորագրվեց պայմանագիր, ըստ որի՝ ամերիկան Ֆինանսական կազմակերպությունները, Ներմուծման և արտահանման բանկը, 12 մլն դրամ էին ներդնում նոր մեքենաներ և սարքավորումներ ձեռք բերելու համար, իսկ Միջազգային արժուքային հիմնադրամը Ֆինանսակիրում էր Էլեկտրահաղորդման գծի կառուցումը: Դա բավականին մեծ ներդրում էր Իրանի տնտեսության մեջ:

Բաղդադի պակտից Իրաքի հեռանարուց հետո, ԱՄՆ-ը վճռեց ուազմական առանձին պայմանագրեր կնքել պակտի մյուս երկրների հետ: 1958թ. հովհաննական պակտի հոչակագրում ակնարկվելու էր ԱՄՆ-ի և Բաղդադի պակտի արևելյան երկրների միջև նման համագործակցության անհրաժեշտության մասին: Զնայած դեռ նախատեսվում էր կնքել առանձին ուազմական պայմանագրեր, սակայն վաղուց վերոհիշյալ երկրներում ակտիվություն գործում էին ամերիկյան զինված ուժերի ներկայացուցիչները: 1958թ. Իրանում Միացյալ Նահանգների ուազմական խորհրդականների խումբը վերակազմափորվեց՝ դառնալով մեկ միություն, և կոչվեց ԱՌՄԻՇ-ՄԱԱԳ՝ Բանակի առաքելության շտաբ-ուազմական խորհրդատունների օգնության խումբ<sup>414</sup>: 50-ականների վերջին Իրանում արդեն գործում էին 700 ամերիկացի ուազմական խորհրդականներ: Այդ առաքելությունը բաժանվում էր երեք խմբի.

<sup>413</sup> Арабаджян А.З., Экономическая экспансия американского империализма в Иране, с. 272.

<sup>414</sup> Farsoun Samih and Mashayekhi Mehrdad, Iran: Political Culture in The Islamic Republic, London & New York, 1992, p. 248.

- բանակային խորհրդատվական խումբ,
- ռազմական օգնության իրավանացման և Իրանի բանակին ուսուցանելու խորհրդատվական խումբ,
- հատուկ հանձնարարականներով ժամանակավոր ռազմական խորհրդականների խումբ:

Ի դեպ ամերիկացի ռազմական մասնագետների համար Իրանում ստեղծվել էին լավագոյն պայմանները զործելու համար: Ամերիկացի ռազմական առաքելության սպաների աշխատավարձը մի քանի անգամ գերազանցում էր նոյն աստիճանի իրանցի սպաների վարձատրությունից: Հատկանշական է, որ ամերիկացի սպաների աշխատավարձը տախս էր Իրանի կառավարությունը:

Ռազմական համագործակցության ընագավառում 1958թ.-ից սկսած ամեն տարի Թուրքիայում, Իրանում և Պակիստանում անցկացվում էին ռազմածովային, ռազմաօդային համատեղ զորախաղեր՝ Անգլիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Թուրքիայի ու Պակիստանի ռազմաօդային և ռազմածովային նավատորմների մասնակցությամբ: Այս զորախաղերը միաժամանակ ուսուցողական նշանակություն ունեին ՍԵՆՏՕ-ի անդամ երկրների կադրերի համար:

1958թ. աշնանից սկսվեց հրթիռների արձակման հրապարակների շինարարությունը, կառուցվեցին ռազմական նոր բազաներ և ընդարձակվեցին արդեն գոյրեցող բազաները Թուրքիայի, Իրանի, Պակիստանի այն հատվածներում, որոնք սահմանակից էին Իրաքին, ԽՍՀՄ-ին, Չինաստանին, Աֆղանստանին և Հնդկաստանին: Հատուկ ուշադրություն դարձվեց Պարսից ծոցի, իրանական ափամերձ ջրջաններում նավահանգիստների կառուցմանը և դրանց արդիականացմանը<sup>415</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ Իրանը՝ շահի գլխավորությամբ, անդամակցելով ԱՄՆ-ի ջանքերով ստեղծված հիշյալ կազմակերպություններին, հոյս էր փայփայում՝ գերտերությունների անմիջական օգնությամբ պաշտպանելու երկրի շահերը կոմմնիսատական սպառնալիքից, ապահովելու սահմանների պաշտպանությունը: Անվանական էր հետ թերել երթեմի կորցրած տարածքները՝ Բահրեյն կղզիախտամբը և Պակիստանի տարածքում գտնվող Թեկուչիստրանի հատվածը, լուծելու տարիներ շարունակվող Հիմնադրամի ջրի խնդիրը՝ հօգուտ Իրանի, հղորացնելու երկիրը՝ ի հաջիվ ամերիկյան ռազմական, տնտեսական, անհատուցյան, տեխնիկական օգնությունների: Դառնարով Միացյալ Նահանգների դաշնակիցը՝ Իրանը հոյս ուներ արտաքին քաղաքականության բոլոր ընագավառներում ստանալ Միացյալ Նահանգների աջակցությունը և հովանավորությունը՝ Հարկ է նշել, որ Իրանին ցանկալի բոլոր նպատակները չեն, որ իրականացան: Սակայն համագործակցելով ԱՄՆ-ի հետ՝ Իրանն արագործն դարձակ տարածաշրջանի հզոր երկրներից մեկը՝ ռազմական ընագավառում զիջելով միայն Թուրքիային:

<sup>415</sup> Туганова О.Э., Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, с. 132.

Բացի այդ, սերտորեն համագործակցելով ԱՄՆ-ի հետ՝ Իրանը Միացյալ Նահանգների միջոցով կառուցեց և վերակառուցեց բազմաթիվ օդանավակայաններ, նավահանգիստներ, երկաթգծեր, խճուղիներ, հեռահաղորդման ցանցեր, ինչպես նաև գերկարձայիր ռադիոներական ցանց: Էյֆենհաուերի «խաղաղ ասում» ծրագրի շրջանակներում Իրանում հիմք դրվեց միջուկային ոլորտի ուսումնասիրմանը, ինչև այսօր պաշտոնական Թեհրանը բավական ակտիվութեն զարգացնում է: Այս ամենը Միացյալ Նահանգների ֆինանսական աջակցության շնորհիվ Իրանը ստացավ հաշված տարիների ընթացքում: Ահա թե ինչպիսի շահույթ ունեցավ Իրանն՝ անդամակցելով Բաղդադի պակտին:

### 1959 թ. ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՅԱՑՆԱԳՐԻ ԿՐՈՒԽԸ

1958թ. հուլիսի 14-ին՝ Իրաքի հեղափոխությունից հետո, պարզ դարձավ, որ խարիսխում են ԱՄՆ-ի ջանքերով ստեղծված Բաղդադի պակտի հիմքերը: Սակայն դրա վերջնական փլուզումը չէր կարելի թույլ տալ, ինչի համար էլ ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ: Բաղդադի պակտից Իրաքի հեռանալոց հետո ԱՄՆ-ը վճռեց ուղղական պայմանագրեր Կնքել դաշինքի անդամ մյուս երկրների հետ: 1958թ. հուլիսին պակտի հոչակագրում ակնարկվում էր ԱՄՆ-ի և Բաղդադի պակտի արևելյան երկրների միջև նման համագործակցության անհրաժեշտության մասին: Այդ ծրագիրը իրականացնելու համար 1958թ. հունվարին Թեհրան ժամանեց ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ.Ֆ.Դալլասը:

Ինչ վերաբերում է շահի վարած արտաքին քաղաքականությանը, ապա պետք է նշել, որ նա իշխանանում հակված էր դեսպի Միացյալ Նահանգները, իսկ եթե այն փոքր-ինչ չէր բավարարում Իրանին, ապա շահը սպառնում էր, որ քարեկամության և համագործակցության եզրեր կգտնի Խորհրդային Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ: Խորհրդային Միություն այցելելոց հետո շահը բազմից նշել է, որ Իրանն իր արտաքին քաղաքականությունը կառուցում է բոլոր երկրների հետ բարիդրացիական սկզբունքներով: Եվ իրեն դրա ապացույց՝ 1957թ. ապրիլին Իրանը Խորհրդային Միության հետ ստորագրում է առնտրական համատեղ մատակարարումների չափերի մեծացման և տարանցիկ առևտորի հարցերի վերաբերյալ երկարաժամկետ համաձայնագիր: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ շահը նախկինի պես չէր վստահում ԱՄՆ-ի վարչակարգին<sup>416</sup>:

<sup>416</sup> Միացյալ Նահանգների կառավարությունը ՍԱԿԱԲ-ից առավել վաղ եր տեղեկացվել Ղարանի հեռարձնության մորթի մասին, սակայն լույն էր դրա մասին: Ճահը հետազույց տեղեկացվել, որ Միացյալ Նահանգներում գլուխն Ղարանի հեղաշրջման մասին ու ոյին շեն ասել, դրանու հետո նրա մոտ մեծացված անվանության զգացրությունն ԱՄՆ-ի նկատմամբ: Բայց Իրաքի միասնական տապալություն հետո Վաշինգտոնը վերամայեց իր բարսրական կուրսը և անձն կերպ փորձում դրույց տալ, որ յուրաքանչյուր հարցում կատարի Սուհամբե Ռեզա շահ Փահլավին: Շուտով, ամե-

1958թ. հունվարին Թեհրան ժամանած ԱՄՆ-ի պետքարտուղար Զ.Ֆ. Դալլեսն Իրանի շահին խորհուրդ տվեց վերանայել Իրանի կառավարության քաղաքականությունը Խորհրդային Միության նկատմամբ: Պարզ է, որ այդ քանակությունների ընթացքում խոսվել է նաև երկրորդ ռազմական պայմանագրի մասին: Դալլեսը, պետական քարտուղարի օգնական Շատոնթրին, ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Մաքենզոյը, Հենդերսոնը և ուրիշներ 1958թ. վերջին և 1959թ. սկզբին Իրանից քաշի այցելեցին նաև Թուրքիա և Պակիստան, որտեղ հանդիպումներ ունեցան այդ երկների կառավարությունների ներկայականների հետ և ինչպես հետազոտ հայտնի դարձավ, համաձայնություն ձեռք բերեցին մոտ ապագայում ԱՄՆ-ի հետ ռազմական պայմանագրի ստորագրելու հարցում<sup>417</sup>:

ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Մաքենզոյը 1958թ. շարունակում էր Թեհրանում քանակություններ վարել իրանա-ամերիկյան երկկողմ ռազմական նոր համաձայնագրի կնքելու ուղղությամբ: Բանակցությունները ձգձգվեցին, քանի որ Իրանի կառավարությունը փորձում էր ԱՄՆ-ից ռազմական աջակցություն ստանալ երկրին սպառնացող ցանկացած վտանգի առկայության պարագայում: Ամերիկացիները, ինելով առավել շրջահայաց, ձգում էին խոսափել շահի վարչակազմի պահպանման համար երաշխիք ստանձնելու պարտականությունից: Նրանց նպատակը մեկն էր, զերծ պահել Իրանը Խորհրդային կամ կումոնիստական վտանգից, այլ ոչ թե ամրապնդել շահի կամ նրա դինաստիայի դիրքերը:

1958թ. դեկտեմբերին Իրանի կառավարող շրջանները դիմեցին իրենց՝ քաջ հայտնի խուսանավելու քաղաքականությանը Խորհրդային Միության և ԱՄՆ-ի միջև: Իրանի կառավարությունը փորձում էր ցույց տալ, թե ջանում է քարելավել հարաբերությունները Խորհրդային Միության հետ, դրանով գոհացնել երկրու խորհրդային կողմնորոշում ունեցող մարդկանց և խմբերին, իսկ մյուս կողմից փորձում էր ճշշում գործադրել ԱՄՆ-ի կառավարության վրա՝ զգայի զիջումներ կորցելու համար:

Վերոհիշյալ մտադրությունը կյանքի կոչելու համար Իրանի կառավարությունը Խորհրդային Միությանը պաշտոնապես առաջարկեց ստորագրել «Բարեկամության և 20 տարվա շնարձակման» պայմանագրի: Պայմանագրի տեքստը կազմվել էր իրանական կողմը և հանձնել էր Թեհրանում Խորհրդային Միության դեսպանին:

Սակայն Խորհրդային Միությունը քաջատենյակ էր, որ Իրանը պատրաստում է երկրորդ ռազմական պայմանագրի կնքել Խորհրդային Միության

թիվան քաղաքական գործիքների համար ստեղծվեց հիանալի իրավիճակ, որպեսզի ցույց տան, որ համարին են միայն շահին: 1958թ. վերջին գեներալ Թեմբոր Բախրիմարը՝ ԱՍՎԱԲ-ի տնօրենն, այցելեց Միացյալ Նահանգներ և հանդիսեց ԿՐՎ-ի տնօրեն Ալեքս Նաևի և Կիմ Ուուզելսի հետ: Նա տեղեկացրեց Բրանց, որ առանձնաւում է տասպակ շահին և Արմաց աջակցության կարիքն ունի: Դալլեսը և Ուուզելը լուսանավեցին, քայլ հետազոյն անմիջապես տեղեկացրին շահին Բախրիմարի անմավատարմության մասին: Kenneth M. Pollack, *The Persian Puzzle*, p. 79.

<sup>417</sup> Ավանեսով Ս.Ս., Անրադավոր և Միջին Արևելյան բլումներ ստեղծելու հարցի շուրջ (1953-1958) Արևելագիտական ժողովածու, N 1, Երևան 1960, էջ 135:

թիվ մեկ ախոյան Միացյալ Նահանգների հետ: ԽՍՀՄ-ի կառավարությունը համաձայնից բանակցել է Իրանի հետ միայն մեկ պայմանով, այն է՝ Իրանը չպետք է երրորդ երկիր հետ կնքի ուղմական համաձայնագիր: Հասկանալի է, որ Խորհրդային Միությանը հայտնի էին Իրանի կառավարության նպատակները ու ծրագրերը, և երրորդ երկիր ասելով այդ պարագայում, նկատի ուներ միայն ԱՄՆ-ին: Չնայած ձեռք բերված համաձայնությանը՝ Իրանի ղեկավար այրերը շարունակում էին գուգահեռ բանակցություններ վարել ամերիկյան պատվիրակության հետ:

Հարկ է նշել, որ 1958թ. դեկտեմբերի 28-ին ԽՍՀՄ-ի ղետապան Ն. Մ. Պետրովը Իրանի կառավարությանն էր հանձնել ԽՍՀՄ-ի հուշագիրը՝ սպասվող երկողյանի ուղմական պայմանագրի վերաբերյալ: «Խորհրդային կառավարությունն անհանգստացած է շահական Իրանի կառավարության կողմից որոշ շակի ժամանակահատվածում իրականացված արտաքին քաղաքական և ուղմական այնպիսի միջոցառումներից, որոնք չեն կարող գնահատվել այլ կերպ, քան Խորհրդային Միության դեմ ուղղված քաղաքականություն... Դրա մասին է վկայում Իրանի՝ օրակիր մեծացող համագործակցությունը երրորդ պետությունների ազգենիվ ուժերի հետ, որոնք չեն թաքցնում իրենց ձգտումները՝ օգտագործել Իրանը և Իրանի տարածքն ընդդեմ Խորհրդային Միության: Այդ պարագայում, անհոս, կիաղթեն միայն արտասահմանյան շրջանակները և Իրանից շատ հեռու տերությունները: Առաջին հերթին կտուժի Իրանը, որը նման քաղաքականության պատճեռով ուղմական բախման դեպքում կարող է հայտնվել ոչչացման վտանգի առաջ: Խորհրդային կառավարությունը, խոսելով այդ մասին, չի փորձում սպառնալ, այլ արձանագրում է առկա փաստերը, որոնց հերթումը կնշանակեր հակասել իրականությանը: ԽՍՀՄ-ի կառավարությունն ամենայն անկենդությամբ ցանկանում է նշել, որ եթե Խորհրդային Միությունը, որի ուժերը և հնարավորությունները դժվար է համեմատել Իրանի ուժի և հնարավորության հետ, անհանգստանում է խորհրդա-իրանական հարաբերությունների վատացման հեռանկարի կապակցությամբ, ապա Իրանն առավել ևս պետք է անհանգստանա»<sup>418</sup>: Հակված ենք կարծելու, որ սա խլապես քաղաքական սպառնալիք էր՝ քողարկված «քարենկամության» սկզբունքներով: Սա էլ դրդեց Իրանին դիմելու իր հայտնի խոսանակելու քաղաքականությանը: Իրանը ծրագրում էր միաժամանակ բանակցություններ վարել և՛ ԱՄՆ-ի, և՛ Խորհրդային Միության հետ, հասկանալի է, նախընտրելով համաձայնության հասնել Միացյալ Նահանգների հետ: Սակայն, համաձայնության չհասնելու դեպքում, Իրանն իր հյուսիսային հարևանի հետ գոնե կունենար «Բարեկամության և 20-տարվա շարձակման» պայմանագիր:

1959թ. հունվարի 19-ին Իրանի արտգործնախարարը Խորհրդային Միության ղետապանին՝ Ն.Մ.Պետրովին հայտնեց, որ Խորհրդային Միության հետ

<sup>418</sup> Известия, 17.01.1959.

շհարձակման պայմանագիր կնքելու դեպքում Իրանն ԱՄՆ-ի հետ չի կնքի ուսպնական համաձայնագիր:

Ծուտով ԽՍՀՄ-ի և Իրանի ղեկավարները համաձայնության եկան բանակցություններն առավել քարձր մակարդակով վարելու վերաբերյալ: Խորհրդային Միությունը հայտարարեց, որ պայմանագրի կնքման վայրը թողում է Իրանի հայեցողությանը: 1959թ. հունվարի 29-ին՝ Բաղրամի պալտի՝ Կարաշիում տեղի ունեցած նատարջանից մեկ օր անց, Իրանի կառավարության հրավերով թերան ժամանեց ԽՍՀՄ-ի կառավարության պատվիրակությունը՝ փոխարտգործնախարար Վ.Ս.Սեմյոնովի գլխավորությամբ:

Խորհրդային կառավարությունն առաջարկում էր, որ կողմերից յուրաքանչյուրը պարտավորվի երրորդ պետության իրավունք չտալ իր տարածքում կառուցելու կամ օգտագործելու արդեն կառուցված ուսպնական բազաներն ու օդանավակայանները, թույլ չտալ իրենց տարածք մոցնել որևէ երրորդ պետության ուսպնական ուժերու: Խորհրդային Միությունը նախատեսում էր խթանել երկու երկրների միջև տնտեսական, առևտրական և մշակութային կապերի հետագա զարգացումը: Մինչդեռ իրանական կողմը բանակցությունների ժամանակ հասուն ուշադրություն էր դարձնում 1921թ. սովետա-իրանական պայմանագրի 5-րդ և 6-րդ հոդվածների վերացման վրա: Ինչպես հայտնի է, այդ հոդվածները կողմերից յուրաքանչյուրին պարտադրում էին թույլ չտալ իրենց տարածք մոցնել որևէ երրորդ պետության ուսպնական ուժ, որը կարող էր սպառնալիք հանդիսանալ մյուս կողմի շահերին կամ անվտանգությանը: Իրանը պարտավորվել էր թույլ չտալ իր տարածքը դարձնել Խորհրդային Միության դեմ գործելու ուսպնական բազա.... Իրանական կողմը վստահեցնում էր, որ ԽՍՀՄ-ի և Իրանի միջև քարեկամության և շհարձակման պայմանագրի ստորագրումից հետո, Իրանն ԱՄՆ-ի կամ որևէ երրորդ պետության հետ Խորհրդային Միության դեմ ուղղված ուսպնական պայմանագիր չի ստորագրի: Իրանի շահը հայտարարեց, որ 1921թ. պայմանագրի հիշյալ հոդվածների՝ հատկապես 6-րդ հոդվածի վերացումը, որը նախատեսում էր որոշակի իրավիճակներում խորհրդային գործի մուտքի իրավունք Իրանի տարածք, կնպաստի ԽՍՀՄ-ի և Իրանի միջև վստահության և քարեկամության հիմքերի ամրապնդմանը:

Խորհրդային Միությունը, հաշվի առնելով շահի այն հայտարարությունը, որ Իրանի մասնակցությունը Բաղրամի պալտին չի օգտագործվի ընդդեմ Խորհրդային Միության, համառորեն չպնդեց Բաղրամի պալտից Իրանի դուրս գալուն<sup>419</sup>:

1959թ. հունվարի 30-ին խորհրդային պատվիրակության հետ առաջին հանդիպման ժամանակ Մոհամեմեդ Ռեզա Փահլավին հայտարարեց, որ խորհրդա-իրանական պայմանագրի ստորագրումն իսկապես շրջադարձային կլինի ԽՍՀՄ-ի և Իրանի միջև հարաբերությունների քարեկաման գործում և ընդհանուրապես կնպաստի Մերձավոր և Միջին Արևելքում լարվածության թուլացմանը:

<sup>419</sup> Известия, 13.02.1959.

Հարկ է նշել, որ համաձայն 1959թ. փետրվարի 13-ի «Իզվեստիա» թերթի խորհրդագրության՝ խորհրդային կառավարությունը փաստեր ուներ, որ խորհրդային պատվիրակության Թեհրան այցելելու առաջին օրերին շահն արտասահմանյան երկրներին խոսք էր տվել, որ ԽՍՀՄ-ի հետ չի կարի պայմանագիր և հայտարարել էր, որ մտադիր է համաձայնագիր ստորագրել ԱՄՆ-ի հետ:

Խորհրդային կառավարությունն այդ կապակցությամբ արտահայտեց իր դժգոհությունը՝ նշելով, որ Իրանը մի կողմից՝ Մոսկվային հայտնում է իրանախորհրդային հարաբերությունների բարեկաման ձգտման և պայմանագրի կնքման մասին, իսկ մյուս կողմից՝ Իրանի կառավարությունը նախատեսում է ԽՍՀՄ-ի դեմ ուղղված ուազմական պայմանագիր կնքի ԱՄՆ-ի հետ<sup>420</sup>:

Սակայն պայմանագրի կնքումից առաջ Իրանի կառավարությունը փոխեց իր որոշումը և հայտարարեց, որ անկախ խորհրդային Միության հետ բանակցությունների արդյունքից՝ Իրանը ուազմական պայմանագիր կնքի ԱՄՆ-ի հետ:

Միայն 1959թ. փետրվարի 10-ին, երբ շահը հայտարարեց, թե ինքը հիվանդ է ու չընդունեց խորհրդային պատվիրակությանը, փոխարեն ընդունելով ամերիկյան ներկայացուցիչներին՝ ծովակալ Արթուր Ռենֆորդին և Զոն Մակգին, վերջնականապես պարզ դարձավ, որ շահական կառավարության հետ բանակցությունները տապալվել են:

Խորհրդա-իրանական բանակցությունների տապալման մեջ Իրանի շահը մեջադրում է խորհրդային պատվիրակությանը: Մոհամմադ Ռեզան դա պատճառաբանում է հետևյալ կերպ. «Ռուսները բոլց տվեցին մի սխալ: Նրանց պատվիրակությունն ուշացավ երկու շարաթով, որի ընթացքում ԱՄՆ-ի հետ երկողմանի նախնական պայմանագիրը համապատասխանեց մեր պահանջներին և ցանկություններին: Հասնելով Իրան՝ ուսական պատվիրակությունը գործեց մեկ այլ սխալ ևս. բանակցություններն սկսելու համար մեզանից պահանջեց հրամարվել Բարդարադի պահտի անդամակցությունից: Հանդիպելով մեր խիստ հակազդեցությանը՝ նրանք հրամարվեցին իրենց այդ պայմանից, սակայն այս անգամ էլ սկսեցին ալնդել, որ ԱՄՆ-ի հետ չպետք է ստորագրենք երկողմանի պայմանագիր: Նրանք ոչ միայն պնդում էին, որ հրամարվենք ամերիկացիների հետ պայմանագիր կնքեն մոտադրությունից, այլև ոչ ազրեսիվ քաղաքականության նախնական պայմանագրի որոշ հոդվածների համաձայն՝ պետք է բոլցանային մեր բարեկամների հետ ապահովված փոխադարձ հարաբերությունները: Վերոհիշյալ պատճառներով իրանա-խորհրդային պայմանագիրը չստորագրվեց, իսկ պատվիրակությունն առանց մեզ տեղեկացնելու հետացավ Իրանից»,՝ գրում է Մոհամմադ Ռեզա Փահլավին<sup>421</sup>:

Ի դեպ, Իրանի շահի հայտարարությունը, թե պատվիրակությունը ժամանել է երկու շարաբ ուշացումով, չի համապատասխանում իրականությանը:

<sup>420</sup> Известия, 13.02.1959.

<sup>421</sup> Մոհամմադ Ռեզա Չահ Փահլավի, Սոաթելություն հայրենիքին համար, էջ 258-260:

Ահա թե ինչպես է այդ ամենը մեկնարանում խորհրդային կառավարությունը. «1959թ. հունվարի 29-ին Երանի կառավարության հրավերով Թեհրանում էր գտնվում խորհրդային կառավարության պատվիրակությունը: Պատվիրակությունը բանակցություններ է վարել Երանի շահի և կառավարության հետ բարեկամության և շարձակման պայմանագրի կնքելու վերաբերյալ, որն, ի դեպ, իրանական կառավարության ծրագիրն էր: Սակայն բանակցությունների ընթացքում, եթե խորհրդային պատվիրակությունը հայտարարեց, որ խորհրդային կառավարությունը լիովին ընդունում է Երանի կառավարության առաջարկած ծրագիրը, նրանք իրաժարվեցին հիշյալ պայմանագրի նախնական ծրագրից՝ առաջ բաշխով նոր պայմաններ, և ամեն կերպ ձգձգում էին բանակցությունները»:<sup>422</sup>

Ինչու, չհասնելով համաձայնության՝ խորհրդային Միության պատվիրակությունը հեռացավ Երանից: Երանից հետո երկար ժամանակ Երանի և ԽՍՀՄ-ի հարաբերությունները բավականին լարված էին: Ի տարրերություն խորհրդա-իրանական անհաջող բանակցությունների՝ ակտիվորեն ընթանում էր իրանա-ամերիկյան երկկողմանի ռազմական պայմանագրի ստորագրման գործընթացը:

Երազում տեսի ունեցած հեղափոխությունն Երանի շահին անհանգստանալու լորջ ասիր տվեց: Հատկանշական է շահի հայտարարությունն այդ ասիրով. «Երեկ Լիքանան էր, այսօր Երազը, իսկ վաղը կարող է զալ նաև Երանի հերթը: Այդ ամենը ստիպում է Երանին մտածել նման զարգացումների մասին»:<sup>423</sup> Երանը մեծ ցանկություն ուներ Միացյալ Նահանգների հետ կնքել երկկողմանի ռազմական դաշինք, որով կապահովվր ոչ միայն երկրի, այլ նաև իր դիմաստիայի անվտանգությունը: Այդ պայմաններում Երանը Միացյալ Նահանգներին ինակատար իրավունք էր տալիս ամենաշնչին առիթով գործ մոցնել Երանի տարածք: Բնականարար սա հակասում էր հիշյալ տարածաշրջանում խորհրդային Միության շահերին: Ամերիկյան կառավարությունը երկար ժամանակ չէր համաձայնվում նման պայմանների հետ, քանի նա ցանկանում էր Երան գործ մոցնել միայն կոմունիստական սպառնալիքի դեպքում:

Երանը գտնում էր, որ երկկողմանի ռազմական պայմանագրի կարիքն ամենից առաջ զգում են իրենք, քանի այդպես առավել պաշտպանված կիննեն իրենց դիրքերը: Ինչ վերաբերում էր Թուրքիային և Պակիստանին, ապա նրանցից մեկը գտնվում էր ԽՍՀՄ-ի, իսկ մյուսը՝ Մեսարշամ-ի հովանու ներքո, որոնք ապահովում էին նրանց անվտանգությունը:

Երկկողմանի համաձայնագրը նախատեսում էր Երանի, Թուրքիայի, Պակիստանի կառավարությունների և ԱՄՆ-ի կառավարության ռազմակարական համատեղ միջոցառությունների իրականացում: Հաս ԽՍՀՄ-ի մամուլ՝ ամերիկյան

<sup>422</sup> Известия, 13.02.1959.

<sup>423</sup> «Международная жизнь», 1961, N 1, с. 99.

զինվորականության ծրագրերի համաձայն՝ ԱՄՆ-ը հիշյալ երկրների տարածքներ և նախապատրաստում էր որպես ուազմական գործողությունների թատերաբնական պատմական պայմանագրով՝ Ել ավելի էին սերտանալու Բաղդադի պակտի Միջին Արևելյան երկրների և ԱՄՆ-ի հարաբերությունները՝ մի կողմ մղելով պակտի մյուս անդամ Անգլիային:

Հետաքրքրական է նաև այն փաստը, որ ամերիկա-իրանական ուազմական համաձայնագրի բանակցությունների ընթացքում ամերիկյան կողմը հայտարարեց, որ իրանական գործը պետք է զբաղվի միայն երկրի ներքին գործերով, իսկ ինչ վերաբերում է Խուովիթանի և Պարսից ծոցի նավային շրջանների պաշտպանությանը, ասպա այդ խոդիրները կիրականանացնեն ամերիկյան գործերը, բանգի իրանական գործը ի գորու չէ լուծելու նման խոդիրներ:

Խորհրդա-իրանական համաձայնագրի տապալումը խիստ վատացրեց երկու կողմերի հարաբերությունները: Խորհրդային կառավարությունը փորձեց խոչընդոտել իրանա-ամերիկյան ուազմական պայմանագրի կերպնաը, սակայն ապարդյուն: Իրանա-ամերիկյան ուազմական պայմանագրի սոորագրվեց Անկարայում 1959թ. մարտի 5-ին: Մոհամամադ Ռեզա շահ Փահավին երազում էր տեսնել Իրանը՝ որպես գերիզոր ուազմական երկիր: Այդ նպատակը իրականացնելու համար նա կնքեց վերոհիշյալ պայմանագրիրը, որի միջոցով մեծացրեց զենքի և զինամթերքի մատակարարման չափերը, ինչպես նաև արդիականացրեց երկրի զինված ուժերը: Այդ համաձայնագրով ԱՄՆ-ին իրավունք տրվեց գործեր մտցնելու Իրանի տարածք «ցանկացած ազրենիայի» դրսուրման դեպքում<sup>424</sup>: Ռազմական երկվողմանի պայմանագրեր կնքվեցին նաև ԱՄՆ-ի և Թուրքիայի, ԱՄՆ-ի և Պակիստանի միջև, որի արդյունքում տարածաշրջանում իսպան թուլացավ Մեծ Բրիտանիայի ազդեցությունը:

Թուրքիայի կողմից պայմանագրի ստորագրեց արտգործնախարար Ֆ.Ռ.Չորլուն, Իրանի կողմից՝ Անկարայում Իրանի դեսպան Հասան Արֆան, Պակիստանի կողմից՝ Անկարայում Պակիստանի դեսպան Հասանը, իսկ ԱՄՆ-ի կողմից՝ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Ֆելտչեր Ռոբերսը: Պայմանագրի ստորագրման ժամանակ ներկա էր նաև Անգլիայի դեսպան Քերնարդ Բարբուսը: 1959թ. մարտի 5-ի պայմանագրիրը, որը բաղկացած էր ներածականից և վեց հոդվածներից, պաշտոնապես կրօքեց «Համագործակցության համաձայնագրի»:

Հարկ ենք համարում ներկայացնել հիշյալ համաձայնագրի առավել կարևոր կետերը.

1. Իրանի Շահնշահական կառավարությունը լի է վճռականությամբ՝ պայքարելու ընդդեմ ազրենիայի: Իրանի դեմ ազրենիայի իրականացման դեպքում ԱՄՆ-ը՝ համաձայն Միջացյալ Նահանգների սահմանադրության, անհրաժեշտ

<sup>424</sup> Известия, 26.03.1959.

<sup>425</sup> Saikai Amin, The Rise and Fall of The Shah, New Jersey, 1980, p. 57, Bill James A., The Eagle and the Lion. The Tragedy of American-Iranian Relations, London, 1988, p. 119.

միջոցներ կձևուարկի, ներառյալ ուզմական ուժ կօգտագործի, երկու կողմերի համաձայնությամբ... Իրանի կառավարության օգնության խնդրանքի դեպքում:

2. ԱՄՆ-ի կառավարությունը համաձայն 1954թ. փոխադարձ անվտանգության օրենքի..., համաձայն համապատասխան պայմանագրերի, որոնք արդեն կնքվել են կամ կվճարվել ԱՄՆ-ի և Իրանի կառավարությունների միջև, կրկին անգամ հաստատում է, որ շարունակելու է ուզմական և տնտեսական օգնություն ցուցաբերել, որի շուրջ համաձայնություն ձեռք կրերի ԱՄՆ-ի և Իրանի կառավարությունների կողմից՝ նպատելու Իրանի կառավարության՝ ազգային անկախության պահպանմանը, տարածքային ամրողականության և երկրի տնտեսության արդյունավետ զարգացման գործին:

3. Իրանի Շահնշահական կառավարությունը պարտավորվում է ԱՄՆ-ի կառավարության կողմից հատկացրած ուզմական և տնտեսական օգնությունը օգտագործել համաձայն 1958թ. հուլիսի 28-ի լուրդոյան կոմյունիկետվ կառավարությունների կողմից սահմանված նպատակների և խնդիրների համար, ինչպես նաև Իրանի տնտեսության արդյունավետ զարգացման նպատակով ստեղծել միջոցներ և պահպանել Իրանի անկախությունը և տարածքային ամրողականությունը<sup>426</sup>:

Մեր կարծիքով Իրանի ներգրավվումը ՍԵՆՏՕ-ի պակտի մեջ և ԱՄՆ-ի ու Իրանի միջև երկրողմանի ուզմական համաձայնագրի կնքումն ամենակարևոր իրադարձությունն էր իրանա-ամերիկյան հարաբերությունների այդ ժամանակահատվածի պատմության մեջ:

1959թ. մարտի 13-ին Միացյալ Նահանգների նախագահ Էջենհաուերը, քարձր գնահատելով Իրանի դերը, հանդիս եկավ ուղերձով. «Եթե Բաղդադի բյուլետինի ամերիկյան կառավարող շրջանակների կողմից դիտվում է որպես ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի միջև կապող օրոշք, ապա Իրանը իր աշխարհագրական դիրքով ԱՄՆ-ի աշքում դիտվում է որպես այդ շթեայի մի մասը, առանց որի իրենց ուզմական ծրագրերը չեն իրականանա»<sup>427</sup>:

ԱՄՆ-ի հետ համաձայնագրի կնքումից հետո Իրանի վերնախավն այլև շահագրգության մեջ Խորհրդային Միության հետ բանակցելու: ԽՍՀՄ-ի հետ «Բարեկամության և շիարձակման պայմանագրի» շուրջ բանակցությունները սատեցվեցին:

1950-ական թվականների վերջերին ԱՄՆ-ն Իրանի հետ կնքեց մի շարք նոր երկրողմանի պայմանագրեր: Երկարաձգվեցին, ինչպես նաև կնքվեցին նոր համաձայնագրեր Իրանի ուզմական ուժերում, ուստիկանությունում և ժամանակահատվածի վերջերին:

<sup>426</sup> 1959թ. մարտի 5-ին Անկարայում Իրանի և ԱՄՆ-ի միջև կնքված պայմանագրի տեքստը տե՛ս

بودناء الكساسندر و ابن نافع تاريخ مستند روایت دو جانبه ایران و ایلات متعدد امریکا، تهران، ۱۳۷۸، ص ۴۶۶-۴۶۷

Ինչպես նաև Соглашение между Турцией и США, подписанное в Анкаре 5 марта 1959 г. Прокопьев В., Агрессивный блок СЕНТО, с. 101.

<sup>427</sup> Известия, 26.03.1959.

մերիայում ամերիկյան ռազմական և քաղաքացիական խորհրդականների, մասնագետների և խորհրդատունների գործունեության շուրջ:

Երկողմանի ռազմական պայմանագրերի կնքումով Բաղդադի պակտի գործունեությունը նկատելիորեն ակտիվացավ, ԱՄՆ-ի վրա վերցրեց պակտի ղեկավարման առաջնորդությունը, իսկ Անգլիան մղվեց երկրորդ պլան:

Միացյալ Նախանձները նախկինի պես, ինչպես Իրանին, այնպես էլ ՍԵՆՏՕ-ի անդամ մյուս պետություններին, հատկացնում էր Փինանսական և ռազմական օժանդակություն: 1959թ. մայիսին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը Իրանի պանային կազմակերպությանը 72 մլն դոլար փոխառություն հատկացրեց ճանապարհաշինության և վերակառուցման նպատակով: 1959թ. սկզբներին ԱՄՆ-ը նոյն կազմակերպությանը 47,5 մլն դոլարի վարկ հատկացրեց, որը նախատեսվում էր հիմնականում հաղորդակցության կայանների, նավահանգիստների և օդակայանների կառուցման համար: Այդ փոխառությունը հատկացվեց 1959թ. անվտանգության համատեղ ապահովման ծրագրի ջրանակներում<sup>428</sup>:

Իրանին հատկացված ամերիկյան տնտեսական օգնությունը 1959թ. կազմեց 46,9 մլն դոլար, ռազմական օգնությունը՝ 99,3 մլն դոլար, 1960թ.՝ համապատասխանաբար 42,7 մլն դոլար և 45,8 մլն դոլար<sup>429</sup>: 1959թ. հոկտեմբերին համաձայնագիր ստորագրվեց Իրանին 25 մլն դոլար ընդհանուր գումարով նոր փոխառություն հատկացնելու՝ ճանապարհներ կառուցելու նպատակով:

1959թ. հոկտեմբերի 7-9-ին Վաշինգտոնում տեղի ունեցավ պակտի 7-րդ, իսկ ՍԵՆՏՕ-ի ստեղծումից հետո առաջին նստաշրջանը: Այն կայացավ երկկողմանի ռազմական պայմանագիրը կյանքի կոչելու նպատակով: Հաստատվեց համատեղ ծրագիր, որի արդյունքում թուրքիայի և Իրանի միջև պետք է կառուցվեին խճուղյան ճանապարհներ:

Խորհրդային գրականության մեջ հաճախ հանդիպում ենք Իրանին ուղղված ընադատական գնահատականների՝ Բաղդադի պակտին, ՍԵՆՏՕ-ին անդամակցելու, ինչպես նաև երկկողմ ռազմական պայմանագիր կնքելու համար: Սակայն հարկ ենք համարում նշել, որ բացասական բոլոր ազդեցություններով հանդերձ, անդամակցելով այդ դաշինքներին, Իրանը կարծ ժամանակահատվածում կարողացավ հզրացնել իր ռազմական ներուժը, առավել անվտանգ զգաց իրեն, ԱՄՆ-ի աջակցությամբ սկսեց շինարարական լայնածավալ աշխատանքներ կատարել ինչպես ճանապարհաշինության, այնպես էլ օդառավակայանների կառուցման բնագավառում և հեռահաղորդակցության ոլորտում: Ճիշտ է, Իրանն այդ ամենին կարող էր հասնել և իր՝ ուժերով, սակայն հայտնի չէ, թե դրա համար որքան ժամանակ և գումար կպահանջվեր:

<sup>428</sup> Мельников Л.И., Политическая экспансия американского империализма в Иране, Политика США на Ближнем и Среднем Востоке, с. 212.

<sup>429</sup> Прокофьев В., Агрессивный блок СЕНТО, с. 80.

Դրա լավագույն ապացույցը հետևյալ տվյալներն են. 1953–60թթ. Իրանի քանակում զինվորների թիվը 120,000-ից աճեց և հասավ 190,000-ի, օդուժը կրկնապատկվեց՝ հասնելով 8,000 միավորի, իսկ ծովային ուժերի թիվը հասավ 4,000-ի<sup>430</sup>: Դիվիզիաների թիվը 12-ից հասավ 24-ի, որի մի գգայի մասը զբահատանկային զորքերն էին: Հատ Բ.Ա.Շկոլնիկովի՝ ցամաքային զորքերի ընդհանուր թիվը հասցեց 300 հազարի<sup>431</sup>: Կարծում ենք թիվը փոքր-ինչ ուռացված է, քանզի նա հղում է տալիս այդ ժամանակաշրջանի իրանական մամուլին:

Այդ ծրագրերը կյանքի կոչելու նպատակով 1953–60թթ. ԱՄՆ-ը Իրանի հատկացրեց 567 մլն դոլարի տնտեսական և 450 մլն դոլարի ռազմական օգնություն<sup>432</sup>:

1959թ. նոյեմբերի կեսերին Թեհրանում քանակցություններ էին ընթանում Իրանի շահ Մոհամեմադ Ռեզա Փահլավիի, Պակիստանի նախագահ Այուբ-խանի և Թուրքիայի վարչապետ Աղնան Մենդերեսի միջև: Դեկտեմբերին տեղի ունեցավ ՍԵՆՏՕ-ի անդամ երկրների պետական այրերի հանդիպումը՝ ԱՄՆ-ի նախագահ Էջգենիանուերի հետ: 1960թ. սկզբներին Լահորում տեղի ունեցավ ՍԵՆՏՕ-ի անդամ երկրների կողմից կազմակերպված սեմինար, որի աշխատանքներին մասնակցեցին ՍԵՆՏՕ-ի կազմի 3 պետությունների ղեկավարները: Աշխատանքի հիմնական նպատակն էր մեծացնել ՍԵՆՏՕ-ի ռազմական հնարավորությունները և պակտի մեջ ներքաշել նոր անդամներ՝ մասնավորապես Հորդանանին:

Հատուկ ոչադրություն էին դարձնում մեկ միասնական իրամանատարության ստեղծմանը՝ ՍԵՆՏՕ-ի երկրների ռազմական ուժերը ղեկավարելու համար: Այն պետք է Իրանի, Թուրքիայի, Պակիստանի ռազմական ուժերը միավորել ամերիկյան վերահսկողության ներքո:

1950–60-ական թվականներին իրանա-պակիստանյան հարաբերությունները սահմանային շրջաններում առավել սերտացան: 1959թ. փետրվարին համաձայնագիր ստորագրվեց Իրանի և Պակիստանի երկաթգծերը Զահեդանի շրջանում միացնելու մասին:

1960թ. փետրվարի 24-ին ՍԵՆՏՕ-ի անդամ երկրները նշում էին իրենց կազմակերպության հնգամյակը: Համաձայն արևմտյան մամուլի՝ այդ ժամանակ բնարկվել են հետևյալ հարցերը.

1. Ստեղծել մահմեդական երկրների բրոկ:
2. Կազմակերպել պակտի անդամ երկրների քաղաքական, ռազմական և տնտեսական միասնական համակարգ:
3. Քննարկել ՍԵՆՏՕ-ի անդամ և հարևան երկրների միջև առկա հակասությունների մասին հարցը<sup>433</sup>:

<sup>430</sup> Kurewitz J.C., Middle East Politics: The Military Dimension, New York, 1969, p. 284.

<sup>431</sup> Школьников Б.А., Иран в конце 50-х начале 60-х годов в ХХ в., с. 60.

<sup>432</sup> Bill James A., The Eagle and the Lion. The Tragedy of American–Iranian Relations, p. 114.

<sup>433</sup> Прокофьев В., Агрессивный блок СЕНТО, с. 70–71.

Առաջին հարցի իրականացման համար նախնական բանակցություններ վարեցին Աֆղանստանի, Արարական Միացյալ Հանրապետության, Լիբանանի, Սաուդյան Արարիայի և այլ երկրների հետ: Սակայն դրանք դրական արդյունք չտվեցին:

Երկրորդ հարցի ըննարկման ժամանակ ՍԵՆՏՕ-ի անդամ երկրների միջև ի հայտ եկան անհամաձայնություններ, մասնակիրապես պակտի միացյալ ուղղմական հրամանատարության կազմակերպման հարցի շուրջ: Թուրքիան դեմ էր հրամանատարության ղեկավարի պաշտոնում տեսնել Իրանի շահին:

1960թ. մայիսի 14-ին սկսվեցին ՍԵՆՏՕ-ի երկրների գործադրերը, որոնց մասնակցում էին Իրանի, Թուրքիայի, Պակիստանի, Անգլիայի և ԱՄՆ-ի ուղղմական ուժերը: Զորախաղերը տեղի էին ունենում մասնակիրապես Իրանի հյուսիսում: 1960թ. մայիսի 14-ին Խորհրդային Միության կառավարությունը բողոքեց այդ միջոցառումների դեմ և Իրանի կառավարությանը հիշեցրեց, որ 1921թ. խորհրդա-իրանական պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ Իրանը պարտավորվել է թույլ չտալ օտարերկյա զորքերի մուտքը իր երկրի տարածք:

Սերտացնելով հարաբերությունները Միջին Արևելքի երկրների հետ՝ ԱՄՆ-ը օրեօր ավելացնում էր իր խորհրդականների թիվը այդ երկրներում: 1960թ. սկզբներին Թուրքիայում գրանցվել էր ուսազմական առաքելության 4000 ամերիկյան անդամ, Պակիստանում՝ 2000 խորհրդական: Ամերիկյան ուսազմական խորհրդականներն Իրանում գործում էին ինչպես բանակում և ժանդարմերիայում, այնպես էլ ուսազմական օգնություն հասկացնող առաքելությունում: Ամերիկյան սպաները գործում էին և կննտրոնական ապարատի զիսավոր շտարում, և նոյնիսկ յուրաքանչյուր զորամասում: Իրանը ոչ միայն խորհուրդներ էին տալիս Իրանի գինված ուժերի հրամանատարությանը, այլև անմիջականորեն մասնակցում էին Իրանի տարածքում ուսազմա-ստրատեգիական միջոցառումներին: Իրանի բանակում գործում էին 4500 ամերիկացիներ: Նոյնիսկ ամերիկյացի հայտնի տեսարան Ռ.Լիպպամանը բացահայտ հայտարարել է: «Իրանը մեզնից չափից ավելի է կախված և չափից ավելի է համոզված, որ իր ճակատագրը որոշվում է Վաշինգտոնում: Իրանի շատ վայրերում չափից ավելի շատ ամերիկացիներ կան»<sup>434</sup>:

1960թ. սեպտեմբերին, 9 ամսվա բացակայությունից հետո, Իրան ժամանեց Խորհրդային Միության դեսպանը: Վարչապետ Շարիֆ Իմամիի քաղաքականության մեջ նկատվում էին Խորհրդային Միության հետ հարաբերությունների քարեակման միտումներ: Դիվանագիտական խողովակներով համաձայնություն ձեռք բերվեց, որ Իրանի կառավարական պատվիրակությունը՝ Շարիֆ Իմամի գլխավորությամբ, կայցելի Խորհրդային Միություն: Սակայն այդ այցը չիրականացավ:

<sup>434</sup> New York Herald Tribune, Dec. 15.1959.

1961–1962թթ. ԱՄՆ–ը փոխեց իր տեսակետը՝ ԽՍՀՄ–ի դեմ պատերազմի դեպքում, Իրանի տարածքի ուղմավարական նշանակության վերաբերյալ: Ամերիկյան ուղմական շրջանակներն արդեն մշակում էին Խորհրդային Սիուրյան դեմ հրթիռային պատերազմի ծրագրեր՝ առանց ՍԵՆՏՕ–ի անդամ երկրների ուղմական բազաներն օգտագործելու: Նրանք նախատեսում էին օգտագործել «Պոլարիս» տիպի հրթիռներ, որոնք տեղադրված կինեին Միջնորմական ծովում և Հնդկական օվկիանոսում գտնվող՝ ամերիկյան նավերի ու սուզանավերի վրա: Բավկական էր ունենալ 4–5 սուզանավ, յուրաքանչյորում 16 «Պոլարիս» տիպի հրթիռ և Խորհրդային Սիուրյան 80 բազաքներ ու արդյունաբերական կենտրոններ կատունվեին միջուկային հարվածի մշտական սպառնալիքի տակ: ԱՄՆ–ի ուղմավարության փոփոխության հետևանքով զգայիրնեն կրծատվեց Իրանին հատկացվող ամերիկյան ուղմական օգնությունների չափը:

1962թ. ՍԵՆՏՕ–ի 10–րդ նատաշրջանի ժամանակ նկատվեցին լորջ տարածայնություններ մի կողմից՝ Թուրքիայի, Իրանի, Պակիստանի, մյուս կողմից՝ ԱՄՆ–ի և Ասգիլայի միջև: Վաշինգտոնը և Լոնդոնը համաձայն չեն մեծացնել ՍԵՆՏՕ–ի անդամ արևելյան երկրների ուղմական օգնության չափերը: Եվ դա հասկանալի էր, քանի, ինչպես վերը նշեցինք, այդ տարածաշրջանի երկրների տարածքները, գուցե բացառությամբ Թուրքիայի, չեն օգտագործվելու Խորհրդային Սիուրյան դեմ հավանական պատերազմի ժամանակ:

Պակիստանի նախագահի և Իրանի շահի 1962թ. հանդիպման ժամանակ քննարկվեց պակտի հետագա գոյության նպատակահարմարությունը: Շահը և նախագահը հայտարարեցին ՍԵՆՏՕ–ում տիրող դրության նկատմամբ իրենց անրավարարվածության մասին: ՍԵՆՏՕ–ի անդամ երկրները հիմնականում դժգոհում էին ֆինանսական և ուղմական օգնության անրավարար լինելուց: Իրանը հատկապես դժգոհ էր, որ Ասգիլան և ԱՄՆ–ը չեն աջակցում իր պահանջներին՝ Պարսից ծոցի շրջանում, հատկապես Բահրեյն կղզիների հարցում: Անդամակցելով Բաղդադի պակտին, իսկ այնուհետև ՍԵՆՏՕ–ին՝ Իրանը հոյս ուներ լուծել տարիներ շարունակ քննարկվող այդ խնդիրները:

Բացի դա, Իրանի ուժերից վեր էր ուղմական պարտականությունների կատարումը՝ ուղմական շինությունների կառուցումը, ամերիկյան խորհրդականների խնամակալումը, որ խիստ վնասեց երկրի տնտեսությանը: Իրանի կառավարությունը բաղված էր պարտքերի մեջ և անընդհատ նորանոր պարտքեր, վարկեր և փոխառություններ էր խնդրում ԱՄՆ–ից, Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկից և միջազգային այլ կազմակերպություններից: 1953–60թթ. ընթացքում կառավարությունն զգայի միջոցներ վաստեց, ինչը թիւ էր մոտ վնասեր ազգային տնտեսությանը: 1957–58թթ. կառավարության բյուջեի պակասությունը կազմում էր 500–600 մլն դոլար: Իսկ Միացյալ Նահանգները այլև հատկացումներ չեր անում, որպեսզի փակեր Իրանի բյուջեի ձներքածըքը: Իրանի ներքին պարտքը 1960թ. կազմում էր 600 մլն դոլար: Չնայած դրան՝ շարունակում էին Իրան ներթափանցել ահեղի չափերի հասնող արտասահման-

յան և առաջին հերթին ամերիկյան ապրանքներ: «Պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար նշնոր, որ 1959թ. Իրանում ներմուծումը կազմում էր շուրջ 490 մլն դոլար, մինչեւ արտահանումը՝ 50 մլն դոլար<sup>435</sup>: Ի հարկեւ սա խորհրդային գրականությունից վերցրած տեղեկատվություն է, որի տվյալների խևորյանը պետք է վերապահումով մոտենալ:

Իրան, անդամակցելով ՄԵՆՏՕ-ին, պարտավորվում էր մեծ ուշադրություն դարձնել առաջին հերթին ուղղմական ուժերի զարգացման վրա, ինչի համար բյուջեի 50%-ը վատուվում էր ներթին գործերի նախարարության, ոստիկանության, պետական անվտանգության պահպանման մարմինների կարիքները հոգալու համար: Խսկ երկրի տցիալ-տնտեսական վիճակը կարծենար հոգալու համար: Խսկ երկրի տցիալ-տնտեսական վիճակը կարծենար հայտնվել էր երկրորդ տեղում: Երկրում ավելացավ թղթադրամի արտադրումը: Եթե 1955-56 թթ. շրջանառության մեջ կար 12 մլրդ դիր, ապա 1960թ. այն կազմում էր ավելի քան 16 մլրդ<sup>436</sup>:

1959 թ. Իրանի տնտեսական վիճակը պայմանավունք դարձավ՝ վրա հասած երաշտի հետևանքով: Ինֆլյացիան մեծացավ և վարչակարգը կրկին օգնության խնդրանքով դիմեց Վաշինգտոնին ու Միջազգային արժուաբային ֆոնդին: Միջազգային արժուաբային ֆոնդը հատկացրեց 35 մլն դոլար, իսկ Միջացյալ Նախանդները 8 մլն դոլար, որպեսզի պահեն Իրանի ֆինանսները վերահսկողության տակ: Բայց երկրուն էլ պահում էին անմիջապես նվազեցնել կառավարական ծախսերը և իրականացնել բարեփոխումների ծրագրերը<sup>437</sup>:

Իրավիճակը տնտեսության ընազավառում փորբ-ինչ բարեկավելու համար 1963թ. հունվարին Իրանի շահը իրականացրեց բարեփոխումների ծրագիր, որը պատմության մեջ հայտնի է «Սպիտակ հեղափոխություն» անունով: Այն ընդունվում էր 6 կետ: Այդ կետերը նախատեսում էին իրականացնել հողային բարեփոխումներ, անտառների ազգայնացում, կառավարությանը պատկանող արդյունաբերական ձևոնարկությունների վաճառքի միջոցով, ֆինանսավորել հողային բարեփոխումները, ընդունել նոր ընտրական օրենք, ստեղծել 50 հազար հոգուց բաղկացած «լուսավորության կորպուս», արդյունաբերական ձևոնարկությունների աշխատողներին հատկացնել բաներդրենքի 20%-ը: Այդ բարեփոխումների մասին շահը խոսել է նաև 1966թ. մայիսի 27-ին՝ Բուխարեստի համալսարանում<sup>438</sup>:

Ի տարբերություն տնտեսությանը՝ իրանական բանակը օր օրի զարգացում էր ապրում: Կարծում ենք, որ անդամակցելով Բաղդադի պակտին, հետո էլ՝ ՄԵՆՏՕ-ին, իրանական բանակը զգալի առաջանացում ապրեց: Այն հա-

<sup>435</sup> Дорошенко Е.А., Борьба народов Азии за мир (1945-1961), Москва, 1962, с. 36-37.

<sup>436</sup> Прокофьев В., Агрессивный блок СЕНТО, с. 80.

<sup>437</sup> Kenneth M. Pollack, The Persian Puzzle, p. 80.

<sup>438</sup> Twelve Speeches by His Imperial Majesty Mohammad-Reza Pahlavi Aryamehr, Shahanshah of Iran on Ideological Basis of Iran's National and International Policy, Tehran, 1971. Extract from the Speech at the University of Bucharest on receiving a Honorary "Doctor of Political Law" Degree (Bucharest, May 27, 1966) p. 34-35.

մայրվեց նորագոյն տեխնիկայով, բարձրացավ զինվորների և սպաների մարտունակությունը:

Զ.Քենեղիի վարչակազմը Իրանի կառավարությանը բազմից խորհուրդ էր տալիս առավել մեծ ուշադրություն դարձնել երկրի տնտեսության զարգացմանը: Քենեղիի օրոք Սպահան տան և պետդեպարտամենտի քաղաքական նշանավոր գործիչներն եղբակացրին, որ շահը սիսակե՝ քաղաքական կայունացման փոխարեն հատուկ ուշադրություն դարձնելով ուսումնական ուժերի մեծացմանը: Այդ ընթացքում Վաշինգտոնը գտնում էր, որ եթե Իրանի վարչապետ նշանակվի դոկտոր Ալի Ամինին, ապա նա մինչև վերջ կտանի Իրանի քաղաքական և տնտեսական բարեփոխումների ծրագիրը<sup>439</sup>: Եվ բնականարար այդ հայտարարությունից հետո, 1961թ. մայիսի 6-ին Իրանի վարչապետ նշանակվեց Ալի Ամինին:

1961թ. մարտին Իրանի շահը Քենեղիի նոր վարչակազմին հասկացրեց, որ ամերիկյան նպաստներն Իրանին անհրաժեշտ են նոյն մասշտարով, ինչպես առաջ, և նորից նշեց երկրի ուսումնական նշանակության մասին: «Իրանը պետք է գլխավոր դեր խաղա կոմունիստական ներխուժումից Արևոտքի ընդհանուր պաշտպանության մեջ: Մարդկության պատմության ընթացքում Ասիայի այս հատվածի վրա կատարված բոլոր ներխուժումները տեղի են ունեցել Իրանի վրայով... Եթե ուսաները երբեմն վերահսկեն Իրանը, նրանք ձեռք կրեն ող Միջին Արևելքի վրա իշխելու բանալին», – ավելացրել է շահը<sup>440</sup>:

Նախագահ Քենեղին Իրան ուղարկեց իր անձնական ներկայացուցիչ Ավերիլ Հարիմանին, որը 1961թ. մարտի 13–14-ը շահի հետ ունեցած հանդիպման ժամանակ վերջինիս տեղիկացրեց ինչպես Իրանի, այնպես էլ ող Միջին Արևելքի նկատմամբ՝ ԱՄՆ-ի կառավարության «նոր կորսի» մասին: Հարիմանը հայտնեց, որ արտասահմանյան երկրներին օգնություն տրամադրելու ԱՄՆ-ի ծրագիրը գտնվում է վերանայման փուլում: Նա իրանական կառավարությանը խորհուրդ տվեց խատագոյն տնտեսություն վարել, բնակչությանը տալ առավել մեծ ազատություններ: Հարիմանը նշեց, որ ըստ ամերիկյան կառավարության, կոմունիզմի դեմ հնարավոր չէ պայքարել միայն անվտանգության ամրապնդմամբ և ուսումնական ուժերի բվի մեծացման միջոցներով, այլև անհրաժեշտ է շահել ժողովրդի վատահությունը: Ի դեպ, հարկ է նշել, որ վարչապետ Ամինիի կառավարման ժամանակ, Իրանի գորքն արդեն բաղկացած էր 200,000 զինվորից<sup>441</sup>:

Արդեն 1961թ. Իրանում լրջորեն մտածում էին օգնություն ստանալ ոչ միայն ԱՄՆ-ից, այլ նաև մյուս երկրներից, մասնավորապես Խորհրդային Միությունից, սակայն դրա համար անհրաժեշտ էր վերափոխել ող արտաքին քաղաքական ուղղվածությունը:

<sup>439</sup> Sick Gary, All Fall Down America's Tragic Encounter with Iran, New York, 1985, p. 9.

<sup>440</sup> Стру Орлов Е.А., Внешняя политика Ирана после второй мировой войны, с. 142.

<sup>441</sup> Zonis Marvin, The Political Elite of Iran, Princeton, 1976, p. 105.

Ամփոփելով վերը շարադրվածք՝՝ անվերապահորեն հանգում ենք այն եզ-  
րակացության, որ անդամակցելով Բաղդադի պակտին, ՍԵՆՏՕ-ին, այնուհետև ԱՄՆ-ի հետ կնքելով ուղմական երկողմանի համաձայնագիր, Իրանն իրեն առավել ապահովված էր զգում Խորհրդային Միության հնարավոր և նոյնիսկ առերևոյք հարձակումներից: Անտարակոյս, երկողմանի ուղմական համա-  
ձայնագիրը նշանակալիորեն խթանեց իրանական բանակի կազմակերպչական զարգացումը և մարտական հատկանիշների բարձրացումը: ԱՄՆ-ի շորիհիվ Իրանի բանակը համարվեց նորագոյն տեխնիկայով, կառուցվեցին բազմաթիվ ուղմավարական օրինակներ, որոնց կառուցումն այդ պահին, առանց դրսի օճանդակության, Իրանի ուժերից վեր կիխներ: Միաժամանակ շնորհիվ Բաղդա-  
դի պակտի անդամակցության և տարածաշրջանում ակտիվ քաղաքականության իրականացման, Իրանը զգալիորեն կարգավորեց և նոյնիսկ բարելավեց իր հարաբերությունները անմիջական հարևանների՝ Թուրքիայի և Պակիստանի հետ: Մի շարք հարցերի նկատմամբ եկան համաձայնության:

Սակայն այդ ամենի մեջ Միացյալ Նահանգներն անշուշտ ուներ իր շահը: 1964թ. Իրանն ԱՄՆ-ի հետ ստորագրեց «Գոխսըմբունման հուշագիր», ըստ որի՝ Իրանն, աստիճանաբար, պետք է գներ միայն ամերիկյան արտադրության գենք: Ի՞նչ է դա նշանակում: Իրանի բանակն ամրութությամբ պետք կախված լիներ Միացյալ Նահանգներից: Նորագոյն զենքերից օգտվելու համար կրկին պետք է երկիր ժամանենին ուղմական խորհրդականներ, որոնց զգալի մասը կիխնենին Միացյալ Նահանգների հատուկ ծառայության ներկայացուցիչները: Բացի այդ, մի քանի տարի հետո այդ զենքերը կենթարկվին բարոյական մաշ-  
վածության և անհրամեշտություն կզգացվեր վերանորոգել դրանք կամ փոխա-  
րենը ստանալ նորը: Վերանորոգման յուրաքանչյուր դետայ, բնականաբար կրկին պետք է բերվեր ԱՄՆ-ից: 1970-ականների կեսերին, եթե համաշխար-  
հային շուկայում նավթի գների բարձրացման հետևանքով Իրանի ազգային  
եկամուտը, ի հաշիվ նավթադրամների, սկսեց մեծանալ, զենքի գնումը Միաց-  
յալ Նահանգներից, հասավ վիրտսարի չափերի: Այսպես 1970-78թթ. շահական  
վարչակազմը ԱՄՆ-ից միջկառավարական մակարդակով գնեց ավելի քան 20  
մլրդ դոլարի զենք, իսկ 1950-1975թթ. ամերիկյան մասնավոր ընկերություննե-  
րից՝ 201 մլն դոլարի չափով<sup>442</sup>:

Սակայն ուղմական ուժերի զարգացմանը զուգընթաց՝ նոյն տեմպերով զարգացում չապրեց երկրի տնտեսությունը, որի համար էլ Իրանն անընդհատ դիմում էր Միացյալ Նահանգներին՝ օգնության խնդրանքով: Միայն «Սպիտակ հենդափոխությունից» հետո, Իրանի տնտեսության դրույթունը փորբ-ինչ շուկվեց, սակայն այն ևս չտվեց ակնկալվող արդյունքները:

<sup>442</sup> Кокошина В.А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60-70гг.", Развивающиеся страны. Политика и идеология, с.139-140.

Միանգամայն ակնհայտ է, որ Միացյալ Նահանգներն իր վարած քաղաքականությամբ, ազդու ներգործություն ունեցավ՝ Իրանի արտաքին քաղաքական կուրսի ձևավորման վրա: Իրանի հարաբերությունները գարգացում էին ապրում հիմնականում այն երկրների հետ, որոնք գտնվում էին ԱՄՆ-ի հովանավորության ներքո կամ համարվիմ էին նրա գինակիցները: Իրանի հարաբերություններն, անկասկած, անկախ ունեցած տարածանություններից, առաջին հերթին բարեկավում էին ԱՄՆ-ի մուս դաշնակից երկրների հետ, դրանք էին՝ Թուրքիան, Պակիստանը, Իսրայելը, մինչև Բաղդադի պակտի ստեղծումը՝ նաև Աֆղանստանը, հետագայում՝ Սաուդյան Արաբիան: Իրանի ներքին քաղաքական կուրսում, իր դիրքերի ամրապնդմանը զուգահեռ, ԱՄՆ-ը պակաս ուշադրություն չէր դարձնում նրա արտաքին քաղաքականությանը: Եվ այդ ընագավառում Վաշինգտոնի գլխավոր նվաճումը՝ Իրանի մերձեցումն էր Իսրայելի հետ և այդ միության օգտագործումն արարական երկրների ազգային շարժումների դեմ: Այսպիսով, 70-ական թվականներին Իրանի հարաբերությունները սերտացան հատկապես Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Հորդանանի և Իսրայելի հետ<sup>443</sup>:

Միացյալ Նահանգներին հակադիր պետությունների հետ Իրանը հիմնականում վարում էր առավել զուսպ քաղաքականություն: Սակայն այդ ամենը միանգամից փոխվեց Իրանում Փակիավի դինաստիայի տապալումից հետո:

Հայտնի է, որ Իրանի Իսլամական Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև այսօր զոյթյուն չունեն դիվանագիտական հարաբերություններ, դրանք խզվեցին 1980թ.: Սակայն 21-րդ դարի սկզբներին՝ Աֆղանստանում Թավիրան վարչակազմի և Իրաքում Սահամ Հուսեյնի դեմ պատերազմների ժամանակ ու հետպատերազմյան «խաղաղության վերակառուցման» ընթացքում, երկու երկրները որոշ հարցերում համագործակցեցին, ինչը հույս է ներշնչում, որ հարաբերությունները վերականգնելու ուղիները սպառված չեն:

Ավելին. ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարակ Օբաման, նախընտրական քարոզարշավի ժամանակ քազմից նշել էր, որ իրան-ամերիկյան թնջուկը պետք է լուծվի բանակցությունների միջոցով: Սա մի ազդակ է, որը կատարի կողմերին նորովի մոտենալ հին խնդիրներին և լուծման նղանակներ գտնել իշահ տարածաշրջանի խաղաղության:

<sup>443</sup> Коковина В.А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60-70-гг.", с.140-141. Յովհաննիսյան Ա., Իրանը Սերմակդրարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-1992թ.) Իրան Սամ, Երևան, 1993, N 2, էջ 3:

## ՎԵՐԶԱԲՈՆ

Այսափառով, ամփոփելով 1942-60թթ. իրանա-ամերիկյան հարաբերություններին նվիրված տոյն ուսումնասիրությունը՝ հանգում ենք այս եզրակացության, որ ԱՄՆ-ը, ի դեմք Իրանի, Միջին Արևելքում գտավ իր կարևոր դաշնակցին, օճանդակեց այդ երկրի զարգացմանը, քանակի հզրացմանը: Բնականարար այդ ամենը չէր արվում անշահախնդիր կերպով, և ԱՄՆ-ը իր նպատակներին հասնում էր քայլ առ քայլ:

ԱՄՆ-ը, որ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Իրանում չուներ իրական ազդեցություն, Երկրորդ աշխարհամարտից հետո աստիճանաբար կարողացավ վերցնել ազդեցության գրնժեր որոր լծակները, որոնք մինչ այդ գտնվում էին Մեծ Բրիտանիայի ձեռքում:

Մեր կարծիքով դրան նպաստեցին մի շարք հանգամանքներ.

1. Իրանի տնտեսական ծանր վիճակը:
2. Իրանն արդեն հոգնել էր ավանդական դարձած անզոր-ուսական /խորհրդային/ մրցակցությունից և նրանց կողմից երկրի ռեսուրսների շահագործումից:
3. Իրանը Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրենին արդեն վնատրում էր հակադարձ մի ուժ վերը նշված պետությունների գործողությունները ինչ-որ կերպ սանձելու համար: Սկզբում նա ապավինեց Գերմանիայն, այնուհետև՝ Միացյալ Նահանգներին:
4. ԱՄՆ-ի գործունեությանը մեծապես նպաստեցին հատկացվող օգնությունների ծրագրերը, ինչպես նաև ֆինանսական, ուղղմական առաքելությունները, որոնք ամեն կերպ երկրում տարածում և արմատավորում էին ամերիկյան զարգացմանները և փորձում պաշտոնական թեհրանին գցել Վաշինգտոնի ազդեցության տակ:
5. Բացի այդ, գործին մեծապես օգնեց նաև այն հանգամանքը, որ Միացյալ Նահանգները մինչ այդ տարածաշրջանում բացասական կողմերով հանդիս չէր եկել:
6. Դարեւ շարունակ տարածաշրջանում հզր պետություն լինելով՝ Իրանը չէր կարող հաշտվել այդ շրջանում իր վիճակի հետ, ինչի համար է, օրինակ վերցնելով Թուրքիայից, հայացքն ուղղեց դեպի ԱՄՆ:
7. Միացյալ Նահանգներն է, իր դիրքերն ամրապնդելու նպատակով պատրաստ էր դիմելու ցանկացած միջոցի, որոնցից ակնհայտը պետական հեղաշրջումն էր:
8. Իրանում ԱՄՆ-ի ազդեցության մեծացմանը նպաստեց նաև երկրի կառավարության կողմից Վաշինգտոնին պետական մակարդակով տրված նախապատվությունը:

9. Այդ ամենով հանդերձ՝ ազդեցության ոլորտի տարածման համար Միացյալ Նահանգները դիմում էր տարբեր միջոցների՝ սիրաշահման, համոզելու, սպառնալու և այլն:

Իրանում ԱՄՆ-ի երկարատև ազդեցությունն ապահովելու համար Միացյալ Նահանգների ջանքերով քացվեցին քազմարիվ ամերիկյան տիպի դպրոցներ և ուսումնական այլ հաստատություններ: Ամերիկյան կրթություն ու նաև դաստիարակություն ստացած ուսանողները սերտորեն կապվում էին ԱՄՆ-ի հետ, իսկ մի քանի տարի հետո արդեն նախկին ուսանողներից շատերը հայտնվում էին Իրանի կառավարության բարձրագույն պաշտոններում և բնականարար աջակցում ԱՄՆ-ի այս կամ այն ծրագրերի իրականացմանը:

Իրանա-ամերիկյան հարաբերություններն ավելի սերտացան հատկապիս երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Ասրավասականում առաջացած խնդիր ժամանակ, երբ ԱՄՆ-ը Իրանին զգայի աջակցություն ցուցաբերեց, որով շահեց Իրանի ժողովրդի և կառավարության համակրանքը: Այդ հանգամանքը Միացյալ Նահանգները ևս մեծապիս օգտագործեց իր հետագա քաղաքանության իրականացման ժամանակ:

Հետպատրազման շրջանում ամերիկյան քաղաքականությունն առավելապիս աշքի էր ընկնում ֆինանսական օգնության ծրագրերուն: Սակայն, քայի ֆինանսական և տնտեսական օգնություններից, ԱՄՆ-ը հոգ տարավ, որ Իրանի կառավարության բարձրագույն պաշտոններում հայտնվեն ամերիկյան քաղաքացիներ, ովքեր եւ, բնականարար, պաշտպանելու էին ԱՄՆ-ի շահերն Իրանում:

Իրանա-ամերիկյան հարաբերությունները նոր հարթության վրա դրվեցին հատկապես անզո՞-իրանական նավթային վեճի ժամանակ, երբ ԱՄՆ-ը հանդես ենկավ «միջնորդական» առարկելությամբ և իրատեսական իր քաղաքականության շնորհիվ, կարողացավ ձեռք բերել Իրանի «սև ուկու» 40%-ը: Իրանում ամերիկյան «մասնագետների» մշտական ներկայությունը հնարավորություն էր ընձեռում ԱՄՆ-ին տեղեկացված լինել Իրանում տեղի ունեցող անցույղարձին, ինչպես նաև, հարկ եղած դեպքում, միջամտել երկրի ներքին գործերին և ազդեցության հավելյալ լծակներ ձեռք բերել այդ երկրի քաղաքական և տնտեսական լյանքի նկատմամբ: Դրա ցայտուն օրինակը գրանցվեց 1953թ., երբ ԱՄՆ-ն, անհանգստանալով Իրանի «հնարավոր մերձեցումից» ԽՍՀՄ-ի հետ, իրականացրեց հեղաշրջում: Այնուհետև, ԱՄՆ-ի խորհրդով Իրանի կառավարությունը ջախջախեց կուռինիստական «Թուլե» կուսակցությունը, անդամներից շատերին ձերբակալեց՝ դրանով իսկ թուլացնելով ԽՍՀՄ-ի ազդեցությունը երկրում:

Այդ շրջանում ԱՄՆ-ը զգայիրեն մեծացրեց Իրանին հատկացվող օգնությունների մակարդակը: Նոյնիսկ մի քանի անգամ տրամադրեց անհատույց օգնություն, որով փակեց Իրանի բյուջեի ճնշերը, ինչպես նաև հոգաց կառավարության ծախսերը:

Միանգամայն ակնհայտ է, որ ԱՄՆ-ը իր վարած քաղաքականությամբ ազդու ներգործություն ունեցավ Իրանի արտաքին քաղաքական կուրսի ձևա-

վորման վրա: Իրանը, որը մինչ այդ «չեզոքության կուրսի» կողմնակից էր, արտաքին ձևշման ազդեցությամբ, ինչպես նաև իր խնդիրներն առավել արդյունավետ լուծելու համար, Թուրքիայի օրինակով միացավ «ազատ աշխարհին»: Իրանի հարաբերությունները զարգացում էին ապրում հիմնականում այս երկրների հետ, որոնք գտնվում էին ԱՄՆ-ի հովանավորության ներքո կամ համարվում էին նրա գինակիցները: Միացյալ Նահանգներին հակադիր պետությունների հետ Իրանը հիմնականում վարում էր առավել գուսապ քաղաքականություն:

Իրանա-ամերիկյան հարաբերություններն առավել խորացան հատկապես Բաղդադի պակտին Իրանի անդամակցելուց հետո: Մեր կարծիքով, անդամակցելով ԱՄՆ-ի ջանքերով ստեղծված հիշյա կազմակերպությանը, Իրանն ակնկալում էր լուծել մի շարք խնդիրներ՝ գերտերությունների անմիջական օգնությամբ. պաշտպանել երկիրը կոմոնիստական սպառնալիքից, հետ թրել երրեմնի կորցրած տարածքները՝ Բահրեյնը և Պակիստանի տարածքում գտնվող Բնալուշիրանի մի հատվածը, լուծել տարիներ շարունակ ձգձգվող Հիմնեն գետի ջրի խնդիրը հօգուտ Իրանի, հզորացնել երկիրը ի հաշիվ ամերիկյան օգնությունների: Դառնալով ԱՄՆ-ի դաշնակիցը՝ Իրանը հոյս ուներ արտաքին քաղաքականության բոլոր բնագավառներում ստանալ Վաշինգտոնի աջակցությունը և հովանավորությունը:

Բացասական բոլոր ազդեցություններով հանդերձ՝ կարող ենք փաստել, որ Իրանն, անդամակցելով ԱՄՆ-ի կողմից ստեղծված կազմակերպություններին, այնուհետև կնքելով ուզմական երկկողմանի պայմանագիր, իրեն առավել ապահովված էր զգում: Տարբեր կերպ զնահատելով Իրանի անդամակցումն այս կամ այն կազմակերպությանը՝ պետք է նշել, որ այն բավական խթանեց իրանական գինված ուժերի զարգացումը: ԱՄՆ-ի շնորհիվ Իրանի բանակը համարվեց նորագոյն տեխնիկայով, կառուցվեցին ուզմակարական նշանկություն ունեցող բազմաթիվ օրյեկտներ, իրականացվեցին շնորհարական լայնամասշտար աշխատանքներ ինչպես ճանապարհաշխնության, այնպես էլ օդանավակայանների կառուցման բնագավառում և հետահղողակցության ողորոտում: Անդամակցելով պակտին, Իրանը բարեկայտեց հարաբերությունները Թուրքիայի և Պակիստանի հետ, լուծեց մի շարք կնճռոտ խնդիրներ: Ճիշտ է, Իրանն այս ամենին կարող էր հասնել և՛ իր ուժերով, սակայն հայտնի չէ, թե դրա համար որքան ժամանակ և գումար կախանաջվեր: Այդուհանդերձ, ակնհայտ է, որ այդ ամենը Միացյալ Նահանգներն իրականացնում էր իր շահերից կնևով: Ի ապացույց դրա՝ նշենք, որ 1964թ. Իրանն ԱՄՆ-ի հետ ստորագրեց «փոխըմբռան հուշագիր», ըստ որի՝ Իրանն աստիճանաբար պետք է զներ միայն ամերիկյան արտադրության գները: Եսկ դա նշանակում էր իրական կախվածություն Միացյալ Նահանգներից:

1960-ական թվականների սկզբներին, ԱՄՆ-ի խորհրդով, Իրանի շահը սկսեց զգայի ուշադրություն դարձնել նաև երկիր տնտեսության զարգացմանը և սոցիալական խնդիրների նվազեցմանը:

1960–70-ական թվականներին շահական Իրանը, դառնալով տարածաշրջանում հզոր տերություն, իր ուսումնական, տնտեսական, քնական հարատությունների և մարդկային խոշոր ռեսուրսների առկայությամբ, փորձում էր Մերձավոր և Միջին Արևելքի երկրների վրա տարածել իր ազդեցությունը, ինչպես նաև ստանձնել Պարսից ծոցում իր կամքը թեկադրող պետության դեր: Իրան նպաստում էին մի շարք գործուներ: ամերիկյան լայնամասշտար աջակցությունը Իրանին, Իրանի նավաի ազգայնացման շնորհիվ կուտակված ֆինանսական միջոցները, մարտունակ բանակը՝ գիտական գենորդ և գիտամեթերքով: Ի դեպք, 1965թ. Իրանն արդեն ուներ 220,000 զինվորից բաղկացած բանակ<sup>444</sup>:

1960–70-ական թվականներին իրանա-ամերիկյան հարաբերությունները թևակորհության որակական նոր փուլ, մանավանդ որ 1968թ. հունվարի 16-ին Անգլիայի վարչապետ Հարոդ Վիլսոնը Համայնքների պալատում հայտարարեց, որ մինչև 1971թ. վերջը անզինական ուսումնական հենակետերը կտարիանվեն Հարավարևմայան Ասիայից և Պարսից ծոցի շրջանից: Բնականարար, առաջացած այդ վակուումը փորձեցին լցնել ինչպես Իրանը, այնպես է Սաուդյան Արարիան, որն իրեն, ի դեպ, համարում էր Մեծ Բրիտանիայի «քնական ժառանգորդը»՝ հավակնություններ ունենալով իր ազդեցության տակ վերցնել Պարսից ծոցի երկրները<sup>445</sup>: Մինչդեռ Մոհամեմեդ Ռեզա շահն էլ իր հերթին հայտարարեց, որ Մերձավոր և Միջին Արևելքի խաղաղության պահպանման պատասխանատվությունն այսուհետ Իրանը վերցնում է իր վրա<sup>446</sup>: Նման հավակնություններ ուներ նաև Իրաքը:

Ինչ վերաբերում է Միջայալ Նահանգներին, ապա նա այդ տարածաշրջանում վարում էր «երկու հենարանների» քաղաքականություն՝ հենվելով Իրանի և Սաուդյան Արարիայի վրա՝ մեծ հույսեր կապելով հատկապես շահական վարչակարգի հետ: Այնպես որ ԱՄՆ-ի համար այդ տարրերակը լիովին ձեռնտու էր:

Սաուդյան Արարիայի և Իրանի գաղափարական ու քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմտուք, ինչպես նաև այդ երկրների տնտեսական փոխադարձ կապը համաշխարհային շուկայի և ԱՄՆ-ի տնտեսության հետ դարձրեց նրանց ամերիկյան արտաքին քաղաքականության գիտավոր հենարանները տարածաշրջանում<sup>447</sup>:

Ինչպես ընորոշ է գերիզոր տերությանը, ԱՄՆ-ի վարչակազմն էլ հիշյալ տարածաշրջանում Իրանի զարգացմանը նպաստելիս ուներ իր սեփական շահերը: Նա ջանում էր հզորացնել Իրանը, որպեսզի կանխի տարածաշրջանում Խորհրդային Միության ազդեցության տարածումը, ինչպես նաև փորձում էր ապահովել իր տեղը իրանական նավթի արտահանման գործում: Բացի այդ աջակցում էր Իրանի որոշմանը, այն է՝ Սաուդյան Արարիայի հետ միասին

<sup>444</sup> Zonis Marvin, *The Political Elite of Iran*, p. 106.

<sup>445</sup> Драмбянц Г.Г., Персидский залив без романтики, М., 1968, с. 38.

<sup>446</sup> Валькова Л.В., Саудовская Аравия в международных отношениях, М., 1979, с. 190.

<sup>447</sup> США и развивающиеся страны в 70-е годы, М., 1981, с. 202

ապահովել Պարսից ծոցի անվտանգությունը և կայունությունը, պահպանում էր Իրանի հետ տնտեսական և առևտրական սերտ հարաբերություններ, նպաստում էր Իրանի քաղաքական կայունությանը, տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային համագործակցությանը՝ թուրքայից մինչև Հնդկաստան:

Միացյալ Նահանգների երկու դաշնակիցների՝ Սաույան Արարիայի և Իրանի միջև նկատվում էր լարված մրցակցություն, միջանտական հարաբերություններում առկա էին մի շարք խնդիրներ<sup>448</sup>, ասկայն առերևույթ երկու կողմերն էլ ցուցադրում էին իրենց շերս հարաբերությունները: Շուտով ամերիկյան դիվանագիտությունը ձևադրեց և՛ Իրանի, և՛ Սաույան Արարիայի վրա՝ ձգտելով հարթել տարածայնությունները երկու երկրների միջև: Ուստի վերջիններին այլևս ոչինչ չէր մնում, քան բարեկավել հարաբերություններն անխոսափելի համագործակցության համար:

Իրանը տարածաշրջանում իրեն առավել վստահ զգաց հատկապես 1972թ., երբ ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքոլսը խոստացավ շահին հնարավորություն տալ զնել Միացյալ Նահանգների արտադրության ցանկացած տեսակի ուազմական տեխնիկա: Դա համընկեց էր Մոհամմեդ Ռեզա շահի նպատակներին, քանի որ վերջինս ցանկանում էր Իրանը դարձնել տարածաշրջանի ամենամարտունակ և հզոր քանակ ունեցող երկրներից մեկը: Այդ մասին խոսել էր նաև Իրանի շահը «Նյուավեհին» տված հարցազրոյցի ժամանակ: «Իրանը ԱՄՆ-ից պատրաստվում է զնել 700 ուղարիք՝ որից 220-ը ուազմական, ներառյալ «Զինուեկով» և սուզանավերի դեմ պայքարող 18 «Սիկորուկի» տիպի ուղղաթիռ՝ 500 մլն դոլար ընդհանուր արժողությամբ»: Այնուհետև շահը նշում էր, որ տարածաշրջանի մի շարք երկրներ՝ Եգիպտոսը, Սիրիան և Իրայինը, գտնում են, որ իրենց անվտանգության պահպանման համար անհրաժեշտ են մոտավորապես 500 օդային միջոցներ: «Բացի Միացյալ Նահանգներից ձեռք բերված ուազմական տեխնիկայից, -շարունակում է շահը, - Իրանը Անգլիայից գնում է «Զիֆթեն» տիպի 800 տանկ՝ 480 մլն դոլար ընդհանուր արժողությամբ, վերանորոգում և արդիականացնում ենք «M-47» տիպի 400 տանկ, որոնք ձեռք բերել ԱՄՆ-ից, ինչպես նաև «M-60» տիպի 460 տանկ: Ընդհանոր առմամբ՝ 1700 տանկ: Նավատորմը ևս կրկնապատկում ենք: Իրանը Միացյալ Նահանգներից ստացել է նաև լազերի միջոցով կառավարվող «Սմարտ» տիպի ոումք»<sup>449</sup>: Իսկ 1977թ. շահը ԱՄՆ-ից գնեց շուրջ 6 միլիարդ դոլարի զենք, ևս 12 միլիարդի պատվիրեց<sup>450</sup>:

<sup>448</sup> Խոկանարյան Գ., «Իրանը՝ Պարսից ծոցի ազդեցիկ գործոն» (1960–70-ական թ.թ.), Աթոճավոր և Սիցին Արևելի երկներ և ժողովրդներ, XXIII, Երևան, 2004, էջ 87–88:

<sup>449</sup> Newsweek, 16.05.73.

<sup>450</sup> Ramazani R.K., Iran's Revolution. The Search for Consensus, Washington, 1990, p. 49.

Բացի այդ, համաձայն «Եթելաաթի», ԱՄՆ-ը շահի հետ գաղտնի համաձայնություն էր ձեռք բերել, ըստ որի՝ Իրանի տարածքում կառուցել էր 7 ուղիութեակտունային լրտեսական կայան<sup>451</sup>:

Իրանի ուազմականացումն առավել ակնհայտ դարձնելու համար բերենք 1973-1980թթ. Մերձավոր և Միջին Արևելյան երկրների ուազմական ծախսերի հաշվեկշիռը, ըստ ԽՍՀՄ-ի Անվտանգության նախարարության տվյալների<sup>452</sup>.

Երկիր	1973-1976		1977-80	
	մլրդ. դոլար	ընդհանուր զուտարի մասնաբաժն %	մլրդ. դոլար	ընդհանուր զուտարի մասնաբաժնը %
Իրան	29,1	44,0	28,0	27,6
Իրաք	6,1	9,2	10,3	10,1
Սաուդյան Արաբիա	19,8	29,9	41,1	40,5
Թուրքիա	4,9	7,4	7,3	7,2

Բնականաբար, Խորհրդային Միությունը բողոքեց իր հարավային սահմանների մոտ նման բանակի ուազմական ուժի և, որ ավելի կարևոր էր, ամերիկյան ուազմական մասնագետների թվի աճի կապակցությամբ: Ի պատճին Խորհրդային Միության անդադար բողոքների՝ ԱՄՆ-ի նախագահ Նիքոլան ամերիկացիների ներկայությունը բացատրում էր նրանով, որ ԱՄՆ-ը չի կարող անտեսել խորհրդային ժամանակակից նավատորմի ներկայությունը Հնդկական օվկիանոսում, Միջօրեկրական ծովում և Աֆրիկայի ափերի մոտ: Ի պաշտպանություն ամերիկացիների՝ իրանական մամուլը մատնանշում էր, որ Եգիպտոսում գործում էր ոուս մասնագետների 15 հազարանոց մի խումբ, այն բանից հետո, եթե ԽՍՀՄ-ը Եգիպտոսին վաճառել էր զենք և զինամթերք: Այնպես որ Իրանը ընական են համարում օտարերկրյա ներկայացուցիչների առկայությունն երկրում, եթե այդ երկիրը զենք է ուազմամթերք մենք այլ երկրից<sup>453</sup>: Ամերիկյան խորհրդականների կողմից մշակվել էր մի ծրագիր՝ իրանական զորքին զինել ամերիկյան զենքով, մատակարարել հրթիռներ և մարտական տեխնիկա, ինչպես նաև Իրանի տարածքում կառուցել ուազմական օդանավակայան, վայրէցի իրապարակ, նավահանգստներ, նավակառան, ձանապարհներ, ռադիոյի և հեռախոսային կայի ցանց:

<sup>451</sup> Ժելալ. 25.05.1973.

<sup>452</sup> Военная экономика стран Востока, научный сборник N 6, для служебного пользования, М. 1986, с. 11-12.

<sup>453</sup> Ժելալ. 25.05.1973

Այսպիսով, կարգավորելով սեփական ռազմական ուժերը, ունենալով բավական ֆինանսական միջոցներ ի հաշիվ նավթի<sup>454</sup>, այսուհետ Պարսից ծոցի հետ կապված հարցերը հայտնվեցին Իրանի քաղաքականության օրակարգում, որն առավել հայտնի է որպես Պարսից ծոցի նկատմամբ «ակտիվ կորսի» քաղաքականություն։ Այդ քաղաքականությունը ռազմավարական նշանակություն ուներ Իրանի համար, քանի որ Պարսից ծոցով էր իրականացվում ինչպես իրանական ապրանքների առևտուրը, այնպես էլ նավթի և նավթամթերքի արտահանումը միջազգային շուկա։ Իրանն իր վրա էր վերցնում տարածաշրջանում յուրաքանչյուր խնդրի լուծման ղեկավարությունը, որի մասին դեռևս 1969 հովհակի տպագրվեց Իրանի ԱԳՆ-ի հայտարարության մեջ, որտեղ նշվում էր. «Ոչ մի դեպքում չի կարելի հսարավորություն տալ մյուս երկրներին միջամտել Պարսից ծոցի գործերին։ Իրանի կառավարությունը պատրաստ է համագործակցել Պարսից ծոցի բոլոր երկրների հետ՝ հանուն տարածաշրջանի խաղաղության և անվտանգության պահպանման։ Բայց եթե Պարսից ծոցի մյուս երկրները չեն կարող մասնակցել համատեղ պաշտպանությանը, ապա Իրանն ի վիճակի է միայնակ իր վրա վերցնել այս տարածաշրջանի շահերի պաշտպանության գործը»<sup>455</sup>.

Բացի այդ, արտաքին քաղաքականության ոլուտում Իրանի շահի նպատակներից մեկն էր բոլոր չուալ որ սասանվեն, էլ չենք ասում տապալվեն, տարածաշրջանի միապետությունները, մասնավոր որ արդեն իրողություն էր 1958թ. Իրաքի, 1962թ. Եմենի միապետությունների տապալումը<sup>456</sup>:

Ուշադրության է արժանի Իրանի դիրքորոշումը Պարսից ծոցում առաջացած բազմաթիվ խնդիրների և դրանց լուծման եղանակների վերաբերյալ։

Կարևորելով Իրանի և Շարջայի կառավարությունները պաշտոնապես կնքեցին համաձայնագիր՝ Արու-Մուսա կղզին Իրանի ինքնավարության տակ թողնելու վերաբերյալ։ Օգտվելով այդ համաձայնագրից՝ հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, Մոհամմեդ Ռեզա շահի հրամանով իրանական գորբերը (6 ժամվա ընթացքում) տևակայվեցին Արու-Մուսայում, մինույն ժամանակ գրադարին Մեծ և Փոքր

<sup>454</sup> Եթե 1970թ. նավթից ստացած Իրանի եկամուտը կազմում էր 791 մն դոլար, ապա 1973թ. այն հասվ 2,6 մլրդ դոլարի, 1974-ին 4,6 մլրդ, իսկ 1975թ. այն աճեց մինչև 17,8 մլրդ դոլար։ Նավթից ստացվող եկամուտների մեծացումն առաջին հերթին կապված էր նավթի գնի բարձրացման հետ։ 1973թ. ստույան Արարիան առաջարկեց նավթի գնից բարձրացնել, մեկ քարտ նավթի համար առաջարկելով 7,5 դոլար, մինչեւ Իրանը մեկ քարտ նավթը համար պահպանում էր 14 դոլար։ Ի վերջո եկամ համաձայնության և մեկ քարտ նավթը պարեցավ 11,65 դոլար։ Կառավարության մասնաքայլն ևս մեծացավ՝ 7 դոլար նախկին 3,5-ի փոխարեն։ The Iranian Journal of International Affairs, vol V, N2, Tehran 1993, p. 461. Պրիմակով Ա.Ե., Պերսիական զանգ: Հերթ և մոնոպոլիա, Մոսկվա 1983, с. 47. Անդրեասի Ռ.Ն., Կայոկով Ա.Դ., ՕՊԵԿ և միջազգային Մեծ և Փոքր

<sup>455</sup> Ալիբեյլի Գ.Դ., Իրան и сопредельные страны Востока, с. 83.

<sup>456</sup> سایه‌گران. 1978.10.01, 1978.13.11.

Թումբերը<sup>457</sup>, որոնց նկատմամբ Իրանը միշտ էլ հավակնություններ է ունեցել: Դրանով, փաստորներ, Իրանը իր վերահսկողության տակ վերցրեց Հորմուզի նեղուցը<sup>458</sup>:

Վերոհիշյալ կղզիների գրավման հետևանքով հզվեցին դիվանագիտական հարաբերությունները Իրանի և Իրաքի միջև, ինչպես նաև լարվածություն նկատվեց արարական աշխարհի և Իրանի փոխհարաբերություններում, որի արդյունքում էլ արարական մի շարք երկրների պարբերականներում ի հայտ եկան Պարսից ծոցի Արարական ծոցի վերանվանելու տևակետներ<sup>459</sup>:

Իրանի հեղինակության մեծացման փաստ կարող է հանդիսանալ նաև Դուշարում առաջացած խնդիրների պատճառով Օմանի սովորան Ղարուս թեն Սայիդի՝ արարական աշխարհի փոխարքն Իրանին տված նախապատվությունը: Ղարուս թեն Սայիդը պաշտոնական խնդրանքով դիմեց Մոհամեմետ Ռեզա շահին, որ օգնություն տրամադրի երկրի հարավում՝ Դոփար նահանգում առաջացած հեղափոխական շարժումները ճնշելու համար: Շահը, թնականարար, չմերժեց խնդրանքը, քանի որ գտնում էր, «Քե այն սպանում է Պարսից ծոցի ավագանի խաղաղությանը»: 1973թ. դեկտեմբերի 23-ին իրանական 3 հազարանոց բանակը ներխուժեց Դոփար:

Մակայն 1973թ. հոկտեմբերի 6-ին բռնկված 4-րդ արարա-խրայելական պատերազմը ստիլեց տարածաշրջանի երկրներին նորմալացնել հարաբերությունները բոլոր մահմետական երկրների միջև: Արարական աշխարհը կոչ էր անում Իրանին նավայի չմատակարել Խորայելին, սակայն Իրանը շարունակում էր Խորայելի հետ իր լայնամասշտար ուազմա-քաղաքական և տնտեսական կապերը:

Որպեսզի էլ ավելի մեծացնի Իրանի ազդեցությունը տարածաշրջանում, շահը 70-ականների սկզբին հանդես եկավ մի շարք առաջարկություններով, այն է՝ ստեղծել Ասիական ընդհանոր շուկա, Պարսից ծոցի երկրների ուազմա-քաղաքական բրոկ, իրավիրել կոնֆերանս՝ տարածաշրջանի անվտանգությունը պահպանելու համար ուղիներ որոնելու նպատակով:

Վերոհիշյալ ծրագրերը կյանքի կոչելու համար 1974թ. Մոհամեմադ Ռեզա շահ Փահլավին մեծ շրջագայություն կատարեց հարավային Ասիայի երկրներով՝ կնքելով մի շարք առևտրական համաձայնագրեր և տնտեսական համագործակցության պայմանագրեր: Այդ այցի նպատակն էր ստեղծել «Ասիական ընդհանոր շուկա»՝ Եվրոպական ընդհանոր շուկայի օրինակով, թնակա-

<sup>457</sup> Алиев Ариф, Иран vs Ирак: история и современность, М.2002, с. 629–630.

<sup>458</sup> Յորմուզի նեղուցն ունի ուազմականական նշանակություն ոչ միայն Ծոցի երկրների հարաբերություններում, այլև համաշխարհային տնտեսության համար: Յորմուզի նեղուցով յուրաքացնյան 10 րուբան մեկ անգնում է մեկ սականեր, ինչը կազմում է նաև տարաքի համաշխարհային տնտեսափոխման 62%-ը: Յորմուզի նեղուցը Պարսից ծոցից դուրս գալու միակ ուղին է բոլոր սահմանակից երկրների՝ Իրանի, Իրաքի, Սաուդիական Արաբական Հանությունի, Օմանի, Արարական Միացյալ Եվրոպականներ համար: Եվ փաստորնեն 1971թ. այս ամենը հայտնվեց Իրանի վեհակողության ներքո:

<sup>459</sup> Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М. 1987, с. 163.

նաբար, Իրանի հովանու ներքո, որը կարող էր հանդիս գալ որպես հակակշիռ Եվրոպական շուկային:

1970-ական թվականների կեսերին Իրանը, տարածաշրջանում իրական ազդեցություն ձեռք բերելու համար, անհրաժեշտ ուշադրություն դարձրեց գիտատեխնիկական նվաճումների և հատկապես միջուկային էներգետիկայի զարգացման վրա: Եվ ահա 1974թ., Մոհամենդ Ռեզայի նախաձեռնությամբ Իրանում ստեղծվեց Աստոմային էներգետիկայի կազմակերպություն: Հայտարարվեց, որ նպատակ ունեն ստեղծել աստոմային մի շարք կայաններ<sup>460</sup>:

